

ՏՊԱՐԱՆՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Նվիրվում է Հայ տպագրության 500 ամյակին

Էմմա Աբրահամյան

«Տպագրության գյուտը ամենանշանավոր դեպքն է պատմության մեջ... Շնորհիվ տպագրության՝ մարդկային միտքը դառնում է հավիտենական, անքոռնելի, անխորտակելի...»:

Վիկտոր Հյուգո

Հայ տպագրությունը հայ ժողովրդի մշակութային պատմության մեջ Մաշտոցյան տառերի գյուտից հետո երկրորդ ամենախոշոր նվաճումն է: Սկզբնավորվել է 1512 թ. Վենետիկում, որտեղ Հակոբ Մեղապարտը Հովհան Գուտենբերգի տպագրական արվեստի գյուտից տասնամյակներ անց հրատարակում է հայերեն տպագիր առաջին գիրքը՝ «Ուրբաթագիրք»-ը:

Հայ տպագրությունը, որը սկզբնավորվում է զարգանում է հայկական գաղթավայրերում, միայն 259 տարի անց՝ 1771 թ. է մուտք գործում Հայրենիք: Տպագրական գործը զարգանում է ծավալվում է հատկապես ԺԹ դարում, երբ տպարաններ են ստեղծվում նաև Հայաստանի ողջ տարածքում:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ (ԷԶՄԻԱԾԻՆ)

Սբ. Էջմիածնի տպարան (Մայր Աթոռ, Գրիգոր Լուսավորիչ, Կաթողիկե, Արարատյան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի). մեր հայրենիքում առաջին տպարանը կազմավորվում է 1771 թ. Սիմեոն Երևանցի կաթողիկոսի (1763-1780) ջանքերով և մադրասաբնակ նորջուղայեցի Գրիգոր Միքայելյան Խոջաջանյանցի (Չաքիկյանց) նյութական աջակցությամբ.



Դայաստանում առաջին տպարանի հիմնադիր Սիմեոն Երևանցին

«Վանքը ունի տպարան մըն ալ, որ առաջին անգամ հաստատուած է Սիմեոն կաթողիկոսի օրով, 1771ին»¹:

184 էջանոց առաջին գիրքը՝ Սիմեոն Երևանցու «Գիրք աղօթից, որ կոչի զբօսարան հոգեւոր», տպագրվում է Մկրտիչ արքեպիսկոպոս Շոռոթեցու փորագրած բոլորգիր, նոտրգիր և գլխագիր հայերեն տառերով և Հարու-

թյուն Էջմիածնեցու քանդակագործած խորաններով, զարդագրերով և ծաղկագործերով: Գրաշարներն էին Հովսեփ վարդապետը և Եփրեմ սարկավագը, «մրագարկ եւ տպող»-ները՝ Գրիգորն ու Մանուկը և «ցրողն գրոցն»՝ տիրացու Խաչատուրը: Խմբագիրն ու սրբագրիչն էր Բասահակ Գեղամացին, որը 3 տարի անց դառնում է տպարանի կառավարիչն ու կարգադրիչը²:

Տպարանը կոչվում է Գրիգոր Լուսավորչի անվամբ և գետեղվում կաթողիկոսի ձեռնալին կացարանին արևմուտքից կից փոքրիկ շենքում: Շենքի ճակատին փորագրվում է շինարարական արձանագրություն.

Աստուծով հաստատեցաւ տպագրատունս նոր ի նորոյ ի սուրբ Աթոռոյս Էջմիածին, ամենայն պարագայիւքն հոգաբարձութեամբ տեսնն Սիմեօն սրբազան կաթողիկոսին Երևանցոյ, արդեամբ Ջուղայեցի ի Հինդ բնակեալ բարեպաշտօն Գրիգոր աղային Խոջաջանեան, որ մականուամբ Չաքիկեանց կոչի ի յիշատակ իրեան եւ իր ի Քրիստոս հանգուցեալ ծնողացն՝ Միքայելին և Մամախաթունին, իր կենակից Մատիւնային և վաղաբառամ Միքայել որդոյն և քերցն Անամարիային և Ջիպիտային, հօրեղբարցն՝ Եղիազարին, Սաֆարին և Աղեքսանդրին, պապուն՝ Գրգորին և կենակից Թագուհտոյն և հօրաքեռն՝ Ջիժագատային և մեծ պապ Յակոբջանին և հօրեղբօր դստերացն՝ Պէկզաղային և Գիւլնարաթին, և այլ ամենայն հին և նոր մնջեցելոցն նորին: Այսու պայմանաւ՝ զի ի տարին Բ անգամ ի տօնի Լուսաւորչին և հրեշտակապետացն ի սուրբ Աթոռոջս պատարագ մատչիցի հանդիսաւորութեամբ՝ յիշելով զնոսա, որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի, ամէն. ք(վիմ) Ռ-ՄԻ (յամի 1771)՝:

1773 թ. տպարանի շենքն ընդարձակվում է: Այդ մասին Սիմեոն Երևանցի կաթողիկոսը բարերարին գրում է. «...գտպագրատունս սակաւ ինչ փոքրիկ էր, յայսմ ամի մեծացուցաք, զի ամենայն գործոց և

¹ **Մարաֆեան Գ.**, Էջմիածնայ վանքը, «Կոչնակ», 1914, № 33, էջ 778:

² **Շահնագարյան Շ.**, Նոր նյութեր Հայաստանի առաջին տպարանի պատմության վերաբերյալ, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 1, էջ 262:

³ **Մմբատյանց Ա.**, Սուրբ Էջմիածնի միաբանության գրական-կրթական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը, Ս. Էջմիածին, 1973, էջ 45-46: Ի դեպ, Ա. Մմբատյանցը և տպարանի վարպետ Ղևոնդ Ղարախանյանը փնտրում և հայտնաբերելով հողի մեջ թաղված և եռատված արձանագիր քարը՝ պահում են վանքի հնությունների թանգարանում: Տե՛ս նաև **Լևոնյան Գ.**, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1946, էջ 152:

գործավորաց նոցի, ընդարձակ տեղի լինիցին մերձ մինեանց...»⁴:

Տպագրական թղթի պակասի պատճառով 1776 թ. տպարանին կից ստեղծվում է նաև սեփական թղթի գործարան, որը, սակայն, գործում է միայն մինչև կաթողիկոսի մահը՝ 1780 թ.:

Միմեոն Երևանցուն հաջորդած Ղուկաս կաթողիկոսի օրոք (1780-1799) տպարանի գործունեությունը շարունակվում է:

Այնուհետև տպարանը չի գործում, իսկ 1807 թ. ֆրանսիացի զենեռալ Գարդանի վկայությամբ՝ «Ռուսները, երբ 1805-ին գրավեցին Էջմիածինը, թալանեցին եկեղեցին, զանձարանը և մատենադարանը: Ավելի ուշ, երբ պարսիկները վերագրավեցին, գրքերից փանփուշտներ պատրաստեցին և տպարանի տառերը հալեցնելով գնդակներ շինեցին»⁵:

Երկարատև դադարից հետո Էջմիածնի տպարանը վերստին գործում է Եփրեմ Ա Չորագեղցի կաթողիկոսի օրոք (1809-1830)՝ 1819 թ., երբ տպագրվում է Սաղմոսարան, որի հիշատակարանում նշվում է. «...զվերանորոգողն տպարանիս զտեր Եփրեմ յոգնավիշտ սրբազան վեհապետն, որ ի ներութեանս ժամանակի... պայծառացոյց և գրեթէ ի հիմանէ նորոգեաց զտպարանն սրբոյ գահիս... զխանգարեալն ի բազում ամաց հետէ...»⁶:

1820 թ. տպագրվում է «Կուսակ վասն փրկագործ չարչարանաց և խաչելութեան տեսուն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի» գիրքը, որի տիտղոսաթերթին նշվում է. «Ի տասներորդում ամի հայրապետութեան Տ.Տ. Եփրեմայ... կաթողիկոսի... յամի տեսուն 1820, մարտի 26, ի տպարանի սրբոյ Լուսատրչին»⁷:

Այնուհետև մինչև 1833 թ. տպարանի գործունեությունը դարձյալ խափանվում է: Նշյալ թվականին հրատարակվում է «Ձայնքաղ շարական», որի հիշատակարանում նշվում է տպարանի վերստին գործելու մասին. «...իշեսջիք յարժանատու մաղթանս ձեր զվերահաստատողն տպարանիս... Յովհաննէս Կարբեցի ...կաթողիկոսն ամենայն Հայոց...»⁸:

1860-ական թվականներին Գևորգ Գ կաթողիկոսը (1866-1882) նախաձեռնում է ոչ միայն տպարանի շենքի, այլև տառերի նորոգությունը, «...որովհետև մամուլները դեռ նոր են, որք բերուեցան հանգուցեալ Ներսէս Կաթողիկոսի հրամանաւ»⁹:

Տպարանի նորոգության գործն ավարտվում է 1868 թ., իսկ Սյրտիչ Սանասարյանի և Հովհաննէս Հովանյանի նվիրատվությունների շնորհիվ այն

հարստանում է մայր տառերով, ձուլիչ մեքենաներով և տպագրական մամուլով¹⁰:

Նույն թվականին էլ տպարանը վերաբացվում է. «...1868 թուին նուիրատութեամբ մեծ. պ. պ. Սանասարեանի և Յովհաննէանի բացվում է Ս. Էջմիածնայ տպարանը...»¹¹: Սկսում է հրատարակվել «Արարատ» ամսագիրը (1868-1919), որը 1869-1870 թթ. խմբագրում է Ղ. Աղայանը:

1868 թ. հունիսին Գևորգ Գ կաթողիկոսը կոնդակ է հղում համայն հայությանը տպարանի գործունեության համար կամավոր հանգանակություններ կազմակերպելու և նվիրատվություններ կատարելու վերաբերյալ¹²:

1869 թ. Սյրտիչ Սանասարյանը տպարանին է նվիրում տառաձուլական արագագործ մեքենա, տպագրությանն անհրաժեշտ այլ սարքավորումներ և տառեր, իսկ ազուլեցի Սյրտիչ Գրիգորյան Տեր-Սյրտչյանցը՝ Հայաստանի տեսարանների կադապարներ, կազմարարական շարքնկալ, տառեր և այլն¹³:

1870 թ. տպարանը Թիֆլիսից ստանում է 2 տպագրական մամուլ¹⁴:

1874 թ. հոկտեմբերի 15-ին տպարանի նյութական կարիքները հոգալու նպատակով Հովհաննէս Հովանյանցը փոխարինաբար հատկացնում է 5654 ռ. 88 կ.¹⁵:

1876 թ. հոկտեմբերի 16-ին Գևորգ Գ կաթողիկոսը դիմում է Պավել Նիկոլաևիչին և խնդրում միջնորդել Կովկասի փոխարքային Էջմիածնի տպարանը կաթողիկոսի անմիջական ենթակայության ներքո թողնելու և հաստատելու տպարանի կառավարման ծրագիրն առանց ոստիկանական վերահսկողության¹⁶:

Նույն թվականի աշնանը Էջմիածին այցելած անգլիացի քաղաքական գործիչ Ջ. Բրայսը տպարանի գործունեության մասին նշում է. «Վերջերս

4 **Շահնագարյան Շ.**, նշվ. հոդվ., էջ 262:

5 **Հակոբյան Հ.**, Ուղեգրություններ, հ. 2, Երևան, 1934, էջ 101:

6 **Շահնագարյան Շ.**, նշվ. հոդվ., էջ 264:

7 Նույն տեղում:

8 Նույն տեղում: Տե՛ս նաև Հայ գիրքը 1801-1850 թվականներին, Երևան, 1967, էջ 198:

9 «Համբարաբեր Ռոսիոյ», 1861, № 1, էջ 4:

10 Վաերագրեր հայ եկեղեցու պատմութեան, **Գևորգ Գ Կուսանդնուպոլսեցի Քերեստեճեան**, գիրք ԺԱ, Երևան, 2004, էջ 37: Ի դեպ, մեկ այլ վկայությամբ՝ Գևորգ Գ կաթողիկոսն իր պաշտոնավարության սկզբից ձեռնամուխ է լինում Էջմիածնի վանքում ինչպես ճեմարան, այնպես էլ տպարան կառուցելու գործին, որի նյութական ծախսը ստանձնում են քիֆլիսահայերը, սակայն «...Նորին Օծուքիներ խնայում է նոցա և չէ կամենում, որ այդպիսի մեծ գումար միմիայն մեզ վերայ ծանրանայ...» (**Երիցեան Ա.**, Ֆելիետոն. Բարեգործությունը հայոց մեջ, «Արձագանք», 1882, № 17, 13 յունիսի, էջ 264):

11 **Երիցեան Ա.**, նշվ. հոդվ., «Արձագանք», 1882, № 17, 13 յունիսի, էջ 264: Ի դեպ, 1868 թ. հունվարին Թեոդոսիայից Հարություն Խալիպյանն իր տպարանից ուղարկում է տառեր, իսկ սպրիլին՝ իշխան Հովհան Հովանյանցը՝ երեք տեսակ թուրք (**Մնրատյանց Ա.**, նշվ. աշխ., էջ 86):

12 Վաերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԱ, էջ 228-230:

13 **Մնրատյանց Ա.**, նշվ. աշխ., էջ 88-92:

14 Նշվ. աշխ., էջ 86:

15 Վաերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԱ, էջ 541-542:

16 Նշվ. աշխ., էջ 706-708:

սկսել է հրատարակվել «Արարատ» ամսագիրը: Այն տպագրվում է վանքում և, անշուշտ, հայերենով: Էջմիածնի տպարանը հրատարակում է նաև կրթական ձեռնարկներ. սրանք այն գրքերն են, որոնց կարիքն այս երկրներում ապրող հայերն այժմ շատ ունեն»¹⁷:

Տպարանի նոր շենքի կառուցումը Վաղարշապատի հին շուկայի տեղում նախաձեռնում է Մատթեոս Ա կաթողիկոսը (1858-1865), սակայն մտադրությունը մնում է անկատար նրա մահվան պատճառով: Նոր տպարանաշենք կառուցելու ծրագիրը կյանքի է կոչվում շուրջ երկու տասնամյակ անց՝ Մակար Ա Թեղուտցի կաթողիկոսի օրոք (1885-1891):

1888 թ. մարտի 28-ին պայմանագիր է կնքվում ճարտարապետ Մ. Սալամբեկյանի հետ, և Մայր տաճարի արևելյան կողմում սկսվում են շենքի կառուցման աշխատանքները, որոնք ամբողջանում են 1889 թ.¹⁸: Նոր շենքում են գետեղվում գրաշարանոցը, տպարանը, թուղթ թրջելու սենյակը, ձուլարանն ու ամբարանոցը, տպարանական ժողովի խորհրդարանն ու գրասենյակը, գրադարանը և ընդարձակ նախագավիթը. «Մակար կաթողիկոսի օրով կառուցում է նոր շենք մը ես, որուն մէջ կան մթերանոցներ, ձուլարան, գրաշարներու մասնաւոր սրահ, տպագրատուն, ուր կը գործեն մէկ փոքր եւ երկու ալ մեծ արագատիպ մամուլներ... Տպարանը օժտուած է էլեկտրական ոյժով, եւ իր մէջ ունի նաեւ տառերու առանձին ձուլարան մը, որով ազատուած է տառեր գնելու հոգերէն»¹⁹:

Սկրտիչ Ա Խրիմյան կաթողիկոսի օրոք (1892-1907) նոր սարքավորումներով տպարանի վերազինման շնորհիվ տպագրական գործը վերելք է ապրում²⁰:

1895 թ. Էջմիածնի տպարանը 1771 թ.-ից ի վեր հրատարակված գրքերով մասնակցում է Պետերբուրգի տպարանական գործի համառուսաստանյան ցուցահանդեսին և արժանանում բարձր գնահատականի²¹:

Ժամանակի համեմատ տպագրական գործի բարձր մակարդակը մատնանշել է նաև անգլիացի թղթակից Վալտեր Հարիսը, ով 1895-96 թթ. եղել է Էջմիածնում: Ըստ նրա՝ այդտեղ կիրառվում էր «կլիշեներով» բավական արդյունավետ տպագրություն²²:

17 Transcaucasia and Ararat by **James Bryce**, London, 1896, pp. 323-324 (քննադրում՝ «A magazine called *Ararat* has recently been established; it is printed at the monastery, and of course in Armenian; nor is the press of Etchmiadzin idle in producing educational manuals, the class of books which are at present most scarce among the Armenians of these countries»):

18 **Մնբառյանց Ա.**, նշվ. աշխ., էջ 116:

19 **Մարաֆեան Գ.**, Էջմիածնայ վանքը, «Կոչմակ», 1914, № 33, էջ 778:

20 **Մնբառյանց Ա.**, նշվ. աշխ., էջ 117-125:

21 «Արարատ», 1895, էջ 141-142: Տե՛ս նաև **Մնբառյանց Ա.**, նշվ. աշխ., էջ 128-131:

22 From Batum to Baghdad via Tiflis, Tabriz and Kurdistan by **Walter B. Harris**, Edinburgh and London 1896, p. 76.

1901 թ. Սուքիաս արքեպիսկոպոս Պարգյանցի²³ ջանքերով տպարանին կից կառուցվում են միջանցք և կամարակապ երկու ընդարձակ սենյակ: Ի դեպ, վերջիններիս ներքնատունն էլ գործածվում է որպես թղթերի և նյութերի պահեստ²⁴:

1909 թ. տպարանն արդեն հայտնվել էր ոչ բարվոք վիճակում: Գրաշարանոցի և ձուլարանի «...տառերը առհասարակ շատ հնացած են և մեծ մասամբ անպետք: ...կամ պետք է փակել, կամ պետք է վերանորոգել...», իսկ կազմատունն ուներ «...բաւական յարմարութիւններ, թէև կան նաև խոշոր պակասութիւններ, յատկապէս մի երկու մեքենայի: ...Չուտ կազմարարական մասը լրացնելու համար բաւական է 1500 թուրքի ծախսել»²⁵:

Հայտնի է, որ 1907-1910 թթ. տպարանի տեսչի պաշտոնը հաջորդաբար վարում են Մխիթար վարդապետ Տեր-Սկրտչյանը, Երվանդ վարդապետ Տեր-Սինասյանը, Իսահակ Տեր-Սիքայեղյանը և Արտակ վարդապետ Սմբատյանը²⁶:

1908 թ.՝ Երվանդ վարդապետ Տեր-Սինասյանի տպարանի տեսչության ժամանակ, «...գրքերի տպագրությունը նոր կերպարանք է ստանում մաքրության ու արվեստի գեղեցկության տեսակետից: ...Մայր Աթոռի տպարանը արագությամբ լույս է ընծայում ոչ միայն ս. Էջմիածնի միաբանության աչքի ընկնող գիտնական անդամների երկասիրությունները և աշխատությունները, ...այլ և Գևորգյան հոգևոր ճեմարանի ուսուցիչների և այլ աշխարհիկ ու հոգևորական անձանց պատմական, բանասիրական, քննադատական գեղեցիկ գրականության և այլն վերաբերյալ աշխատություններն...»²⁷:

1910 թ. դրությամբ անհրաժեշտություն է զգացվում տպարանը զինել նոր սարքավորումներով և տպարանական գործին հմուտ մասնագետներով. «Տպարանը Մայր Աթոռի ամենահին հաստատություններից միսն է, որը ժամանակի ընթացքում հետզհետե զարգանալով այժմ իր հայերեն մասով հարուստ տպարաններից միսն է Կովկասում: Ունի ձուլարան, կազմատուն, բայց այսքան օգուտը չեն տալիս Մայր Աթոռին, ինչ որ կարող էին տալ, եթե մասնաւոր սեպհականատիրոջ ձեռքում լինէին. ամէն մի գործողութիւն այստեղ կատարուած է հին սիստեմով, և որովհետև մեր տպարանի կառավարիչները նշանակուած են Էջմիածնի միաբանութիւնից, որոնք հմուտ չեն տպարանական գործին, հետևաբար անկարող են օգտուել և ներմուծել այն

23 Սուքիաս արքեպիսկոպոս Պարգյանցը (10.12.1837, Աստապատ-12.9.1914, Վաղարշապատ) բանասեր, մանկավարժ, հասարակական և եկեղեցական գործիչ է:

24 **Մնբառյանց Ա.**, նշվ. աշխ., էջ 133:

25 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, **Մատթեոս Բ Իզմիրլեան**, գիրք Ը, Երևան, 2001, էջ 342:

26 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Ը, էջ 336, 494, 662:

27 **Մնբառյանց Ա.**, նշվ. աշխ., էջ 140-141:

կատարելագործում անխնայ, որ ուրիշ տպարաններին շահ է տալիս»²⁸:

1913 թ. լույս է տեսնում «Շողակաթ» հայագիտական ժողովածուն²⁹:

1918 թ. մայիսի 18-ին միաբանական ժողովում որոշվում է «...փակել տպարանը անորոշ ժամանակով՝ լիազօրելով տպարանի տեսչին իր հայեցողութեամբ պահել մի գրաշար Մայր Աթոռի հաստատութեանց անհրաժեշտ գործերը շարելու և տպելու համար, իսկ մնացեալ ծառայողներին տալ եռամսեայ ռոճիկ տարույս մայիս, յունիս և յուլիս ամիսների համար, ապա բոլորին արձակել»³⁰:

1919 թ. տպագրվում են դասագրքեր, որոնք քիչ տպաքանակի պատճառով չեն կարողանում բավարարել առկա պահանջարկը. «Հայ ժողովրդի գիտութեան ծարարը շատ մեծ է»³¹:


Նույն թվականին տպարանը գտնվում էր անմխիթար դրության մեջ. «Տպարանը յանձնում է ինչ որ մի եպիսկոպոսի: Սա էլ իր հերթին փոխանցել է ուրիշ մեկին: Հոգացողություն չկայ: Տպարանի հարուստ ստացւածքը և մեծաքանակ թուղթը մնացել են անխնամ: Ասում են, որ Վաղարշապատի շուկայում հեշտութեամբ կարելի է գնել տպարանի թուղթը: Եւ այդ ժամանակ, երբ Երևանում պետական հաստատությունները թղթի սով են ապրում: Այն ժամանակ, երբ Երևանում մի շնորհքով տպարան չկայ...»³²:

1920 թ. հունվարից «Արարատ» ամսագրի փոխարեն սկսվում է «Էջմիածին» շաբաթաթերթի հրատարակությունը (11 համար)³³:

Հունիսի 23-ին տպարանի տեսուչ Արսեն Ծ. վարդապետը դիմում է Գևորգ Ե Սուրենյանց կաթողիկոսին (1911-1930) տպարանը ֆինանսների նախարարության տրամադրության տակ դնելու խնդրանքով³⁴:

Սր. Էջմիածնի տպարանն իր գործունեության ընթացքում (1771-1920) հրատարակում է կրոնական, պատմական, բանասիրական հարյուրավոր գրքեր, դասագրքեր, ամսագրեր:

Վաղարշապատի Սր. Գայանե վանքի տպարան (1874-1876). այս փոքրիկ տպարանը³⁵ 1874 թ. հիմնադրում է վանահայր Վահան Ծ. վարդապետ



Բաստամյանցը³⁶ և երկու տարի հրատարակում «Դպրոց» ամսկավարժական ամսագիրն իր խմբագրությամբ: Կատարած աշխատանքների վերաբերյալ զեկուցագրում նա գրում է. «Վանքիս մեջ հաստատեցի տպարան, հրատարակեցի երկու տարի «Դպրոց» ամսագիրը, և պահեցի երկու տարի փոքր ուսումնարան, բայց յետոյ իմ երկարատև բացակայութիւնների պատճառով ստիպվեցայ տպարանը ծախել, ամսագիրը դադրացնել, ուսումնարանը փակել»³⁷:

ՇՈՒՇԻ

Մեր հայրենիքում գրատպության երկրորդ խոշորագույն օջախը Շուշին է: Այդ մասին 1891 թ. նշվել է. «Տպագրութեան արհեստը Շուշում լաւ է դրած. այդտեղ կան երկու հարուստ տպարաններ, որոնց մեջ գործում են արագատիպ մեքենաներ: Կովկասում Շուշին Թիֆլիսից յետոյ առաջին տեղն է բռնում հայերէն գրքերի հրատարակութեան գործում. և այդ կողմից նա առաջ է անցել այնպիսի մեծ ու հայաշատ քաղաքից, որպիսին է Բազուն»³⁸:

Շուշիում մինչև 1920 թ. գործել է 10 տպարան, որտեղ հրատարակվել են 160 գիրք և 11 պարբերական:

Բողոքական քարոզիչների տպարան (մոտ 1822-1833). Հայաստանի տարածքում երկրորդ տպարանը բացվում է մոտ 1822 թ. Շուշիում Բագելի «Ավետարանական քարոզչական ընկերության» քարոզիչներ Ավգուստ Դիտրիխի և Ֆիլիցան Չարեմբայի ջանքերով:

1830 թ. Ե. Մմիթն ու Հ. Դուայթը վկայել են, որ քարոզիչները Շուշիում ունեն պ. Դիտրիխի դեկավարությամբ գործող տպարան, որտեղ տպագրվող հայերեն աշխատությունները պարտադիր կերպով ենթարկվում էին գրաքննության սկզբում Ներսես արքեպիսկոպոսի, ապա Էջմիածնի Սինողի կողմից. «Ամենակարևոր աշխատանքը, որը ձեռնարկվել է պ. Դիտրիխի կողմից, և որից ամենամեծ օգ-

28 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Ը, էջ 599:
29 Հայ պարբերական մամուլը. մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980), կազմ. Բարդույան Մ., Երևան, 1986, էջ 98:
30 Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Մայր աթոռ Ս. Էջմիածինը Առաջին Հանրապետության տարիներին (1918-1920 թթ.), գիրք Ե, Երևան, 1999, էջ 31, 61:
31 **Ջարեան Կ.**, Անցորդը եւ իր ճամբան, «Հայրենիք», 1927, № 8, էջ 36:
32 Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Ե, էջ 137:
33 Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Ե, էջ 511-513:
34 Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Ե, էջ 427:
35 **Ուղեւոր Ա.**, Ուղեւորութիւն, «Սիօն», 1877, էջ 185: Տե՛ս նաև **Սմբատյանց Ա.**, նշվ. աշխ., էջ 115:

36 Վահան Ծ. վարդապետ Բաստամյանցը (1842, Թիֆլիս - 1881, Վաղարշապատ) հրապարակախոս, մանկավարժ, եկեղեցական գործիչ է:
37 **Բաստամյանց Վ.**, Նամակ Վաղարշապատից, «Մշակ», 1879, № 63, էջ 1-2:
38 «Տարագ», 1891, № 22, էջ 319:

տակարությունն է ակնկալվում, Նոր Կտակարանի քարգանությունն է ժողովրդական հայերենով...: Այժմ փաստացիորեն գրաքննիչների թշնամական դիմադրության պատճառով տպարանի աշխատանքները բոլոր բաժիններում դադարեցված են: Այսպես հայկական հիերարխիայի ներկայացուցիչները ռուսական օրենքների օգնությամբ և պապական իշխանության ոգով ու դաժանությամբ գործի են դնում իրենց իշխանությունը...»³⁹:

Գործունեության ընթացքում քարոզիչների տպարանը հրատարակում է 22 գիրք:

Արցախի հոգևոր թեմի (Սբ. Էջմիածնի, Հայոց հոգևոր տեսչության, Հայոց հոգևոր վարչության, Հայոց հոգևոր դպրոցի) տպարան (1837-1902). 1830-ական թվականներին կառավարության հրամանով արգելվում է Շուշիի բողոքականների քարոզչական, ուսուցչական, տպագրական գործունեությունը: Օգտվելով առիթից՝ Հոգևոր դպրոցի համար տպարանը գնում է⁴⁰ Արցախի թեմի առաջնորդ Բաղդասար մետրոպոլիտը (1830-1853) և այն վերանվանում «Հայոց հոգևոր տեսչության տպարան»։ «...հայկական տպարանն զերմանացուց, ի վաճառել նոցա գայն ի սեպտեմբեր ամսոջ, ըստ խորհրդոց յառաջաւոր իշխանաւորաց քաղաքիս, գնեցի ես հանդերձ ամենայն հարկաւոր պարագայիւքն իւրովք... հագար երկու հարիւր տասն և ինն մանէթի, յորոց զչորս հարիւր ութսուն մանէթն հատուցին ժողովուրդ տեղոյս սեպտեմբեր ամսոյ յօժարականութեամբ իւրեանց, իսկ զմնացեալ եօթն հարիւր տասն և ինն մանէթն փոխ առեալ են մուրհակաւ յայրոց, ինքնին հատուցի, գոր սակաւ առ սակաւ պարտիմ վճարել...: Ի գնել գտպարանդ՝ նպատակ մեր այն էր, զի մնասցէ այն անշարժ աստ ի քաղաքիս, գիտելով չափ, զի եթէ ելանէր այն ի ձեռաց, անյուսալի լինէր այնուհետ գործ անել երբէք այսր գայլ տպարան»⁴¹:

Այս տպարանում առաջին գիրքը՝ Ջ. Բայրոնի «Շիլլոնեան կալանաւորը» (թարգմ. Մ. Չոհրապյան), լույս է տեսնում 1837 թ.⁴², որի տիտղոսաբերթում տպագրության վայր է նշվում «Վիճակաւոր առաջնորդին Ղարաբաղու բարձր սրբազան մետրոպոլիտի Բաղդասարայ»:

Տպագրությունն ընթանում է մինչև 1840 թ.՝ հրատարակելով 11 գիրք:

1853 թ. ապրիլի 13-ին Բաղդասար մետրոպոլիտն իր առաջին կտակով տպարանը թողնում է Արցախի Վիճակային հայոց կոնսիստորիայի ենթակայության ներքո. «Չտպարանն գնեալ սեպտեմբեր ամսոյս իննու թողում յօգուտ վիճակային Հայոց կոնսիստորիին Ղարաբաղու, իսկ եթէ ոչ իցէ կոնսիստորիայ, գորմէ չյուսամ, յայնժամ տուեալ լիցի ի վարձու և ի տարեկան եկամտից կէսն տուեալ լիցի վանօրէիցն Գանձասարու և սրբոյն Յակոբայ և կէսն որդոց աղքատաց, ուսանողաց առ մասնաւոր անձինս»⁴³:

1858 թ. թեմակալ առաջնորդ Գևորգ եպիսկոպոս Վեհապետյանը տպարանը հայ բարեգործ մոսկվայաբնակ Հովհաննես Հովնանյանի աջակցությամբ վերազինում է ձեռքի նոր մամուլով և հայերեն տառերով և այն անվանում Սբ. Էջմիածնի տպարան՝ դնելով կոնսիստորիայի իրավասության ներքո⁴⁴ (1858-1863 թթ. ընթացքում հրատարակվում է 3 գիրք):

1862 թ. տպարանում, որը վարձով էր տրվել տպագրիչ Մինաս Տարղիճյանցին, Թեմական դպրոցի հոգաբարձության առաջարկով սկսվում է կաթողիկոսական կոնդակների և դպրոցի կանոնադրության տպագրությունը, սակայն թեմակալ առաջնորդ Վարդան արքեպիսկոպոս Օճնեցու հանձնարարականով Շուշիի կոնսիստորիան «...շտապում է հաղորդել Շուշու քաղաքային ոստիկանութեան, թե... Մինաս Տարղիճեանի մասնաւոր տպարանում տպագրում են հոգևոր իշխանութեան թղթերը առանց նոյն իշխանութեան գիտութեան և թոյլտութեան, ուստի խնդրում է փակել Տարղիճեանի տպարանը...: Ոստիկանութիւնը բացատրութիւն է խնդրում հոգաբարձութիւնից, որ և հաստատում է, թէ այդ թղթերի տպագրութեան համար առանձին թոյլտութիւն և գրաքննութիւն հարկաւոր չէին, քանի որ թղթերը իրան, հոգաբարձութեան են պատկանում...: Ոստիկանութիւնը իրաւունք տուեց հոգաբարձութեան, տպարանը չը փակուեց...»⁴⁵:

Երկու տարի անց վերստին տպարանն անցնում է Շուշիի թեմական դպրոցի ենթակայության ներքո. «...դպրոցի հոգաբարձու Համբարձում-բէկ Մարտիանբէկեանը դիմում է Յովնանեանին և խնդրում, որ նա 1858-ից իր նուիրած տպարանը յատկացնէ թեմական դպրոցին: Նուիրատուն դիմում է կոնսիստորիային և առաջնորդին ու յայտնելով, որ ինքը տպարանը Էջմիածնին չէր նուիրել, այլ Ղարաբաղի հոգևոր դպրոցին, պահանջում էր իսկոյն յանձնել տպարանը հոգաբարձութեան: Կոնսիստո-

39 Researches of the Rev. E. Smith and Rev. H. G. O. Dwight in Armenia..., pp. 318-320 (բնագրում՝ «The most important work which Mr. Dittrich has attempted, and the one from which the most good is anticipated, is a translation of the New Testament into the vulgar dialect of the Armenians. ...The operations of the press in every department, are in fact now entirely stopped by the inimical opposition of the censors. Thus is the Armenian hierarchy, by the aid of Russian laws, exercising, with the spirit and rigor of papacy...»):

40 **Ղուկասեան Հ.**, Բողոքականութեան հաստատուիլը Կովկասու հայոց մէջ, «Մեղու Հայաստանի», 1885, № 55, 18 յուլիսի, հինգշաբթի, էջ 2:

41 **Լեօ**, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգևոր դպրոցի. 1838-1913, Թիֆլիզ, 1914, էջ 121-122:

42 Ի դեպ, այս հրատարակությունը պահպանված չէ: Այն առաջինը հիշատակում է միայն Լեոն (տես նշվ. աշխ., էջ 124):

43 Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933), գիրք Թ, Երևան, 2001, էջ 232:

44 **Լեօ**, նշվ. աշխ., էջ 302:

45 Նշվ. աշխ., էջ 273:

րիան կատարում է այդ պահանջը և հոգաբարձու-
թիւնը մասնատր ցուցակով ստանում է 1864-ին
տպարանը Տարղիճեանից և նորից նրան է յանձ-
նում կառավարելու համար»⁴⁶: Այնուհետև տպա-
րանն աշխատեցնում են տպագրիչներ Խաչատուր
քահանա Գալաբեկյանը, Ավետիս Թառումյանն ու
Բաբաջան Գրիգորյանը⁴⁷:

1873 թ. սեպտեմբերի 1-ին Հոգևոր դպրոցի նո-
րանշանակ տեսուչ Խորեն վարդապետ Ստեփանեն
սկսում է «...աշխատել մեռած գրատունն վերանորո-
գել, ...կիսակենդան տպարանն վերանորոգել, որ
«Հայկական աշխարհ» շարունակել»⁴⁸: Նա ոչ
միայն վերստին կյանքի է կոչում տպարանը, այլև
կարողանում է 1874 թ. հրատարակել 1871 թ.-ից
չտպագրվող «Հայկական աշխարհ» ամսագրի ապ-
րիլ-օգոստոս ամիսների համարները (ի դեպ, այս ամ-
սագրի առաջին համարը լույս է տեսել 1864 թ. Թիֆ-
լիսում)⁴⁹: Ի դեպ, տպարանը զբաղեցնում էր Թեմա-
կան դպրոցի ներքնահարկի սենյակներից մեկը⁵⁰:

Ըստ ամենայնի, նյութական մեծ դժվարություն-
ների առաջ կանգնելով, տպարանի գործունեությու-
նը շուտով դադարում է և կրկին վերագործարկվում
1885 թ. Թեմական դպրոցի տրամադրած և հասա-
րակությունից հանգանակված նյութական միջոց-
ներով: Կարծիք կա, որ տպարանի վերաբացման
պատճառն առկա մրցակցությունն էր բողոքական
Սիրգազան Մահտեսի-Հակոբյանցի տպարանի
հետ. «...լուրերը հաւատացնում էին, թէ այդ միակ
տպարանը մեծ վաստակներ է տալիս իր տիրոջ,
ուստի միտք յղացաւ, թէ պետք է վնասել այդ բողո-
քականին, ստեղծելով նրա հանդէպ մի ուժեղ մրցա-
կից: Հոգաբարձուները դիմեցին կամատր ժողովա-
րարութեան: Նուէրներ տալիս էին յօժարութեամբ,
վնասել բողոքականին, թէկուզ նա լինի հայ և միա-
ժամանակ օգուտ տալ թեմական դպրոցին...: Հաւա-
քուեց 2505 ռուբլու մի գումար. հոգաբարձութիւնը
դպրոցական գումարներից աւելացրեց դրա վրայ
1847 ռուբլի և հէնց նոյն 1885 թուականից ձեռք գալ-
կաւ տպարանը վերականգնելուն»⁵¹:

Նոյն թվականին տպարանը վերազինվում է
փոքրիկ մեքենայով, հայերեն և ռուսերեն տառերով,
իսկ «Հոգաբարձութիւնը փորձեց ինքը բանեցնել
տպարանը, բայց վնաս արաւ, ուստի դիմեց ...կա-
պալով տալու միջոցին»⁵²:

Հայտնի է, որ 1893 թ.-ից հետո տպարանի գործու-
նեությունը աստիճանաբար սկսում է վատանալ, և

1902 թ.-ից հետո վերջնականապես փակվում է
«...համակրելի հիմնարկութիւնը, որ այնքան հա-
մեստ, բայց գնահատելի դեր է կատարել Շու-
շում...»⁵³:

Տպարանը 1864-1902 թվականների ընթացքում
հրատարակում է 37 գիրք:

Մինաս Տարղիճյանցի տպարան (1854). Շու-
շում գործած երրորդ տպարանը, որը գոյություն է
ունենում միայն 1854 թ., հիմնադրում է Մինաս
Տարղիճյանցը: Մեկ տարվա ընթացքում տպա-
գրվում է 2 գիրք⁵⁴: Ի դեպ, Մինաս Տարղիճյանցն
այն նույն անձն է, ով 1851 թ. երկու գործընկերների
հետ տպարան էր բացել Շամախիում:

Հ. Ս. Հովնանյանցի տպարան (1870). Հ. Ս. Հով-
նանյանցի մասնավոր տպարանը գործում է միայն
իր բացման տարում և հրատարակում ընդամենը
մեկ գիրք⁵⁵:

**Սիրգազան Մահտեսի-Հակոբյանցի տպարան
(1879-1900).** Շուշում գործած հաջորդ տպարանը
բացում է Սիրգազան Մահտեսի-Հակոբյանցը՝ 1879
թ.⁵⁶:

1885 թ. Շուշի այցելած Եղիշե ավագ քահանա
Գեղամյանցը (Հայկունի) Սիրգազան Մահտեսի-
Հակոբյանցի մասին հաղորդում է. «Սիրգազան
Յակոբեանցը Շուշույ հայ-աւետարանականաց
գլխաւորն է, որոյ տան մէջն է և՛ ժողովարանը՝ կից
սեպիական տպարանին և գրախանութին: Այս
Սիրգազան Յակոբեանցի մասին՝ մի պաշտօնա-
կան թղթի մէջ կարդացի, որ սրանից մի քանի տա-
րի առաջ՝ Շուշեցի մի թիւրքի տանից տախտակներ
և ներկեր է գողացած: Եւ դորա համար, դատարանի
վճռով, 1/2 տարի ժամանակաւ, արեստանդների
բօտան է աքսորուած: Սի և նոյն անձը Հաղորդ գի-
ւղի գործարանից մետաքսներ գողացած լինելուն
համար իբր՝ այժմ ուստիկանարանի ձեռքով քննու-
թեան տակ է: Այս մասին էլ ես մի գործ կարդացի:
Շատ բաներ էլ բերանացի լսեցի: Չը գիտեմ ո՞ր աս-
տիճան ճշմարիտ են»⁵⁷:

Տպարանի վերաբերյալ հավելյալ մանրամաս-
ներ է հաղորդում Պետրոս Չաքարյանը. «...Բաքվից
աքսորից վերադարձավ Մ. Մահտեսի-Հակոբյանը,
իր տանը կից հասուկ շենքում հիմնադրեց մի
տպարան, որտեղ աշխատում էին իր որդիները:
Նոր տպարանը բարգավաճում էր իր հիմնելու օ-

46 Նշվ. աշխ., էջ 303:

47 Նշվ. աշխ., էջ 374:

48 **Շահունեանց Վահան**, Նամակ Շուշուց, «Մշակ», 1873, № 41,
էջ 2-3:

49 Հայ պարբերական մամուլը (1794-1980), էջ 33: Տե՛ս նաև
Ավագյան Ս., Նյութեր Գարաբաղի նախատվետական շրջա-
նի մամուլի պատմությունից, Երևան, 1969, էջ 20:

50 **Լեօ**, նշվ. աշխ., էջ 375:

51 Նշվ. աշխ., էջ 429:

52 Նշվ. աշխ., էջ 430:

53 Նշվ. աշխ., էջ 431:

54 Հայ գիրքը 1851-1900 թվականներին, Երևան, 1999, էջ 23, 25:

55 Նշվ. աշխ., էջ 151:

56 Ի դեպ, այլ աղբյուրներ տպարանի հիմնադրման տարեթիվը
համարում են 1880 կամ 1881 թթ. (**Բալայան Վ.**, Արցախի
պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Երևան, 2011, էջ
211), սակայն առաջին գիրքն Արիստակես վարդապետ Մեղ-
րակյանի թարգմանությամբ այստեղ տպագրվում է 1879 թ.
(Հայ գիրքը 1851-1900 թվականներին, հ. Գ, էջ 260-261):

57 **Հայկունի**, Ուղեգնացական ակնարկներ, «Մեղու Հայաստա-
նի», 1885, № 62, 11 օգոստոսի, էջ 3: Տե՛ս նաև նույնի՝ Ուղե-
գնացական ակնարկներ, Երևան, 2010, էջ 34:

րից: Ի միջի այլոց այստեղ իր գրական մկրտությունն ստացավ մեր գրող Լեոն, որը տպարանի առաջին սրբագրողն էր...»⁵⁸:

Մ. Մահտեսի-Հակոբյանցի տպարանում հրատարակված առաջին գիրքը (1879 թ.) Ջոն Վիլիամ Դրեյլերի «Պատմություն մտաւոր զարգացման Երուսալիոյ» գրքի առաջին հատորն է Արիստակես վարդապետ Մեղրակյանի թարգմանությամբ, որի առթիվ նշվել է. «Ինչ վերաբերում է տպագրութեան, պետք է ասել, որ արտաքին կողմից շատ լատ չէ, մանաւանդ տպագրական սխալներով, տեղ-տեղ անորոշ և անկանոն տառերով: Բայց այդ ամենը առաջ է եկել ոչ թէ իրեն թարգմանչի անուշադրութիւնից, կամ խնայողութիւնից, այլ տպարանատիրոջ իր պարտքը անբարեխղճաբար կատարելուց: Յայտնի է, որ Շուշու հոգևոր դպրոցի տպարանը, որտեղ մի ժամանակ բնական գրքեր տպվում էին, այժմ այլևս գոյութիւն չունի, այստեղ անցեալ տարի մի մասնատու տպարան է բացել, որի առաջին պտուղը Դրեյլերի թարգմանութիւնն է: Թէև այդ տպարանը հ. Մեղ. հետ պայման է կապել օրինատու կերպով տպագրելու, բայց, ինչպէս գրքից երևում է, նա շատ տառեր չէ ունեցել...»⁵⁹:

1881 թ. այս տպարանում է հրատարակվում Բաֆֆու «Խենթ»-ը: Տպագրական որակի մասին Բաֆֆին վերինագույնից բարեգործ Մելքոն Փանյանին հղված նամակներում նշում է. «...իրավունք էի տված Շուշուում տպագրելու: Այս քաղաքից «Խենթի» առաջին թերթերը ուղարկել էին ինձ տեսնելու համար, թուրքը բավական լավն է և տպագրությունը մաքուր, երևում է, այնտեղի տպարանը այժմ փոքրիշատե կանոնավորված է»⁶⁰:

1896 թ., ըստ ամենայնի, այս տպարանում Երվանդ Լալայանի խմբագրությամբ լույս է տեսնում «Ազգագրական հանդէս»-ի առաջին համարը, այնուհետև տպագրությունը շարունակվում է Թիֆլիսի Մ. Ռոտինյանցի տպարանում⁶¹:

Մ. Մահտեսի-Հակոբյանցի տպարանը ոչնչացնում է 1905 թ. Շուշուի հրդեհի ժամանակ⁶²:

Տպարանն իր գոյության 25 տարիների ընթացքում լույս է բնծայում 54 գիրք և 1 հանդես:

Եղիսաբեթ (Ե.) Մ. Մահտեսի-Հակոբյանցի տպարան (1901-1904). ըստ ամենայնի, Միրզաջան Մահտեսի-Հակոբյանցի դուստրն է: Ծառունակելով հոր գործը՝ 1901-1904 թթ. ընթացքում տպագրում է 4 գիրք⁶³:

Բագրատ Տեր-Սահակյանցի տպարան (1901-1917). Շուշուի բնական դպրոցի թվաբանության ուսուցիչ Բ. Տեր-Սահակյանցի տպարանն իր գործունեությունը սկսում է Ե. Մահտեսի-Հակոբյանցի տպարանի հետ միաժամանակ⁶⁴ և գոյատևում մինչև 1917 թ.՝ լույս ընծայելով 20 գիրք, 1915 թ.՝ «Փայլակ» անվամբ թերթ⁶⁵:

Մելքոն Բաբաջանյանի (Մ. Բաբաջանյանի, Մ. Բաբաջանովի) տպարան (1910-1919). այստեղ է տպագրվում գավառական առաջին օրգան «Լաւրաբաղ» եռօրյա թերթը. «...Ն. Յարամիշյանի «Լաւրաբաղ» թերթը պետք է տպագրվի Մելքոն Բաբաջանյանի տպարանում, որ տեղավորված է Շուշու քաղաքի Թամիդյան փողոցի վրա գտնվող Յաղուրյանի տանը...»⁶⁶: Առաջին համարը լույս է տեսնում 1911 թ. սեպտեմբերի 13-ին: Տպագրվում է մինչև 1912 թ. օգոստոս (ընդամենը 74 համար):

Ի դեպ, 1917 թ., երբ հրատարակվում էր «Նեցուկ» թերթը, տպարանն ուներ միայն մեկ աշխատակից. գրաշար-տպագրիչն էր⁶⁷:

Այդպիսով, իննամյա գործունեության ընթացքում տպարանում լույս են տեսնում 19 գիրք, 10 թերթ:

Հարկ է նշել, որ 1895 թ.-ից Շուշուում լույս են տեսել նաև խմորատիպ թերթեր և ամսագրեր: Դրանցից էին «Կուկոն» ամսաթերթն Իշխան Սիբայեյանի խմբագրությամբ, «Կուկոն» պարբերաթերթը, «Աշակերտ», «Шушинская жизнь», «Միրած», «Պայքար», «Ծիծաղ», «Սրինգ» թերթերը: Ի դեպ, 1913-1917 թթ. «Միրած» կազմակերպության համանուն անլեզու ամսագիրը տպագրվել է շուշուցի Սիմոն Ախյանի տանը, ով այդ մասին գրել է. «Տպարանը մեր տունն էր... թերթը տպագրում էինք խմորատիպ, այսինքն գործ էինք անում զիցերին և ժեյատին: Թուրքն էլ բարձր որակի էր («Ալեքսանդրյան»): «Միութենականները» շատ են հետևել իմանալու մեր տպարանի տեղը, որպեսզի մատուեն մեզ, բայց մինչև վերջ էլ այդ նրանց չհաջողվեց»⁶⁸:

ՎԱՐԱԳԱՎԱՆՔ

«Արծիվ Վասպուրականի» (Վարազավանքի) տպարան (1857-1864, 1872-1874, 1876, 1883, 1908, 1913). 1857 թ. Սկրտիչ վարդապետ Խրիմյանն իր վանահայրության առաջին տարում Վարազավանքում հիմնում է Արևմտյան Հայաստանի առաջին տպարանը Կ.Պոլսից «իր հետ բերած 70,000 դուրլանոց փայտե մամուլով», որի նպատակն էր հրատարակել «Արծուի Վասպուրական» հանդեսը և ո-

58 **Ավագյան Ս.**, Էջեր Լեոնային Ղարաբաղի կուստուր-կրթական կյանքի պատմությունից, Երևան, 1982, էջ 12:

59 **Հ. Ա.**, Ջոն Վիլիամ Դրեյլերի «Պատմություն մտաւոր զարգացման Երուսալիոյ» թարգ. Ա. վարդ. Մեղրակեան, Շուշու, 1880, «Մշակ», 1880, № 69, էջ 2:

60 **Բաֆֆի**, Եժ, հ. 10, Երևան, 1959, էջ 566: Հմմտ. էջ 568:

61 Հայ պարբերական մամուլը (1794-1980), էջ 49:

62 **Ավագյան Ս.**, Նյութեր Ղարաբաղի նախատվեստական շրջանի մամուլի պատմությունից, էջ 65:

63 Հայ գիրքը 1901-1920 թվականներին, Երևան, 2007, էջ 15, 64, 71, 110:

64 Այլ աղբյուրների համաձայն՝ տպարանը բացվում է 1880-ական թվականներին (**Լեոնյան Գ.**, նշվ. աշխ., էջ 233) կամ 1905 թ.-ից հետո (**Բալայան Վ.**, նշվ. աշխ., էջ 211):

65 Ի դեպ, թերթի 1-3 համարները տպագրվում են Բ. Տեր-Սահակյանցի, ապա Մ. Բաբաջանյանի տպարանում (**Ավագյան Ս.**, Նյութեր Ղարաբաղի..., էջ 137-139):

66 **Ավագյան Ս.**, Նյութեր Ղարաբաղի..., էջ 85:

67 Նշվ. աշխ., էջ 187:

68 Նշվ. աշխ., էջ 133:

գևորել ժողովուրդը այդ անսագրի հայրենասիրական, պատմական, կրօնական, բանաստեղծական յողուածներով»⁶⁹:

Տպարանը, որը տեղադրված էր առաջնորդարանի ստորին հարկում, գործունեությունը սկսում է 1858 թ. հունվարին: Այդտեղ էին հրատարակվում ոչ միայն «Արծուի Վասպուրականի» ամսաթերթը, այլ նաև գրքեր:

«Արծուի Վասպուրականի»-ի համարներից մեկում Մ. Խրիմյանն ընթերցողներին բացատրում է տպագրական թերությունների պատճառը՝ մասնավորապես նշելով, որ «Տպարանը գործում է այնպիսի վայրում, ուր տպագրական գործը չունի ավանդույթներ, աշխատակիցները՝ տպագրիչները, ձուլողները, գրաշարները, անփորձ պատանիներ են...: Տպագրական մեքենայի փոքր չափը և գործերի մեծ ծավալն ու ընդգրկումը»⁷⁰:



Սկրտիչ Խրիմյանը 1889 թ.

1862 թ., երբ Սկրտիչ վարդապետ Խրիմյանը նշանակվում է Տարոնի առաջնորդ և Մշո Սբ. Կարապետ վանքի վանահայր, «Առաջին գործն եղաւ Վարագայ տպագրական մամուլներն մեկը իւր պարագայիւ պատրաստել, որ իրեն հետ տանի Մ. Կարապետի վանքը... տպարանի շարունակությունը յանձնեց առհասարակ եղբարց յառաջադէմ աշակերտաց աշխատասիրութեան...»⁷¹:

Տպարանի գործունեությունը դադարում է 1864 թ. կեսերին և կարճատև ընթացքով վերսկսվում միայն 1872 թ. օգոստոսին (գործում է մինչև 1873 հունվարի 13-ը): Խմբագիրն էր Մանուել Անանյանը, աշխատակիցները՝ Մանուել Արտամետցյանը, Տիգրան Ամիրջանյանը, Ս. Գնունին և ուրիշները⁷²:

1884 թ. թուրքական կառավարության հրամանով տպարանը կնքվում է («Իտարէ Էմինին իւր հետ ունենալով Մեարիֆի Մուֆեթթիշը և ուրիշ մի թիւք պաշտօնատարն, Նալբանդեան Մարգար աղան և վեց ոստիկան... նախ գացեր են Վարագի վանքը և

վանքի թանգարանը և տպարանը կնքելէ յետոյ եկեր են Կեդրոնական վարժարան...»)⁷³, իսկ 1892 թ. Վանի կուսակալ Բահրի փաշայի կողմից տպագրական մեքենան բռնությամբ փոխադրվում է Վան, և այնտեղ սկսվում է թուրքալեզու «Վան» լրագրի հրատարակությունը⁷⁴:

Տպարանի փակման տխուր անցքերին անդրադարձել է վանեցի Պ. Մխիկյանը. «Դժբախտաբար չեմ յիշեր որ թուականին, աշնան, կիրակի օր մը... Վարագայ մամուլը եւ պարագաները եզան սայլերու վրայ բարձած, քողարկուած, սուինաւոր պահակներով շրջապատուած, ծանրաքայլ դէպի քաղաք կը յառաջանար. կըսուէր, թէ կառավարութիւնը ազգային մարմիններու հետ համաձայնած է «ժամանակատր կերպով փոխ կամ վարձու տանելու» տպարանը: ...Շատերու աչքերը, մանաւանդ երիտասարդներուն, խոնաւ էին եւ բռունցքը ամուր: Շատ լաւ գիտէին թէ ինչ ըսել է «փոխվարձու» տանելը. կը յամենային, որովհետեւ կուզէին վերջին ակնարկ մը նետել գերուածին... Մամուլը զետեղեցին Քաղաքամէջ, կառավարութեան շէնքին կից, միայարկ երկու խոշոր սենեակներու մէջ եւ սկսան գործածել զայն, ութնօրեայ 4 էջանոց թուրքերէն թերթ մը հրատարակելով «Վան» անունով...: Չեմ յիշեր թէ կառավարութիւնը որքան ստեն գործածեց զայն եւ կամ վերջէն ինչ եղաւ, բայց գիտեմ, թէ տակաւին Ա. պատերազմի նախօրեակին թուրքերէն Վան թերթ մը կը հրատարակուէր Վանի մէջ»⁷⁵:

Տպագրական մեքենայի՝ Վան տանելու մասին 1893 թ. նշվել է նաև հետևյալը. «Զիչ ժամանակ առաջ, կառավարական պաշտօնեաները վանք գալով տարած էին թանկագին առարկան, որուն ձայնը լռած էր արդէն երկար տարիներէ ի վեր: Կառավարութիւնը մեքենան լարեց Վանի մէջ և հայ գրաշար մը բռնի տարած ըլլալով գործածեց պաշտօնաթերթի հրատարակման»⁷⁶:

Սահմադրության հռչակումից հետո՝ 1908 թ., տպագրական մեքենան «...կրկին Վարագ փոխադրուեցաւ... երբ ալ դադարած էր յիշեալ թուրքերէն թերթը ...թուրք կառավարութիւն՝ մամուլն ու կազմածները նորէն Վարագայ միաբանութեան կը վերադարձնէ: Վանքին վերակացուն՝ պարոն Պետրոս, հօտադներուն կը հրամայէ անյապաղ տոկուն եզներ սայլին լծած քաղաք իջնել: Ուրախութեան, ողջոյններու եւ երգերու տեղատարափին տակ, տպագրական այդ կազմածները եզնասայլերու վրայ տեղադրուած Վարագ կը փոխադրուին»⁷⁷:

69 Ծերուկ (Արտակ Դաքքինյան), Վանի նահանգը ներկայումս, «Մուրճ», 1904, № 12, էջ 51): Տպարանի մասին տես նաև Բաբայան Ա., Հայ տպագրության 450 տարին, «ՊԲՀ», 1963, № 1, էջ 39: Ի դեպ, Սկրտիչ վարդապետն իր հետ Կ.Պոլսից բերել էր փայտե և մետաղե մամուլ (տես Գիթուհի Ս., Վարագայ յոբելեան. յիշատակարան եւ կոչ Վարագայ կրթական հաստատութեան յիսնամեայ յոբելեանի (1857-1907), Կ.Պոլիս, 1910, էջ 13):

70 Կոստանդյան Է., Սկրտիչ Խրիմյան. հասարակական-քաղաքական գործունեությունը, Երևան, 2000, էջ 66-67:

71 Գիթուհի Ս., նշվ. աշխ., էջ 13:

72 Տեր-Սկրտիչեան Ե., Գանձեր Վասպուրականի, հ. Ա, Պոսթոն, 1967, էջ 619:


73 «Արձագանք», 1885, № 1, 9 յուլիսի, էջ 7:

74 Վարդ (Գարեգին Սրվանձտյանց), Մի պտոյտ Վանի շրջակայքում, «Արաքս», 1898, Ա, էջ 61:

75 Մխիկեան Պ., Վարագայ տպարանի գերութիւնը, «Վարագ», 1954, № 4, էջ 21-22:

76 Լինչ Հ. Ֆ. Պ., Հայաստան. ուղեորութիւն եւ ուսումնասիրութիւններ, քարգմ. Լևոն Լարենց, հ. Բ, Կ. Պոլիս, 1914, էջ 127:

77 Տեր-Սկրտիչեան Ե., նշվ. աշխ., հ. Ա, էջ 620:



«Պարոն Պետրոս «Արծուի Վասպուրականի» տպագրական ճամբարի կրթնած», արտատպված՝ Փափագեան Վ., Իմ յուշերը, հ. Բ, Պէյրուք, 1952, էջ 293:



Մշո Սր. Կարապետ Գարեգին Սրվանձտյանց

Նույն թվականին Վարազավանքի ուսուցիչները վանքում հրատարակում են «Արծուիկ» խմորատիպ երկշաբաթաթերթը (յույս է տեսնում միայն 3 ամիս)⁷⁸:

1910 թ. հիմնադրված «Վարազա սանուց միությունը» ցանկանում է «...վերահաստատել մեր «Արծուի Հայրիկի» տպարանը, անոր յիշատակը յաւերժ անմահացնելու համար»⁷⁹:

Մեծ եղեռնի օրերին վերջնականապես դադարում է նաև տպարանի գործունեությունը. «Տեսանք և «Վասպուրականի Արծուի»-ի տպարանը. ձեռքի տպարան, այժմ քանդուած մէկ կողմ ընկած...»⁸⁰:

ԻՆՆԱԿՆՅԱՆ ՍՐ. ԿԱՐԱՊԵՏ ՎԱՆՔ

«Վասպուրական Արծույն» տպարան (1863-1865). 1862 թ. Սկրտիչ վարդապետ Խրիմյանը, ստանձնելով Մշո Սր. Կարապետ վանքի վանահայրությունը, այստեղ է տեղափոխում Վարազավանքում գտնվող փոքրիկ տպարանի փայտե մանուկը և 1863 թ. ապրիլի 1-ից մինչև 1865 թ. հունիսի 1-ը Գարեգին վարդապետ Սրվանձտյանցի⁸¹ խնամքով հրատարակում «Արծուիկ Տարօնոյ» երկշաբաթաթերթը⁸²: Թերթի առաջին համարում Գ. Սրվանձտյանցը գրում է. «...այս ձեռնարկութիւն դժուարին է, վասնզի Մշոյ Ս. Կարապետի վանքը տպարան հաստատել... ժողովրդեան սրտերու մէջ ուսումնասիրութեան եռանդը տնկել... տպարան

փոքրիկ եւ շատ պարագաներով պակաս. ժողովրդեան միտքեր իբրեւ հին տիկ եւ միանգամայն թշուառութեամբ լցուած ու պատառոտած, սակայն Արծուիկ ամէն կերպով զինքը պիտի յարմարէ եւ բաւական սնէ երկուքին ալ, գոնէ առ այժմ այս չափով եւ այս ճանապարհով»⁸³:

Մշո Սր. Կարապետ վանքում հաստատված տպարանն իր կարճատև գործունեության ընթացքում կառավարության հրամանով մի քանի անգամ փակվում է միաբան Մամբրե Մամիկոնյանի (1873-1882 թթ. վանքի վանահայրն էր) ամբաստանությունների պատճառով. «Նրիմեան մի բարեկարգ ժառանգաւորաց դպրոց հաստատեց յիշեալ Սուրբ Կարապետի վանքին մէջ ընտիր ուսուցիչներով և Վարազայ վանքէն իւր բերած տպարանը զետեղեց նոյն տեղ: «Արծուիկ» անուամբ ամսատետր մի կը հրատարակէր նոյն վանքէն, որ քանի անգամ գոցվեցաւ այժմեան վանահայր Մամբրէ եպիսկոպոսի մատնութեամբ, որ դա յայտնած էր կառավարութեան, իբր թէ Խրիմեան իւր Արծուիկ թերթով ապստամբութիւն կը քարոզէ ժողովրդոց»⁸⁴:

1875 թ. միաբանությունը դիմում է Գևորգ Գևորգիլիկոսին վանքում շինարարական աշխատանքների ժամանակ «...նորոգ կառուցանել զընդարձակ դպրանոց տպարանաւ հանդերձ...»⁸⁵:

Մշո Սր. Կարապետ վանքի տպարանն իր կարճատև գործունեության ընթացքում հրատարակում է միայն թերթի 46 համար:

ԵՐԵՎԱՆ

Չաքարիա Գևորգյան Հակոբյանցի տպարան (1874-1880). Երևանի առաջին տպարանն է, որը հիմնադրել է Չ. Հակոբյանցը 1874 թ.: Հիմնադրումից մեկ-երկու տարի անց տպարանի կառավարումը ստանձնում է Է. Տեր-Գրիգորյանցը⁸⁶: Այս տպարանի «...վրա էին ծանրացած քաղաքի պաշտոնա-

78 Նշվ. աշխ., հ. Ա, էջ 622:

79 Պօղոսեան Ե., Պատմութիւն Հայ մշակութային ընկերութիւններու, հ. Բ, Վիեննա, 1963, էջ 33: Տես նաև «Յառաջ», Կարին, 1910, № 49:

80 «Հովիտ», 1915, № 39, էջ 609: Ի դեպ, Վարազավանքի տառադպարանի մեքենան տեղափոխվում է Էջմիածին և խորհրդային տարիներին գործածվում Երևանի 1 տպարանում: 1960 թ.-ից պահպանվում է Երևանի պատմության թանգարանում:

81 Բանասեր-բանահավաք, ազգագրագետ, հասարակական գործիչ Գարեգին վարդապետ Սրվանձտյանցի (17.11.1840, Վան-17.11.1892, Կ.Պոլիս) մասին տես Կոստանյան Է., Գարեգին Սրվանձտյանց, Երևան, 2008:

82 Կ. Մասունի, Պատմութիւն Տարօնի աշխարհի, Պէյրուք, 1957, էջ 206:

83 Նշվ. աշխ., էջ 212:

84 Եզնիկ Մառտէոս Տարօնացի, Խրիմեան Հայրիկ, «Մեղու Հայաստանի», 1876, № 7, 21 փետրվարի, էջ 2:

85 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԱ, էջ 596:

86 Հայ դրամատուրգ, մշակութային և հասարակական գործիչ Էմին Տեր-Գրիգորյանը (01.01.1855-1939, Երևան) ուսանել է Ասորիստանի Աղաբաբյան դպրոցում, Մոսկվայի Լազարյան և Էջմիածնի Գևորգյան ճեմարաններում: Դասավանդել է Երևանի Գայանյան օրիորդաց դպրոցում: 1906-1907 թթ. Քաղաքային ակումբի ավագների խորհրդի, իսկ 1910-11 թթ. քաղաքային դրամայի անդամ էր: Երևանի թատրոնի հիմնադիրներից մեկն է (մանրամասն տես Նազարյան Մ., Երևանի պարբերական մամուլը (1880-1917), Երևան, 1986, էջ 91-100):

կան և ոչ պաշտոնական կարգադրությունների, հայտարարությունների, ցավակցությունների ու մահազոհների, արտակարգ լուրերի ամբողջ տպագրությունը»⁸⁷: Առանձնապես ծանրաբեռնված տպարանն աշխատել է ռուս-թուրքական պատերազմի (1877-1878) ժամանակ⁸⁸:

Առաջին գիրքը, որ հրատարակվում է 1875 թ., «Ծաղիկ ընտանեաց»-ն էր (խմբագիր և հրատարակիչ՝ Աբգար Գուլամիրյանց)⁸⁹: Տպարանն իր վեցամյա գործունեության ընթացքում լույս է ընծայում 14 գիրք:

Աբգար Ստեփանոսյան Գուլամիրյանցի (Ա. Ս. Գուլամիրյան, Ստեփան Ա. Ս. Գուլամիրյանցի սեփական) տպարան (1879-1910). այս տպարանի վերաբերյալ տեղեկությունները սկսվում են 1879 թ.-ից, երբ հրատարակվում է հաջորդ տարվա օրացույցը: Ի դեպ, հիմնադրման շարժառիթը Ջաքարիա Հակոբյանցի տպարանի՝ 1877-1878 թթ. ստացած մեծ եկամտուն էր. «...գրգռեցին մի քանի պարոնների ախորժակը նոր տպարան բանալու: 1879 թ. արդեն շարք է մտնում Երևանի երկրորդ՝ Աբգար Գուլամիրյանցի տպարանը»⁹⁰:

Տպարանատեր Աբգար Գուլամիրյանցը նախ իր խմբագրությամբ գրքեր է հրատարակում Երևանի առաջին տպարանում, ապա բացում է իր սեփական տպարանը, որտեղ հրատարակվում են հիմնականում իր իսկ խմբագրած և հեղինակած գրքերը:

1896-1901 թթ. տպարանը չի գործում: Աշխատանքները վերսկսվում են 1902 թ.-ից: Գոյատևում է մինչև 1910 թ. և տպագրում 27 գիրք:

Էմին Տեր-Գրիգորյանցի (Է. Տեր-Գրիգորյանցի) տպարան (1880-1917). Էմին Տեր-Գրիգորյանցը 1880 թ. հիմնադրում է իր սեփական տպարանն իր բնակելի տան կողաշենքում: Ի դեպ, նա՝ որպես Ջաքարիա Հակոբյանցի տպարանի կառավարիչ, 1876 թ. հունվարին պայմանագիր է կնքում, ըստ որի՝ 5 տարվա ընթացքում տպարանատիրոջ մոտ կուտակված իր աշխատավարձի արդյունքում տպարանը պետք է դառնար իր սեփականությունը⁹¹: Է. Տեր-Գրիգորյանցի տպարանի կառավարչի պաշտոնը վարել է նաև Պերճ Պռոշյանը⁹²:



1883 թ.-ից հրատարակել է «Երևանի հայտարարություններ» կիսամյակական երկօրյա թերթը, որը մինչև 1886 թ. լույս է տեսել հայերենով, այնուհետև գրաքննության ճնշման հետևանքով 1900-1909 թթ. սկիզբը՝ ռուսերենով («Эриванские объявления»), 1909 թ. երկրորդ քառորդից մինչև 1917 թ.՝ հայոց և ռուսաց լեզուներով⁹³:



Է. Տեր-Գրիգորյանցը և սեփական տան կողաշենքում գտնվող իր հիմնադրած տպարանը (նախկին Քարվանսարա, այժմ՝ Եզնիկ կողբացի փողոց)

Այս տպարանում հիմնականում լույս են տեսնում տպարանատիրոջ ստեղծագործություններն ու թարգմանությունները և Երևանի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու երեցփոխի հաշվետվությունները, ընդհանուր թվով՝ հայերեն 46, ռուսերեն 5 գիրք և 1 թերթ:

«Պասակ» լրագրի տպարան (1880-1884). 1880 թ. մարտի 15-ից լույս է ընծայվում Երևանի գրական, պատմական և մանկավարժական անդրաբնիկ շաբաթաթերթը՝ «Պասակ» անվամբ: Խմբագիր-հրատարակիչը և տպարանատերը Վասակ Պապաջանյանն էր⁹⁴: Առաջին մի քանի համարները հրա-

87 **Հակոբյան Թ.**, Երևանի պատմությունը (1879-1917), Երևան, 1963, էջ 445:

88 Նույն տեղում:

89 Ոսումյիչ Աբգար Գուլամիրյանցը 1866 թ. ստանձնում է «Ազգային ընթերցասիրաց» նորաբաց ընկերության գրապահի պաշտոնը (**Ջաքարիա Տեր-Օհաննիսեան Տեր Ջաքարեանց**, Ազգային ընթերցարան յերեւան քաղաքի, «Մեղու Հայաստանի», 1866, № 6, փետրվար 12, էջ 43-44): Եղել է նաև Երևանի Սբ. Աստվածածին եկեղեցու գանձապահը (1896-1909 թթ.):

90 **Հակոբյան Թ.**, նշվ. աշխ., էջ 446:

91 Նշվ. աշխ., էջ 445: Է. Տեր-Գրիգորյանցի մասին տես նաև **Հովհաննիսյան Հ.**, Հայ թատրոնի պատմություն (XIX դ.), Երևան, 1996, էջ 428-432:

92 **Հակոբյան Թ.**, նշվ. աշխ., էջ 453:

93 **Նազարյան Մ.**, նշվ. աշխ., էջ 81-91:

94 Վասակ Պապաջանյանը (1847, Երևան-1893, Ծաղկաձոր) խմբագիր, մանկավարժ և հասարակական գործիչ էր: Թիֆլիսի գիմնազիան ավարտելուց հետո ուսումը շարունակում է Գերմանիայում: Ստանալով փիլիսոփայության դոկտորի աստիճան՝ վերադառնում է Հայաստան և 1877 թ. ստանձնում Շուշիի թեմական դպրոցի տեսչի պաշտոնը: 1878 թ. մայիսի 8-ին Էջմիածնի սինոդի որոշմամբ Վ. Պապաջանյանը կրթության և դաստիարակության վերաբերյալ իր հայացքների համար ազատվում է տեսչի պաշտոնից: 1879 թ. Երևանում խմբագրում է «Հայկական աշխարհ» ամսագիրը: 1881-1883 թթ. Երևանի քաղաքային ինքնավարության անդամ էր, 1883 թ.՝ քաղաքային վարչության անդամ և քաղաքագլխի պաշտոնակատար: 1885 թ., որպես «Հայասեր-սզգասեր» գաղտնի կազմակերպության (ստեղծվել է 1881 թ.) ղեկավարներից մեկը, արստրվում է Կովկասի սահմաններից դուրս: 1889 թ. վերադառնում է արստրից և բնակություն հաստատում Ծաղկաձորում, որտեղ էլ վախճանվում է 1893 թ. (մանրամասն տես նաև **Նազարյան Մ.**, նշվ. աշխ., էջ 45-48):

տարակվում են Ձ. Հակոբյանցի տպարանում, որից հետո «...սկսեցին տպարանում, որ փոքր տիրաժ ունեցող «Պասակի» տպագրությունը ուրիշի տպարանում միանգամայն անշահավետ է և կապված մեծ անհարմարությունների հետ: «Պասակի» հրատարակիչ-խմբագիրը թերթի լույս աշխարհ գալուց մի քանի շաբաթ անց արդեն ստեղծում է իր սեփական տպարանը, որը հայտնի է դառնում «Պասակի» անունով»⁹⁵:

Ըստ «Պասակ» թերթի թղթակցի՝ Ի դարասկզբին Երևանում գործող երեք փոքր տպարաններից միայն նշյալ տպարանն ուներ «...իր մշտական աշխատանքը՝ թերթի տպագրությունը, իսկ մյուս երկու տպարանների աշխատանքը կախված էր պատահական հանգամանքներից»⁹⁶:

Թերթն ընդհատումներով լույս է տեսնում համաձայն տպարանում մինչև 1884 թ. ապրիլի 7-ը, երբ տպագրությունը դադարեցվում է ցարական գրաքննության պատճառով, իսկ «...նրա խմբագիր-հրատարակիչ Վ. Պապաջանյանը ազատագրական շարժումներին անձամբ և իր թերթով մասնակցելու համար ենթարկվում է պատժի»⁹⁷:

Բացի «Պասակ» թերթից՝ բժիշկ Լևոն Տիգրանյանի⁹⁸ խմբագրությամբ 1881-1884 թթ. տպագրվում է նաև «Առողջապահական թերթ» միամսյա հանդեսը⁹⁹, որի տպագրությունը ևս դադարեցվում է ցարական գրաքննության պատճառով «Պասակ»-ի հրատարակչության փակումից մի քանի ամիս անց:

«Պասակ» լրագրի տպարանը զետեղված էր Դոկտորական (այժմ՝ Թումանյան) փողոցում՝ ներկայիս «Մոսկվա» կինոթատրոնի տեղում գտնված Սր. Պողոս-Պետրոս եկեղեցու հանդեպ՝ Նահապետ Հովակիմյանի տանը¹⁰⁰: Իր քառամյա գործունեության ընթացքում հրատարակում է 7 գիրք և 2 թերթ:

Բ. Կ. Էդելսոնի տպարան (1890-1903). Երևանում հաջորդ տպարանը ազգությամբ հրեա Ռոման

Էդելսոնը բացում է 1890 թ.՝ զննելով տեղի հայերից¹⁰¹ և տպագրում 18 գիրք, որից 16-ը ռուսերեն էր:

Պ. Հովհաննիսյանցի (Պ. Հովհաննեսեանց և ընկ.) տպարան (1905). այս տպարանը գործել է միայն իր հիմնադրման տարում և տպագրել հայերեն 4 (3-ի հեղինակը գրական-քատերական-կրթական գործիչ աստապատցի Մակար Տեր-Սարգսյանն է՝ Փառնակես ծածկանվամբ)¹⁰² և ռուսերեն 1 գիրք:

Այվազյանցի և Նազարյանցի տպարան (1907-1911). 1907 թ. Երևանում բացվում է Այվազյանցի և Նազարյանցի տպարանը: 1907-1911 թթ. ընթացքում հրատարակվում է 7 գիրք¹⁰³:

Արշակ Հակոբյանցի (Արշակ Հակոբյանց և ընկ., Արշ. Հակոբյանց և որդիներ, «Լույս») տպարան (հիմն. 1907). 1908 թ. այս տպարանում հրատարակվում է «Հրագրան» գրական, հասարակական և տնտեսական թերթը, որի առաջին երկու համարների խմբագիրն ու հրատարակիչն էր Պողոս Կանդուրայանը¹⁰⁴, ապա Ա. Տեր-Հակոբյանը: Մինչև 1909 թ. անկանոն պարբերականությամբ լույս է տեսնում 31 համար¹⁰⁵:

1911-1912 թթ. «Լույս» տպարանում Վահան Աբրահամյանի խմբագրությամբ լույս են տեսնում «Նոր ձայն» գրական, հասարակական¹⁰⁶ և «Կռան» գրական, հասարակական-տնտեսական, երգիծական շաբաթաթերթերը¹⁰⁷ (վերջինիս խմբագիրն էր Մուշեղ Բագրատունին)¹⁰⁸:

101 Амбарян А., Амбарян С., К характеристике промышленности Восточной Армении, «ՊԲՀ», 1967, № 2-3, էջ 201.

102 Հայ տպագիր գիրքը 1901-1920 թվականներին, էջ 144:

103 Նշվ. աշխ., էջ 176, 195, 201, 232, 252, 376:

104 Պողոս Կանդուրայանը գյուղատնտես էր: Ուսանել է Մոսկվայի Պետրովսկու անվան գյուղատնտեսական ակադեմիայում: 1901-1905 թթ. աշխատել է Երևանի մահանգային ուսումնարաններին կից գյուղատնտեսական բաժանմունքում որպես գյուղատնտես: Եղել է նաև Երևանի թեմական դպրոցի հոգաբարձու (մանրամասն տես՝ **Նազարյան Ս.**, նշվ. աշխ., էջ 117-126):

105 Հայ պարբերական մամուլը (1794-1980), էջ 73 (ի դեպ, քստ Մ. Բարյոյանի՝ թերթի խմբագիր-հրատարակիչը նախ Ա. Տեր-Հակոբյանն էր, ապա Պ. Կանդուրայանը): Տես նաև Հայոց պարբերական մամուլը (1794-1934), էջ 55:

106 Հայ պարբերական մամուլը (1794-1980), էջ 89: Տես նաև Հայոց պարբերական մամուլը (1794-1934), էջ 69: **Նազարյան Ս.**, նշվ. աշխ., էջ 128-135:

107 Հայ պարբերական մամուլը (1794-1980), էջ 88: Տես նաև Հայոց պարբերական մամուլը (1794-1934), էջ 68: **Նազարյան Ս.**, նշվ. աշխ., էջ 147:

108 Մուշեղ Բագրատունին (1870, Կարբի գյուղ - 1945) սկզբնական կրթությունը ստացել է Շամախու քառամյա դպրոցում: Հոր մահից հետո տեղափոխվում է Երևան: Սոցիալ-դեմոկրատական կուսակցությանը հարելու և արգելված գրականություն տարածելու պատճառով 1904 թ. ձերբակալվում է և 1905 թ. ազատվում: Աշխատակցում է Թիֆլիսում և Բաքվում լույս տեսնող բոլշևիկյան և սոցիալ-դեմոկրատական մի քանի թերթերի: 1920 թ. ունեցվածքի բռնագրավմամբ արտրվում է Գառնի գյուղ, ապա Պարսկաստան: 1921 թ. վերադառնում է Երևան և նշանակվում Բաշ-Գառնի գյուղի հեղկոմի նախագահ: «Շոռ և Շոռո» կինոսցենարի հեղինակն է (մանրամասն տես՝ **Նազարյան Ս.**, նշվ. աշխ., էջ 160-166):

95 **Հակոբյան Թ.**, նշվ. աշխ., էջ 446:

96 Նույն տեղում:

97 Նշվ. աշխ., էջ 433:

98 Բժիշկ, հասարակական գործիչ Լևոն Տիգրանյանը (10.12.1842, Երևան-1906, Երևան) ուսանել է Երևանի մահանգային դպրոցում, Թիֆլիսում, Պետերբուրգում և 1875 թ. ավարտել Գորպատի համալսարանի բժշկական ֆակուլտետը: 1880 թ. ընտրվում է Երևանի քաղաքային վարչությանը կից ստեղծված Առողջապահական հանձնաժողովի նախագահ: 1885 թ. հունվարի 15-ին Երևանի ոստիկանական վարչության արձակված հրամանով «Հայասեր-ագաւսեր» կազմակերպության ղեկավարներից Լ. Տիգրանյանը, ի թիվս այլոց, 3 տարով արքայազան է Գորպատ (մանրամասն տես՝ **Նազարյան Ս.**, նշվ. աշխ., էջ 49-72):

99 Հայոց պարբերական մամուլը. լիակատար ցուցակ հայ լրագրության սկզբից մինչև մեր օրերը (1794-1934), կազմ Գ. Լևոնյան, Երևան, 1934, էջ 23: Տես նաև Հայ պարբերական մամուլը (1794-1980), էջ 40: **Բարյոյան Ա.**, նշվ. հոդվ., էջ 38: Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ թերթը տպագրվել է Էմին Տեր-Գրիգորյանցի տպարանում (**Հակոբյան Թ.**, նշվ. աշխ., էջ 434):

100 **Հակոբյան Թ.**, նշվ. աշխ., էջ 432:

1918-1919 թթ. «Լույս» տպարանում է հրատարակվում ՀՀ դաշնակցության աշակերտական միության օրգան «Շանթ» թերթը Հ. Ասատրյանի խմբագրությամբ, 1918-1920 թթ.՝ «Ժողովուրդ» թերթը¹⁰⁹:

Իր գործունեության ընթացքում այս տպարանում հրատարակվում են հայերեն 54 և ռուսերեն 6 գիրք, 10 թերթ:

«Կուլտուրա» տպարան (1912-1920). այս տպարանն իր գործունեությունը սկսում է 1912 թ.-ից: Բացման առաջին տարում տպագրվում է Ա.Գոլի «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները» գիրքը:

1913 թ.-ից սկսած՝ խմբագիր Մուշեղ Բագրատունին հրատարակում է «Նոր մամուլ» եռօրյա երգիծական թերթը (1913-1915 թթ.) նախ «Կուլտուրա», ապա «Լույս» տպարաններում¹¹⁰:

1913 թ.-ից «Կուլտուրա» տպարանում Արշավիր Մելիքյանի¹¹¹ խմբագրությամբ լույս է տեսնում «Խօսք» թերթը, որը Հայաստանի կոմկուսի օրգանն էր: 1914 թ. խմբագրի ձեռքակալումից հետո թերթի հրատարակությունը դադարում է և նույն տպարանում վերսկսվում 1918 թ. սեպտեմբերի 22-ին՝ տպագրվելով մինչև 1919 թ. մարտի 22-ը¹¹²:

1916 թ. մայիսի 4-ից Վանի «Աշխատանք» թերթը շարունակում է հրատարակվել նշյալ տպարանում (1916-1919):

1917 թ. լույս է տեսնում «Չանգ» թերթը, 1918-1919 թթ.՝ «Կայծ»-ը և Երիտասարդ սոցիալիստիկներնացիոնալիստների «Մպարտակ» միության համանուն օրգանը (միայն մեկ համար)¹¹³:

Տպարանն իր գործունեության ընթացքում հրատարակում է հայերեն 8 և ռուսերեն 6 գիրք և 8 թերթ:

Երևանում գործել են նաև 1907-1918 թթ.՝ Երևանի **Նահանգական վարչության** (ատյանի), 1914 թ.՝ **Խ. Այվազյանցի**, 1917-1920 թթ.՝ **Ն.Գ. նախարարության**, 1919 թ.՝ **Ավագյանի**, 1919-1920 թթ.՝ **Սոցիա-**

լիստ-հեղափոխական կուսակցության, «Հայրենիք», «Ուրարտու», 1920 թ.՝ **Հայ պոլիգրաֆի և Գլխավոր շտաբի** տպարանները:

ԳԱՆՉԱԿ

Ֆյոդորովի և Թառումյանցի տպարան (1874-1879). Գանձակում առաջին տպարանը 1874 թ. հիմնադրում են Ֆյոդորովը և Թառումյանը: Տպարանը գործում է մինչև 1879 թ. և տպագրում 6 գիրք¹¹⁴, իսկ 1874-1875 թթ.՝ «Հայկական աշխարհ» ամսագիրը (խմբագիր՝ Խորեն Ստեփանե)¹¹⁵:

Ավետիք Մ. Թառումյանի տպարան (1888-1895). ըստ ամենայնի, Ֆյոդորովին և Թառումյանին պատկանող տպարանը հետագայում անցնում է Ավետիք Մ. Թառումյանի իրավատիրային ներքո և ընդմիջումներով գործում 1888-1895 թթ.: Այդ ժամանամիջոցում հրատարակում է 2 դասագիրք և Գանձակի Սր. Հովհաննես եկեղեցու՝ 1893-1894 թթ. ելքի և մուտքի ծախսերի հաշվետվությունը¹¹⁶: Այնուհետև Ավետիք Մ. Թառումյանը հավանաբար փոխադրվում է Թիֆլիս, քանի որ այնտեղ 1907-1919 թթ. գործում էր միևնույն անվամբ տպարան¹¹⁷:

Սահակյանների տպարան (1891-1893). գործել է 1891-1893 թթ., այսինքն՝ այն ժամանակ, երբ Ավետիք Թառումյանի տպարանը դադարել է գործել: Տպագրել է ընդամենը 2 գրքույկ՝ նվիրված Գանձակի Սր. Հովհաննես եկեղեցու՝ 1889-1892 թթ. ելքի և մուտքի ծախսերի հաշվետվությանը¹¹⁸:

Գանձակում գործել են նաև 1912 թ. **Նանասյանցի**, 1913-1916 թթ.՝ **Լևոն Ադայանցի** և 1917-1919 թթ.՝ **«Պեչատնոյե դելո»** տպարանները: 1918 թ. Գանձակում լույս է տեսնում «Մեր ձայնը» եռօրյա աշխատավորական թերթը¹¹⁹, որը հավանաբար տպագրվում է «Պեչատնոյե դելո» տպարանում:

ԱԼԵԶՍԱՆԴՐԱՊՈԼ

1876-1920 թթ. ընթացքում Ալեքսանդրապոլում գործել է 10 տպարան, որտեղ «...տպված գրքերի և մանավանդ գրքույկների քանակությունը պատկանելի է մի գավառական քաղաքի համար»¹²⁰:

Գևորգ Սանոյանցի տպարան (1876-1915). Ալեքսանդրապոլում 1876 թ. բացված առաջին տպարանի հիմնադիրն էր Գևորգ Սանոյանը: Տպարանը գործել է մինչև 1915 թ. և տպագրել 88 տարաբնույթ գիրք: 1907-1911 թթ. այստեղ է տպագրվել «Ժայռ» թերթը¹²¹:

109 Հայ պարբերական մամուլը (1794-1980), էջ 114, 118: Ի դեպ, «Շանթ» թերթը տպագրվում է նախ «Լույս», ապա Ն.Գ. նախարարության տպարանում:

110 Հայ պարբերական մամուլը (1794-1980), էջ 98: Տե՛ս նաև Հայոց պարբերական մամուլը (1794-1934), էջ 77: **Նազարյան Ս.**, նշվ. աշխ., էջ 147-166:

111 Հեղափոխական և հասարակական գործիչ Արշավիր Մելիքյանը (09.02.1879, Փաշալու (այժմ՝ Ջառիթափ) - 1937, Թբիլիսի) ուսանել է Երևանի արական գիմնազիայում, Խարկովի համալսարանում (հեղափոխական շարժումների մասնակցության համար 1901 թ. հեռացվում է), Յյուրիխի համալսարանի փիլիսոփայության, Նյուշատելի ակադեմիայի գրականության ֆակուլտետներում: 1906 թ.-ից հարում է ՌՍԳԲ կուսակցությանը և 1911 թ. հաստատվում Երևանում: Գասավանդում է Գայանյան օրիորդաց ուսումնարանում: 1921 թ.-ից հաստատվում է Թիֆլիսում և բոթակցում բազմաթիվ թերթերի (մանրամասն տե՛ս **Ադայան Ծ.**, Արշավիր Մելիքյան, Երևան, 1969):

112 Հայ պարբերական մամուլը (1794-1980), էջ 96: Տե՛ս նաև Հայոց պարբերական մամուլը (1794-1934), էջ 75: **Նազարյան Ս.**, նշվ. աշխ., էջ 167-185:

113 Հայ պարբերական մամուլը, էջ 110, 115, 129: Ի դեպ, թերթը տպագրվում է 1917-1919 թթ. ընթացքում «Կուլտուրա», ապա Ն.Գ. նախարարության տպարաններում:

114 Հայ գիրքը 1851-1900 թվականներին, էջ 225, 228, 238, 254, 257-258, 266:

115 **Լևոնյան Գ.**, նշվ. աշխ., էջ 234: Տե՛ս նաև Հայ պարբերական մամուլը (1794-1980), էջ 33:

116 Հայ գիրքը 1851-1900 թվականներին, հ. Գ, էջ 400, 402, 515, 536:

117 Հայ գիրքը 1901-1920 թվականներին, բազմաթիվ էջերում:

118 Հայ գիրքը 1851-1900 թվականներին, էջ 448, 493:

119 Հայ պարբերական մամուլը (1794-1980), էջ 113, 117: Տե՛ս նաև Հայոց պարբերական մամուլը (1794-1934), էջ 89, 93:

120 **Լեռ, ԵԺ**, հ. 5, էջ 613:

121 Հայ պարբերական մամուլը (1794-1980), էջ 67:

Աբրահամ Մ. Մալխասյանի (Մալխասյանցի) տպարան (1892-1919). քաղաքի երկրորդ տպարանի հիմնադիրն է Աբրահամ Մալխասյանը, ով «...նրցակից է դուրս գալիս Սանոյանցին, հետզհետե ընդարձակելով գործը՝ իր չորս որդիների մասնակցությամբ»¹²²: 27 տարվա գործունեության ընթացքում այս տպարանը հրատարակում է բազմաբնույթ 53 գիրք (Ղազար Փարպեցի, Արիստակես Լաստիվերտցի, մայրենի լեզվի դասագրքեր, հեքիաթներ, առակներ, ուսումնական տեղեկագրեր և այլն)¹²³, ինչպես նաև հայ կանանց «Ախուրյան» օրացույց-հանդեսը (1902, խմբ.՝ Նվարդ Ափինյան), «Արև» լրագիրը (1914, խմբ.-հրատ.՝ Գևորգ Խոյյեցյան), «Նոր կեանք» բերքը (1917, Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության Ալեք-պոլի կազմ. օրգան, խմբ. կոլեգիա՝ Բ. Ղարիբջանյան, Գ. Աթաբեկյան, Գ. Հայկունի և այլք) և «Ալեքսանդրապոլի լրագրեր» օրաթերթը (1919, խմբ. կոլեգիա, հրատ.՝ Լ. Մալխասյան)¹²⁴:

Ստեփանյանցի տպարան (1901). գործել է միայն 1901 թ. և հրատարակել 2 գիրք¹²⁵:

Սանոյանցի և Ստեփանյանցի տպարան (1902-1903). ըստ ամենայնի, 1902 թ.-ից Ստեփանյանցին է միանում Սանոյանցը, և նրանց համատեղ տպարանը գործում է 1902-1903 թթ.՝ տպագրելով մայրենի լեզվի 3 դասագիրք և 7 գիրք (ընդամենը՝ 10 աշխատություն)¹²⁶:

Հովհաննես Ափինյանցի (Հ. Ա. Ափինյանցի, Հ. Ափինյանցի) տպարան (1903-1904). այս տպարանն իր կարճատև գոյության ընթացքում տպագրում է 14 տարաբնույթ գիրք¹²⁷:

Հակոբ Ղասաբյանցի (Հ. Ղասաբյանցի, Ղասաբյանցի) տպարան (1903-1920). գործունեությունը սկսում է 1903 թ. և մինչև 1920 թ. տպագրում 33 գիրք և 4 բերք: Դրանք են՝ «Լոյս» (1918, Սոցիալիստ հեղափոխականների կուսակցության Ալեք-պոլի կազմակերպության օրգան), «Յոյս» (1919, ՀՅԴ Ալեքսանդրապոլի աշակերտական միության շաբաթաթերթ), «Շիրակի աշխատավոր» (1919-1920, ՀՅԴ Շիրակի կենտրոնական և Ալեք-պոլի տեղական կոմիտեների օրգան) և «Աշխատանքի դրօշակ» (1920, Սոց. հեղ. կուսակցության Ալեք-պոլի կազմակերպության օրգան)¹²⁸:

«Շիրակ» տպարան (1904-1920). հրատարակում է 64 գիրք և «Ախուրեան» բերքը (1907-1915, խմբ.-հրատ.՝ Կարապետ Ափինյան)¹²⁹:

1903 թ. հրատարակվում է Ալեքսանդրապոլի առաջին պարբերականը՝ «Александропольские ОБЪЯВЛЕНИЯ» շաբաթաթերթը: Լույս է տեսնում 1903-1906 թթ., խմբագիր-հրատարակիչն էր Կ. Ափինյանը¹³⁰:

Հ. Սանոյանցի (Հովհ. Գևորգ Սանոյանցի) տպարան (1910-1919). 1910 թ.-ից մինչև 1919 թ. Գևորգ Սանոյանցի տպարանն անցնում է որդու՝ Հովհաննեսի իրավասության ներքո. «Սանոյանցի տպարանը իր գոյությունը պահում է մինչև 1918 թիվը, լույս ընծայելով բազմաթիվ գրքեր և պարբերականներ»¹³¹: Հովհաննես Սանոյանցի տպարանում հրատարակվում է 38 գիրք և 7 պարբերական:

Գործել են նաև «Ազատություն» կամ «Свобода» (1917-1918 թթ.), «Հ. Ս. Խ. Հ» տպարանները (1920 թ.)¹³²:

ԱՅՆԹԱՊ

Այնքան տպարան տեղեղելու գործի նախանձախնդիրներից է Վահան (Մովսես) Քյուրքչյանը, ով տակավին քոլեջում ուսանելու տարիներին (1880 թ.), տեսնելով տպագրական մեքենան և տառերը, կարողանում է տպել մի փոքրիկ ոտանավոր «հագի 3-4 օրինակ, Մեղապարտ Յակոբի անդրանիկ տպագրութեանց պես անճաշակ»¹³³: 1886 թ.¹³⁴, երբ խմբագրում է «Մենտոր» հանդեսը և ձեռագրերն ուղարկում Կ.Պոլսի Գ. Պաղտատյան (Արամյան) տպարան՝ հրատարակելու, նույն ժամանակ նաև զբաղվում է Այնթապում տպարան հիմնելու արտոնություն ձեռք բերելու խնդրով: Այդ նպատակով իր հետ տանելով կրթության նախարար այնթապցի Մյունիֆ փաշայի՝ Հալեպի նահանգապետարանին ուղղված հեռագիրը՝ 1886 թ. մեկնում է Կ.Պոլիս. «Այնթապի բնակիչներեն այր. Վահան Քյուրքճեան այդ քաղաքին մեջ թրքերեն եւ հայերեն տպարան մը հաստատելու համար խնդրագիր մը տուած է. մեզի տեղեկացնել, թէ ատոր դէմ տեղոյն առարկութիւն մը կա՞յ»¹³⁵: Խնդիրը մերժվում է «...տեղոյն վրայ նախապէս տպարան գոյութիւն ունեցած չէ եւ հիմա ալ պետք չի տեսնուիր անոր...» պատճառաբանությամբ¹³⁶: 1889 թ. Վ. Քյուրքչյանը

122 Լևոնյան Գ., նշվ. աշխ., էջ 234:

123 Հայ գիրքը 1851-1900 թվականներին, բազմաթիվ էջերում: Տե՛ս նաև Հայ գիրքը 1901-1920 թվականներին, բազմաթիվ էջերում:

124 Հայ պարբերական մամուլը: Մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980), էջ 55, 100, 111 և 119: Տե՛ս նաև Հայոց պարբերական մամուլը. լիակատար ցուցակ հայ լրագրության սկզբից մինչև մեր օրերը (1794-1934), էջ 39, 78, 88 և 95:

125 Հայ գիրքը 1901-1920 թվականներին, էջ 4, 8:

126 Նշվ. աշխ., էջ 28, 30, 33, 46, 50, 52, 56, 66, 81:

127 Նշվ. աշխ., էջ 54, 57-58, 61, 70, 80-81, 91, 95, 107, 110, 114:

128 Հայ պարբերական մամուլը (1794-1980), էջ 115, 125, 127 և 130: Տե՛ս նաև Հայոց պարբերական մամուլը (1794-1934), էջ 91, 102, 103 և 105:

129 Հայ գիրքը 1901-1920 թվականներին, բազմաթիվ էջերում: Տե՛ս նաև Հայ պարբերական մամուլը (1794-1980), էջ 66:

130 Հայ պարբերական մամուլը (1794-1980), էջ 453:

131 Լևոնյան Գ., նշվ. աշխ., էջ 234:

132 Հայ պարբերական մամուլը (1794-1980), էջ 110 և 111: Տե՛ս նաև Հայոց պարբերական մամուլը (1794-1934), էջ 86-87:

133 Պողարեան Գ., Այնթապականք, հ. Ա, Պեյրոս, 1974, էջ 12: 133 Ի դեպ, Գ. Պողարյանը ճշտում է կատարել «Մենտոր»-ի հրատարակության տարեթվի և հրատարակչի առնչությամբ: Ըստ նրա՝ տպագրվել է 1886 թ. Վարդանյան վարժարանի հրատարակչությամբ (Պողարեան Գ., նշվ. աշխ., էջ 7-8, ճմբ. 4):

135 Նշվ. աշխ., էջ 14:

136 Պողարեան Գ., նշվ. աշխ., էջ 15: Տե՛ս նաև Քյուրքճեան Վ. Մ., Հայ մամուլը Կիլիկիոյ մեջ, «Կոչնակ Հայաստանի», 1919, № 39, էջ 1243:

կրկին փորձում է բարձրացնել տպարան բացելու հարցը (մտադրություն ունեւր տպարանը բացել նախ Հալեպում, ապա այն փոխադրել Այնթապ), սակայն անհաջողության է մատնւում¹³⁷: Այդ մասին նա գրում է. «Հասան Հազգը փաշա, Վանայ երբեմնի մահանգապետը, ինձ ըսաւ նշանակելի քմծիծաղով մը. „Եթէ հայերէն տպարան հաստատել կուզես, գնա Էրմենիսթան,»¹³⁸:

Այնթապում ի վերջո տպարաններ են բացվում միայն 1908 թ.-ից հետո:

«Գոլեճի» (Կ.Թ. Գոլեճի) տպարան (1876-1878, 1908-1915, 1919-1921). ըստ դ-ր Մերիլի՝ տակաւին քոլեջի հիմնադրման տարիներին (1876-1878) Ամերիկայից բերվում է մի ոտնամանուկ, որը մինչև 1890 թ. հրդեհը կիրառվում է միայն դպրոցական հարցաթերթիկներ և պաշտոնաթղթեր տպելու համար¹³⁹: Այնուհետև 1908 թ.-ի Սահմանադրության հռչակումից հետո վերստին բարձրանում է տպարանի գործարկման հարցը, որն էլ իրականանում է. «Քանի մը տարուան մէջ կարելի ըլլայ կոտրած մեքենան նորոգել եւ նոր տառեր բերել տալ: Կ. Թ. Գոլեճի տպարանին նոր շրջանի գործունէութեան սկզբնաթուական կարելի է նկատել 1910-ը»¹⁴⁰:

Հարկ է նշել, որ տպարանի վերագործարկման մեջ մեծ է քոլեջի գեղագրության ուսուցիչ Լեոն Բուպյանի դերը, որը բարձր դասարանի աշակերտների հետ նախաձեռնում է «փոշիներու մէջ կորսուած տառերը» մաքրելու և դասավորելու գործը¹⁴¹:

Տպարանի արտոնատերն էր քոլեջի հայոց լեզվի ուսուցիչ Նշան Պալեոզյանը, իսկ տպագրիչները՝ աշակերտները: 1914 թ. հոկտեմբերի 21-ին Գարեգին քահանա Պողոսյանը Արշակ Ալպոյաջյանին հղած գրության մեջ անդրադարձել է այս տպարանի գործունէությանը և նշել. «Մնայուն պաշտօնեայ չունին, իսկապէս արհեստէն հասած մարդիկ չեն, միայն վարժութեամբ սովորած են...: Մանուկին մեծ բան մը չէ եւ ոտքով կը շարժի»¹⁴²:

1913 թ. տպարանը լավագոյնս ծառայեցնելու նպատակով քոլեջի երկու աշակերտները (մեկը գրաշարապետ Սարգիս Լալեյանն էր, ով 1960-1970 թթ. Առլինգտոնում լույս տեսնող «Հայ Անթեպ» պարբերաթերթի աշխատակիցն էր) տեսչին են ներկայացնում մի քանի պայման: Դրանցից էին,

օրինակ, տպարանի փոխադրությունը «...լուսատր եւ օդաւէտ վայր մը, նորաշէն է նտրիգ Հոլի գետնախարկը» և հայերեն, անգլերեն և թուրքերեն նոր բազմատեսակ տառեր ձեռք բերելու խնդիրը¹⁴³: Պայմաններն ընդունվում են, և 1909-1915 թթ. ընթացքում տպագրվում են 11 գիրք ու գրքույկ և 1 ամսաթերթ (հայատառ թուրքերեն):

1919-1921 թթ. ընթացքում «Գոլեճի» տպարանը վերագործարկվում է, և տպագրվում են «Ռահվիրա-Բահնյումա» թերթը (խմբագիր-հրատարակիչներ՝ Մերիլ և Լուիսի Խոճա (Լեոնյան), հայատառ թուրքերենով մի երգարան և Գր. Սարաֆյանի «Կրօնաքննական կարգ մը հարցումներու տրուած պատասխանները» գրքույկը (1919)¹⁴⁴: Հավանաբար «Ուխտունթ-Եղբայրութիւն» թերթը հայերենով և թուրքերենով ևս հրատարակվել է այս տպարանում (1919 թ.):

«Առևտրական» տպարան (1911-1914). փոքրիկ ձեռնաշարժ մեքենայով տպարանը 1911 թ. մարտի 18-ին հիմնադրել է «Ավետիս Խանգեւոյան և ընկերություն» առևտրական ընկերությունը (հիմն.՝ 1909 թ., անդամներն էին Վարդանյան վարժարանի շրջանավարտներ Ավետիս Խանգեւոյանը, Թորոս Պյուլպյուլյանը, Խորեն Վարժապետյանը, Հակոբ Գապպենճյանը և Նազար Գվրյանը)¹⁴⁵: Տպարանը գտնվում էր Սուպուրճու պողոտայում: Մինչ այդ Նազար Գվրյանը տպագրական գործում խորանալու նպատակով մեկնում է Հալեպ և այնտեղից «երկրորդ մանուկն ալ կը բերէ, նախորդէն քիչ մը մեծ եւ ոտքով շարժող»¹⁴⁶: Տպարանն ուներ հայերեն, թուրքերեն և ֆրանսերեն տառեր, որոնց տեսակները «Կ. Թ. Գոլեճինէն աւելի ճոխ եւ նոր են»¹⁴⁷: Գործունէությունը դադարում է Առաջին աշխարհամարտի պատճառով, երբ զինվորագրությունից խուսափելու համար տպարանի վարիչը մեկնում է Ամերիկա¹⁴⁸: Տպարանում, բացի հրավիրատոմսերից, այցեքարտերից, հայտագրերից, Օսմ. բանկի և առևտրականների թղթերից, հրատարակվել են նաև «Կիլիկյան ճեմարանի հայտագիրը» (1912, 1914 թթ.), Սահակ Բ Խապայան կաթողիկոսի (1902-1939) կոնդակը, «Հիմնական կանոնագիր Վարդանեան ընթացաւարտից միութեան» (1913), «Գոլերա» և «Աղզը Տիւտիւրլու Միքրոպլար» արաբատառ գրքույկները և «Հագիգաթ» կրոնական ամսագիրը (1914)¹⁴⁹:

137 Պողարեան Գ., նույն տեղում: Տե՛ս նաև Քիրքճեան Վ. Մ., նշվ. հոդվ., «Կոչնակ Հայաստանի», 1919, № 39, էջ 1244:

138 Սարաֆեան Գ., Պատմութիւն Անթեպի Հայոց, հ. Բ, Լոս Անճելըս, 1953, էջ 459:

139 Պողարեան Գ., նշվ. աշխ., էջ 22: Ի դեպ, Եղիա Ս. Քասունին վկայում է, որ հավանաբար 1890 թ. քոլեջի տպագրական փոքր մեքենայի «մելան տուող սկաւառակը» հանել և տարել են կառավարական պաշտոնյաները (Սարաֆեան Գ., Պատմութիւն Անթեպի Հայոց, հ. Ա, Լոս Անճելըս, 1953, էջ 821):

140 Պողարեան Գ., նույն տեղում:

141 Պողարեան Գ., նշվ. աշխ., էջ 22:

142 Պողարեան Գ., նշվ. աշխ., էջ 18:

143 Պողարեան Գ., նշվ. աշխ., էջ 23: Ի դեպ, ճշտվել է, որ «Եւնի Էոմը» թերթը տպագրվել է «Գոլեճի» տպարանում:

144 Պողարեան Գ., նշվ. աշխ., էջ 23: Ի դեպ, ճշտվել է, որ «Ռահվիրա-Բահնյումա» թերթը տպագրվել է «Գոլեճի» տպարանում:

145 Պողարեան Գ., նշվ. աշխ., էջ 18:

146 Նույն տեղում:

147 Պողարեան Գ., նշվ. աշխ., էջ 20:

148 Սարաֆեան Գ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 292:


149 Պողարեան Գ., նշվ. աշխ., էջ 20-21: Ի դեպ, ճշտվել է, որ «Հագիգաթ» ամսագիրը տպագրվել է «Առևտրական» տպարանում:

Անանուն տպարան (1911). Գևորգ Ս. Պալյանը, տեսնելով «Առևտրական» տպարանի գործունեությունը, որոշում է ինքը ևս տպարան բացել. «...տեղական ապրանք տպագրական մամուլ մը շինել տուած էր 1911-ին, գոր տարիի մը չափ բանեցուցած է մերթ Բիւշտի էֆենտիի եւ մերթ ուրիշ թուրքի մը հետ ընկերակցութեամբ. ինք գրաշարութիւն չէր գիտեր, բայց մեքենան շինել տուողը եւ գործածողն էր. հազիւ տարի մը կաղնիկաղ շարունակեց. մամուլը մեծ մասով տախտակեայ ըլլալէն, ամառը կը թունար, ձմեռը ուրիշ տեսակ կըլլար և չէին կրնար շնորհքով գործ մը արտադրել. վերջապէս երեսի վրայ թողուցին»¹⁵⁰:

Հարկ է նշել, որ մինչև տպարանների հիմնադրումն Այնթապում թողարկվել են նաև ձեռագիր և խմորատիպ թերթեր և ամսագրեր: Դրանք են՝ «Այնլէպէն» (1872 թ., Ազգային Ներսիսյան վարժարանի սաների հրատ., հայատառ թուրքերեն), «Բիւրակն» (1875 թ., Կիլիկյան գիշերօթիկ վարժարանի ավագ սաների հրատ., հայերեն և հայատառ թուրքերեն), «Եղեն=Աղեն» (1876 թ., Կիլիկյան գիշերօթիկ դպրոցի կրտսեր սաների հրատ., հայերեն և հայատառ թուրքերեն, խմբ.՝ Վահան Բյուրքճյան), «Շիրակ» (1876 թ., միայն 1 համար, խմբ.՝ գրող, թղթակից Վահան Բյուրքճյան), «Դրախտ» ամսագրերը (1877-1878 թթ., Սբ. Վարդանանց Մեսրոպյան սաների ընկերության հրատ., խմբ.՝ Վահան Բյուրքճյան), «Սէտայը Հագիգաթ» երկշաբաթյա հանդեսը (մոտ 1878, Կ.Թ. Գուլեճի աշակերտների հրատ.), «Աստղիկ Վարդանեան» (1888-1903, Վարդանյան վարժարանի հրատ., հայերեն և թուրքերեն լեզուներով), «Առաջին քայլեր» ձեռագիր պարբերաթերթը (1897-1900, Աղենական վարժարանի հրատ.), «Դողրոջուն քայլեր» շաբաթաթերթը (1898 թ. սեպտ.-1899 թ. հունիս, հրատ. Հակոբ Տեր-Մելքոնյան)¹⁵¹: Ի դեպ, «Աստղիկ Վարդանյան»-ը 1903 թ.-ից հրատարակվել է նոր՝ «Խոհեր» անվամբ, իսկ մոտավորապես 1914 թ. լույս է տեսել նաև «Ուսում» խմորատիպ թերթը (Ուսումնասիրաց ընկերակցության հրատ.)¹⁵²:

ԽԱՐԲԵՐԴ

Եփրատ գոլեջի տպարան (1889-1896, 1909-1914). հիմնադրել է 1889 թ. Եփրատ քոլեջի առաջին նախագահ, ամերիկացի քարոզիչ Քրոզպի Հույլըրը, որը «...տպարանի մըն ալ անհրաժեշտութիւնը նկատի ունենալով, մեքենական կազմածներ, անգլերէն և հայերէն գիրեր առնելով կը բերէ Խարբերդ»¹⁵³: Նորահաստատ տպարանն աշխատեց-



Քրոզպի Հույլըր

նում է Մանուկ Տինջյանը, որին աջակցում են Խաչատուր Պեննյանը, Հովհաննես Փաշկյանը և Սկրտիչ Ջամալյանը: Նրանք «...կը տիրանան իր ժամանակի տպագրական արուեստին եւ հետզհետէ կը տպագրեն հայերէն դասագրքեր, տետրակներ, անգլերէն Ա եւ Բ ընթերցարաններ, որոնք շատ մեծ եւ օգտակար միջոցներ կը հանդիսանան ուսման ծարախ ուսանողութեան»¹⁵⁴: Համիդյան ջարդերից հետո թուրքական կառավարության հրամանով տպարանի գործունեությունը դադարում է:

Տպարանը վերստին բացվում է 1909 թ., երբ «...քաջալերուելով, 1889ին Խարբերդ բերուած տպագրական հնամենի մեքենաներն ու տառերը փոշիներու տակէն դուրս բերին «Եփրատ»ի գրասէր տղաքը: Ապա հնարարու դարմանումն ըրին եւ շատ դժուարատար կազմուածներով սկսան տպագրական աշխատանքներ փորձել: Քանի մը ամիսներ շարունակուեցան այս փորձերը եւ բաւական քաջալերութիւն ներշնչեցին: Դիւրութեամբ առնուեցաւ թերթ հրատարակելու արտօնագիրը՝ խմբագրութեամբ փրօֆ. Կ. Մ. Սողիկեանի: Գօլեճի վարչութեան եւ երկեսո աշակերտներու բաղձանքին համաձայն, տյն պաշտօնական պարբերաթերթը կոչուեցաւ «Եփրատ»: ...առաջին թիւը լոյս տեսաւ 1909, նոյեմբեր 1ին»¹⁵⁵:

Տպարանի վերագործարկման մասին նշվել է. «1908 թ. սահմանադրութեան հետ մամուլն ալ իր գործը սկսաւ: Միջին հաշուով ամէն օր 3000 էջ կը տպուէր: Բոլոր գործերը դասարաններէն մէկուն հսկողութեան յանձնուած էր, եւ տղայք կը կատարէին տպարանի գործերը իրենց խնայած ժամանակներովը: Կարգ մը գրքեր հրատարակուած էին, եւ երեք հանդեսներ, մին շաբաթական, մին կիսամետայ եւ միւսը ամսետայ կը հրատարակուէին կանոնադրապէս: Գործը կատարելութենէ շատ հեռի էր, բայց տեսականօրէն զարգանալու վիճակին մէջ էր: Լաւագոյն ուրիշ ազդակ մը չկար Գօլեճին գործը այսքան ազդու կերպով տարածելու»¹⁵⁶:

1909-1914 թթ. այս տպարանում հրատարակվում է կիսամսյա, ապա ամսօրյա համանուն հանդեսը¹⁵⁷, որը Եփրատ քոլեջի հրատարակությունն

150 **Պողարեան Գ.**, նշվ. աշխ., էջ 19:

151 **Պողարեան Գ.**, նշվ. աշխ., էջ 8-11:

152 Հայ պարբերական մամուլը (1794-1980), էջ 57, 103:

153 **Վահէ Հայկ.** Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը, Նիւ Եորք, 1959, էջ 359:

154 Նույն տեղում:

155 Նշվ. աշխ., էջ 346:

156 **Փիլիպպոսեան Յարթ Մ.**, Յիշատակարան Եփրատ Գօլեճի, Պոսթոն, 1942, էջ 124:

157 **Գիզմեճեան Մ.**, Խարբերդ եւ իր գաւակները, Ֆրեզնոյ, 1955, էջ 402:

եր: Տնօրեն-խմբագիրն էր Կարապետ Մ. Սողիկյանը¹⁵⁸:

Տպարանն ուներ մաս իր կազմատունը, որտեղ աշխատում էին քուլեջի աշակերտները¹⁵⁹:

Ամենայն հավանականությամբ, 1910-1914 թթ. այս տպարանում է հրատարակվել գերմանացի քարոզիչ, Մեզիբերի գերմանական որբանոցի վարիչ Յոհաննես Էհմանի խմբագրությամբ «Ամենուն համար» կրոնական շաբաթաթերթը (արտոնատերն էր Պետրոս Կարապետյանը)¹⁶⁰:

1913-1914 թթ. «Եփրատ» տպարանում լույս է տեսնում մաս ամերիկյան քարոզիչների ամսաթերթը՝ «Դէտ» անվամբ, որի պատասխանատու խմբագիրն էր Վ. Պ. Ամիրխանյանը, իսկ արտոնատերը՝ Հենրի Բիկզը. «Խարբերողի մէջ Յոդ թերթ մ'ալ սկսաւ հրատարակուիլ Եփրատ տպարանէն, «Դէտ» անունով, բոլորովին կրօնական ուղղութեամբ Ամերիկեան միսիօնարութեան խմբագրութեան տակ»¹⁶¹:

4 տարի տպարանի գրաշարն ու տպագրիչն է եղել Հովհաննես Ս. Փաշկյանը¹⁶²:

Խարբերողում հրատարակվել են մաս ձեռագիր թերթեր և հանդեսներ՝ «Ասպարեզ» (Կ. Սողիկյան, Խորեն Անդրեասյան և Ռուբեն Որբերյան), «Ճովակ» (1909, Ազգային Կենտրոնական վարժարանի սաների գրական թերթն էր) և «Հայրենի առուակ» (խմբ.՝ Նշան Փաշկանց, Գերմանական վարժարանի աշակերտներ գրական հանդեսն էր)¹⁶³, ինչպես մաս խմորատիպ թերթեր: Դրանք են՝ «Դատ» (1896, խմբ.՝ Ազարիկ Գոլոյան), «Պատանի» (1909, Խարբերողի պատանեկան միության հրատարակու-



Կարապետ Սողիկյան

թյունը), «Գյուղատնտես» (1910), «Լուսաշաիղ» (1911, խմբ.՝ Սուրեն Պահլավունի, Հայ կաթողիկե վարժարանի հրատարակություն)¹⁶⁴:

ՄԵԶԻՐԵ

Անանուն տպարան (մոտ 1903-1914). Մեզիբեր գյուղաքաղաքը գտնվում էր Խարբերող գավառում: Տեղի տպարանի գործունեության վերաբերյալ տեղեկություններ չկան: Հայտնի է միայն, որ Մեզիբերի Ազգային կենտրոնական վարժարանի սաները հրատարակել են «Նոր գարուն» (մոտ 1903-1908) խմորատիպ և վերջինիս հաջորդաձ «Ճովաց արծիվ» (1908-1914) թերթերը¹⁶⁵:

ԿԱՐԻՆ

Նահանգական կառավարչության տպարան. Կարինում գործող առաջին տպարանն էր, որտեղ 1866 թ.-ից լույս տեսնող «Էնվարը շարգիյ» միակ թերթի «առաջի և վերջի չորրորդ երեսը տաճկերեն տառերով է, իսկ միջի երկրորդ և երրորդ երեսը հայ տառերով, բայց տաճկերեն լեզուով է...»¹⁶⁶:

Հայտնի է, որ 1860-ական թվականներին Սկրտիչ վարդապետ Խրիմյանը, մտահոգված Կարինում հայոց տպարան ունենալու խնդրով, այդտեղ գտնվող Գարեգին Սրվանձտյանցից խնդրում է տեղեկանալ «Կարինի տաճկական տպարանի վիճակի մասին, որպեսզի իմանա, թե հնարավո՞ր է արդյոք այն գնել և հայկական տառեր գնել»¹⁶⁷: Մ. Խրիմյանի այդ ծրագիրը կյանքի չի կոչվում, և Կարինում հայոց տպարան է հիմնադրվում միայն 1908 թ.:

«Առաջ» («Յառաջ») տպարան (1908-1914). 1908 թ. հուլիսի 11-ին Կարինում մտավորականները ստեղծում են «Հայ երիտասարդական» միություն, որի նպատակն էր հրատարակել մի պարբերական, որը «պիտի ծառայել ընդհանուր հայրենիքի վերաշինութեանն ու բոլոր ճնշումների պաշտպանութեանը՝ առանց ազգի ու կրօնի խտրութեան»¹⁶⁸: Միության անդամներն իրենց մտադրությունը կյանքի կոչելու համար ձեռնամուխ են լինում տպարան ստեղծելու գործին. «Յանդուգն այս ծրագիրը շուտով իրականութիւն դարձաւ, շնորհիւ նիւթական լայն զոհաբերութիւններու... բացուեցաւ «Յառաջ»ի տպարանը իր սեփական մեքենայով եւ կազմածներով...»¹⁶⁹:

158 Հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Կարապետ Մ. Սողիկյանը (26.06.1868, Խարբերող-25.06.1916, Խարբերող) «Բազմակողմանի կարողութիւններով օժտուած այս մտքի մեծ մշակը բանաստեղծ էր ու գրագետ: Ամբողջ տարի մը գնտաններու մահամոտ ստուերներուն մէջ արգելափակուած մնալէ վերջ դուրս կը հանուի բանտէն, թուրքերուն ներկարարութիւն ստրկեցնելու համար...: Անոր սիրտը չկրցաւ տոկալ եւ օր մըն ալ, իր ծննդեան տարեդարձէն մէկ օր առաջ... կաւանդէ իր հոգին...: Սողիկեան՝ Գօլէճին մէջ հայերէն լեզուի, գրականութեան եւ տարրաբանութեան ուսուցիչ էր: Գօլէճին կողմէ դրկուեցաւ Վենետիկ ու Վիեննա, հայ գրականութիւնը աւելի մօտ ուսումնասիրելու համար...: Եփրատ Գօլէճի՝ «Եփրատ» հանդէս կիսամետայի այս խմբագիրը եւ Հայ լեզուի բանական ճոխութիւնը պարպող «Ոլորակին» հեղինակը, իր կեանքը՝ որպէս անձնագրի մշակ՝ ի սպաս է դրել ուսուցչապետութեան» (Փիլիպպոսեան Յարթ Մ., նշվ. աշխ., էջ 151-152):

159 Փիլիպպոսեան Յարթ Մ., նշվ. աշխ., էջ 124-125:

160 «Կոչմակ», 1910, № 21, էջ 499:

161 «Կոչմակ», 1913, № 31, էջ 752: Տե՛ս մաս № 21, էջ 516-517:

162 Փիլիպպոսեան Յարթ Մ., նշվ. աշխ., էջ 172-173:

163 Վահէ Հայկ, նշվ. աշխ., էջ 398, 463:

164 Հայ պարբերական մամուլը (1794-1980), էջ 50, 79, 81, 87:

165 Նշվ. աշխ., էջ 57, 72:

166 Երիցեան Ա., Մի երես Կարնոյ նորագոյն պատմութիւնից, «Փորձ», 1879, I, էջ 178:

167 Կոստանոյան Է., Սկրտիչ Խրիմյան, էջ 128:

168 Գազար-Չարրզ, Յուշամատեն Բարձր Հայքի. Կարինապատում, Պէյրոս, 1957, էջ 314: Տե՛ս մաս Պողոսեան Ե., նշվ. աշխ., էջ 90:

169 Գազար-Չարրզ, նշվ. աշխ., էջ 275:

1909 թ. մայիսի 31-ին Եղիշե Թովչյանի (Երվանդ Թամարյան) խմբագրությանը հրատարակվում է «Յառաջ» թերթի անդրանիկ համարը (տնօրեն-արտոնատեր՝ Արամ Ատրունի): Նրա սպանությունից (1909 թ. հոկտ. 11) հետո խմբագրի պաշտոնը հաջորդաբար վարում են Լիպարիտը (Ալատակունի), Միմոն Վրացյանը, Մարգիս Հովհանջանյանը և Շավարշ Միսաքյանը: Թերթի վերջին համարը տպարանում թողարկվում է 1914 թ. մարտի 25-ին (պատասխանատու տնօրեն՝ Վահե Թոգանյան, արտոնատեր՝ Ա. Ատրունի)¹⁷⁰: Ի դեպ, տպարանը հայտնի էր հենց պարբերականի անունով:

Տպարանի ստեղծումը բարձր գնահատանքի է արժանանում ժամանակի մտավորականների կողմից. «Կարին այսչափ դարեր է ի վեր, եւ յետ տպագրական գիտի՜ տարիներ անցնելէ յետոյ, առաջին անգամ կ'ունենայ իր մէջ հայ տառերով, տպուած թերթ մը, առաջին անգամ կը շարժի հայկական տառերով տպագրական գործիք մը: ...Արդարեւ մեծ դարագլուխ մը համարելու է Կարնեցին այս թուականը իր գրականութեան համար, ձեռագրով թերթ հրատարակելու, բազմատիպ զանգուածի մը վրայ քանի մը տասնեակ ամսաթերթ տպելու, դժուարին եւ անյարատեւ աշխատութեանց վերջ կու տայ «Յառաջիս» տպագրական հաստատութիւնը»¹⁷¹:

Չնայած այն հանգամանքին, որ տպարանը հագեցած չէր տպագրական կատարյալ մեքենաներով, այն իր գործունեությամբ, սակայն, մեծ դեր է խաղում կարնեցի հայերի կյանքում. «Յառաջ թերթիս տպագրական գործիքները թեպէտ և տակալին չունին այն ամէն կատարելութիւն, որ կը պահանջուի տպագրատան մը համար, այսուամենայնիւ բուական ծառայութիւն կը մատուցանէ Կարնոյ հայ համայնքին, թերթէն զատ տպելով՝ ծանուցագրեր, հրատարակելով, այցետոմսեր եւ այլն: Պարզ ձեռագ կրկին մեքենաներ են, որ կը մատուցանեն այս ծառայութիւնները, մին փոքր, մին ատելի մեծ, ոտից շարժման զօրութիւնը եւ ձեռագ բազկի ոյժն է, որ կը կատարէ շոգոյ պաշտօնը: Դարեր է ի վեր կամ տարիներ է ի վեր Կարին տեսած չէր իր մէջ հայ մամուլի արդիւնքը, չտեսածը տեսաւ...»¹⁷²:

Գտնվում էր Չամուր, հետո Մուրտար փողոցներում վարձակալված տներում, իսկ 1913 թ.-ից՝ Աղաբալյան վարժարանի շենքում¹⁷³:

«Յառաջ» տպարանում են լույս տեսնում նաև 1911 թ. «Սիրտ», 1914 թ.՝ «Երկիր» (արտոնատերը և տնօրենն էր Մարութ Մառանճյանը: 9 համար հրատարակելուց հետո կառավարությունը խափանում է տպագրությունը) և «Ալիք» երկօրյա թերթերը

(տնօրեն-արտոնատերն էր Հրաչյա Լուսպարոնյանը)¹⁷⁴:

«Յառաջ» տպարանում, բացի թերթերից, 1911-1912 թթ. ընթացքում հրատարակվում է նաև 2 գիրք:

Հարկ է նշել, որ մինչև սեփական տպարան ունենալը կարնեցի հայերը թողարկել են նաև ձեռագիր թերթեր և ամսագրեր՝ «Ընկերական սիրտ» ամսաթերթ (1895 թ. ապրիլ-սեպտեմբեր, խմբագիր՝ Հովհ. Շավարշ), «Մանր երգեր» կիսամյա հանդես (1895 թ., Քեչեյանի և Հեյրանյանի նախաձեռնությամբ «հազիւ երկու տետր կը հանեն ձեռագիր գրելով... կը դադրեցնեն եւ նաեւ կը պատռեն գրածնին...»), «Սի սիրտ և մի հոգի» (1895 թ.), «Վուսիոր» ամսաթերթեր (1896 թ., տեր և հրատարակիչ՝ Եր. Յազգյան, ապա՝ Ղ. Գրգոյան), իսկ «բազմատիպ զանգուածի» միջոցով՝ «Փարոս» շաբաթաթերթը (1909 թ. մարտի 7-14-ը) և «Նոր Լոյս» ամսաթերթը (1910-1911 թթ., Կարինի Գաղղիական վարժարանի աշակերտների օրգանը)¹⁷⁵:

ԿԱՐՍ

Անանուն տպարան. մտավորապես 1880 թ. լույս է տեսնում «Կարս Հայաստանի» եռօրյա թերթը Նշան Արծրունու խմբագրությամբ (2-3 համար), 1917 թ.՝ «Բանոր» շաբաթաթերթը, 1918 թ.՝ «Ռազմիկ» թերթը (1917-1918 թթ. լույս է տեսնում Թիֆլիսի «Աշխատավոր» տպարանում: Ի դեպ, Ակսել Բակունցը ևս մասնակցում է թերթի խմբագրման աշխատանքներին): 1920-1922 թթ. լույս է տեսնում «Դիրքերում» օրաթերթը¹⁷⁶: Ցավոք, այս թերթերը լույս ընծայող տպարանի անունը հայտնի չէ:

Շ. Կ. Մուրեցյանցի (Մուրեցյանի) տպարան (1907, 1920). քաղաքում գործած մեզ հայտնի հայկական միակ տպարանն էր, որտեղ 1907 թ. հրատարակվում է Ա. Փոքրտոյանի կազմած թվաբանական խնդիրներին վերաբերող դասագիրքը¹⁷⁷, իսկ 1920 թ.՝ «Աշխատատրի ձայն» օրաթերթը (21 համար)¹⁷⁸:

Այլ տպարաններ. 1877 թ. Կարսում «...չինվում է զինուորական տպարան: Թիֆլիսից կանչված գրաշարները տաս օրուայ միջոցում պետք է գտնվեն վերոյիշեալ քաղաքում»¹⁷⁹:

1882 թ. հոկտեմբերին մարզի Ռազմական նահանգապետի գրասենյակի կառավարիչ Բաա Սուլթան Շախթաբինսկին կառավարության որոշմամբ Կարսում հիմնում է տպարան, որտեղ 1883-1916 թթ.

170 Նշվ. աշխ., էջ 276-277:

171 Քոստան Յ., Բարձր Հայք. Կարին քաղաքը, հ. Ա, Վիեննա, 1925, էջ 260:

172 Քոստան Յ., նշվ. աշխ., էջ 263:

173 Նույն տեղում:

174 Վազար-Չարդզ, նշվ. աշխ., էջ 277-278: Տե՛ս նաև Քոստան Յ., նշվ. աշխ., էջ 265-266:

175 Քոստան Յ., նշվ. աշխ., էջ 254-257:

176 Հայ պարբերական մամուլը (1794-1980), էջ 40, 109, 112 և 132:

Տե՛ս նաև Հայոց պարբերական մամուլը (1794-1934), էջ 85 և 94:

177 Հայ գիրքը 1901-1920 թվականներին, էջ 208:

178 Հայ պարբերական մամուլը (1794-1980), էջ 130: Տե՛ս նաև Հայոց պարբերական մամուլը (1794-1934), էջ 105:

179 «Մշակ», 1877, № 86, էջ 3:

հրատարակվում է “Karp” շաբաթաթերթը¹⁸⁰, իսկ 1885-1901 թթ.՝ ռուսերեն 17 գիրք:

Քաղաքում գործել է նաև Կարսի մարզային տպարանը, որտեղ 1902-1911 թթ. տպագրված գրքերից հայտնի են 13-ը (բոլորն էլ ռուսերեն):

ՈՍԿԱՆԱՊԱՏ

Սեփական և ՀՀ դաշնակցության ազատ տպարաններ. հայտնի է, որ Ոսկանապատում գործել են 1904-1905 թթ. ընթացքում և տպագրել սոսկ մեկական գրքույկ¹⁸¹:

ԱՂԹԱՍԱՐ

1905 թ. Աղթամարի վանքում Իշխանը (Նիկոլ Միքայելյան) հրատարակում է «Արեան ձայն»¹⁸², 1908 թ. Հայկակ Կոստյանը՝ երգիծական բովանդակության «Կոտոշ»¹⁸³ պատկերազարդ և խմորատիպ թերթը: Նույն՝ 1908 թ. է թողարկվում նաև «Կռի» աշակերտական թերթը¹⁸⁴:

ՇԱՏԱԽ

1907 թ. Շատախում լույս են տեսնում կիսամսյա «Ժայռ», «Կոհակ» և «Տիգրիս» խմորատիպ թերթերը¹⁸⁵:

«Տիգրիս» պարբերաթերթը հրատարակվում է Տիգրան Բաղդասարյանի խմբագրությամբ, որը «ամենէն տարածուն թերթը եղած էր իր ճոխ բովանդակութեամբը, տեղագրական քարտեզներով և ուսումնասիրություններով»¹⁸⁶:

ԳՅԱՎԱՇ

Տպարանի վերաբերյալ հայտնի է միայն, որ 1908-1909 թթ. ընթացքում հրատարակել է Վանի «Ճովակ» կուլտուրական միության համանուն օրգանը՝ «Ճովակ» խմորատիպ երկշաբաթաթերթը (4 համար)¹⁸⁷:

180 Հայ պարբերական մամուլը (1794-1980), էջ 454: Տե՛ս նաև http://ru.wikipedia.org/wiki/Шахтахтинский_Иса_Султан_Наджафгулу_оглы.

181 Հայ գիրքը 1901-1920 թվականներին, էջ 84, 136:

182 Վասպուրական. Վան-Վասպուրականի ապրիլեան հերոսամարտի տասնեփոխամեակին առթիւ (1915-1930), կազմ.՝ Հ. Աճեմեան, Վենետիկ, 1930, էջ 218: Մեկ այլ տեղեկությամբ՝ Իշխանը 1904 թ. Աղթամարում հրատարակել է «Արիմոտ դար» թերթիկը (**Միսիքաբեան Յ.**, Մամուլը Վասպուրականի մէջ. 1858-1913, «Աշխատանք», 1913, № 48 (144), 12 հոկտ., էջ 6):

183 Վասպուրական (1915-1930), էջ 279: Տե՛ս նաև **ժ. Մ.**, Անհետացող դէմքեր, «Վարպ», 1969, ապրիլ, № 65, էջ 125:

184 Հայ պարբերական մամուլը (1794-1980), էջ 72:

185 Նշվ աշխ., էջ 67, 69: Ի դեպ, ըստ վանեցի բանասեր Լևոն Խաչիկյանի՝ Շատախում լույս է ընծայվել 3 թերթ (**Շահ-տասար**, Ազգային կացութիւնը Վանայ մէջ, «Կոչնակ» 1909, № 52, էջ 1225), իսկ ըստ մեկ այլ տեղեկության՝ «Տիգրիս» և «Անկախ Տիգրիս» թերթերը (**Միսիքաբեան Յ.**, նշվ. հոդվ., «Աշխատանք», 1913, № 48, էջ 6):

186 **Փափագեան Վ.**, Իմ յուշերը, հ. Բ, Պէյրոս, 1952, էջ 22:

187 Հայ պարբերական մամուլը (1794-1980), էջ 72:

ԱԽԱԼՔԱԼԱՔ

Մ. Գրիգորյանցի (Մ. Գրիգորյանի, Մ. Խ. Գրիգորյանի) տպարան (1908-1916). տպարանի գործունեության վերաբերյալ տեղեկությունները սկսվում են 1908 թ.-ից: 1913-1916 թթ. հրատարակվում է Ջավախքի անդրանիկ թերթը համանուն անվամբ: Խմբագիր-հրատարակիչն էր մշակութային գործիչ, գրող և հրապարակախոս Վարդան Շահպարտյանը¹⁸⁸: Ի դեպ, թերթի լույսընծայումը նախատեսված էր 1912 թ. վերջերին, սակայն տեխնիկական պատճառով հրատարակվում է 1913 թ. հունվարի 12-ին: Լրագրող Հովհաննես Պիճիկյանը պարզաբանում է թերթի նպատակը. «Մենք անում ենք առաջին փորձը հրատարակելու Ախալքալաքում պարբերական գրական հասարակական օրգան, նիւում գաւառի կարիքներին: Ոչ դատարկ սնամիառութիւնը, և ոչ թեթևամիտ նմանութիւնը ուրիշներին ստիպեց մեզ սկսել այսպիսի մի ծանր և պատասխանատու գործ: Ինքը բարդացած կեանքը ստեղծում է մի պարբերական օրգանի անհրաժեշտութիւնը...»¹⁸⁹:

Մ. Գրիգորյանի տպարանն իր 9-ամյա գործունեության ընթացքում հրատարակում է 6 գիրք և 1 թերթ:

ՄԵՔԱՍՏԻԱ

Մեքաստիայում տպարան հիմնելու գաղափարն առաջինն արծարծել է Դավոթա գյուղի մոտ գտնվող Անապատ վանքի վանահայր առաջադրված Դավիթ Ուլնեցի վարդապետը, որը համաձայնվում է պաշտոնն ընդունել միայն վանքում տպարան և դպրոց բացելու պայմանով¹⁹⁰: Ի դեպ, «Անապատի ընկերության» անդամները վարդապետի նպատակի իրագործման համար հատկացնում են 600 դուրուշ, իսկ վարդապետն էլ նվիրաբերում է 500 դուրուշ արժողության իր ձին: Յավոթ, հոգևորականի ցանկությունը կյանքի չի կոչվում:

Անդրանիկ Վարդանյանի տպարան (1875-1878). հայկական առաջին տպարանը Մեքաստիայում հիմնադրել է կովտունցի Անդրանիկ Վարդանյանը. «Տպագրական տեղեկեհ մը ...քաղաքս կը բերէ հայրենակից (Կովտուն գիւղացի) Անդրանիկ Վարդանեանը 1875ի վերջերը: Կը հրատարակէ «Միվաս» անուն շաբաթաթերթ մը կէս պաթալ չափով. Ա և Գ էջերը՝ տաճկերէն ու Բ եւ Գ էջերը գոտ հայերէն թարգմանութիւնովը: «Միվաս» այս ձեւով կը սկսի հրատարակուիլ 1876 մարտ 16ին, ու կու տայ 3 թիւ: 1876 ապրիլ 1ին կառավարութիւնը կը գնէ Անդրանիկ է.ֆ.ի տպարանը ու կազմուածքը: «Միվաս»ին գոտ հայերէնը՝ կըլլայ հայատառ թրքերէն: Անդրանիկ է.ֆ. ...տպարանին տեսուչ կը կարգուի ու «Միվաս»ի վարիչը: Երկու տարի վերջ

188 **Մաղախան Վ.**, Հայ մամուլը եւ գրատպութիւնը Ջաւախքում եւ Մեխիւթում, «Հայրենի Ջաւախք», Պէյրոս, 2002, էջ 208-209:

189 «Ջաւախք», 12.01.1913, թ. 1:

190 **Պօղոսեան Ե.**, նշվ. աշխ., էջ 314:

հայերէնը չէ պիտոյ կը նկատուի, ու թերթը կըլլայ գուտ տաճկերէն, իբր կառավարական օրգան (1878): Հայերէն տառերը Անդրանիկ է.Ֆ.ի կը վերադարձուին»¹⁹¹: Անդրանիկ Վարդանյանի տպարանում հրատարակվող առաջին և միակ գիրքը «Աղօթագիրք»-ն էր (1875 թ.)¹⁹²:

Հայկ Վարդանյանի (Հայկ Ա. Վարդանյանի) տպարան (1909-1911). 1909 թ. Անդրանիկ Վարդանյանի որդին՝ Հայկը, շարունակում է հոր տպագրական գործունեությունը. «Անդրանիկ Վարդանեանի գաւակը, կտրիչ մեքենայի մը կազմածքը մամուլի կը վերածէ ու կառավարութեան իրենց վերադարձուցած տառերով կը հիմնէ իր տպարանը...»¹⁹³: Հայկ Վարդանյանը հրատարակում է



Հայկ Վարդանյան

«Անդրանիկ» շաբաթաթերթը, որի անդրանիկ համարը լոյս է տեսնում 1909 թ. հունվարի 24-ին: Ի դեպ, նա թե՛ խմբագիր էր և թե՛ գրաշար: Տպարանատիրոջ հիվանդության պատճառով, սակայն, թերթը հրատարակվում է ընդհատումներով և վերջնապես դադարում 1911 թ. (թողարկվում է 88 համար)¹⁹⁴:

«Հողդար» տպարան (1910-1913). հիմնադրել է Կարապետ Պարսամյանը 1910 թ. օգոստոսի 13-ին. «Մէկ քառորդ պաթալ ոտքով փետալ մըն էր գնածնիս: Գործածուած, խարխուլ: Առետրական թուղթեր... տպելու կարող առաջին մամուլն էր քաղաքս մտած: Հողդարի վրայ կը տպագրուի իր թերթը՝ «Հողդար» ու Ա թիւը լոյս կը տեսնէ 1910 հոկտեմբեր 27-ին: Ինչպէս տպարանին, նոյնպէս թերթին ալ արտօնատէրը, տնօրէնը ու խմբագրապետը Կ. Ա. Պարսամեանն է»¹⁹⁵:

«Հողդար» թերթին աշխատակցում են Գանիել Վարուժանը, Կարապետ Գաբրիկյանը, Թլկատին-

ցին և այլք: Գրաշարներն էին Տիգրան Կորկոտյանը, Սուրեն Մեծ-Մորուքյանը և Մարտիրոս Պեկյանը:

Թերթի հետագա ճակատագրի վերաբերյալ Կարապետ Պարսամյանը գրում է. «1912 դեկտեմբեր 20-ին «Հողդար»ի արտօնութիւնը կը փոխանցեմ, կառավարութեան առջեւ, տիար Յովհաննէս Բօլախեանի: 1913 փետրուար 16-ին վերջնականապէս կը բաժնուիմ «Հողդար»էն: 1913 ապրիլ 13-ին «Հողդար»ը լոյս կը տեսնէ Հ. Յ. դաշնակցութեան անցած (թիւ 36), որ մէկ երկու թիւ տալէ վերջ՝ կը կրկնապատկէ ծաւալը: Պոլիսէն տառեր բերել կու տայ, տակաւ կը ճոխացնէ տպարանը: Վերջերս կառավարական մամուլին վրայ տպագրել կու տայ «Հողդար»ը: 1914 թ.-ի ընդհանուր զօրակոչի ...պատճառով «Հողդար»ը դադարած է»¹⁹⁶:

Կ. Ա. Պարսամյանի «Կաբիրա» տպարան (1913-1914). «Հողդար» թերթը 1913 թ. հանձնելով Հայ հեղափոխական դաշնակցությանը՝ Կարապետ Պարսամյանը մեկնում է Կ.Պոլիս և կարճ ժամանակ անց



Կարապետ Պարսամյան

«կը վերադառնայ ուղղակի Եւրոպայէն բերուած երեք մամուլներով: 1913 թ. սեպտեմբեր 9-ին կը սկսի գործել: Մեծ մամուլը մէկ քառորդ պաթալ է, բայց շատ կատարեալ (ոտքով փետալ): Միւս երկուքը թեով (ձեռքով փետալ), մէկը միայն քարթ-վիզիթի համար»¹⁹⁷: Տպարանի գրաշարներն էին նախ «Հողդար»-ի գրաշարներից Մարտիրոս Պեկյանը, ապա Հայկ և Հովակիմ Չուգասյանները:

«Կաբիրա» տպարանը գործում է մինչև 1914 թ. տարեվերջ և իր կարճատև գործունեության ընթացքում հրատարակում 6 գիրք: Ի դեպ, Կ. Պարսամյանը նախատեսում է նաև հրատարակել «Կաբիրա» անվամբ թերթ, սակայն նյութական դժվարությունների պատճառով դա տեղի չի ունենում¹⁹⁸:

1869-1913 թթ. ընթացքում Մեքաստիայում լոյս են տեսնում նաև խմորատիպ թերթեր: Դրանք են՝ 1869 թ.՝ «Չայն Մեքաստիոյ» (մէկ համար), «Բատ», 1870 թ.՝ «Մամուլին ձագ», 1890 թ.՝ «Սեւ հողեր», 1905 թ.՝ «Կէտ», 1910 թ.՝ «Նշողակ» (Ազգ. Արամյան վարժարանի ավարտական դասարանի հրատ.) և 1913 թ.՝ «Աղունի» (Արամյան վարժարանի հրատ.)¹⁹⁹:

191 Առաքել Ն. Պատրիկ. Պատմագիրք յուշամատենան Սեբաստիոյ եւ գաւառի հայութեան, հ. Ա, Պէյրոս, 1974, էջ 392: Տե՛ս նաև Պարսամեան Կ. Ա., Անոնց յիշատակին, «Հողդար», 1913, № 27, 12 հոկտեմբեր, էջ 4:

192 Հայ գիրքը 1851-1900 թվականներին, էջ 213:

193 Առաքել Ն. Պատրիկ. նշվ. աշխ., էջ 395: Տե՛ս նաև Պարսամեան Կ. Ա., Անոնց յիշատակին, «Հողդար», Մեքաստիա, 1913, № 27, 12 հոկտեմբեր, էջ 4: Ի դեպ, Հայկ Վարդանյանը տարագրության օրերին բուժվում էր Ամերիկյան հիվանդանոցում, որտեղ էլ վախճանվում է 1918 թ.:

194 Առաքել Ն. Պատրիկ. նշվ. աշխ., էջ 395: Տե՛ս նաև Հայ պարբերական մամուլը (1794-1980), էջ 75:

195 Առաքել Ն. Պատրիկ. նշվ. աշխ., էջ 393: Ի դեպ, տպարանն իր անունը հավանաբար առել է Մեքաստիայի համանուն հայկական թաղամասից. «Հողդար անունով առանձին թաղ մը կայ հայոց, որ մօտ է Ս. Նշանի վանքին, քանի մը արտերով միայն անցրպետուած քաղքէն...» (նշվ. աշխ., էջ 298):

196 Նշվ. աշխ., էջ 393-394:

197 Նշվ. աշխ., էջ 394: Տե՛ս նաև Պարսամեան Կ. Ա., Անոնց յիշատակին, «Հողդար», 1913, № 27, էջ 4:

198 Առաքել Ն. Պատրիկ. նշվ. աշխ., էջ 394:

199 Հայ պարբերական մամուլը (1794-1980), էջ 35, 36, 60, 84 և 95:

ՏՐԱՊԻԶՈՆ

Տրապիզոնում գործած տպարանների վերաբերյալ գրեթե տեղեկություններ չկան: Հայտնի է միայն, որ 1907-1912 թթ. ընթացքում գործել է 5 տպարան: Դրանք էին 1907 թ. **Սիքայիդեսի**, 1909 թ.՝ **Սեշվերեթի**, 1909-1914 թթ.՝ **Սեռարի (Մերաս) եղբայրների**, 1910-1911 թթ.՝ **«Ոսկինար»** և 1912-1914 թթ.՝ **Շ. Միրքովիչի** տպարանները: «Գեղջուկ» (1909-1910)²⁰⁰, «Մոծակ» (1910), «Պոնտոս» (1910-1913) և «Պիծակ» (1911-1912) թերթերը²⁰¹, հավանական է, լույս են տեսել վերոնշյալ տպարաններից որևէ մեկում:

Ի դեպ, 1900 թ. թուրքական «Իսմայիլ Հակը» տպարանում հրատարակվել է Պ. Զաջունու «Տետր մենագրոց» գրքույկը, իսկ 1909-1910 թթ. «Մեշվերեթ» և «Ոսկինար» տպարաններում՝ «Փեթակ» թերթը (այնուհետև շարունակվել է տպագրվել Կիրաստնում):

Հարկ է նշել, որ Տրապիզոնում մինչև հայկական տպարանի հիմնումը՝ 1847 թ., հրատարակվել է «Հայաստան» ձեռագիր թերթը²⁰²:

ՌԻՐՖԱ

1908 թ. թուրքական սահմանադրության հռչակումից հետո Ուրֆայում «Յառաջդիմասիրաց» միության անդամներ Հարություն Մենյանի, Լևոն Էդրերլերյանի և Հովհաննես Նազաշյանի խմբագրությամբ հրատարակվում է խմորատիպ մի թերթ՝ «Պայքար» անվամբ²⁰³:

ՆՈՐԱՇԵՆ

Հայտնի է միայն, որ Թարգմանչաց դպրոցի տնօրինությունը (Հ. Հաճյան) Մշո դաշտի Նորաշեն գյուղում 1909 թ. հրատարակել է «Գպրոց-դաստիարակ» խմորատիպ թերթի 10 համար²⁰⁴:

ԳՈՐԻՍ

«Մասուն» տպարան (1909-1919/20). Գորիսում տպարանը բացվել է 1909 թ., որտեղ տպագրվել են «Գավառ», «Որոտան», «Միւնիք» թերթերը և 4

գրքույկ²⁰⁵: Հրատարակվել են նաև «...հարսնյաց հրավերներ, զավառային վարչության բլանկներ և զանազան պուրլիկացիաներ տուրքի, քոչի և զինվորակոչության մասին...»²⁰⁶:

Ըստ ամենայնի, 1920 թ. այս տպարանում են հրատարակվել նաև «Զանգեզուրի կոմունիստ» և «Կարմիր Զանգեզուր» թերթերը²⁰⁷:

ԵՐԶՆԿԱ

Երզնկայի տպարանի վերաբերյալ տեղեկություններ գրեթե չկան: Հայտնի է միայն, որ 1909-1911 թթ. հրատարակվել է «Արդի» շաբաթաթերթը, իսկ 1910-1911 թթ.՝ «Արոր» ամսաթերթին Արմենակ Մելիքյանի խմբագրությամբ: Ի դեպ, «Արոր»-ի առաջին համարները եղել են խմորատիպ, սպա կանոնավոր շարվածքով²⁰⁸:

ՄԱԼԱԹԻԱ

1909 թ. նախատեսվում է «Մալաթիոյ մեջ մամուլ մը հաստատել և տեղական թերթի մը հրատարակութիւն սկսիլ»²⁰⁹:

1909 թ. հունվարի 20-ին Մալաթիայում «Մասյաց աղավնի» ընկերության ջանքերով և Խոսրով Քեշիշյանի խմբագրությամբ լույս է տեսնում խմորատիպ «Չահ» թերթը²¹⁰, իսկ 1910-1914 թթ.՝ նույնպես խմորատիպ «Կրթասիրաց»-ը Եղիա Թովալյանի խմբագրությամբ²¹¹:

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ

Հայտնի է, որ 1863 թ. ամերիկյան քարոզիչները նախատեսել էին տպարան հիմնել Տիգրանակերտում²¹², որը, ամենայն հավանականությամբ, կյանքի չի կոչվել, քանի որ տպարանների գործունեության պատմությունը Տիգրանակերտում սկսվում է 1909 թ.-ից և շարունակվում մինչև 1913 թ.:

1909-1910 թթ. հրատարակվում է խմորատիպ 3 թերթ՝ «Անկախ Տիգրիս» (1909), «Տիգրիս» և «Յուքեր» անվանումներով (1910, ի դեպ, վերջին երկու

200 Ըստ մեկ այլ վկայության՝ «Գեղջուկ» թերթը տպագրվել է Յոնորայում. «Ժամանակագրական կարգով առաջինը Եոնորայի խմորատիպ պարբերաթերթն էր, զոր հրատարակեց տեղոյն ուսուցչութիւնը: «Գեղջուկ»ի առաջին խմբագիրները եղած են Եղուարդ Հրապեան, Տիգրան Կակոսեան եւ Վահրամ Քիրտեան» (Յովակիմեան (Արշակունի) Յ., Պատմութիւն Հայկական Պոնտոսի, Պէյրոս, 1967, էջ 203):

201 Հայ պարբերական մամուլը (1794-1980), էջ 85, 90: Տրապիզոնում հրատարակված թերթերի և ամսագրերի մասին տես նաև **Թորաքեան Մ.**, Օրերուս հետ, Պէյրոս, 2001, էջ 149-150: **Յովակիմեան (Արշակունի) Յ.**, նշվ. աշխ., էջ 202-203:

202 **Յովակիմեան (Արշակունի) Յ.**, նշվ. աշխ., էջ 102:

203 Հայ պարբերական մամուլը (1794-1980), էջ 74: Տես նաև **Սահակյան Ա.**, Դիցազնական Ուրֆան և իր հայրողիները, Պէյրոս, 1955, էջ 717:

204 Հայ պարբերական մամուլը (1794-1980), էջ 76:

205 Հայ պարբերական մամուլը, էջ 75, 118: Ի դեպ, մեկ այլ տեղեկությամբ՝ այս տպարանում է հրատարակվել նաև «Միւնիք» թերթը (**Իշխանյան Ռ.**, Հայ գիրքը (1512-1920), Երևան, 1981, էջ 119):

206 **Ալսեղ Բակունց**, Կյորես, Երկեր, հ. 2, Երևան, 1964, էջ 14-15: 207 Հայ պարբերական մամուլը (1794-1980), էջ 132, 134:

208 Նշվ. աշխ., էջ 75, 81: Տես նաև **Ստեփանյան Գ.**, Երզնկա, Երևան, 2005, էջ 395:

209 «Արարատ», 1909, № 5-6, էջ 534-535:

210 **Ալպոյանեան Ա.**, Պատմութիւն Մալաթիոյ հայոց, Պէյրոս, 1961, էջ 797: Մեկ այլ աղբյուրով՝ թերթը հրատարակվել է Կ. Պոլսում (Հայ պարբերական մամուլը (1794-1980), էջ 79):

211 Հայ պարբերական մամուլը (1794-1980), էջ 83: Տես նաև **Ալպոյանեան Ա.**, նշվ. աշխ., էջ 797-798 (ի դեպ, ըստ հեղինակի՝ Մալաթիայում Կրթասիրաց ընկերությունը Ստեփան Մանուշյանի խմբագրությամբ հրատարակել է մի ձեռագիր շաբաթաթերթ):

212 “The Missionary Herald”, հ. 60, Boston, 1864, էջ 176:

թերթերի արտոնատերն էր Վահան Տեպպահյանը²¹³:

Հառաջադիմական տպարան (1913). այս անվամբ տպարանը 1913 թ. հրատարակում է միայն «Թռուցիկ» վիմատիպ պարբերաթերթը²¹⁴:

ՊԱԳԸՐ-ՄԱՏԵՆ

Տիգրանակերտի նահանգի Պագըր-Մատեն քաղաքում 1909 թ. Ազարիկ Գոլոյանի խմբագրությամբ լույս է տեսնում «Ազատ խօսք» խմորատիպ թերթը²¹⁵:

ԿԱՂԶՎԱՆ

Կարսի մարզի Կաղզվան գավառի վարչանիստ համանուն քաղաքում 1910 թ. հրատարակվում է «Բռունցք» խմորատիպ ամսագիրը²¹⁶:

ՇԱՊԻՆ-ԳԱՐԱՀԻԱՍԱՐ

Հայտնի է, որ 1910 թ. հրատարակվել է «Մտրակ» խմորատիպ թերթի միայն 1 համար²¹⁷:

ՎԱՆ

1910-1915 թթ. Վան քաղաքում գործել է 4 տպարան, որտեղ մեծ մասամբ հրատարակվել են թերթեր:

Բարսեղյանի տպարան (1910-1915). 1910 թ. նոյեմբերից մինչև 1915 թ. հունիսի 10-ը (222 համար) այս տպարանում «Կիթեմպերկի մամուլով»²¹⁸ լույս է տեսել «Աշխատանք» թերթը (խմբագիրներ՝ Իշխան, Արմենակ Մաքսապետյան և Հմայակ Մանուկյան):

Տպարանը գտնվում էր Այգեստանի Թութուրդի փողան թաղի մեջ՝ «Աշխատանքի տուն» շենքում²¹⁹:

Ս. Ժամկոչյանի տպարան (1911-1912). հիմնադրվել է 1911 թ. Երիտասարդ քրիստոնեազան ընկերության (ստեղծվել է 1908 թ.) կողմից: Վանում տպարան ունենալու նպատակով նշյալ թվականին այս ընկերության անդամներից Սպիրիդոն Ժամկոչյանը Պոլսից մամուլ և տառեր է բերում: Ընկերությունը մեկ տարի հրատարակում է «Վան-Տոսպ» երկշաբաթաթերթը: Տպարանի և թերթի արտոնատերը և պատասխանատու վարիչն էր Ս. Ժամկոչյանը, որը ստորագրում էր «Մառ» և «Գետ» ծածկանուններով: Խմբագրական կազմում էին

նաև Հովհաննես Ավագյանը և Կ. Սիտալը²²⁰: Ի դեպ, թերթի հիմնական աշխատակիցների թվում հիշվում է բանասեր Խաչատուր Լևոնյանը:

Հովհաննյանի տպարան (1913-1914). 1913 թ. հունվարի 26-ից Ռուբեն Հովհաննյանի տպարանում սկսվում է Վանի Ռամկավար կուսակցության օրգանի՝ «Վան-Տոսպ» թերթի հրատարակությունը (պատասխանատու տնօրեն՝ Արմենակ Տեր-Պողոսյան, արտոնատեր՝ Ռ. Հովհաննյան): Ի դեպ, կուսակցությունը ոչ միայն գնում է Ս. Ժամկոչյանի տպարանը, այլև վերցնում է թերթի անունը, քանի որ թուրքական կառավարությունը մերժել էր նոր թերթի արտոնագիր տալ²²¹:

Մեխքեթյանի տպարան (1913-1914). հայտնի է, որ նշյալ ժամանակահատվածում տպագրվել է «Լույս» ամսօրյա հանդեսի 24 համար (պատ. -տնօրեն՝ Արշավիր Մ. Ավետադյան, խմբ.-պետ՝ Միքայել Սինապյան): Վանի Բարեսիրական ընկերության հրատարակությունն էր²²²:

1895-1918 թթ. ընթացքում Վանում լույս են տեսել նաև խմորատիպ թերթեր: Դրանք են՝ 1895 թ.՝ «Ամոքիչ» (խմբ.՝ Մովսես Տեր-Հովհաննիսյան: Արմենական կուսակցության համանուն խմբի օրգանն էր), 1907 թ.՝ «Ասուպ» (խմբ.՝ Արտաշես Սուլախյան), «Կայծ» (խմբ.՝ Վարդան Պապիկյան: Արմենական Երիտասարդաց միության օրգանն էր), «Կարկուտ» (խմբ.՝ Տիգրան Ապաղոյան, Հայկ Գալջյան և Արշավիր Ավետյան), «Կռուսան կոտոշ», «Հնչակ» (Ս. Գ. Հնչակյան երիտասարդների միության օրգան), «Նոր սերունդ», «Սուրբ Վարդան» (Երամյան որբանոցի աշակերտների օրգան), «Վտակ», 1907-1908 թթ.՝ «Ազատ խօսք», «Հայրենացք», «Գալաթի ձայն»²²³, «Երկունք», 1908 թ.՝ «Չարքիր», «Կայծ» (Բարեսիրական ընկերակցության օրգան), 1909 թ.՝ «Կոհակ», «Չգտում», «Մայրենի մամուլ» (խմբ.՝ Տիգրան Չիթունի), «Ովասիս», 1909-1910 թթ.՝ «Յործանք», «Շարիվարի» (խմբ.՝ Արտաշես Սուլախյան և Արթուրյան Բրուտյան), «Մապահ-իլ-խայր» (թուրքերեն, խմբ.՝ Դավիթ Փափագյան) և 1918 թ.՝ «Նեռ Վանայ»²²⁴:

1915 թ. սկզբին Վանում մի խումբ երիտասարդների նախաձեռնությամբ հրատարակվել է նաև

213 Հայ պարբերական մամուլը (1794-1980), էջ 75 և 85:

214 Նշվ. աշխ., էջ 96:

215 Նշվ. աշխ., էջ 74:

216 Նշվ. աշխ., էջ 81:

217 Նշվ. աշխ., էջ 84:

218 **Մխիթարեան Յ.**, նշվ. հոդվ., «Աշխատանք», 1913, № 48 (144), 12 հոկտ., էջ 6: 1916 թ. մայիսի 4-ից թերթը հրատարակվել է Երևանի «Կուլտուրա» տպարանում (1916-1919):

219 **Փափագեան Վ.**, նշվ. աշխ., էջ 287:

220 **Տեր-Սյրառիչեան Ե.**, նշվ. աշխ., էջ 629: Ի դեպ, մինչև սեփական տպարան ունենալը Երիտասարդ քրիստոնեազան ընկերությունը դ-ր Ըշերի հայերեն գրամեքենայով հրատարակել է իր համանուն օրգանը (նշվ. աշխ., էջ 622: Տե՛ս նաև **Մխիթարեան Յ.**, նշվ. հոդվ., «Աշխատանք», 1913, № 48, 12 հոկտ., էջ 7):

221 **Տեր-Սյրառիչեան Ե.**, նշվ. աշխ., էջ 623-624:

222 Նշվ. աշխ., էջ 622:

223 Ի դեպ, այլ վկայություններով՝ «Գալաթի ձայն» թերթը հրատարակվել է Արմենակուն (**Մխիթարեան Յ.**, նշվ. հոդվ., 1913, № 48 (144), 12 հոկտ., էջ 6: **Ավագյան Ս. Մ.**, Արմակ, «Հայ ազգագրություն և բանահյուսություն», հ. 8, Երևան, 1978, էջ 62):

224 **Տեր-Սյրառիչեան Ե.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 622-625: Խմորատիպ մամուլի մասին տե՛ս նաև **Մխիթարեան Յ.**, նշվ. հոդվ., «Աշխատանք», 1913, № 48 (144), 12 հոկտ., էջ 6:


«Տեղեկատու» ստանձատիպ թերթի ընդամենը 2 համար²²⁵:

ՕՐՈՐ

Կարնո նահանգի Քղի գավառի Օրոր գյուղում 1911-1912 թթ. ուսուցիչ Սեդրակ Շահենի²²⁶ խմբագրությամբ հրատարակվել է «Վերածնունդ» խմորատիպ պարբերաթերթը²²⁷:

ԿՐՄԱՆ

Կարնո նահանգի Սպեր գավառի Խոտորջուր գավառակի Կրման գյուղում 1913 թ. լույս է տեսել խմորատիպ «Տայոց աշխարհ» թերթը, իսկ 1914 թ.



Վահան Քչուրյան

«Աղանի Տայոց» ամսագիրը: Երկուսն էլ հրատարակվել են Աթանաս Ղազարյան²²⁸ և Վահան Քչուրյան²²⁹ վարդապետների խմբագրությամբ: Ի դեպ, «Աղանի Տայոց» «խմորատիպ թերթին միայն երկու թիւ կրնան լույս ընծայել»²³⁰:

Խմբագրության կողմից, լույս է տեսել սույն հոդվածով ներկայացված տեղեկությունների հիման վրա կազմված «Տպարանները Հայոց Հայրենիքում» քարտեզը:

225 «Աշխատանք», 1915, № 21 (220), 1 յունիսի, էջ 1:

226 Օրորցի Սեդրակ Շահենը Խարբերդի Եփրատ քոլեջի շրջանավարտներից էր: Դասավանդել է Տիգրանակերտում, Տարոնում և Քղիում (Տարեգիրք Քղիի հայրենակցական միության, հ. Ա, Տիբրոյիտ, 1937, էջ 125-126: Տես նաև **Վահե Հայկ**, նշվ. աշխ., էջ 1233):

227 Հայ պարբերական մամուլը (1794-1980), էջ 91:

228 Կրմանցի Աթանաս վարդապետ Ղազարյանը (1882, Կրման-նահատակված 1915 թ.) 1909 թ. ձեռնադրվել է քահանա և նշանակվել Կրմանի ժողովրդապետի օգնական և ուսուցիչ:

229 Խոտորջուրցի Վահան վարդապետ (1930 թ.-ից արքեպիսկոպոս) Քչուրյանը (1874, Կարին-1936, Բեյրութ) հեղինակել է «Տարագրութեան յուշեր» և ոտանավորներ (ամսիպ են):

230 **Հովունեան Յ., Հանեան Մ.**, Յուշամատենան Խոտորջուրի, Վիեննա, 1964, էջ 260, 264:

ԷՋԵՐ ԻՄ ՕՐԱԳՐԻՑ

Սարգիս Իսրայելյան

«Վարձք»-ի ներկա համարով սկսում ենք վաստակաշատ ուսուցիչ, բանասեր, շուշեցի Ս. Իսրայելյանի՝ (ճարտ. Ռաֆայել Իսրայելյանի հայրը) ցարդ անտիպ հուշագրության հրատարակումը (որոշ կրճատումներով): Այն մեզ փոխանցելու համար շնորհակալություն ենք հայտնում ծոռնուհուն՝ Ռուզան Խարազյանին:

Գլուխ առաջին

Մեր քաղաքը. Մանկություն

Ծնվել եմ Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքում: Շուշին թեև գավառական քաղաք էր համարվում, բայց իր առևտրական և կուլտուրական մակարդակով շատ ավելի բարձր էր: Վաճառականներն առևտրական կապերով կապված էին ոչ միայն Ռուսաստանի խոշոր քաղաքների, այլև արտասահմանյան մի շարք երկրների հետ: Քաղաքը երկու մասից էր բաղկացած՝ հայկական և թուրքական-աղբրեջանական: Հայկական մասն իր կուլտուրական մակարդակով շատ էր բարձր թուրքական մասից: Հայկական մասում էին գտնվում կուլտուր-լուսավորական բոլոր հիմնարկները՝ Ռեալական դպրոցը, Հայոց թեմական դպրոցը, Քաղաքային ռուսական դպրոցը, Օրիորդաց ռուսական պրոգիմնագիան, Մարիամյան հայ օրիորդաց դպրոցը և այլն: Այստեղ էին գտնվում քաղաքային գրադարանը, ձմեռային և ամառային ակումբները, զբոսայգին, քաղաքային դրաման իր քաղաքագլխով, Խանդամիրյանի թատրոնը, ուր հյուրախաղերի էին գալիս հռչակավոր դերասան-դերասանուհիներ Աբելյանը, Սիրանուշը, Բերոյանը և շատ ուրիշներ: Հայկական մասի բարեկարգ վիճակի մասին պերճախոս վկաներ կարող են լինել նրա լայն և մայթեր ունեցող փողոցները, բազմահարկ, սրբատաշ քարերից կառուցված բազմահարկ տները: Բավական է ասել, որ Ռեալական դպրոցը մինչև սեփական շենքի կառուցումը տեղավորված էր Մովսես բեկ Աթաբեկյանի մասնավոր տներում, իսկ օրիորդաց պրոգիմնագիան՝ Բախշիբեկ Ասրիբեկյանի տան առաջին հարկում: Հայկական մասում էին գտնվում նաև փոստը, պետական խազան (КАЗНАЧЕЙСТВО), ինչպես նաև քաղաքի երկու գրախանութներն ու Մահտեսի Հակոբյանների և Տէր Սահակյանի երկու տպարանները: Աչքի ընկնող տեղ էին գրավում հինգ եկեղեցիները, որոնց մեջ բարձր ճարտարապետական կառուցվածք էր համարվում Ղազանչեցոց եկեղեցին: Քաղաքը հա-

մատարած սալահատակված էր, իսկ հայկական մասի կենտրոնն ուներ կոյուղի:

Մեր տունը գտնվում էր քաղաքի ծայրամասում՝ Ղումլուղի թաղում, իսկ մեր հարևաններն աղբրեջանցի թուրքեր էին, որոնց հետ մենք բարիդրացիական հարաբերության մեջ էինք: Բայց ավելի մտերիմ էինք Բալախանում բաջունց հետ: Բալախանում բաջին մի որբևայրի աղջիկ ուներ՝ Դուրնուսան, բոլոր ժամանակ մեզ մոտ էր լինում, գրուցում մորս հետ, իսկ մենք մեր գորգերն ու կարպետները գործում էինք Բալախանում բաջունց սրահում, որին մասնակցում էր և Դուրնուսան: Չեմ մոռանում, թե ինչպես մի օր Դուրնուսան ինձ շալակն առած տարավ չոփչի հեքիմի մոտ: Բալախանում բաջին ուներ երկու թոռ՝ Մովսիս ու Մուսալը, որոնք իմ խաղընկերներն էին: Բոլոր ժամանակ իրար հետ էինք վազվզում, «թամբի» խաղում, վեզի տալիս, խնդրում, որ Դուրնուսան մեր վեզերը կանաչ-կարմիր ներկի: Շատ հաճախ նստում էինք ու թափմաջա (հանելուկ) ասում: Մուսալի ասած մի թափմաջան այսօր էլ հիշում եմ.

Բիզը բիրը վար,

Երդի դիլը վար,

Աղըը յոխ, ատամ թութար:

Թարգանությունը.

Մեզի մեկն ունիմք,

Յոթ լեզվանի,

Բերան չունի, մարդ կկծի (եղինջ):

Լորերի համար վանդակներ էինք շինում, լորը մեջը փակում, որ նա երգի, և մենք համրում էինք. «Վը դ-վը դ-վը-տը-լը-վը տը-լըտ»: Լոր կար, որ չորս անգամ էր «վը-տը-լըտ» երգում, լոր կար՝ հինգ անգամ, իսկ 6-7 անգամ երգող լորը հազվագյուտ էր և թանկ՝ 1 ռուբլի, ո՞վ կարող էր առնել: Ձմեռը մենք սահնակ էինք շինում, դուրս գալիս մրցման: Բայց նախանձով էինք նայում Մոլլուբեկյանի տղա Ռիզայի սահնակին, գեղեցիկ էր, զանգուլակները կախ, գորգի կտորը վրան սազցրած: Ռիզայի սահնակը բոլորից արագ էր սահում, ոչ ոք չէր կարողանում նրանից առաջ անցնել:

Մի օր էլ, այդ 1890 թիվն էր, մայրս ինձ տարավ Թեմական դպրոց ընդունվելու:

– Ի՞նչ է ազգանունդ, – հարցրեց ինձ քննող ուսուցիչը:

– Համբել գիտե՞ս:

Ես համբեցի.

-1, 2, 3...

-Բավական է, ապրես, ընդունվում ես, սեպտեմբերի 1-ին կգաս:

Մեր դպրոցը

Մեր դպրոցը երեքհարկանի մի մեծ շենք էր: Ընեքին կից էր կոնսիստորիան, նույնպես մեծ շենք, որի վերին ամբողջ հարկը հատկացված էր թեմական առաջնորդի բնակարանին: Դպրոցի բակը սալահատակված էր, իսկ մուտքը մի մեծ դարբաս էր, որի մոտ կանգնած էր դպրոցի ծառաներից մեկը՝ Մուղդուսին: Նա ներս մտնողներին թողնում էր, իսկ դուրս եկողներին՝ ոչ: Դասասենյակներն ընդարձակ էին և լուսավոր, մատարանները շարված էին երկու շարքով: Մենյակները միջանցքային չէին կառուցված, միջանցքներին փոխարինում էին ընդարձակ հաշտ-մախասենյակները: Անձրևների ժամանակ աշակերտներն այդտեղ էին հավաքվում զանգից հետո:

Առավոտյան՝ դասերը սկսելուց առաջ, մենք՝ աշակերտներս, շարք էինք կանգնում ըստ դասարանների, կատարում մարզանք, որից հետո բարձր դասարանների աշակերտների ուղեկցությամբ գնում էինք դասարան: Մեզ ուղեկցող աշակերտը մնում էր դասարանում մինչև ուսուցչի գալը: Սրա նշանակությունը, հետագայում երբ ես ուսուցիչ էի, լիովին ըմբռնեցի: Բանն այն է, որ երբ աշակերտները դասարան են մտնում անկազմակերպ, խառնիճադանջ, աղմուկով, գոռում-գոչումով, նրանք գտնվում են դասամիջոցների, խաղերում տեղի ունեցած դեպքերի տպավորության տակ, նույն աշխուժությունը, բարձր տրամադրությունը շարունակում են և դասարանում: Շատ հաճախ աշակերտները նույնիսկ չեն էլ նկատում, որ ուսուցիչն արդեն դասարանում է: Այսպիսի դեպքում ուսուցիչը ստիպված է լինում դասին հատկացրած ժամանակի որոշ մասը ծախսել դասարանում կարգը վերականգնելուն: Դասերը սկսելուց առաջ, ինչպես և դասերը վերջացնելուց հետո աղոթքը պարտադիր էր: Բոլորը ոտքի էին կանգնում, և օրապահը ասում էր ամենօրյա աղոթքը՝ «Հայր մերը»:

Տարրական պատրաստական դասարաններում դասավանդման առարկայական սխառն էր, յուրաքանչյուր առարկա առանձին, հմուտ դասատու էր պարասպում: Այսպես, օրինակ, առաջին պատրաստական դասարանում գրագիտության դասավանդման իմ ուսուցիչը եղել է Հակոբ Ծաղարբեկյանը, որը միևնույն ժամանակ բարձր դասարաններում ավանդում էր գրական տեսություն իր իսկ հրատարակած «Շարահյուսություն» խորագիրը կրող ձեռնարկով: Այս փաստը ցույց է տալիս, որ այն ժամանակ մեծ նշանակություն էր տրվում տարրական դասարաններին, որոնք միջնակարգ դպրոցի հիմքն էին կազմում:

Ցածր, պատրաստական դասարաններում մենք տեսրակների վրա չէինք գրում և ոչ էլ թանաք-գրիչ ունեինք: Տեսրակին փոխարինում էր սև քարե տախտակը՝ բարակ, նեղ փայտի շրջանակով, որի մի երեսը հատկացնում էինք հայոց լեզվին, իսկ մյուսը՝ թվաբանության: Քարե տախտակի վերա գրում էինք «քարե գրիչով», քարե տախտակից կախված էր սպունգը՝ գրածը ջնջելու համար: Տնային աշխատանքը, որ կատարում էինք քարե տախտակի վրա, զգուշությամբ էինք բերում դպրոց, որ ջնջվի:

Մենք՝ ցածր դասարանի աշակերտներս, պատկառանքով էինք վերաբերվում բարձր դասարանի աշակերտներին: Շատ հաճախ մեզ հուզող զանազան հարցերով դիմում էինք նրանց, և նրանք մեծ սիրով էին մեզ բացատրում բառի նշանակությունը, թվաբանության մեզ համար դժվար խնդրի բացատրությունը և այլն:

Ովքե՞ր էին մեր դպրոցի սաները, ժողովրդի ո՞ր խավերն էին իրենց զավակներին տալիս Թեմական դպրոցում սովորելու: Աշակերտության ճնշող մասը կազմում էին արհեստավորների որդիները, ապա գալիս են գյուղացիները: Սրանց թվում՝ և գյուղական քահանաների որդիները, մանր առևտրականների տղաները, քիչ թվով նաև հարուստների որդիները: Քիչ չէին նաև Չանգեզուրից՝ Գորիսից, Դափանից, Միսիանից եկողները: Քաղաքի խոշոր առևտրականները, բեկերը, իշխանները, պետական շինովնիկներն իրենց որդիներին տալիս էին սովորելու Ռեալական դպրոցը: Այնտեղի պայմաններն անմատչելի էին չքավոր և միջին դասակարգերի համար:

Թեմական դպրոցի աշակերտներն իրենց արտաքինով շատ էին տարբերվում Ռեալական դպրոցի աշակերտներից: Թեմական դպրոցի աշակերտը, ով ինչ ունի, այն էլ հագնում էր, իսկ Ռեալական դպրոցն ուներ հատուկ տարագ, այն էլ մահուդից կարած: Հատուկ էր նաև Ռեալական դպրոցի գլխարկների գլխարկանիշներով ձևը, այնինչ Թեմական դպրոցում, ով ինչով կարող էր, նրանով ծածկում էր գլուխը: Ռեալական դպրոցի աշակերտները գրքերը դպրոց էին տանում թանկարժեք կաշվե պայտասակներում, մեջքներին հարմարացրած, իսկ մենք՝ որևէ կտորից կարած թաշկինակի մեջ, կռան տակ առած: Թեմական դպրոցում ձրի սովորողների թիվը մեծ էր, իսկ ուսման վարձը տարեկան ութ ռուբլի էր, մինչդեռ Ռեալական դպրոցինը՝ շատ ու շատ անգամ բարձր:

Ռեալական դպրոցը պահպանվում էր պետական միջոցներով, իսկ Հայոց հոգևոր թեմական դպրոցը՝ ժողովրդական: Ռեալական և Թեմական դպրոցները միջնակարգ դպրոցներ էին: Տարբերությունն այն էր, որ Ռեալական դպրոցի ուսումնական ծրագրով նախատեսված էր հունական կամ լատինական լեզուներից մեկնումեկը, իսկ Թե-

մական դպրոցի ծրագիրը ծանրաբեռնված էր կրոնական առարկաներով՝ կրոն, քրիստոնեական վարդապետություն, կարգ աստվածապաշտություն, ուսումն սուրբ գրոց...

Յարական կառավարությունը թեմական դպրոցներին միջնակարգ դպրոցի իրավունք չէր վերապահում, այդ պատճառով էլ թեմական դպրոցավարտի առաջ ռուսական բարձրագույն դպրոցների դռները փակ էին: Թեմական դպրոցավարտը գնում էր Էջմիածին՝ Գևորգյան ճեմարան՝ նրա լսարանական բաժնում շարունակելու ուսումը, որտեղ ընդունելությունը սահմանափակ էր:

Թեմական դպրոցներն արտասահմանում վայելում էին միջնակարգ դպրոցի իրավունք (Գերմանիա, Ֆրանսիա, Շվեյցարիա...): Թեմական դպրոցավարտներից նրանք, ովքեր մեկենասներ էին գտնում, այդ մեկենաս-բարերարի հատկացրած միջոցներով գնում էին արտասահման՝ բարձրագույն ուսում ստանալու: Բայց այնքան էլ հեշտ բան չէր մեկենաս գտնելը: Մուրացանը լավ է նկարագրում այդ «բարերար» մեկենասներին իր «Հասարակաց որդեգիր» խորագիրը կողմ պատմվածքում:

Թեմական դպրոցի ամբողջ դասընթացը կարելի է բաժանել երկու մասի.

Առաջինը՝ տարեկան, պատրաստական դասարանների ուսման առաջին երեք տարին, որտեղ աշակերտությունը ստանում էր նախապատրաստական գիտելիքներ, հետագա բարձր դասարաններում անցնելիք առարկաների հիմքը:

Երկրորդ՝ վեց հիմնական դասարաններ, որտեղ աշակերտությունը ստանում է գիտականորեն հիմնավորված գիտելիքներ և ձեռք է բերում միջնակարգ դպրոցավարտի վկայագիր:

Ռուսաց լեզվի դասավանդումը սկսվում էր երկրորդ պատրաստական դասարանից և շարունակվում էր մինչև ուսման վերջը: Բացի ռուսաց լեզվից՝ ռուսերենով էին ավանդվում նաև Ռուսաստանի աշխարհագրությունը և ռուսաց պատմությունը:

Օտար լեզուներից ավանդվում էր գերմաներենը կամ ֆրանսերենը: Ծեծը՝ իբրև դաստիարակության միջոց, վերացված էր մեր դպրոցում, բայց պատիժն ու խրախուսանքը կիրառվում էին իբրև դաստիարակության միջոց:

...1895-96 ուսումն. տարում մեր դպրոցում մեծ իրարանցում, խժոժություններ տեղի ունեցան¹: Լույսի և խավարի պայքար էր: Պայքարողներն էին մի կողմից կղերականները դպրոցի հոգաբարձության նախագահ Կարապետ եպիսկոպոս Այվազյանի գլխավորությամբ, մյուս կողմից՝ ուսուցչական կազմի ավելի առաջավոր մասը:

Լևոն Սարգսյանը² առաջադիմական, նորագույն գիտելիքներով օժտված, հմուտ, դպրոցական գործին նվիրված, մեծ էրուդիցիայի տեր անձնավորություն էր, որ աշակերտության սերն ու հարգանքն էր վայելում: Նա, բացի տեսուչ լինելուց, ուներ և բնագիտության դասեր բարձր դասարաններում: Այդ դասերի ժամանակ շոշափվում էր մարդու ծագման, աշխարհի՝ իբրև արեգակի մոլորակներից մեկի մասին: Ահա այստեղ էր, որ մերժվում էին Աստվածաշնչի գաղափարը, Աստծո գոյությունը, նրա «արարչական գործունեությունը», աշխարհի գոյության տարիքի անհեթեթությունը: Այս պայքարը ավելի սուր կերպարանք ստացավ մի դեպքի առթիվ: Ուսուցիչ Պետրոս Մելքոնյանը 5-րդ դասարանի աշակերտ Թարխանյանի հետ զրուցելիս նկատում է, որ հորինված սուտ է Մուրք գրքի այն առասպելը, թե Քրիստոսի՝ երկու հացով և երկու ձկով 2000 հոգուն կերակրելուց հետո ահագին մնացորդ է մնացել: Պայքարը գնալով մեծ ծավալ է ստանում: Հինգերորդ դասարանի յոթ աշակերտներ Թարխանյանի և դպրոցի աստվածաբան Արշակ Տեր-Միքայելյանի եղբայր Քրիստափորի գլխավորությամբ մի գրավոր հայտարարություն են տալիս հոգաբարձության նախագահ Կարապետ եպիսկոպոս Այվազյանին ուսուցիչ Մելքոնյանի քրիստոսամերժ և Լ. Սարգսյանի աստվածամերժ հայացքների մասին: Եպիսկոպոս Կարապետ Այվազյանը հայտնի էր իր ռեակցիոն և հետադիմական հայացքներով ու արատավոր այլ հատկություններով: Լույսի և խավարի պայքարը գնալով ավելի է խորանում՝ իր մեջ առնելով ամբողջ դպրոցը: Դպրոցը նման էր եռացող կաթսայի, որ ավերից բշտիկներ դուրս տալուց հետո ընդգրկում է ամբողջ կաթսայի մասսան և եռում, եռում, ապա ավերից դուրս թափվում: Դիշտ այդպես էլ մեր դպրոցն էր, անվերջ մանկավարժական ժողովներ, բորբոքված կրքեր: Ահա այս պայքարը դուրս գալով դպրոցի պատերից՝ ընդգրկել էր քաղաքի հինգ եկեղեցիների ավելի սնտոխապաշտ և կրոնամոլ բնակիչներին: Քահանաները, որոնց գլխավորում էր տեղի Մուշեղ քահանա Վարդապետյանը, կրքեր էին բորբոքում դուրսը՝ եկեղեցիներում, տներում, փողոցներում, շուկաներում, կողմնակիցներ հավաքում: Գործին խառնվում է նաև Ամենայն Հայոց կաթողիկոսը՝ Խրիմյան Հայրիկը: Հաղթող հանդիսացավ խավարը՝ Կարապետ եպիսկոպոս Այվազյանի իշխանությունը: Լևոն Սարգսյանը և նրա համախոհ ուսուցիչները, համաձայն իրենց հրաժարական դիմումների, ազատվեցին պաշտոններից, իսկ Լևոն Սարգսյանի կողմնակից աշակերտներից շատերը թողեցին դպրոցը³: Այդ տարի ավարտական 6-րդ հիմնական դասարանում մնացել էին ընդամենը երկու հոգի: Ուսումնական տա-

1 Իրականում դեպքերը տեղի են ունեցել 1894 թ. (ծնթ. խմբ.):

2 Լևոն Սարգսյանը Շուշիի թեմական դպրոցի տեսուչ է նշանակվել 1892 թ. ամռանը և այդ պաշտոնը վարել երկու տարի (Լեօ, Պատմություն Կարաբաղի Հայոց թեմական հոգևոր դպրոցի. 1838-1913, Թիֆլիզ, 1914, էջ 454) (ծնթ. խմբ.):

3 «Ընդդեմ պատուիրանաց սրբոյ աւետարանի» շարժման մասին տես Լեօ, նշվ. աշխ., էջ 472-536 (ծնթ. խմբ.):

րին վերջացնելու համար տեսչի պաշտոնակատար նշանակվեց գերմաներենի ուսուցիչ Ստեփան Կանայանը:

Նոր տեսուչ

Հետևյալ ուսումնական տարում տեսչի պաշտոնում նշանակվեց Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսիսյանը⁴, որ նոր էր դիսերտացիա պաշտպանել և արժանացել մագիստրոսի կոչմանը: Մեսրոպ վարդապետն առաջին հոգևորական տեսուչն էր մեր դպրոցում:

Նոր տեսուչ Մեսրոպ վարդապետն ուներ պարթև հասակ, գեղեցիկ ու առնական դեմք, փառահեղ մորուք, իսկ նրա հաստ ու խիտ հոնքերը կարծես մի-մի խուրձ մագեր լինեին աչքերի վերևում ամրացրած, որ նրա դեմքին արտակարգ շուք էին տալիս և ավելի խորացնում աչքերը: Նա աչքի ընկավ իր մի քանի նորամուծություններով: Առաջին նորամուծությունն աշակերտական կանոնների մշակումն էր: Այդ կանոնները տպագրվեցին բրոշյուրի ձևով «Հիշատակարան» խորագրով, որի վերջում հատուկ էջեր կային աշակերտի քառորդային և փոխադրական գնահատականները նշանակելու համար: Երկրորդ նորամուծությունը գլխարկանիշն էր: Հոգևորական տեսուչը ցանկանում էր, որ մեր դպրոցի աշակերտները պետական դպրոցների օրինակով տարբերվեին մյուս դպրոցների աշակերտներից: Գլխարկանիշն ուներ և դաստիարակչական նշանակություն: Բացի սրանից՝ գլխարկանիշի հետ կստեղծվի նաև հագուստի միասնական տարագ: Ի՞նչ ձև պետք է ունենար գլխարկանիշը, այս միտքը զբաղեցնում էր տեսչին: Որոշվեց առաջարկել քաղաքի ոսկերիչներին ներկայացնել իրենց նախագծերը: Ընտրվեց քաղաքի հռչակավոր ուստա Բադամի նախագիծը: Հենց նրան էլ առաջարկվեց բազմացնել գլխարկանիշները: Գլխարկանիշն իրենից ներկայացնում էր «Վարաբաղի Հայոց թեմական հոգևոր դպրոց» անվանման սկզբնատառերը: Աշակերտները սիրով էին կրում այդ գլխարկանիշները, մանավանդ ցածր դասարանցիները:

Երրորդ նորամուծությունը զինվորական քայլերգի ուսուցումն էր: Մեր դպրոցի նոր ընդունված ծառա Բալասանը նոր էր գորացրվել և ուներ ենթասպայի կոչում: Մեր զինվորական քայլերթի ուսուցիչ-հրամանատարը Բալասանը դարձավ: Ամեն առավոտ զինվորական բոլոր կանոններով նա մեզ վարժեցնում էր: Հրամաններ տալիս էր ռուսաց լեզվով: Այս վարժություններին անպայման ներկա էր լինում և ինքը՝ տեսուչ Մեսրոպ վարժապետը, որ միշտ աջ ձեռքի բթամատով և ցուցամատով շոյում էր փառավոր մորուքը: Մեր Թեմական դպրոցը շատ մոտ էր

Ռեալական դպրոցին, որի աշակերտները նույնպես զինվորական վարժություն էին կատարում, բայց ոչ դպրոցի բակում, այլ փողոցում: Նրանց հրամանատարը ոչ թե աշխարհիկ անձ էր, այլ ոսկեգոծ ուսուցիչներով զինվորական: Մեր զինվորական վարժությունը սուս ու լռիկ էր, իսկ նրանցը՝ փողային նվագախմբի ուղեկցությամբ, որ վարում էր կոմպոզիտոր Ն. Թամրազյանը:

Պետք է ասել, որ Թեմական դպրոցի աշակերտության մեջ հայրենասիրությունը, ազգասիրությունը մեծ ոգևորության էր հասնում: Այն ամենը, ինչ հայն ու Հայաստանն էին ներկայացնում, ինչ հայկական էր, բոլորը մեզ համար վսեմ էր, անկրկնելի ու եզակի: Այդ էր պատճառը, որ մենք ոգևորվում էինք անցյալի փառքով և երազում պայծառ գալիքը: Այդ երազանքներն էին՝ ազատված տեսնել հային իր մայր Հայաստանով, իր պետականությամբ: Սրան պակաս չէր նպաստում «Ռզի (մայր) Հայաստանի» ձեռագործ նկարը, որ յուրաքանչյուր հայ ընտանիքի սենյակի պատն էր զարդարում: «Ռզի Հայաստանի»-ն իրենից ներկայացնում էր մի չքնադագեղ աղջիկ՝ նստած պատմական Հայաստանի մայրաքաղաքների ավերակած բեկորների վրա, որոնց վրա գրված էին՝ Անի, Դվին, Արտաշատ... պատմական քաղաքների անունները: Ընտանիքի աղջիկը, երբ 15-16 տարեկան էր դառնում, նրա սուրբ պարտականությունն էր քարգահի վրա մետաքսե գույնզգույն թելերով գործել «Ռզի Հայաստանի» նկարը: Հայրենասիրական պրոպագանդան դպրոցում կարմիր թելի պես անցնում էր այնպիսի առարկաների դասավանդման միջոցով, ինչպիսին էին՝ հայրենի գրականությունը, հայոց պատմությունը, մատենագրությունը (գրաբար լեզուն): Հայրենասիրական վեհ ու վսեմ զաղափարները դպրոցը մեր մատաղ հոգու մեջ էր ներարկում նաև հայրենասիրական երգերի միջոցով: Դպրոցական բոլոր հանդեսները բացվում էին Մ. Նալբանդյանի «Մեր հայրենիք» երգով: Իսկ Վարդանանց տոնին երգվող «Նորահրաշ» շարականն իր սքանչելի եղանակով լցնում էր մեր հուզական աշխարհը, այստեղ հայրենասիրությունը հասնում էր իր կուլմինացիոն գագաթնակետին: «Իտալացի աղջկա երգը» ոչ միայն հանդեսների բացման հիմն էր, այլև արտահայտիչ արտասանության համար գեղարվեստական նյութ, որը շատ հաճախ բեմականացվում էր: Ահա մեկը արտասանում է «Իտալացի աղջկա երգը» ոտանավորը: Հենց որ հասնում էր այն տեղը՝ «Ահա, եղբայր, քեզ մի դրոշ», նրան մոտենում է մի աղջիկ՝ ձեռքին բռնած մի դրոշակ, չոքում է եղբոր դիմացը և արտասանում.

Ահա, եղբայր, քեզ մի դրոշ,

Որ իմ ձեռքով գործեցի,

Գիշերները ես քուն չեղա,

Արտասուքով լվացի:

⁴ Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսիսյանը տեսչության պաշտոնը վարել է 1896 թ. սեպտեմբերի 8-ից մինչև 1897 թ. հունիս (ԼԵՕ, նշվ. աշխ., էջ 545-546) (ծնթ. խմբ.):

Իսկ երբ աղջիկն ասում է.

*Նայիր նրան երեք գույնով
Նվիրական մեր նշան,
Թող փողփողի թշնամու դեմ,
Թող կործանվի Ավստրիան:*

Գահլիճը դրողում էր. «Թո՛ղ կորչի Թուրքիան»: Աշակերտությունն այն համոզմանն էր, որ Միքայել Նալբանդյանն «Ավստրիա» ասելով նկատի է ունեցել Թուրքիան: Դրոշակը հանձնելուց հետո, երբ դահլիճը լռում էր, երկուսը միասին՝ տղան և աղջիկը, արտասանում էին.

*Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի,
Բայց երանի, որ յուր ազգի
Ազատության կզոհվի:*

Հանդես չէր լինում, որ չարտասանվեր Ղևոնդ Ալիշանի «Պլպուլն Ավարայրի»-ից մի քանի տուն և Ռ. Պատկանյանի «Թե իմ ալևոր» ոտանավորը: Հանդեսների ժամանակ առանձին շուքով էր երգվում Ղևոնդ Ալիշանի ստեղծագործած «Բամ փորոտան» երգը: Այդ շարքի երգերին էին պատկանում նաև «Ի զեն, հայեր, ի զեն», որ մի քառյակից հետո կրկնվում էր՝ «Գեպի, դեպի, դեպի Հայաստան», «Հայաստան, երկիր դրախտավայր», որ երգվում էր սոլո: Այս երգը լավ էր երգում մեր դպրոցի բարձր դասարանի աշակետ Գրիգոր Միրզայանը, հետագայում՝ կոմպոզիտոր Գրիգոր Սյունի: Ահա և մի ուրիշ երգ՝ «Կոչ հայ քաջերին».

*Բավ է եղբայր վիզը ճկել,
Ողորմելի երևույթ,
Ժամանակը հասել է,
Հայ դրոշակին ծածանել:
Հայոց լերինք թող թնդան,
Հայոց քաջեր թող գոռան:*

Այսպիսի և բազում նման երգեր էին հնչում Թեմական դպրոցի ներսում և թե նրա պատերից դուրս և ստեղծում հայրենասիրական ու նրա ազատագրմանը զոհվելու տրամադրություն: Եվ եթե այս բոլորի վրա էլ ավելացնենք Բալկանյան թերակղզում ապրող քրիստոնյա ժողովուրդների ազատագրման արձագանքները, որոնք մեր դպրոցի առօրյա խոսակցության առարկան էին, ավելի պարզ կարելի կլինի պատկերացնել, թե ինչ աստիճանի էին հասնում մեր ազատատենչ երազանքները, մեր հայրենասիրական ոգու թռիչքները: Ու մենք՝ 14-16 տարեկան պատանիներս, մեր տաճկահայ եղբայրների ազատագրման պայքարին զինվոր էինք գրվում: Մի՞թե այս բոլորի արգասիքը չէր, երբ դպրոցի դասընթացը դեռ չավարտած, ինչպես ասում են, դեռ մոր

կաթը շրթներին չչորացած, Թեմական դպրոցի լավագույն աշակերտները՝ Դումանը, Թումանը, Իշխանը, Եգորը, Իսաջանը և շատ ու շատ ուրիշներ, հայրենիքի ազատագրման պայքարի զոհերը դարձան:

Իմ ուսուցիչները

Իմ բոլոր ուսուցիչներին հիշել, իհարկե, ես չեմ կարող: Նրանց եմ հիշում, որոնք խորը տպավորություն են թողել ինձ վրա կամ այս ու այն դիպվածով հիշողությանս մեջ մնացել:

Հակոբ Ճաղարբեկյան. առաջին պատրաստական դասարանում հայոց լեզու էր դասավանդում: Բարձրահասակ, գեղեցկադեմ երիտասարդ էր, երեսուն տարեկանից ոչ անց:

Մեր դասարանում նոր աշակերտ էին ընդունել, թեև տարին վաղուց էր սկսվել: Աթայան էր նրա ազգանունը, խոսում էր բարբառով և անծանոթ էր գրական լեզվին: Գրատախտակի վրա շարժական տառերով շարված է «ճնճողուկ» բառը:

–Ապա, դու կրկնի՛ր, նորեկ:

Աթայանը քթի տակ ինչ-որ բան ասաց: Ուսուցիչն ասաց.

–Բարձր ասա՛:

Աթայանը բղավեց.

–Բարձր:

Դասարանը ծիծաղեց: Աթայանը լաց եղավ:

*Գաբրիել Ղուլիքեկյան*⁵. Կափրիել վարժապետ, այսպես էին կոչում նրան: Երրորդ պատրաստական դասարանում թվաբանություն էր ավանդում (Երևանի պետական համալսարանի դասախոս Հայկ Ղուլիքեկյանի հայրը): Կափրիել վարժապետը առավոտյան՝ մինչև դպրոց գալը, գնում էր շուկա (թովխանա), գնումներ էր կատարում՝ մի պուլիկ կաթ, կանաչի և այլն, այդ գնումներով գալիս էր դասարան, սեղանի վրա դնում իր գնածները և դրանց շուրջը կազմում 3-4 հարցանի խնդիրներ, և մենք կոնկրետ առարկաների վրա կազմած այդ խնդիրները լուծում էինք սիրով:

Չանգը տալուց հետո մեզանից յուրաքանչյուրը ուրախությամբ հանձն էր առնում գնումները տանել Կափրիել վարժապետի տուն: Կինը՝ Սոֆյա բաջին, տանողին անպայման հյուրասիրում էր խնձորով կամ այլ մրգով:

5 Գաբրիել Ղուլիքեկյանը դասավանդում է 1896/97 ուստարում. «Գաբրիել վարժապետը՝ (այս անունով է Ղուլիքեկյանեանը յայտնի Շուշում և բոլոր աշակերտներին) միմիայն թեմական դպրոցում էր ուսում առել (վերջացրել է 1871-ին). այդտեղ էլ սկսել էր ուսուցչութիւնը 1874-ին...: Այնուհետև նա ուսուցչութիւն էր արել Նուխում և Շուշու օրիորդական ծխական դպրոցում, բայց նրա մանկավարժական գործունեութեան մեծ մասն անցել էր մայրենի դպրոցի յարկի տակ» (ԼԵՕ, նշվ. աշխ., էջ 611): Ի դեպ, 1910 թ. մարտի 14-ին Շուշիի թեմական դպրոցում նշվել է Գ. Ղուլիքեկյանի մանկավարժական գործունեության 35-ամյակը (ծնթ. խմբ.):

*Բագրատ Տեր-Սահակյան*⁶. մեր 2-րդ պատրաստական բաժանմունքում ավանդում էր թվաբանություն: Հիշում եմ նախ նրա համար, որ ուսուցիչ լինելով հանդերձ, ուներ և գրախանութ, որտեղ վաճառում էր և գրեական պիտույքներ, ապա և այն բանի համար, որ նա ասում էր. «Բազմապատկման աղյուսակը պետք է գիտնալ անգիր այնպես, ինչպես գիտեք «Հայր մերը»: Հետո այն բանի համար, որ երբ համոզվեց, որ մենք շատ լավ յուրացրել ենք բազմապատկման աղյուսակը, մեզ սովորեցրեց աղյուսակը մատների վրա՝ սկսած 6 անգամ 6-ից մինչև 9 անգամ 9-ը: Հիշում եմ այսօր էլ, թե նա ինչպես մեր քարե տախտակների մի կողմը դանակով գծեր քաշեց՝ դարձնելով այն վանդակներ թվաբանության համար:

Չատիկ Գաթինյան. ասում են, հին դպրոցում սովորողները գեղեցիկ են գրում, և դա ճիշտ է: Պատահական ուսուցիչ չէր ավանդում գեղագրություն առարկան, այլ հատուկ գեղագիր ուսուցիչ: Չատիկ Գաթինյանն ուներ մասնագիտական կրթություն: Նա ոչ միայն լավ գեղագիր էր, այլև լավ նկարիչ: Հիանում էինք նրա գրաֆիկ նկարներով և խնդրում, որ ամեն անգամ իր հետ բերի նկարների պլոմներից մեկը: Մինչև հիմա չեմ մոռանում նրա մի նկարը՝ «Չմեռք»: Գեղագրությունը մենք չէինք անցնում ո՛չ գրատախտակի վրա և ո՛չ տետրակի մեջ: Չատիկ Գաթինյանն իր պատվերով տպագրված հատուկ տողերով չորս էջից բաղկացած թերթերի վրա էր մեզ սովորեցնում գեղագրությունը:

*Ստեփան Դեմուրյան*⁷. իմ հիշողության մեջ վառ է մնացել մեր երգեցողության ուսուցիչ Ստեփան Դեմուրյանի պատկերը, որի քրտնաջան աշխատանքի շնորհիվ մեր դպրոցն ունեցավ քառաձայն երգեցիկ խումբ: Այդ երգեցիկ խումբը մեծ հաջողությամբ ելույթներ էր ունենում դպրոցական հանդեսներից, քաղաքի հոյակապ Ղազանչեցոց եկեղեցում: Վառ է մնացել նախ, որ ես այդ խմբում մասնակցում էի իբրև մեներգիչ, ապա որ այնքան ոգևորող ազգային հայրենասիրական երգեր էր սովորեցնում: Հիշում եմ նաև այն, որ ձայնագրության դասերին ինքը երգում էր, իսկ մենք այդ երգածը ձայնագրում էինք գրատախտակի վրա հայկական ձայնանիշներով: Այդ ձայնանիշները գրվում էին մի գծի վրա և ոչ հինգ, ինչպես եվրոպականը: Հայկական ձայնանիշները յոթն էին՝ փո, ե, վե, բե, խո, նե, պո (փո): Չայնագրության առաջին վարժու-

թյունը՝ գամման, գրվում էր այսպես և կոչվում էր ել և էջ:

Ստեփան Դեմուրյանը մեզ պատմում էր, որ հայկական ձայնագրությունը մեզ է հասել շատ հնուց և կոչվում է խազեր, բայց ոչ որ չի կարողանում բացատրել, մեկնաբանել ու երգել այդ խազերով: Իսկ ինչ վերաբերում է հայկական այս ձայնանիշներին, ասում էր նա, այդ խազերի հիման վրա հորինել է տիրացու Բաբա Համբարձումյանը, որ շատ հնուտ էր երաժշտության մեջ: Չնայած երաժշտության առարկայի պրիմիտիվ դրվածքին, այնուամենայնիվ, Շուշվա թեմական դպրոցը տվել է անվանի կոմպոզիտորներ և երգիչներ՝ Գրիգոր Սյունի, Եղիշե Բաղդասարյան, Դանիել Ղազարյան, նշանավոր երգիչ Հովակիմ Մղունյան, որ նախանձի զոհ եղավ և այլն:

*Մաղաքիա Պլուզյան*⁸. սա մեր գրաբարի դասատուն էր: Հնուտ էր իր գործին և քաջ հայագետ: Մաղաքիա Պլուզյանն ամփոփված իր մեջ, մի ուսուցիչ, որ ոչինչ չէր խնայում իր գիտելիքներից բաժին հանել և իր սաներին: Ավելի լավ է խոսքը տանք նրա նախկին աշակերտ Առաքել Բաբախանյանին՝ Լեոնին: Ահա թե ինչ է ասում Լեոն Թեմական դպրոցի պատմությանը նվիրված իր աշխատության մեջ նույն այդ Մաղաքիա Պլուզյանի մասին. «Կարճահասակ, խնամքով ամփոփող մի թիրքահայ, որ հասարակական կեանքի մեջ աչքի էր ընկնում իր զարմանալի համեստությամբ: Նա խուսափում էր ծանօթութիւններից, համարեա ոչ մի տեղ չէր լինում, շարունակ ապրում էր մենակ, դպրոցի կեանքով... զարգացման չափը յաճախ միայն լեզուագիտութիւնն էր, ...հին հայկաբանական իմաստով: Չնայած այս բոլորին, Պլուզեանը, իսկ որ, երեք տարուայ ընթացքում կարողացաւ մի ամբողջ նոր և ինքնուրոյն շրջան կազմել, որպիսին մենք այլևս չենք գտնի Բարաբաղի թեմական դպրոցի պատմութեան մեջ: Այդ շրջանը պետք է անուանել գերազանցօրէն հայագիտական, հայկաբանական շրջան: Քաջ գրաբարագիտութիւն, հին հայկական մատենագրութիւն, հայոց պատմութիւն և Հայաստանի աշխարհագրութիւնը–ահա այն գործիքները, որոնց միջոցով Պլուզեանը կարողանում էր պատրաստել հայերէն իմացող, հայերէն մտածող աշակերտներ: Բայց այսքանը դեռ բավական չէր,– Պլուզեանն իր աշակերտներին ներշնչում էր գրական սեր»⁹:

Ահա այս Մաղաքիա Պլուզյանն է, որ չի ջնջվել իմ հիշողությունից: Ամեն անգամ Խորենացու կամ Եղիշեի մասին խոսք լինելուց իմ աչքի առջև է գալիս վրդովված դեմքով Պլուզյանը: Այդ օրը նա մեզ կարդում էր Եղիշեից, երբ աշակերտներից Պետ-

6 Բագրատ Տեր-Սահակյանը 1901 թ. Շուշիում հիմնում է տպարան, որը գործում է մինչև 1917 թ. (ծնթ. խմբ.):

7 Երգեցողության ուսուցիչ Ստեփան Դեմուրյանը 1893/94 ուսարվա վերջին հոգաբարձության առաջարկով ազատվում է աշխատանքից, հակառակ նրան, որ «ամբողջ տարի տքնել, չարչարուել էր և մի քառաձայն գեղեցիկ խումբ էր պատրաստել, որը մեծ բաւականութիւն էր պատճառում հասարակութեան թէ եկեղեցում և թէ աշակերտական հանդեսներին» (Լեո, նշվ. աշխ., էջ 468) (ծնթ. խմբ.):

8 Վանեցի Մաղաքիա Պլուզյանը թեմական դպրոցում սկսել է դասավանդել 1870/71 ուսարվանից (Լեո, նշվ. աշխ., էջ 360-361) (ծնթ. խմբ.):

9 Լեո, նշվ. աշխ., էջ 364-365 (ծնթ. խմբ.):

րոսյան Գերասիմը ծիծաղեց: Պլուզյանը նկատեց այս և զայրացած իջավ անբիռնից՝ ասելով. «Այստեղ մարդու արցունք կըթափի, իսկ դու, ստահակ, ծիծաղո՞ւմ ես»: Պետրոսյանի արդարացումները չօգնեցին: Պլուզյանը շատ էր վրդովված: Իսկ մենք՝ աշակերտներս, լռել էինք, քարացել: Գիտեինք, որ Պետրոսյանը ծիծաղում է հենց Պլուզյանի վրա՝ կատարելով նրա՝ դպրոցի ծառա Բալասանին կանչելու ձևերը. «Փալասան, Փալասան»: Պլուզյանն ապրում էր դպրոցական շենքում և շատ հաճախ Բալասանին կանչում էր, գնումների ուղարկում շուկա: Այնուամենայնիվ, մենք մեծ պատկառանքով ու համակրանքով էինք վերաբերվում դեպի ավելարդ Պլուզյանը և խոնարհվում նրա գիտելիքների առաջ: Գրաբարի ուսուցման գործում Մաղաքիա Պլուզյանի ներդրումը մեծ էր և անգնահատելի:

*Կարապետ Թյունիբեկյան*¹⁰. ռուսաց լեզվի դասատուն էր, մենք շատ էինք ունեցել՝ Ճաշիտյան, Տերտերյան, Փիրջանյան և այլն, բայց նրանցից և ոչ մեկը ռուսաց լեզվից չի տվել մեզ այն, ինչ տվել է ուսուցիչ Թյունիբեկյանը: Նա հեզահամբույր, համեստ, բարի ու գթառատ վերաբերմունք ուներ դեպի աշակերտությունը: Նրա բարկանալը բխում էր աշակերտի շահերից, և՛ բարկանում էր, և՛ սովորեցնում: Նրանից երբեք չէինք լսել. «Չգիտես, նստի՛ր» բառերը: Հարցի պատասխան չիմացող աշակերտին «ուղեցույց հարցերով» հասցնում էր նրան, որ աշակերտը ոչ միայն հասկանում էր, այլև յուրացնում: Իսկ այս նպատակում էր մյուսներին հիմնովին ըմբռնելու այս կամ այն քերականական կանոնը: Նա ուներ ոչ բարձր հասակ, կուլտուրական արտաքին: Կարծես ծնվել էր ուսուցիչ լինելու համար: Ավարտել էր Թիֆլիսի ուսուցչական ինստիտուտը, որը հայտնի էր իր բարձրորակ կադրերով: Ուսուցիչ Կարապետ Թյունիբեկյանն ավանդում էր ռուսաց լեզու, ռուսաց պատմություն և Ռուսաստանի աշխարհագրություն ռուսերենով: Նա իր առարկաները ոչ թե ավանդում էր ավանդելու համար, այլ դարձնում էր աշակերտի սեփականությունը, աշակերտի ուղեղում այնպես էր մեխում, որ, ինչպես ինքն էր ասում, «И топором не вырубимъ»...:

Այո՛, ռուսաց լեզվի ուսուցիչներից, որը մեզ սիրել տվեց ռուսաց լեզուն, այդ Կարապետ Թյունիբեկյանն էր, որին ակնածանքով եմ հիշում և երախտապարտ համարում ինձ:

Հասան-Ջալալյան. մենք մաթեմատիկայի դասատուներ շատ ենք ունեցել, բայց այնպիսի հռչակավոր, ինչպիսին Ներսիսյան դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ Ջուրաբյանն է եղել, որի համբավը հասել էր նույնիսկ Շուշվա թեմական դպրոց, մենք չենք

ունեցել: Այնուամենայնիվ, իմ հիշողության մեջ մնացել է Հասան-Ջալալյանի պատկերը: Բարձրահասակ, ձեռքի մեկը անդրավարտիքի գրպանում, միշտ գրատախտակի մոտ կանգնած էր լինում իր գեղեցիկ արտաքինով: Հասան-Ջալալյան մաթեմատիկայի ուսուցիչն ուներ ավելորդ անուն՝ «Ինչո՞ւ»: Մի դեպք Հասան-Ջալալյանի դասից չեմ մոռանում: Մի անգամ, եռանկյունաչափության դասին էր, երբ Հասան-Ջալալյանը մտավ դասարան, դասարանի աշակերտներից մեկը բարձր ձայնով կանչեց. «Ինչո՞ւ»: Եկավ Հասան-Ջալալյանը, բարձրացավ ամբիոն, մատյանը դրեց սեղանին և առանց բաց անելու կանչեց.

– «Ինչո՞ւ» կանչող աշակերտին գրատախտակի մոտ:

Այդ աշակերտը տետրը ձեռքին մոտեցավ գրատախտակին՝ դաս պատասխանելու (այդպես էր ընդունված, դաս պատասխանող աշակերտը կատարողական տետրը տալիս էր ուսուցչին և դաս պատասխանում, դրանով ուսուցիչը ստուգում էր, թե աշակերտը որքանով է ինքնուրույն կատարել տնային աշխատանքը): Նա հարցեր տվեց եռանկյունաչափությունից, հանրահաշվից, թվաբանությունից: Դասարանը քարացած հետևում էր տեղի ունեցող տարօրինակ հարց ու պատասխաններին և ուսուցչի «ինչո՞ւ»-ներին: Ամեն ինչ կարծես լավ էր ընթանում, բայց երբ հարցը հասավ հասարակ կոտորակներին, պատասխանող աշակերտը չկարողացավ բացատրել, թե ինչու ամբողջը կոտորակի վրա բազմապատկելիս թիվը մեծանալու փոխարեն փոքրանում է և ընդհակառակը, ամբողջը կոտորակի վրա բաժանելիս թիվը փոքրանալու փոխարեն մեծանում է: Ուսուցիչը դիմեց դասարանին: Դասարանը նույնպես չկարողացավ: Այստեղ ահա վերջիվերջո հաջողվեց ուսուցչին դաս պատասխանող աշակերտին ները լծել: Նա տրամաբանորեն վերլուծեց և մանրագին բացատրելուց հետո նախ հարցրեց դաս պատասխանողին, ապա դասարանին.

– Հասկացա՞ք, թե ինչո՞ւ ամբողջը կոտորակի վրա բազմապատկելիս թիվը փոքրացավ, իսկ բաժանման ժամանակ մեծացավ:

– Այո՛, հասկացանք,– միաձայն պատասխանեց դասարանը:

– Լավ իմացիր,– ասաց նա,– մաթեմատիկական առարկաները սիրում եմ «ինչո՞ւ» հարցը: Եթե չկարողացար պատասխանել ինչո՞ւ հարցին, կնշանակի չես հասկացել, չես ըմբռնել, այլ մեխանիկորեն ես կատարել գործողությունը: Դե, տետրդ վերցրո՛ւ, գնա՛ տեղդ և երբեք չմոռանաս, որ ինչո՞ւ հարցը բաց է անում մարդու աչքերը, բարդ խնդիրները պարզում, այնպիսի նորություն հայտնաբերում, որ մինչև այդ անձանոթ էր քեզ:

– Ներողություն, պարո՛ն Հասան-Ջալալյան:

– Գնա՛ տեղդ, դասդ լավ սովորի՛ր, քեզ պահի՛ր վայելուչ և դու կլինես իմ սիրելի աշակերտը:

¹⁰ Կարապետ Թյունիբեկյանը, որն ավարտել էր Ալեքսանդրապոլի ուսուցչական դպրոցը, ուսուցչության է հրավիրվում 1895/96 ուստարվա սկզբին (Լեօ, նշվ. աշխ., էջ 538) (ծնթ. խմբ.):

Երվանդ Լալայան. 1895/96 և 96/97 ուսումնական տարիներին մեր դպրոցում Հայաստանի աշխարհագրության առարկան ավանդում էր Երվանդ Լալայանը: Միջահասակ, բարեկիրք արտաքինով, շեկ մազերով, կապույտ աչքերով, սրածայր մորուքով, ժիր ու աշխույժ մարդ էր: Դնում էր ակնոց, չափից դուրս կարճատես էր: Աշակերտների անուն, ազգանունները կարդալիս կամ ինքն էր կռանում և քիթը մոտեցնում մատյանին, կամ մատյանն էր մոտեցնում քթին: Այս հանգամանքը մենք՝ աշակերտներս, ի շարն էինք գործադրում, դաս չիմացողի փոխարեն պատասխանում էր ընկերը, և ուսուցիչը դաս չիմացող աշակերտի անվան դիմաց նշանակում էր 4 կամ 5:

Երվանդ Լալայանը մեծ ոգևորությամբ էր խոսում Ալաշկերտի հովտի մասին, որ այդ հովիտն այնքան բերքառատ է, որ կարող է ամբողջ Անդրկովկասը ապահովել կաթնեղենով, մսով և անասնակերով: Երվանդ Լալայանը արձակուրդներին շրջագայում էր Ղարաբաղի գյուղերով և հավաքում ազգագրական և ֆոլկլորային նյութեր: Մենք՝ աշակերտներս, նրա այս «թույլ» կողմը նկատի էինք առնում, և ով ինչ ազգագրական կամ ֆոլկլորային նյութ գիտեր, գրում էր Երվանդ Լալայանի համար: Իսկ նա քիչ թե շատ արժեք ներկայացնող նյութ հանձնողի գնահատականն էր բարձրացնում: Հետագայում մենք իմացանք, որ նա թողել է ուսուցչությունը և հաստատվել Թիֆլիսում, կազմակերպել «Ազգագրական ընկերություն» և շարունակել իր սիրած գործը: Երկրորդ անգամ մենք հանդիպեցինք Երևանում: Ես հայտնեցի իմ ով լինելը: Հիշեց Ղարաբաղի թեմական դպրոցը, իր երիտասարդությունը:

—Հիշում եմ, հիշում, ձեր դասարանը շատ չար, բայց լավ սովորող դասարան էր:

—Ինչո՞վ եք զբաղվում, ի՞նչ եք անում ներկայիս Երևանում, ընկեր Լալայան:

—Չբաղվում եմ իմ մասնագիտությամբ, պեղումներ եմ կատարում, հանրամատչելի գրքեր եմ հրատարակում, ազգագրական նյութեր հավաքում:

Թարմությունը չէր կորցրել, ծեր հասակում ամուսնացել էր մի ջահել, Չառի անունով կնոջ հետ:

Գևորգ Ղարաջյան. կարճահասակ, կապույտ ակնոցով, երիտասարդությունը նոր անցած մարդ էր: Մեզ հետ պարապում էր ընդհանուր պատմություն, ընդհանուր գրականություն: Նրա դասերն անցնում էին շատ հետաքրքիր, որովհետև նյութի հետ պատմում էր էպիզոդներ գրողի, պատմական անձի մասին...:

Աստվածարան Արշակ Տեր-Միքայելյան. շատ գեղեցիկ, կարելի է ասել, կանացի գեղեցիկ դեմք ուներ, ոսկե շրջանակներով ակնոց էր դնում:

Թողնում եմ դպրոցը

1898 թիվը դժբախտության տարի էր մեր ընտանիքի համար: Մայրս մահացավ: Հայրս գյուղից տեղափոխվեց քաղաք: Նա չկարողացավ որևէ գործ ձեռնարկել: Մեր ընտանիքի տնտեսական վիճակը սարսափելի էր: Ի՞նչ անել, թողնել դպրոցը, երբ էսօր-վաղը պիտի ավարտեմ, անկարելի է: Թողնել ընտանիքն այս վիճակում, չոր հացի կարոտ, նույնպես հնարավոր չէ: Գժվել կարելի է: Ես մի կտոր հացի համար ստիպված եղա թողնել դպրոցը: Դեգերում եմ Բաքու, Անդրկասպյան երկիր... սև աշխատանք, խանութի ծառայող..., բայց շարունակ տանջում է ինձ դպրոցը թողնելու միտքը: «Այս տարի չկարողացա, եկող տարի...»,— ամեն անգամ ինձ հույս տալով, ինքս ինձ խաբելով՝ հասա մինչև 1905 թիվը: Վճռում ու ճանապարհվում եմ դեպի տուն, դեպի դպրոց: Հասել եմ Բաքու, հայ-թուրքական ընդհարումներն են: Բալխանի՝ ամուսնացած քրոջս մոտ եմ: Ապրեցի Ռոմանի կոչված Բանավանի կոտորածները, որի ազդեցության տակ առաջին անգամ թղթակցություն գրեցի (տես «Մշակ», 1905, 18 փետրվարի, № 26):

Հայ-թուրքական ընդհարումները դադարել են: Բայց ինձ խորհուրդ չեն տալիս Շուշի գնալ: Թեմական դպրոցում մեծ խլրտումներ են: Տխրահռչակ տեսուչ Բենիկ վարդապետը կառավարության միջամտությամբ փակել է բարձր դասարաններից երկուսը, և աշակերտները ցիրուցան են եղել: Այստեղ ես իմանում եմ նաև այն, որ Գևորգյան ճեմարանի տեսուչը Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսիսյանն է: Ուրախանում եմ: Մի թախանձագին մամակ եմ գրում, հայտնում, որ ես նրա սաներից եմ և խնդրում եմ, որ հնարավորություն ստեղծի ճեմարանի դասարանական բաժինն ավարտելու: Պատասխանը չի ուշանում, ստանում եմ մի բացիկ՝ գրած անճոռնի, դժվարընթեռնելի ձեռագրով, որտեղ հայտնում է, որ, ցավոք, դասարանական բաժնում տեղ չլինելու պատճառով չի կարող ընդառաջել իմ ցանկությամբ: Ուղևորվում եմ Թիֆլիս: Առաջին անգամ եմ Թիֆլիսում: Մեծ քաղաք, ո՛չ ծանոթ ունեմ, ո՛չ բարեկամ: Մեծ դժվարությամբ գտնում եմ Ներսիսյան դպրոցը: Առաջինը հանդիպում եմ պարոն Գրիգորին: Նրան պատմեցի իմ մասին և այն, թե ինչ նպատակով եմ եկել:

—Չեն ընդունի,— կարճ ու կտրուկ ասաց նա, բայց և այնպես խորհուրդ տվեց դիմել տեսչի պաշտոնակատար Ստեփան Մալխասյանին:

Դիմումս ձեռքիս մտա տեսչի մոտ: Կարդալով դիմումս՝ գլուխը շարժեց:

—Տղա՛ ջան,— ասաց նա,— առաջինը տեղ չունենք, երկրորդը հասակդ չի համապատասխանում, դուք 22-23 տարեկան եք: Ես ձեզ խորհուրդ կտամ, եթե կարող եք, պատրաստվեցե՛ք և էքստեռն քննություն տվե՛ք:

Ես տխուր-տրտում դուրս եկա Ներսիսյան դպրոցից: Դպրոցի շենքի մոտ կանգնել, մտածում եմ, մտածում ու վճռում. «Է՛հ, զնամ գյուղ»:



Տեսարան Շուշի քաղաքից

Մի քանի օրից հետո ես գյուղում եմ, բայց ոչ մեր, այլ հարևան Փիրջամալ գյուղում: Այդտեղ է իմ ընկեր Գրիգոր Միրզաբեկյանը, որ տարիներ առաջ ավարտել է Շուշի քանդակման դպրոցը:

–Դու կմնաս այստեղ, ես քեզ կօգնեմ, և դու կգնաս էքստեռն քննություն կտաս: Մի՛ հուսահատվիր, ամեն ինչ լավ կլինի:

Գյուղի անդրրը շատ էր նպաստում իմ պարապմունքներին: Ազատ ժամանակ ես գնում եմ Շուշի: Թեմական դպրոցի ավարտական դասարանում է սովորում ընկերոջս եղբայրը՝ Փոյլան Սիմոնը: Նա իմ տրամադրության տակ է դնում իր գրառումները զանազան առարկաներից (որոնց թվում և հոգեբանություն, որ ավանդում էր այն ժամանակվա Թեմական դպրոցի տեսուչ, հայտնի մանկավարժ Արշակ Չիլինգարյանը՝ «Դասընկեր» այբբենարանի հեղինակը):

1906 թ. սեպտեմբերին հաջող հանձնում եմ էքստեռն քննությունները: Դպրոցի հոգաբարձության նախագահ, թեմական առաջնորդ Աշոտ եպիսկոպոս Շխյանն ինձ ասում է.

–Տղա՛ս, կերթա՛ս ուսուցչական պաշտոնով գյուղ:

–Ինչո՞ւ չէ, սրբազան հայր:

Նա կանչում է կոնսիստորիայի գործավար Անանիա Տեր-Դանիելյանին (Անանիան Փիրջամալ գյուղից էր և ինձ լավ էր ճանաչում) և ասում.

–Պ. Բարայեյանը նշանակվում է Տող գյուղի նոր բացվելիք ծխական դպրոցի ուսուցիչ տարեկան 400 ռուբլի աշխատավարձով:

Ուսուցչության առաջին տարին

1906 թիվն է: Ղարաբաղի թեմի հոգևոր կառավարությունն ինձ նշանակում է Տող գյուղի նոր բացվելիք ծխական դպրոցի ուսուցիչ: Հրամանը ծոցիս՝ ճանապարհվում եմ դեպի Դիզակի մելիքության Տող գյուղը, որ Շուշի քաղաքից մոտ 60 կմ հեռավորության վրա է գտնվում: Գնաճապարհն անցնում է անտառապատ լեռներով, գեղատեսիլ հովիտներով: Գահավիժող գետակները, քչքչան առվակներն ու կարկաչահոս աղբյուրներն են շարունակ հանդի-

պում, խոհեր առաջ բերում... Եվ անկախ քեզանից պոռթկում է ներքին ձայնը. «Մի՞թե այս աստվածային բնությունը Շվեյցարիա չէ»: Իսկ այն, ինչ Թաղավարդ գյուղի հանգստարանն էր, վեր էր ամեն սպասածից...: Հանգստարանը պատված էր կանաչով, հազար ու մի գույնի, ձևի ծաղիկներով: Նայում ես ու չես կշտանում այդ հեքիաթային տեսարաններից: Ափսոսում եմ, որ պիտի թողնեմ այդ «եղեմական դրախտը»: Չմայլված այդ տեսարանով՝ շարունակում եմ ճանապարհը: Ահա մտնում եմ Խորխորատ կոչվող անտառապատ ու մութ ձորը: Երկնականաբար չի երևում: Ծառերի կատարները, սիրահարների պես իրար գրկած, ծածկել են երկինքը և արգելում արեգակի շողերի մուտքը: Առաջին վայրկյանին սարսափ ես զգում ահավոր ձորում... Չլինի՞՞ հանկարծ անտառի տերը՝ արջ ախպերը, առաջդ կտրի, կամ ավազակների գոհ դառնաս: Հենց այդ ժամանակներն էին, որ լույս էր ընկել մարդկային դեմքը կորցրած Ղաչաղ Նաբին¹¹ և ավերածություններ էր անում Լեռնային Ղարաբաղում: Նրա համար միևնույն էր, հարուստ թե աղքատ, կին թե երեխա, թալանում էր բոլորին անխտիր: Կառավարությունը հետապնդում էր նրան, իսկ ժողովուրդը պատրաստ էր օգնելու նրան այդ նենգ ավազակից ազատվելու համար:

Չորից բարձրացար, աչքիդ առաջ բացվում են երկնքի լազուր կամարը և հեռու-հեռու հորիզոններ, և դու ազատ ու լիաթոք շունչ ես քաշում և դիտում հեռուներում՝ սարերին թառած գյուղերը, որոնցից մեկը հենց քո այդ կանգնածդ սարի լանջին է կախվել: Այս Մեծ Թաղար գյուղն է: Գյուղի մասին խոսելիս հանցանք կլինի չխոսել նրա նախկին հռչակավոր Փաթալի քյոխվայի մասին: Նախ նա ածրահա էր Դիզակի լեռների պես, սև չուխան հագին, արծաթե գոտին կապած, գոտուց կախված էր արծաթապատ բռնակ ունեցող խանչալ, իսկ այդ խանչալի տակ՝ պատյանի մեջ, տեղավորված էր դամալքի կոչվող դանակը: Նրա հաստ բեղերը հասնում էին մինչև ականջները, իսկ հայկական հարուստ քիթը բազմել էր նրա դեմքին: Նրա հռչակը չի սահմանափակվում Մեծ Թաղար գյուղով, նրան գիտեն ամբողջ միալում:

Փաթալի քյոխվան ունի իր արբանյակները՝ աչքի ընկնող գյուղացիներից երկուսը, առանց որոնց նա չի պատկերացնում կյանքը, առանց նրանց թիքա չի դնում բերանը: Միշտ միասին, առավոտ թե իրիկուն: Նրանք մի սովորություն ունեին, որ առանց խախտելու կատարում են ամեն օր:

Ահա Փաթալի քյոխվան առավոտյան դուրս է գալիս տանից: Նա բակում դարսած ճախերից մեկը

¹¹ Ի դեպ, մարդկային տականք Ղաչաղ Նաբին ներկայումս հռչակված է որպես աղբյուրական ժողովրդի հերոս, որի կիսանդրին տեղադրվել է Գանձակում գտնվող մարշալ Բարսեղյանի ոչնչացված կիսանդրու պատվանդանին (տես «Արձր», № 3, էջ 46) (ծանոթ. խմբ.):

դուրս է քաշում և քայլերն ուղղում դեպի գյուղամեջ: Նույնը կատարում են և նրա արբանյակները: Նրանք նստում են գյուղամիջում ընկած գերանների վրա կողք կողքի, գրպաններից հանում գյուղի դարբնի շինած գոմշի եղջյուրից բռնակ ունեցող դանակները և սկսում գործը: Նախ և առաջ ճախերն ազատում են ոստերից և մանր ճյուղերից այնքան, մինչև ճախը դառնում է մահակ: Նրանցից ամեն մեկն աշխատում է ավելի կոկիկ և գեղեցիկ ձև տալ իր մահակին: Մահակը նրանց պետք է, երբ առավոտյան գյուղացիներից մեկնումեկը հրավիրի մի թաս արաղի, այդ մահակներով կպաշտպանվեն գյուղի շներից: Վերադառնալով առավոտյան «մի թաս» արաղ խմելատեղից՝ նրանք շարունակում են իրենց գործը, իսկ գործը մահակների և դանակների կռիվն է, դանակներով ընկած մահակների ջանքին՝ տաշում են, մինչև մահակները հասցնում են սուր ծայր ունեցող շամփուրների, որ եթե մուղղուսի Կախին կամ դալլաք Հաբին խորոված ուտելու կանչեն, երկաթի շամփուրների փոխարեն փայտե շամփուրներն օգտագործեն: Իսկ ի՞նչ պիտի անեն, եթե ո՛չ Մուղղուսին հրավիրի, ո՛չ դալլաքը: Նրանք շարունակում են իրենց գործը: Շամփուրը դանակների բերանն առած՝ տաշում են, տաշում, մինչև շամփուրները փոքրանում են, բարակում, դառնում գնդասեղի չափ ատամ փորիչներ, որ եթե ընթրիքի հրավիրող լինի, ատամփորիչը գործադրեն: Այսպես է Փաթալի քոխվան իր օրն անցկացնում: Մեծ Թաղլար գյուղում մենք թողնենք Փաթալի քոխվին «օրն ի բուն աշխատելիս» և շարունակենք մեր ճանապարհը:

Թաղլարն անցար, ձորից բարձրացար, առաջդ է գալիս Գուշա սարի լանջից կախ ընկած Տողը՝ Դիգակի մեկիքանիստ գյուղը: Գյուղում առաջին հանդիպած մարդուն հարցնում են հոգաբարձության մասին: Գյուղացին չի հասկանում հոգաբարձու բառի իմաստը, բայց և այնպես նա ինձ ցույց է տալիս քահանայի տունը: Ես ձիուս գլուխը դարձնում եմ դեպի ցույց տված տունը: Ինձ դիմավորում է կարճ հասակով, սպիտակահեղ, կարճ միտքով մի քահանա: Բանից դուրս է գալիս, որ նա հոգաբարձության անդամ է: Մեկնում են նրան հոգևոր կառավարության հրամանը: Կարդալուց հետո նա գլուխը շարժում է, ասում.

- Գլուխ գալու բան չէ...
- Ինչո՞ւ,- զարմացած հարցնում եմ ես:
- Պայման չկա,- կարճ ասում է քահանան:

Մեր խոսակցությունը, ավելի շուտ վեճը վերջիվերջո հանգում է նրան, որ քահանան նեղն ընկնելով ասում է.

-Հոգաբարձությունը հո մենակ ե՞ս չեմ, ուրիշ անդամներ էլ կան, թող հավաքվեն և վճռեն:

-Իսկ որտե՞ղ կարելի է տեսնել նրանց կամ ժողով հրավիրել:

-Եկեղեցում,- ասում է քահանան:

Երեկոյան հոգաբարձության հինգ անդամներից

հավաքվում են չորսը: Նախագահ Հարություն Մուսայեյանը, բաց անելով ժողովը, ասում է.

-Շատ լավ, շատ ուրախ ենք:

Ես ուրախանում եմ և նայում իմ հյուրընկալին, որ ուզում էր ինձ խաբել:

-Բայց,- շարունակում է նախագահը,- դպրոց ունենալու հարցը շատ դժվարությունների հետ է կապված. նախ հարկավոր է տեղ, ուր տեղի ունենար պարապմունքներն աշակերտների հետ, ապա հարկավոր են նստարան, սեղան և, որ ամենագլխավորն է, փող, իսկ եկեղեցին փող չունի: Եվ գիտե՞ք, պարոն Իսրայելյան, մեր գյուղն ունի պետական դպրոց իր սեփական շենքով, 5 ուսուցչով և 200 աշակերտներով: Մեր գյուղը երկրորդ դպրոցի կարիքը չունի:

Երկար խոսելուց հետո ինձ չի հաջողվում համոզել, որ անհրաժեշտ է ունենալ հայկական դպրոց, ես կռահում եմ, որ հոգաբարձության և ոչ մի անդամ շահագրգռված չէ հայկական դպրոց ունենալու խնդրով:

Հոգաբարձության հինգերորդ անդամը՝ տանուտեր Առաքել Շաբուրյանը, որ եկել էր ուշացումով, ասաց.

-Պարոն վարժապետ, գիտե՞ք, ձեզանից առաջ մի ուրիշ վարժապետ էին ուղարկել՝ Հայրիյան Իշխան: Նա մեզ մոտ մնաց երկու օր, տեսավ և համոզվեց, որ գյուղը կարիք չունի երկրորդ դպրոցի, թողեց ու գնաց:


«Ի՞նչ անել,- մտածում եմ ես,- չեմ կարող «դատարկաձեռն» վերադառնալ Շուշի, ամաչում եմ ընկերներիցս, նրանք կծիծաղեն վրաս. «Է՞դ էր,- կասեն,- մեծ-մեծ էիր խոսում...»:

-Գիտե՞ք ինչ, հարգելի հոգաբարձության անդամներ,- ասում եմ ես,- վաղը կիրակի է, եկեք ծխական ժողով հրավիրենք և հայկական դպրոց ունենալու հարցը քննության առնենք: Ժողովը, եթե գտավ, որ, իրոք, Տող գյուղը կարիք չունի հայկական դպրոցի, ծխական ժողովի արձանագրությունը ես կտանեմ և կհանձնեմ հոգևոր կառավարությանը:

Հոգաբարձությունը շատ չեմուշում անելուց հետո համաձայնում է ծխական ժողով հրավիրել եկեղեցու բակում:

Օրը կիրակի է, աշնան դուրեկան օրերից մեկը: Ժողովուրդը հավաքվել է եկեղեցու բակում, ուր շրջապատված պարիսպներով իսկական բերդ է: «Համ եկեղեցի է, համ թշնամուց պաշտպանվելու համար բերդ», - մտածում եմ ես:

Ժողովը բաց է անում Դուստումանց Հարությունը: Նա բացատրում է ժողովի նպատակը և ասում, որ գյուղում գոյություն ունի պետական դպրոց իր սեփական շենքով, ուսուցիչներով ու աշակերտներով: Գյուղը կարիք չունի ծխական դպրոցի: Բացի սրանից՝ շարունակում է նա, եկեղեցին շատ աղքատ է, իսկ ծխական դպրոց ունենալու համար անհրաժեշտ են շենք, նստարան, սեղան, ուսուցչին՝



Տեսարան Տող գյուղից (ուս.՝ Մանվել Սարգսյանի, 1986)

ռոճիկ, իսկ այս բոլորը փող են պահանջում, երբ փող չկա, ինչո՞վ կարող է դպրոցը պահպանել իր գոյությունը: Նախագահի ելույթից հետո խոսում են հոգաբարձության մյուս անդամները: Նրանք հաստատում են Դուստումանց Հարությունի ասածները կամ կրկնում նույնը: Ժողովուրդը լուռ է, նա չի խոսում, չի ասում իր խոսքը: Չ՞է որ նա պիտի վճռի խնդիրը, դպրոցը ժողովրդինն է: Ինչո՞ւ է լռել, արդյո՞ք համաձայն է հոգաբարձության հետ, թե՞ մի այլ կարծիք ունի: Գուցե տատանման մե՞ջ է: Ավելի շուտ տատանման մեջ է: Այս բանը ես նկատեցի, թե ինչպես մեկը աչքով արեց դիմացինին, երբ խոսում էր Դուստումանց Հարությունը, իսկ մյուսը՝ արմունկով կողքինին: Ի՞նչ արած, երբ ժողովուրդը չի ուզում ասել իր խոսքը, ես եմ խոսք խնդրում:

–Հարգելի՛ ծխականներ,– ասում են ես,– դուք գիտեք, թե որքան լավ բան է ուսումը: Անուսում, անգրագետ մարդը նման է կույրի, որ չի կարողանում տեսնել պարզ երկինքը և հարազատների երեսը: Բայց ուսումը լավ է, երբ մանուկներին տրվում է մայրենի լեզվով, որով խոսում են ծնողները, շրջապատը, այն լեզվով, որով մայրը լա՛յ-լա՛յ է ասել, օրորել իր բալիկին, այն լեզվով, որով առաջին անգամ երեխան հայրիկ, մայրիկ բառերն է թոթովել, այն լեզվով, որով տատը նրան հեքիաթ է պատմել: Կա՞ մանկան համար ավելի քաղցր լեզու, քան մայրենի լեզուն: Ահա այդ լեզվով միայն կարելի է մանկանը տալ ուսման, գիտելիքներ, որ երեխան կարողանա հասկանա աշխարհի լավն ու վատը, չարն ու բարին, թե ինչպե՞ս է, որ այս աշխարհում մեկն իրեն երջանիկ ու բախտավոր է զգում, իսկ մյուսը՝

դժբախտ, մեկը՝ ունևոր, մյուսը՝ չունևոր: Հարգելի՛ ժողովականներ, այս մեկն էլ պետք է իմանալ, որ եթե ծծկեր երեխային մոր կաթի փոխարեն տաս ուրիշ կերակուր, նա չի մարսի, կհիվանդանա: Այդպես էլ դպրոցում, եթե երեխային գիտելիքները տաս օտար լեզվով, նա չի հասկանա: Նա չի հասկանա, որովհետև այդ լեզուն նրա համար չէ, նրա հոգուն, նրա սրտին չէ:

–Ճիշտ է, ճիշտ է,– ասում են այս ու այն կողմից: Ես սիրտ եմ առնում:

–Ժողովուրդ,– շարունակում են ես,– մեր պապերը մեզ համար հարյուրավոր տարիներ մայրենի լեզու են պահել: Քանի՞–քանի՞ հերոսներ են գոհվել այդ լեզվի համար: Հիշեցե՛ք Ավարայրի դաշտի նահատակներին, հիշեցե՛ք Մեծն Վարդան զորավարին, որ անհավասար կռվում իր քաջ մարտիկների հետ գոհվեց այդ լեզվի, մեր կրոնի համար, այն լեզվի համար, որ ստեղծել են Մեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևը:

Ի՞նչ կասեն մեզ այդ մարտիրոսները, եթե նրանք մի րոպե բարձրանան իրենց գերեզմաններից և տեսնեն, թե ինչպես մենք այն լեզվից, որ հրի, թրի, պատերազմների ու կոտորածների միջով պահել են գուրգուրանքով և մեզ են հասցրել, որ մենք էլ մեր հերթին գուրգուրանքով պահենք ու հանձնենք եկող սերունդներին, այսօր հրաժարվում ենք: Այսպե՞ս ենք պահում մենք արյան շաղախով անցած մեր լեզուն, երբ մեր երեխաներին օտար դպրոց ենք տալիս օտար լեզվով սովորելու և հրաժարվում մայրենի լեզվից: «Նզովք ու անեծք, թող հուր ու կայծակ թափվի անարժան ժառանգների վրա», կասեն մեր պապերը: Ահա թե ինչպես կարտահայտեին նրանք իրենց վրդովմունքը: Չեմ կարծում, որ Լեռնային Ղարաբաղի, Դիզակի մելիքության Տող գյուղն այս նզովքին ու անեծքին արժանի լինի: Թող յուրաքանչյուրը ձեզանից լավ մտածի և ասի իր խոսքը:

Ժողովականներն անհանգիստ են, իրար են նայում, քչփչում...

–Ես ուզում եմ, որ մեր գյուղում հայոց դպրոց բացվի: Ես այդ նպատակի համար նվիրում եմ հինգ մանեթ,– ասում է մեկը:

–Ես նվիրում եմ երեք մանեթ,– ասում է մեկ ուրիշը:

–Ես փող չունեմ, բայց տախտակ ունեմ, հինգ տախտակ եմ նվիրում դպրոցին:

–Իսկ ես դուրգար եմ, այդ տախտակներից կպատրաստեմ սեղան, նստարան,– ասում է դուրգար Մուքի դային:

Ստեղծվեց բարձր տրամադրություն, ժողովականները ցանկանում են հայկական դպրոց ունենալ:

–Ես մի առաջարկություն ունեմ,– ասաց հոգաբարձության անդամ Առաքել Շաբարյանը,– խնդրենք, որ պարոն վարժապետը հիսուն մանեթ զիջի իր ռոճիկից:

–Խնդրեմ,– առանց տատանվելու ասացի ես,– ոչ թե հիսուն մանեթ, այլ հարյուր մանեթ եմ գիջում իմ ռոճիկից:

Խնդիրը լուծված է: Տող գյուղում բացվում է հայկական ծխական դպրոց: Գպրոցի համար վարձվում է Ավանենց երկհարկանի տան երկրորդ հարկի ընդարձակ սենյակը: Մի քանի օրից այդ սենյակում երեք դուրգար վարպետների շնորհիվ դասավորվեցին տասը մատարան, գրատախտակ, մի սեղան և մի աթոռ: Դասարանը պատրաստ է, աշակերտների ընդունելությունը՝ սկսված: Երևում են առաջին «ծիծեռնակները», նրանց գրանցում եմ ու բաց թողնում: Մպաստում եմ երկրորդ օրը, բայց աշակերտների թիվը ուր հոգուց չի ավելանում:

«Ի՞նչ անել,– մտածում եմ ես,– սպասել, որ աշակերտների թիվն ավելանա, կնշանակի գործը տապալել»:

Ու սկսում եմ պարապել: Եկածներին ես բաժանեցի երկու խմբի՝ գրաճանաչների ու անգրագետների: Լավ էր, գրաճանաչների համար գրատախտակի վրա վարժություններ էի գրում, որ նրանք արտագրեն իրենց տետրերում, իսկ անգրագետների հետ գրագիտություն էի անցնում: Ճիշտ է, պարապում եմ, բայց մեծ ապրումների մեջ եմ: Մի՞թե ուր հոգով պիտի սահմանափակվի դպրոցի աշակերտության քանակը: Սա կատարյալ խայտառակություն է, սա ծաղր է, երբ պետական դպրոցի աշակերտության թիվը երկու հարյուրի է հասնում, իսկ ծխական դպրոցինը՝ ութի: Ի՞նչ անել, տեր աստված:

–Գնացե՛ք տուն, պարապմունքները վերջանալուց հետո,– ասում եմ աշակերտներին,– մի ժամից էլի եկե՛ք, ես ձեզ համար գիրք պիտի կարդամ: Ա՛յ, տեսնում եք, այս գործիքով պիտի նվագեմ ձեզ համար,– ցույց եմ տալիս իմ ֆլեյտան, որ նվեր էի ստացել մեր հարուստ բարեկամների տղա Նիկիտայից, որը, ավարտելով Ռեալական դպրոցը, մեկնեց Լենինգրադ ուսումը շարունակելու:

Այս ապրումներով լի օրերը տևում են տասը օր, որի ընթացքում աշակերտների թիվը հասնում է 14-ի, որոնց թվում և երկու աղջիկ՝ Տեր-Հովհաննիսյան Մարիամ և Օհանյան Լուսիկ: Մարիամը համեստ էր, մի աղավնի, իսկ Լուսիկն ավելի գեղեցկադեմ էր, լեռնային մի եղնիկ:

Շատ սակավ եմ լինում գյուղամիջում, ամաչում եմ, ամբողջ օրը պարապում եմ մի խմբի հետ, ապա երկրորդ, երրորդ: Ոչ միայն դաս եմ տալիս, այլև սովորեցնում եմ տված դասը դասարանում և հետո արձակում տուն: Գասարանում այնքան ժամանակ ունեն, որ տնային հանձնարարությունները դասարանում են կատարում իմ հսկողության տակ: Ամեն մի պարապմունքից հետո ես ինձ հարց եմ տալիս. «Ի՞նչ նոր բան սովորեցրի աշակերտներին, որ առաջ չգիտեին»: Այս հանգամանքը շատ էր օգնում ինձ դասին պատրաստվելու, գտնելու այն գաղտնիքը, որ կարող է կապել աշակերտին դպրոցի

հետ: Բացի պաշտոնական դասերից՝ բոլոր աշակերտ-աշակերտուհիները գալիս էին հետդասյա պարապմունքների: Ի՞նչ էի անում այդ ժամերին, կարդում էի հեքիաթներ, մանկական գրքեր, նյութեր «Հասկեր» և «Աղբյուր» ամսագրերից, երգեր էի սովորեցնում, ֆլեյտայով նվագակցում երգողներին: Այս բանը երեխաներին շատ էր դուր գալիս: Առակներ էի սովորեցնում, բեմականացնում այդ առակները: Այս ամենը տևեց երկու ամիս: Եվ այդ ժամանակամիջոցին դպրոցի վիճակով ոչ ոք չհետաքրքրվեց՝ ո՛չ հոգաբարձության որևէ անդամ և ո՛չ գյուղացիներից մեկնումեկը: Հազարից մեկ դուրս եմ գալիս գյուղամեջ՝ իմ ներկայությամբ հիշեցնելու, որ հայկական դպրոց գոյություն ունի: Բայց այս չէր օգնում գործին, ոչ ոք չէր հետաքրքրվում դպրոցով, ոչ ոք չգիտեր, թե այնտեղ ինչ է կատարվում: Քար անտարբերություն:

Մի կիրակի օր դուրս էի եկել գյուղամեջ: Մարդիկ հավաքվել էին խանութի մոտ, գերանների և քարերի վրա նստած՝ զրուցում էին: Գյուղամիջում հավաքվածների ուշադրությանը չէի արժանանում: Ճիշտ է, ես էլ էի մասնակցում խոսակցությանը, հայտնում իմ կարծիքը, երբեմն էլ լրագրերից տեղեկություն տալիս, բայց սրանով ո՛չ գյուղացիների ուշադրությունն եմ կարողանում գրավել, ո՛չ էլ աշակերտներին թիվն է ավելանում: Ես չէի վիրավորվում գյուղացիների անտարբերությունից, որովհետև դեռ ջահել էի, արտաքինով էլ՝ ոչ հավատ ներշնչող: Այս բոլորի հետ հաշտվել էի և զլուխս կախ կատարում էի իմ սիրած գործը: Այդպես պիտի շարունակվեր, եթե մի դեպք չգար, չհուզեր ու տակնուվրա չաներ իմ հոգեկան աշխարհը: Մի անգամ դարձյալ խանութի առաջն եմ՝ գյուղամիջում: Գյուղացիներից մեկը, որ կանգնած էր սյան մոտ, նայեց դեպի ներքև և ասաց.

–Սմոտրիտե՛լը գալիս է:

Բոլորը շուռ եկան դեպի ներքև, ես էլ՝ նրանց հետ: Տեսանք երեք հոգի, ոսկեգօծ ուսադիրներով ու ոսկեգօծ գլխանիշներով դեպի վերև են բարձրանում: Պետական դպրոցի վարիչն էր իր երկու ուսուցիչների հետ: Նրանք մոտեցան թե չէ, գյուղացիները միասին վեր կացան և խորը զլուխ տվին: Կարծես մեկը կացնով խփեց գլխիս, այնքան ինձ վիրավորված զգացի: Ես գիտեի, որ սրանք չինովնիկներ են, ոչ մի հասարակական աշխատանք գյուղում չեն տանում, կտրված են գյուղական կյանքից: Բացի պաշտոնական կապից՝ սրանց և ժողովրդի միջև գոյություն չունի ոչ մի այլ կապ՝ դպրոցական շենքի վերանորոգում, դպրոցին վառելիքայտի մատակարարում: Իսկ ո՞վ կարող է կապալով վերցնել շենքի վերանորոգումը կամ վառելիքայտ մատակարարել, եթե ոչ հարուստը, ունևորը: Ժողովուրդը, աշխատավոր գյուղացիությունը կտրված են դպրոցից: Ես այդ լավ գիտեի, և այսօրվա հարգանքն ու պետական դպրոցի ուսուցիչներին ցույց տված

պատիվը փոքորկեցին իմ երիտասարդ, ավյունով լի հոգեկան աշխարհը: Ես անմիջապես վերադարձա տուն, բայց հուզմունքս ինձ խեղդում էր: Անկախ իմ կամքից՝ աչքերս թրջվում են: Ի՞նչ անել, ինչպե՞ս ցույց տալ ժողովրդին ճիշտը, իրականը: Ուժեղացնել իմ աշխատանքը և այնպես զարկ տալ հասարակական աշխատանքներին, որ հասարակությունը կարողանա տեսնել հայկական և ռուսական պետական դպրոցների միջև եղած տարբերությունը: Այլևս ես ոտք չեմ դնի գյուղամեջ:

Բացի դպրոցականներից՝ երեկոները ես պարապում եմ մի քանի երիտասարդ անգրագետների ու կիսագրագետների հետ, որոնց հետ արդեն ծանոթացել եմ, որոնք ամեն երեկո հավաքվում են ինձ մոտ: Ընդհանրապես այն բանի, որ աշակերտներս դասերը դասարանում են սովորում, նրանք տուն գնալուց հետո շատ շուտ են վերադառնում: Շատ հաճախ Լուսինն ու Մարիամը չէին հասցնում դասարանը մաքրել, իսկ ես էլ՝ ճաշել: Չգիտես ինչու, Մարիամն ու Լուսինը թույլ չէին տալիս, որ դասարանը մաքրելուն մասնակցեն նաև տղաները:

Մի օր մի անծանոթ մարդ եկավ մեր դպրոց և հայտարարեց, որ ինքը «Հորիզոն» լրագրի ներկայացուցիչն է և խնդրում է, որ ես լինեմ իրենց լրագրի «տեղեկատու բյուրոն», որ ես «Մշակ»-ին և «Նոր-Դար»-ին չթղթակցեմ, այլ միշտ թղթակցություններ ուղարկեմ «Հորիզոն»-ին»: Ես տալիս եմ իմ համաձայնությունը: Այդ պահից հետո ես իմ թղթակցություններն ուղարկում եմ «Հորիզոն»-ին»: Իմ թղթակցությունների բովանդակությունը գյուղական կյանքն էր իր առօրյայով:

Մի անգամ գրել էի, որ քուրթեշ համաճարակով Տոդ գյուղում շատ երեխաներ են հիվանդացել, և կան գոհեր: Այս կապակցությամբ գավառական բժիշկն էր եկել պետական դպրոց և փնտրում էր այն մարդուն, որ լրագրում «սուտ-սուտ» բաներ է գրում: Ցույց էր տվել այն գրությունը, որ ստացել էր փոխարքայի գրասենյակից, որի մեջ հանդիմանական խոսք կա: Սմտորիտել Տեր-Դավիթովը և գյուղի տանուտերը համաձայնվել էին, որ գյուղի երեխաների մեջ քուրթեշ հիվանդություն չկա, և տվել էին համապատասխան տեղեկանք՝ տանուտերի և սմտորիտելի ստորագրություններով և վավերացված կնիքներով, բայց, այնուամենայնիվ, գավառական բժիշկը ցանկացել էր տեսնել «սուտ» լուրեր տվող թղթակցին (երևի թույնը թափելու այդ թղթակցի գլխին): Ես հրավեր եմ ստանում՝ ներկայանալու տանուտերի գրասենյակ: Այնտեղ, բացի տանուտեր Ծաբուրյանից, կան և երկու չինովնիկներ, որոնց ես չեմ ճանաչում:

–Մեր ուսուցիչը՝ պարոն Իսրայելյանը, ծանոթացեք,– չինովնիկներին ներկայացրեց ինձ տանուտերը:

–Խնդրեմ նստեցեք, պարոն Իսրայելյան,– ասաց տանուտերը:

–Ի՞նչ է պատահել, պարոն Առաքել, ինչու՞ եք կանչել ինձ:

Մինչև տանուտերը կասեր, չինովնիկներից մեկը դիմեց ինձ.

–Այդ դո՞ք եք գրել, որ ձեր գյուղում քուրթեշ հիվանդության համաճարակ կա երեխաների մեջ, և գոհեր է տանում:

–Այո՛, ես եմ գրել, բայց ի՞նչ է եղել, ինչու՞ եք կանչել ինձ:

–Ես գավառական բժիշկն եմ, եկել եմ ստուգելու ձեր գրած սուտ-սուտ լուրերը:

–Չեմ հասկանում, ի՞նչ սուտ լուրեր, ինչու՞ եք ստուգում:

–Այ, խնդրեմ, կարդացե՛ք այս տեղեկանքը և դուք էլ ստորագրեցե՛ք,– ասաց նա՝ մեկնելով թուղթը: Հաղթություն տարած աբլորի պես քիչ է մնում ծուղորուղու կանչի:

Կարողում եմ ու չեմ հավատում աչքերիս, տանուտեր Ծաբուրյանը և սմտորիտել Տեր-Դավիթովը վկայում են, որ Տոդ գյուղում երեխաների մեջ չի եղել քուրթեշ հիվանդության համաճարակ: Ջղայնությունից դողում եմ, իսկ բժիշկը, դիրք բռնած, սպասում է իմ պատասխանին:

–Այ, սուտը սա է,– բղավում եմ ես՝ հավասարակշռությունս կորցրած և թուրթը շարտում սեղանին:

Ներկաներն ակնապիշ և զարմացած նայում են ինձ: Նրանք շատ հանգիստ էին և բոլորովին չէին սպասում նման բան: Բժիշկը զարմացած մեկ ինձ է նայում, մեկ տանուտերին, մեկ Տեր-Դավիթովին: Նրա հարցական դեմքը պատասխան է փնտրում ներկաների հայացքներում, ուզում է, որ նրանք դատապարտող խոսք ասեն ինձ: Իմ բղավոցն ու թոթի շարտելը սեղանին անսպասելի էին: Դրությունը լարված է և անհարմար: Բայց ես չեմ թողնում, որ երկար տևի այդ հարցականի պես ծառացած վիճակը:

–Վե՛ր կացեք,– ասում եմ ես պահանջի ձևով,– վե՛ր կացեք, այս լուրերիս տանեմ, ցույց տամ հիվանդ երեխաներին և մահացած երեխաների ծնողներին:

Առաջ ընկած քարը եմ տալիս երեքին էլ ետևիցս, մեկ հիվանդ, երկու հիվանդ..., ահա և այն տներից մեկը, որտեղ վեց տարեկան երեխան մահացել է քուրթեշից:

–Բավական է,– ասում է տանուտերը: Նույնը կրկնում է Տեր-Դավիթովը:

Լուռ է բժիշկը: Նա գրանցումներ է անում իր ծոցատետրում:

Այսպես ուրեմն, մեր շրջագայությունը հաստատեց իմ թղթակցության ճշմարտացիությունը և տանուտերի ու սմտորիտելի տված տեղեկանքի կեղծ լինելը:

Բժիշկի գնալու հետևյալ օրը գյուղ է գալիս մի բուժակ, որն իջևանում է ինձ մոտ և ամբողջ մի ամիս մնալով՝ գյուղում բժշկական օգնություն էր ցույց

տալիս հիվանդ երեխաներին: Բուժակը մեկնելուց առաջ իր հետ բերած դեղորայքը թողեց ինձ մոտ՝ սալոյ, ասպիրին և այլն՝ յուրաքանչյուրի վրա գրելով անունը: Ինչի՞ համար է, ինչպե՞ս պետք է ընդունել: Այս հանգամանքը կարծես փոխեց ժողովրդի, մանավանդ տանուտեր Առաքել Շաբուրյանի վերաբերմունքն իմ նկատմամբ: Գյուղացուն հայտնելը, մտրակով ծեծելը, որևէ տեղեկանք վավերացնելու համար մի ռուբլի պահանջելը նրա համար սովորական էին, բայց իմ ներկայությամբ զուսպ էր պահում իրեն: Գյուղացիներից շատերը գիտեին, ավելի շուտ զգում էին այս հանգամանքը և աշխատում էին գրասենյակում գրել տված տեղեկանքն իմ միջոցով վավերացնել տալ: Ես նկատում էի տանուտեր Շաբուրյանի «բարյացակամ» վերաբերմունքը դեպի ինձ: Նրա հարցումփորձը դպրոցի վիճակի մասին այդ էր վկայում: Այդ օրերին էր, որ ինձ մոտ եկավ մի պառավ կին՝ մի փոքրիկ կապոց ձեռքին:

– Ես քո աշակերտ Աթայան Լազարի տատն եմ, – ասաց կինը և կապոցը դրեց սեղանին, – եկել եմ տեսնեմ, դու ի՞նչ մարդ ես, որ իմ Լազարին այդպես փոխել ես:

Ճիշտն ասած, ես հանկարծակիի եկա, չգիտեի, թե ի՞նչ է պատահել:

– Ի՞նչ է եղել, մայրիկ, – հարցնում եմ ես:

– Ես քեզանից շատ ու շատ շնորհակալ եմ, վարժապետ, – շարունակեց պառավ կինը, – աղջիկս էդ միևնուճար բալան ունի, բայց կարդալու հետ սեր չունի, շկոլը սիրում չի: Լազարը թագավորական շկոլումն էր սովորում, բայց օր չէր լինում, որ շկոլիցը չփախչեր և տուն չգար: Աղաչում էինք, չէր լինում, պաղատում էինք, չէր լինում, ծեծում էինք, էլի չէր լինում: Խաբելով մի կերպ տանում էինք շկոլ, մենք դեռ տուն չհասած՝ ինքն ուրիշ ճանապարհով արդեն տանն էր: Շատ անգամ գրպանները մրգով լցնում էինք, բայց բան չէր դուրս գալիս, միրգն ուտում էր ու փախչում տուն: Հիմի էնպես է փոխվել, որ անճանաչելի է դարձել: Հիմի էլ շկոլիցը տուն չի գալիս: Տուն գալն ու ետ դառնալը մեկ է լինում: Մենք առաջ նրա ձեռքին գիրք չէինք տեսնի, հիմա էլ տանը եղած ժամանակ գիրքը ձեռքից վեր չի զգում: Մենք մնացել ենք զարմացած:

Աղջիկս ասում է.

– Այա՛ն, յանի սա մեր Լազա՞րն ա, շատ ա փոխվել, է՛:

– Բալա՛ ջան, – ասում եմ, – ես էլ եմ զրբմացալ, մի քիչ բան-ման շինի, վերցնեմ, գնամ տեսնեմ էդ ինչ տեսակ մարդ ա էդ վարժապետը, որ մեր Լազարին իստի փոխալ ա: Շնորհակալ քրզանա, որդիս, երկար ումբրով լինես, Միմոն ծերունի դառնաս, քո հերն ու մերը լույս դառնան: Դե՛, էդ կապոցը բա՛ց արա, թաշկինակը տու՛ր ինձ:

– Չէ՛, մայրիկ, հարկավոր չէ, ի՞նչ նեղություն եք քաշել, ես իմ պարտականությունն եմ կատարում:

Ամեն մի ուսուցիչ պետք է սիրի իր աշակերտներին, գրել-կարդալ սովորեցնի, գիտելիքներ տա: Վերցրե՛ք, հե՛տ տարե՛ք, ես չեմ վերցնի:

– Վա՛յ, քոռանան իմ աչքերը, էդ ի՞նչ խոսք է, որ դու ասում ես: Դու իմ բալան ես, քեզ պես մի բալա էլ դարիբությունում ունեմ, ես քեզ համար եմ բերել, ապա բերածը մարդու գլխովը կտա՞ն: Չէ՛, քը մատաղ, բա՛ց արա, թաշկինակը տու՛ր, իսկ ամանը էզուց Լազարը կբերի:

Ասաց ու չսպասելով ինքը բաց արեց թաշկինակը, վերցրեց և գնաց: Թաշկինակում մի եփած հավ էր, երկու գաթա, մի կտոր մեղրահաց և մի շիշ գինի:

Ճիշտ է, ես բարոյապես բավարարված եմ, բայց չեմ մոռանում գյուղացիների ցույց տված վերաբերմունքը դեպի պետական դպրոցի ոսկեգոծ ուսադիրներով ուսուցիչները: «Է՛լ ինչ կարելի է անել, որ չեմ արել», – մտածում եմ ես: Միտս ընկավ, որ ամեն տարի Թեմական դպրոցում ուսումնական տարին հանդիսավոր էր սկսվում: Ամբողջ աշակերտությունը դասարան-դասարան կանգնում էր բակում և բարձրանում դահլիճ: Բեմում էին զանվում հոգաբարձության նախագահ թեմական առաջնորդը, դպրոցի ուսուցչական կազմը տեսչի գլխավորությամբ: Հանդիսավոր մաղթանք կատարելուց հետո ամեն մի դասարան գնում էր իր դասարանը, ու ուսումնական տարին սկսվում էր: Իսկ ե՞ս, ահա երկու ամիս պարապում եմ, բայց հանդիսավոր չեմ սկսել ուսումնական տարին: Թե՛ն ուշացումով, բայց չէր խանգարում ուսումնական տարին հանդիսավոր սկսենք: Ու կազմում եմ սովորած երգերից, ոտանավորներից, թեմականացրած առակներից մի փոքրիկ ծրագիր: «Երգեցիկ խումբը», բացի ժողովրդական երգերից, գիտի և մանկական երգեր: Հատուկ այդ օրվա համար ես մի երկու ոտանավոր էի գրել Ղարաբաղի բարբառով, որ ժողովրդին ավելի մատչելի լինի: Երեխաներն արդեն գիտեն, որ հանդես պետք է լինի: Բայց հանդեսն ի՞նչ բան է, չգիտեմ:

– Ե՛րբ պիտի լինի հանդեսը, – ամեն օր հարցնում եմ երեխաները:

– Շուտով, շուտով, – պատասխանում եմ ես և շարունակում փորձերը:

Որպեսզի հանդեսը բազմամարդ լինի, խոստում եմ հարևանների, աշակերտների ծնողների, երիտասարդների հետ: Հանդեսը տեղի կունենա դպրոցում, այսինքն՝ դասարանում: Բեմը կլինի բաց, առանց վարագույրի, ավելի շուտ լայն ամբիոն, որի վրա կարելի է տեղավորել 14 աշակերտ: Ամեն ինչ պատրաստ է, մնում է հայտարարություն փակցնել պատերին: Թղթեր եմ պատրաստում և գեղեցիկ տառերով գրում:

Հայտարարություն

Կիրակի՝ նոյեմբերի 3-ին, տեղի կունենա Տոյ գյուղի եկեղեցական ծխական դպրոցի հանդիսա-

վոր բացումը: Կարող են ներկա լինել աշակերտների ծնողները և ցանկացողները:

Գայրոցի ուսուցիչ՝ Ս. Իսրայելյան:

Եկավ հանդեսի օրը, սպասվածից ավելի ժողովորդ էր հավաքվել: Ներսում այլևս տեղ չկա, բազմաթիվ մարդիկ են հավաքվել պատշգամբում: Հանդեսը բացվում է քահանայի մաղթանքով, որից հետո ես եմ խոսում դպրոցի, նրա կարիքների, աշակերտների քիչ քանակի մասին, որ երեխաները խելք, ընդունակ և շնորհքով երեխաներ են, սիրում են գիր, գրականություն և այլն, և այլն: Ձեկուցումից հետո երեխաները սկսում են երգել, արտասանել սովորած ոտանավորները, բեմականացված առակները: Հանդեսը վերջանում է շուրջպարով, որի ժամանակ երեխաները և՛ պարում են, և՛ երգում. «Առաջ մի ծափ, մի ոտքն առաջ»:

Ժողովուրդը չի հավատում իր տեսածին, իր լսածին:

–Մի՞թե այս բոլորը երկու ամսվա աշխատանքի արդյունք է: Չէ՛, ախպեր, հավատալու չի գալիս:

–Իսկապես որ հավատալու բան չէ,– ասում է կողքի նստածը:

–Այ կրակ ընկնի էն,– ասում է մի ուրիշը՝ ձեռքը մեկնելով դեպի պետական դպրոցի կողմը,– էս քսան տարի է, ո՞վ է տեսել նրանցից էսպես շնորհք, էսպես մարիֆաթ:

Հանդիսականները բռնեք չեն գտնում իրենց գոհունակությունն ու շնորհակալությունը հայտնելու համար: Աշակերտների ծնողները, հարազատները բռնում ու համբուրում են իրենց որդիներին, որ նրանք այդքան շնորհք ունեն, բայց իրենք չեն իմացել: Հանդեսը վերջացավ, ես ներողություն եմ խնդրում ավել-պակասի համար: Հանդիսականները ծափահարում են:

–Ժողովուրդ,– խոսում է հոգաբարձության անդամ, տանուտեր Առաքել Շաբուրյանը,– եկանք, թամաշա արինք, ուրախացանք, հիմա էլ վեր ենք կենում, որ գնանք: Ես մեր դպրոցի օգտին նվիրում եմ հինգ մանեթ, խնդրում եմ դուք էլ, ով ինչքան կարող է, թող նվիրաբերի:

Ես հակառակ եմ նվիրատվությանը: Չլինի՞ ժողովուրդը կարծի, թե հանդեսը կազմակերպվել է հատուկ փող հավաքելու համար: Բայց ո՞վ է լսողը: Այդ օրը հարյուր ռուբլուց ավելի հավաքվեց:

Մա իմ տարած առաջին հաղթանակն էր լուսավորության ֆրոնտում: Մի հաղթանակ, որ կարողացավ բաց անել փակ բերանները, կոտրել սառույցը...

Իրիկնադեն է, դուրս եմ եկել գյուղամեջ: Հետաքրքիր է, ի՞նչ են խոսում մեր հանդեսի մասին գյուղում:

–Բարով, վարժապետ, էս դու մեծ հունար ես ունեցել, մենք բեխաբար,–ասում են ինձ հանդիպող գյուղացիները:

–Արա տեղ տվե՛ք վարժապետին,– ասում են գյուղամիջում՝ խանութի առաջ նստած գյուղացիները:

–Ա՛յ քեզ շկուլ, ա՛յ քեզ վարժապետ,– նման խոսքեր են ասում գյուղացիները և տալիս սրա կամ նրա երեխայի անունը:

–Համեցե՛ք, համեցե՛ք, վարժապետ, նստեցե՛ք:

Ես վայելում եմ իմ տարած «հաղթանակի» ստուղները:

–Մեր գյուղումը մին էլ մին Գալուստ վարժապետ կար, նա էլ լավ վարժապետ էր,– ասում է ծերունի Յաֆին (Գաբրիել):

Հետևյալ առավոտ երկուշաբթի է: Դասերը չսկսված՝ մի քանի երեխաներ են գալիս, որ դպրոց ընդունվեն: Ես ուրախացած ընդունում եմ: Գալիս են և երեք հոգի, սրանց էլ եմ ընդունում, ապա չորսն են գալիս: Ստուգում եմ և ընդունում բոլորին, գրաճանաչներին միացնում գրաճանաչների, անգրագետներին՝ անգրագետների խմբին: Մինչև օրվա վերջը ընդունված երեխաների թիվը հասնում է 12-ի: Երևույթն անբացատրելի է: Մի՞թե հանդեսն ու երեխաների ելույթներն են հոսանք ստեղծել դեպի դպրոց: Այժմ դպրոցն ունի 26 աշակերտ: Ոչինչ, լավ է. մի մանկական ներկայացում, մի գրական երեկույթ, և աշակերտների թիվը կկրկնապատկվի:

Ուրախությանս չափ չկա... Ի՞նչ գեղեցիկ հեռանկարներ, աշխատանքի ինչպիսի՞ հորիզոններ են բացվում իմ առաջ: Չանցած երկու օր՝ մի նամակ եմ ստանում պետական դպրոցի սնտրիտելից հետևյալ բովանդակությամբ.

Տող գյուղի հայոց եկեղեցական ծխական դպրոցի ուսուցիչ պ. Իսրայելյանին

«Իմացել եմ, որ դուք զարտուղի ճանապարհներով մեր դպրոցի աշակերտներին ընդունում եք ձեր դպրոց: Եթե դուք այսուհետև ևս շարունակեք ընդունել ձեր դպրոցում մեր աշակերտներից, ստիպված կլինեմ բարձր իշխանությանը դիմել:

Սնտրիտել Տող գյուղի երկդասյա նորմալ դպրոցի՝ Ա. Տեր-Դավիդով

5. 11. 906»:

Է՞ս ինչ էր, այ քեզ խաթաբալա: Մա ի՞նչ գրպարություն է: Դե արի ու ապացուցիր, որ դա սուտ է, գրպարություն է: Ես նամակը թողնում եմ անպատասխան և մի գրություն ուղարկում թեմական առաջնորդին: Գրության պատասխանը լինում է լակոնական. «Երեխաներին դպրոց տալը նրանց ծնողների գործն է»: Հոգևոր կառավարության այսպիսի պատասխանը ինձ չի բավարարում: Որոշում եմ անձամբ տեսնել սնտրիտելն, բացատրել հարցի էությունը: Ներկայացնում եմ պետական դպրոցի սնտրիտելին, պատմում, որ ես էլ եմ զարմացել, ինձ էլ է տարօրինակ թվացել աշակերտների այդպիսի հոսանքը դեպի մեր դպրոց: Ապա ասում եմ, որ պարոն սնտրիտելը շտապել է, եզրակացություն արել առանց ստուգելու փաստը:

–Ես այս գործում անմեղ եմ,– ասում են ես,– իսկ դուք ինձ գրպարտում եք ինչ-որ «գարտուղի ճանապարհների» մեջ:

Մտքերի փոխանակությունից պարզվում է, որ, իրոք, ընդունված աշակերտների մի մասը պետական դպրոցի առաջին պատրաստական բաժանմունքից է: Երբ ինձ հաջողվեց համոզել սմոտրիտեյին, որ ես մեղք չունեմ այս գործում, նա ներողություն խնդրեց:

Մեր գրույցը սմոտրիտել Ավանես բեկ Տեր-Դավիդովի հետ բարի բնույթ ստացավ: Նա սկսեց հարցնել, թե որտեղացի¹⁰ եմ, ովքե՞ր են ծնողներս, որտե՞ղ եմ սովորել...

–Օ՛,– բացականչեց նա, երբ իմացավ իմ ով լինելը,– ես գիտեմ քո տատիկին, հանգուցյալ մայրիկիդ: Մենք բարեկամներ ենք: Դու մի քեռի ունեիր, որի անունը նույնպես Հովհաննես էր: Նա մահացավ Թիֆլիսում: Տատիկդ ինձ շատ էր սիրում, քեռուդ մահվան օրերին տատիկդ ինձ ասաց. «Հովհաննես, դու իմ բալիկի տեղն ես, դու իմ Հովհաննեսն ես, շուտ-շուտ արի, որ իմ բալիկի կարոտը քեզանից առնեն»: Այո՛, այո՛, մենք բարեկամներ ենք,– ասում է Ավանես բեկը և ինձ ներս հրավիրում իր բնակարանը, որ դպրոցի շենքում էր:

–Խնդրեմ, ծանոթանանք, կինս է, երեխաներս:

Երկար ենք գրուցում, որի ընթացքում նա ինձ ծանոթացնում է իր դպրոցի շենքին, որ միհարկանի, հատուկ դպրոցի համար կառուցված շենք էր՝ մեծ ու լուսավոր սենյակներով և բոլոր հարմարություններով: Եվ չնայած այս ընդարձակ, հարմարավետ շենքին, այնուհանդերձ, վերջին երկու դասարանների պարսպամուկները տարվում էին գյուղում վարձված մասնավոր շենքում:

Ապա Ավանես բեկը ծանոթացնում է դասարանների, դիտողական պարագաների, հարուստ գրադարանի հետ: Դպրոցը սպասարկում է յոթ գյուղի, ունի մոտ 200 աշակերտ, 7 ուսուցիչ: Նա խոստանում է իր օգնությունն ինչով կարող է, իր դպրոցի դռները միշտ բաց են ինձ համար, և ամեն մի խնդրով կարող եմ դիմել իրեն:

Ավանես բեկը ցածրահասակ, միջին տարիքի, թխամորթ դեմքով անճանալորություն էր: Իսկական չինովնիկ, բայց բարի ու մանկավարժական հարուստ փորձով: Ունի վեց աղջիկ և մի տղա: Աղջիկներից միայն մեկն է ամուսնացած իր դասատուներիվ մեկի՝ Թևան Տեր-Գրիգորյանի հետ, որ հարևան Տումի գյուղից էր:

Այս ծանոթությունը իմ կյանքում մի նոր շրջադարձ կատարեց և իմ առջև աշխատանքի նոր ասպարեզ բացեց: Ես սկսեցի ավելի հաճախ լինել պետական դպրոցում, ծանոթանալ ուսուցիչների հետ, լսել նրանց դասերը, ապա թույլտվություն խնդրեցի դպրոցի բարձր դասարանի աշակերտների հետ շաբաթական մի անգամ գրույց անցկացնել հայրենի գրականության մասին, երգեցիկ խումբ կազմա-

կերպել: Այժմ ես ինձ ազատ եմ զգում և պետական դպրոցում: Երգեցիկ խմբի մեջ շատ աշակերտների եմ ընդգրկել և պետական դպրոցից: Ընդունում եմ ոչ թե բոլորին անխտիր, այլ ովքեր լավ լսողություն ունեն, լավ ձայն: Ես այժմ մտածում եմ պետական դպրոցի դահլիճն օգտագործել ներկայացումների և համերգների համար: Այս ուղղությամբ պլաններ եմ կազմում:

Ես այստեղ ուզում եմ խոսել մի այլ խնդրի մասին, որ սերտորեն առնչվում է իմ աշխատանքների հետ: Բանն այն է, որ ինչպես Լեռնային Ղարաբաղի բոլոր գյուղերում, այնպես էլ Տոհում շատ գյուղացիներ գտնվում են օտարության մեջ, գլխավորապես Բաքվում, Միջին Ասիայի համարյա բոլոր քաղաքներում, Հյուսիսային Կովկասում և այլուր: Այդ տարվա իմ հաշվումները ցույց էին տվել, որ տողեցիներից 50 ընտանիք և 300 անհատ գյուղացիներ գտնվում են օտարության մեջ: Նրանք, կարդալով պարբերական մամուլում Տողից ուղարկած իմ թղթակցությունները, մամակագրական կապ էին հաստատել ինձ հետ: Այդպիսի մի մամակ ես ստացա նաև Բաքվից: Դադայան եղբայրները, որ կենդանագրական արհեստանոց ունեին Բաքվում, խնդրում էին գրել, թե դպրոցը ինչի՞ կարիք ունի, և ինչո՞վ կարող են օգտակար լինել: Ես չեմ ուշացնում պատասխանը: Նամակում խնդրում եմ ուղարկել տոնածառի զարդեր: Չանցած երկու շաբաթ՝ ես ստանում եմ երկու ծանրոց տոնածառի զարդերով: Այդ 1906 թ. դեկտեմբեր ամիսն էր: Մտնեմուն է Նոր տարին: Աշակերտությունն արձակված է երկու շաբաթով: Մտածում եմ քաղաք գնալու փոխարեն կազմակերպել տոնածառի շքեղ ներկայացում և համերգ: Տոնածառի հետ կապված իմ աշխատանքը փոխադրել եմ պետական դպրոցի հարմարավետ շենքը: Ընկերներիցս շատերը ձմեռային արձակուրդին քաղաք են գնում: Նրանցից մի քանիսի ճանապարհը Տող գյուղով է անցնում: Ռաքել և Բանագուր գյուղերի դասատուներ Սամսոն Հովհաննիսյանը, Համասփյուռ Շահնազարյանը, Հակոբ Եսայանը հանդիպում են ինձ:

–Չե՞ս գալիս, Մերգո՛, տուն ենք գնում,– ասում են նրանք:

–Ո՛չ, չեմ գալիս, բարի ճանապարհ ձեզ, ես «տոնածառի» եմ պատրաստվում:

Եկավ այդ օրը՝ 1906 թվի դեկտեմբերի 31-ը: Նորահարսի պես պճնվել է տոնածառը: Պետական դպրոցի մեծ դահլիճում ասեղ գցելու տեղ չկա: Հանդիսականների մեջ կան և թուրքեր¹²:

Տոնածառը սկսվում է ներկայացումով: Այդ ներկայացումը, որի մեջ ես ուսուցչի դերն եմ կատա-

12 Տող գյուղի թուրքերը հայկական ծագում ունին: Բանն այն է, որ Դիզակի մեյիք Եզոնի մահից հետո նրա երկու ժառանգներից Ասլանն ընդունում է մահմեդականություն, իսկ Բախտամը մնում է հայ լուսավորական: Տողի թուրքերն այդ Ասլանի թուրքերն ու ծոռներն են, որ գրվում են Մելիք-Ասլանով (ծնթ. հեղ.):

րում, մի պահ եմ հիշում: Աշակերտի դեր կատարողը, երբ ուտելիքներ էր ներս բերում, ասիտից գոլորշի էր բարձրանում: Այդ Ավանես բեկի կինն էր հոգացել և բեմի վրա բացված սեղանը զարդարել իսկական փրավով: Մի գործողությունից բաղկացած ներկայացումը վերջացավ: Սկսվեց համերգը: Աշակերտները երգում են խմբովին, սոլո, արտասանում ոտանավորներ: Վերջացավ համերգը, նվագն ու պարը սկսվեցին: Հանդիսականներից մեկը պատվիրեց նվագել «լազգիհանգի» եղանակը: Պարողն իմ աշակերտ Փանին էր: Նա տասը տարեկան էր: Այդ օրը նա հագել էր չերքեզկա-չուխա, կապել արծաթե բարակ գոտի և փոքրիկ արծաթապատ սուր: Նա շատ գեղեցիկ էր այդ հագուստով: Փանին գեղեցիկ էլ պարում էր, հմայել էր բոլորին, ամենքն ուզում էին մոտիկից տեսնել, իրար էին խառնվել: Երբ դադարեց պարը, ես գրկեցի նրան և համբուրեցի:

Ուշ գիշեր է: Աշակերտները, ստանալով իրենց նվերները, ցրվում են տները: Այդ երեկոյ անասհման էր իմ հոգեկան և բարոյական բավականությունը: Գոհ էին բոլորը, չէ՞ որ նրանք առաջին անգամն են տեսնում տոնածառ:

Մյուս օրը՝ առավոտյան, գիշերվա տոնածառի տպավորության տակ սենյակիս պատուհանի առաջ կանգնած, դուրս եմ նայում՝ տարված մաքերով: Տեսա, որ մեր տան քարե սանդուղքներով մի բարձրահասակ ծերունի է բարձրանում, կողքին՝ մի փոքրիկ տղա: Ծերունին դուռը ծեծեց, ներս մտավ:

–Բարի լուս, վարժապետ, Նոր տարիդ շնորհավոր լինի,– ասաց և մի շիշ օղի հանեց գրպանից, դրեց սեղանին:

Ես փախադարձ շնորհավորեցի ծերունու Նոր տարիին:

–Ես մի խնդրով եմ եկել քեզ մոտ, վարժապետ:

–Լսում եմ, հայրիկ:

–Ես գիշեր շկոլումն էի,– սկսեց ծերունին,– բոլորը տեսա, տեսա, թե դու էս կարճ ժամանակամիջոցում մեր երեխաներին ինչեր ես սովորեցրել: Բայց սրա մասին չի խոսքս, այլ քո, քո վերաբերմունքը դեպի աշակերտները, դեպի երեխաները: Երբ դու գրկեցիր և համբուրեցիր Ավանանց երեխային, լացս եկավ, ու ինձ ասի. «Յարաբ էսպես էլ է լինում», և հիշեցի իմ մանկությունը: Մենք մեր էս շենումը մի տերտեր ունեինք, մեր էս կանցելարի պիսըրը (գրագիր) Իսակի հայրն էր: Հայրս ինձ նրա մոտ աշակերտ տվավ, ասաց. «Ա՛, դե՛ր, է խոխան քեզ եմ տամ, գրի սևն ու սպիտակը ջոկիլ տաս, մարդ դարձնես, ինչ ուզում ես արա, միսը քեզ, ոսկորն ինձ, «թաքի լիհա գրաճանաչ դառնա»: Ես Տեր-Սարգիսը մի քանի աշակերտ էլ ուներ՝ պատի տակ նստած, այբբենարանները ձեռքներին, կարդում էինք այբ, բեմ, ժե, ճե ու¹³:

Ես քո հարևան, մեր առաջվա քյոխվա Պետրոսն էլ էր մեզ հետ, սովորեցինք, սովորեցինք, վերջը ան-

գրագետ մնացինք: Շատ ժամանակ օրենքի էր գնում՝ մեռել, կնունք, գերեզմանօրհներ, հիվանդի վրա Մաշտոց կարդալ, դասի չէր գալիս, իսկ եկած ժամանակ էլ գործի էր դնում, գոմը մաքրել, դաճան դեն անել... մի անգամ, իսկի չեմ մոռանում, աշնան մի անձրևոտ օր էր, ինձ ու էս Պետրոսին մի կարճ թոկ էր տվել, թե գնացեք, այգուց երկու աշակ չիլփի բերեք (խաղողի վագերի կտրտած մատները): Գյուղն էլ հո տեսնում ես, ինչպես դիք է: Հիմա էդ կարճ թոկով երկու շալակ ենք շինել, շալակել: Մի կերպ եկել, հասել ենք գյուղի տակը, բայց բարձրանալ գյուղ չենք կարողանում: Ես եմ առաջ ընկնում, Պետրոսն է սայթաքում, վեր ընկնում, Պետրոսն է առաջ ընկնում, հիմա էլ ես եմ վեր ընկնում: Երկուսս էլ ցեխակոլով ենք եղել: Չենք կարողանում տեղներիցս շարժվել, նստել ենք մի չափարի տակ, երկու քյոքիս (մանուկ) հոնգուր-հոնգուր լաց ենք լինում, օրն էլ մթնում է, անձրևն էլ մաղում: Հիմա, վարժապետ ջան, էս իմ թռանս բերել եմ, որ քո շկոլումը ընդունես:

–Հայրիկ, շատ լավ ես արել, որ բերել ես, բայց ընդունել չեմ կարող, տարին կես է եղել, իսկ Աթանեսը դեռ գիր չի իմանում: Եկող տարի սեպտեմբերին կընդունես:

–Չէ՛, վարժապետ, թող խոխան գա, նստի, թաքլի քո շկոլումը լինի, թող չսովորի:

–Լավ, հայրիկ, թող այդպես լինի:

Ու ծերունին, օրհնանք մաղթելով, մնաք բարով ասաց:

Ես հիմա ազատ եմ, ամեն օր հաճախում եմ պետական դպրոց: Ավանես բեկն իր դպրոցի հարուստ գրադարանը տրամադրել է ինձ: Ռուս դասական գրականության մի շտեմարան էր այն՝ Կարամզին, Պուշկին, Լերմոնտով, Լև Տոլստոյ, Գոնչարով, Տուրգենև, Դոստոևսկի, Չեխով և այլն: Գրադարանը հարուստ է մեթոդական գրականությամբ: Այժմ ինձ տվել եմ ընթերցանության: Այստեղ եմ ծանոթանում Բեկինսկու, ռուս բանաստեղծներ Տյուտչևի, Ֆետի գործերին, ռուս մանկավարժներ Ուշինսկին, Շախարտրոցկին դառնում եմ իմ աննօրյա օգնականները: Ուսուցիչներից Թևան Տեր-Գրիգորյանի հետ միասին հասարակագիտական գրքեր ենք կարդում: Մինչև հիմա էլ աչքիս առաջ եմ Դ. Կ. Ուշինսկու նկարագրած շվեյցարական դպրոցի կես-

13 Ծերունու խոսքը գրագիտության ուսուցման «Տառական մեթոդ» մասին էր: Գերմանացի մանկավարժ Հանսը ասել է, որ ոչ մի հիվանդություն, ոչ մի համաճարակ այնքան զոհեր չի տալիս մանուկ սերնդից, որքան գրագիտության ուսուցման այդ «տառական մեթոդը» (ծանոթ. հեղ.):

Իսկ տառական մեթոդը պահանջում էր, որ մանուկը նախ պիտի ասեր տառի ավանդական անունը և ձայնավոր ու բաղաձայն տառերից գիր կապեր (վանկ կազմեր) և կարդար: Օրինակ. երեխան պետք է կարդար «հարություն» բառը: Իսկ այդ բառը կարդալու համար հարկավոր է ասել՝

Յի - այբ = Յա; լե - վո - հուն = լու; Հա - բու - թո - ինի - հուն, նու = թին; Հարուին, Հարություն (ծնթ. հեղ.):

ժամյա տևողությամբ դասերը, որի ժամանակ, երբ բարձրահասակ ու նիհար ուսուցչուհին իր ոսկրոտ ձեռքը պատահմամբ դնում էր աշակերտական որևէ սեղանին, փոքրիկ աշակերտն իր շրթունքներն էր հպում այդ ձեռքին: Ես ծարավ մարդու պես չէի հագնում ընթերցանությունից: Եթե սրա վրա էլ ավելացնենք այն գործնական փորձի փոխանակումը, որ տեղի էր ունենում իմ և պետական դպրոցի ուսուցիչների միջև, այն ժամանակ կարելի կլինի Տող գյուղում իմ ուսուցիչ եղած ժամանակը համարել իմ «համալսարանը»:

Դասերը վերսկսվելուց հետո պետական դպրոցի ուսուցիչները որոշում են կոլեկտիվ այցելել իմ դպրոց և դասեր լսել: Նրանք լսեցին երկու դաս՝ հայոց լեզու և թվաբանություն: Դասերը լսելուց հետո մի շարք դիտողություններ արեցին: Այդ դիտողություններից ես հիշում եմ մի երկուսը: Առաջինը՝ թվաբանական խնդիրներ լուծելիս «ի՞նչ է պահանջում խնդիրը» հարցը պետք է խնդրի տեքստի հետ միասին ասի դասատուն և ոչ աշակերտը, ինչպես անում էի ես: Չէի առարկում, որվհետև նրանք մեծ փորձ ունեին, և ես նրանց ասածներն ընդունում էի իբրև «աքսիոմա»: Բայց մենք այնքան թվաբանական խնդիրներ էինք լուծել, մանավանդ աշակերտների կողմից կազմած, որ «ի՞նչ է պահանջում խնդիրը» հարցին իմ աշակերտները միշտ էլ ճիշտ էին ասում: Երկրորդ դիտողությունը հայոց լեզվի մասին էր: Նրանք դեմ էին, որ աշակերտները նոր տված դասը համարյա դասարանում էին սովորում: «Իսկ տանը ի՞նչ պիտի անեն աշակերտները», – ասում էին նրանք: Ճիշտ չէ, աշակերտները դասը պետք է տանը սովորեն, զբաղվեն»:

Ես նրանց չէի առարկում, բայց շարունակում էի պարապել իմ մեթոդով, իմ ներքին ձայնն էր ինձ այդպես թելադրում, ես ուսուցիչ եմ, պետք է սովորեցնեմ և ոչ թե դաս տամ և ասեմ «տանը կսովորեք»: Այսպես օրինակ, որևէ ոտանավոր սովորեցնելիս ինձ հաջողվում էր այնպես անցնել, որ միջակ ընդունակության տեր աշակերտը բավական է, որ երկու անգամ տանը կարդա, անգիրն արդեն պատրաստ է:

Ճիշտն ասած, ես չգիտեի, թե որքան ճիշտ էի ավանդում ոտանավորը, բայց ես վարվում էի այսպես. նախ ոտանավորի բովանդակությունն էի պատմում, բացատրում անձանոթ բառերը, բառը գրում գրատախտակին, իսկ աշակերտները՝ բառերի համար կազմած իրենց տետրում: Ապա ոտանավորն առգանությամբ կարդում էի ես, կրկնում, որից հետո դասարանը խմբովին կարդում էր ոտանավորը: Խմբովին կարդալուց հետո կարդում էին միջակ սովորողները, ապա՝ թույլերը: Եզրափակման ժամանակ աշակերտներն իմ հարցերին պատասխանում էին ոտանավորի այս կամ այն նախադասությամբ կամ բառով: Դասը վերջացած է:

Որքան շատ էի մտքերի փոխանակություն ունենում պետական դպրոցի ուսուցիչների հետ ու մո-

տիկից ծանոթանում նրանց դասավանդման մեթոդներին, այնքան որոշակի ու պարզ էր դառնում ինձ համար մի բան. այն ուսուցիչները, որոնք սովորել են ուսուցչական սեմինարիաներում, նրանք թե՛ իրենց պատրաստականությամբ ու զարգացմամբ, թե՛ մեթոդապես շատ ավելի բարձր էին, քան այն դասատուները, որոնք, ավարտելով քաղաքային դպրոցները, անցել են վեցամսյա ուսուցչական կուրսեր և ստացել ուսուցչական վկայական: Ես շատ բան սովորեցի սեմինարավարտներից, նրանց մանկավարժական խորը գիտելիքներից:

Չմեռային արձակուրդներից հետո դասերը սկսված են: Այդ օրերին էր, երբ մի երեկո տանտիրոջս տղա Իվանը ծեծեց դուռս՝ ասելով, թե մի մարդ է հարցնում: Մութ գիշեր է, բարակ անձրև էր մաղում: Իջա ներքև, տեսա յափնջում փաթաթված մի ձիավոր.

– Բարև ձեզ, – ասաց ձիավորը:

– Բարև, խնդրեմ, իջեք, – ասացի առանց հարցնելու նրա ով լինելը: Այդ ուշ ժամին չէր կարելի հարցնել, թե դու ո՞վ ես, ի՞նչ ես ուզում, մանավանդ երբ անձրև էր մաղում:

– Խնդրեմ, իջեք, իջեք, – ասացի ես, – Իվան, դու ձին տեղավորիր, իսկ դուք, պարոն, համեցեք, վերև բարձրացեք (ես բնակվում էի տան երկրորդ հարկում):

Երբ մտանք սենյակ, անձանոթը հանեց յափնջին, բարևեց ինձ:

– Արտաշես Մելքոնյան, թեմական տեսուչ, եկել եմ ստուգելու ձեր դպրոցը:

– Խնդրեմ, բարով, հազար բարի եք եկել:

Հետևյալ օրը նա դպրոցի եղած-չեղածի, անցուդարձի հետ ծանոթանալուց հետո ցանկացավ դասեր լսել: Առաջին բաժանմունքում ենք: Ուշ ընդունված անգրագետների հետ եմ պարապում: Դասի թեման «Ծ» տառն է. «Ծիտը ծառին ծլվում է՝ ծիվ, ծիվ, ծիվ»: Այս նախադասությունն է, որ երեխաները վեր են լուծում բառերի, բառը վանկերի, հանում «Ծ» հնչյունը: Ապա երեխաներն ասում են բառեր, որ «Ծ»-ն լսվում է բառի սկզբում, բառի վերջում, ապա բառամիջում... Ապա «Ծ» տառը գրում են տետրերում, կարդում տեքստը դասագրքում, գրատախտակին գրում ծառ, ծիտ բառերը: «Դասը վերջանալուն դեռ ժամանակ կա, պետք է օգտագործել այդ ժամանակը» մտածում եմ ես. «Եվ ի՞նչ անեն, որ լավ լինի»: Գրատախտակի վրա նկարում եմ մի ծառ: Ծառի ճյուղերի հետ ձուլված գրում եմ նոր սովորած «Ծ» տառը: Այն դժվար է տարբերվում ծառի ճյուղերից:

– Տեսնո՞ւմ եք, երեխաներ, այս ծառը, – դիմում եմ դասարանին, – նրա ճյուղերի մեջ ես թաքցրել եմ «Ծ» տառը: Ո՞վ կարող է ձեզանից գտնել «Ծ» տառը: Ով գտել է, թող գա, ջնջի ծառը՝ սկսած արմատից մինչև ծայրն այնպես, որ գրատախտակի վրա մնա միմիայն «Ծ» տառը:

Գասարանը էլեկտրականացած է: Քար լուս-
թյուն: Ահա աշակերտներից մեկը ձեռք է բարձրաց-
նում... Ահա և երկրորդը, երրորդը: Ես գրատախ-
տակի մոտ եմ կանչում Ալեքսանդր Միքայելյանին:

–Տե՛ս,– ասում եմ,– զգույշ, կամաց և առանց
շտապելու այնպես ջնջիր, որ «Ծ» տառը չվնասվի:

Ու Միքայելյանը կամաց-կամաց ջնջում է ծառը:
Գասարանը շունչը պահած, ակնապիշ նայում է
գրատախտակին, հետևում: Եվ երբ ամբողջ ծառը
ջնջված է, գրատախտակի սև ֆոնի վրա սպիտա-
կին է տալիս «Ծ» տառը, բոլորը, խոր շունչ քաշելով,
հետ են ընկնում:

Չեմ հիշում, թեմական տեսուչն ինչ դիտողու-
թյուններ արեց, միայն գիտեմ, որ նա Մեծ Թաղլար
գյուղի ծխական դպրոցի ուսուցիչներ Ավետիս
Գասպարյանին և Լևոն Ջառափյանին ասել էր, որ
Մերգելը ստեղծագործ ուսուցիչ է, արտիստ իր
գործում, լավ ապագա է սպասվում:

Իմ ամենօրյա պարապմունքներն իրենց հունի
մեջ են մտել: Բացի դպրոցի պարապմունքներից՝
շաբաթական երկու անգամ պետական դպրոցի ա-
շակերտների հետ եմ պարապում, երկու անգամ էլ՝
հասակավորների հետ: Իսկ մնացած ժամանակ՝
մինչև ուշ գիշեր, պետական դպրոցից վերցրած
գրքերն եմ կարդում: Այսպես շարունակվում է մինչև
գատկական տոները, զարմանալիս արձակուրդը:
Քսան աշակերտներ հետս առած ընկել եմ սար ու
ձոր, պատվում ենք շրջակա գյուղերը, ամեն տեղ
տալով «համերգներ»: Այն, ինչ դժվար էր դասա-
րանի պատերի ներսում տալ աշակերտներին,
լայնացնել նրանց գիտելիքները բնագիտությունից,
աշխարհագրությունից, հնարավոր դարձավ բնու-
թյան ծոցում, կոնկրետ փաստերի և դիտողական
պարագաների միջոցով:

Ահա հողի ծալքերը, որ շերտ-շերտ նստած են
իրար վրա: Երեխաները տեսնում են, թե ինչպես են
նրանք առաջացել, ահա քարի ապարներ, նրանց
միջից կարելի է ջոկել այնպիսիները, որոնցից կիր
են պատրաստում այրման միջոցով, որ նրանք այդ-
պես էլ կոչվում են՝ կրաքարեր: Անտառով անցնելիս
կտրտված ծառերի բների վրա մենք որոշում ենք, թե
նրանցից ամեն մեկը քանի՞ տարեկան է: Ես ցույց
եմ տալիս չորացած ծառը և հարց տալիս. «Ինչո՞ւ է
ծառը չորացել»: Երեխաները չգիտեն: Ես բացա-
տրում եմ՝ ցույց տալով այն չար մարդու արարքը,
որը կողով շինելու համար, որպեսզի անտառից իր
քաղած զկեռը կամ հոնը ածի մեջն ու տուն տանի,
դանակով ծառի կեղևն է կտրել կլոր ձևով և ծառին
զրկել այն սննդատար անոթներից, որոնք հողից
հյութ են մատակարարում ծառին: Այդ սննդատար
անոթներն անջատվել են իրարից, և ծառը դադարել
է սնունդ ստանալուց:

–Իսկ տերևները,– հարցնում են երեխաները:

–Տերևները, երեխաներ, ծառի շնչառության հա-
մար են: Ծառերը տերևներով են շնչում, իսկ ո՞վ կա-

սի, թե մարդը ինչո՞վ է շնչում: Չգիտե՞ք, այդ լավ չի:
Մարդը շնչում է քթով: Մարդը մի քիթ ունի, իսկ ծա-
ռը՝ հազար ու մի քիթ, տեսե՛ք, որքան տերևներ կան
մի ծառի վրա, նրանք էլ օդից են վերցնում իրենց
անհրաժեշտ գազը, որ թթվածին է կոչվում:

Մենք բարձրանում ենք սարն ի վեր:

–Երեխաներ, նայե՛ք հեռու-հեռու, ի՞նչ եք նկա-
տում:

Երեխաներից մեկն ասում է գյուղեր, մեկը՝ այ-
գիներ, սարեր, դաշտեր...

–Ավելի հեռու, շա՛տ հեռու:

–Էլ բան չի երևում, երկինքը եկել, միացել է հողի
հետ,– ասում է երեխաներից մեկը:

–Այ, հենց այդ երկինքը, որ եկել, միացել է երկրի
հետ, հենց այդ տեղն եմ ասում: Գիտե՞ք, թե այդ
տեղն ինչ է կոչվում: Հորիզոն է կոչվում, հորիզոն:

Եվ այսպես ասելով, խոսելով, ծիծաղելով, երգե-
լով, պարելով մի տեղ իմանում են, թե ինչին են ա-
սում հովիտ, որն է սարը, որը բլուրը, սարի գագաթը,
լանջը, ստորոտը, որն է գետը, նրա հունը, գետի
վտակը, ինչպես են որոշում գետի աջ ու ձախ ափե-
րը և այլն:

Ահա մոտենում ենք Տումի գյուղին: Ծարք ենք
կանգնում: Երգելով գյուղ ենք մտնում: Անսովոր
երևույթ գյուղի համար: Ընդառաջ են վազում գյուղի
երեխաները, մեր առջևից, կողքից քայլում: Գյուղի
բակերը, կտուրները լիքն են հետաքրքրվողներով՝
երեխաներ, աղջիկներ, կանայք, մարդիկ:

–Տողա վարժապետն է,– ասում են հավաքված-
ները:

Մենք իջևանում ենք Թևան Տեր-Գրիգորյան վար-
ժապետի նորակառույց երկհարկանի տանը, որի կա-
ռուցումը դեռ չի վերջացել: Մի մեծ սենյակ ընտրեցի,
որ հետագայում պետք է երկու սենյակ դառնար: Այս-
տեղ պետք է ելույթ ունենանք: Ժողովուրդն առանց
հրավիրելու հավաքվել է, որն աթոռին է նստել, որը՝
պատի տակը պպզել, մյուսը նստել է հատակին ծա-
լապատիկ, մի ուրիշն էլ ոտքերը մեկնած է նստել,
բայց մեծամասնությունը կանգնած է: Մեր ծրագիրը
նույնն է, ինչ դպրոցական հանդեսին: Տպավորությու-
նը մեծ է: Գյուղը ո՛չ դպրոց ունի, ո՛չ հանդես է տեսել:
Երեխաների ելույթը նորություն է նրանց համար: Հա-
մերգը, ավելի շուտ երեխաների ելույթը վերջացավ:
Ներկաները խառնվել են իրար, որը գովում է, որն էլ
զարմանքն է հայտնում: Ներկաներից շատերը մի
կամ երկու երեխայից բռնած ինձ են դիմում:

–Վարժապե՛տ, էս երկու երեխան տու՛ր, տանեն,
գիշերը մեզ մոտ մնան:

–Վարժապե՛տ, էս իմ քրոջ տղան է, թող էս տա-
նեն մեր տուն:

Եվ այսպես անվերջ: Իսկ երեխանե՞րը: Նրանք
բոլորը միասին, կարծես խոսք մեկ արած, չեն ու-
զում գնալ:

–Մենք մեր ուսուցչի հետ ենք ուզում մնալ,– ա-
սում են երեխաները միաբերան:

Հազիվ է ինձ հաջողվում համոզել երեխաներին, որ այս տունը, որտեղ «համերգ» տվինք, ի վիճակի չէ քսան հոգու կերակրելու, անկողնով ապահովելու, գնացքեք, առավոտյան էլի միասին կլինենք: Համենայն դեպս, ինձ հետ մնացին Աթայան Լազարը, Շաբուրյան Ներսեսը և Տեր-Հովհաննիսյան Մարիամը:

Առավոտյան բոլոր աշակերտները հավաքվել են ինձ մոտ: Նրանք պատմում են իրենց տպավորությունները, թե ով ինչպես է գիշերել, ինչով են իրեն հյուրասիրել, առավոտյան էլ գրպանները չոր մրգով լցրել, ճանապարհ դրել: Ասում են, խոսում, իրար հյուրասիրում: Մենք կազմ ու պատրաստ ենք: Ճանապարհվում ենք դեպի Մուխրանես, այնտեղից Ջրակուս, Ազոխ... ամեն տեղ նույն ընդունելությունը, ամեն տեղ նույն վերաբերմունքը: Ի տարբերություն մյուս գյուղերի՝ Ջրակուսում մեզ հյուրասիրելու համար ոչխար մորթեցին: Վերջը հասանք Հաղութ, որ շրջանի վարչական ենթակենտրոնն էր, որտեղ կան ռուսական, հայկական դպրոցներ, փոստ և սահմանապահ գործ: Մենք իջանք գյուղի ծայրին գտնվող ռուսական դպրոցում, որի սնտորիտելը՝ դպրոցի վարիչը, մի բարի ռուս էր՝ Վորոնով ազգանունով: Հայկական դպրոցը գուրկ էր հարմարություններից, մասնավոր, վարձու տուն էր: Այդ օրը մենք հանգստացանք այդտեղ, իսկ հետևյալ օրը ելույթ ունեցանք հենց այս ռուսական դպրոցի ընդարձակ դահլիճում: Ելույթին ներկա էին ռուսական և հայկական դպրոցի աշակերտները, ուսուցիչները, որոնց թվում և հայկական դպրոցի ավագ ուսուցիչ, քահանա Արշակ Ոսկանյանը: Ելույթը հաջողություն ունեցավ: Ռուսական դպրոցի վարիչ Վորոնովը խրախուսական խոսք ասաց, գտավ, որ պետք է օրինակ վերցնել, երեկույթներ, ցերեկույթներ կազմակերպել: Քննադատական խոսք ասաց ռուսական դպրոցի ուսուցիչ Ավետիս Տեր-Ավետիսյանը: Նա գտնում էր, որ երեխաներին չի կարելի ժողովրդական երգեր սովորեցնել, մանավանդ այն երգերը, որտեղ սեր է երգվում, սիրո մասին խոսք կա, այդ հակամանկավարժական է, ասում էր նա, և օրինակ բերում՝ «Հաբրբան ջանեջան», «Խումար պառկեր երես բաց»: Եվ այս այն ժամանակ, երբ ամբողջ դպրոցը խոսում էր նրա և Վորոնովի կնոջ սիրային հարաբերությունների մասին, այն էլ դպրոցի ներսում, աշակերտների աչքի առաջ: Երկար վիճեցինք, բայց մինչև վերջն էլ Տեր-Ավետիսյանը մնաց իր համոզմունքին:

Հաղութից մենք սարերով, անտառներով, երգելով ու սառնորակ աղբյուրների մոտ հանգստանալով, վերադարձանք տուն:

Այժմ, երբ այդ ժամանակից անցել է կես դարից ավելի, մարդ մտածում է, թե ինչպիսի՞ հավատ պետք է վայելեր այն ժամանակ ուսուցիչը, որ ծնողն իր հասունացած աղջկան թույլ տար մի 20-22 տարեկան երիտասարդի հետ տասը օր, օր ու գիշեր

պտովեր սար ու ձոր: Չ՞է որ Լուսիկ Օհանյանը և Մարիամ Տեր-Հովհաննիսյանը 14-15 տարեկան էին: Այդ այն ժամանակ էր, երբ տան պապն ասում էր. «Փափախո՞ւ տուր աղջկա մեջքին, եթե վեր չընկավ, մարդու տալու ժամանակն է»: Լուսիկի ու Մարիամի խմբի հետ տասն օր շրջագայելու գեղեցիկ փաստը, այն էլ ծնողների աչքից հեռու, խոսում է այն մասին, որ, իրոք, ինչպես այն ժամանակ էին ասում, «ուսուցիչը աշակերտի հոգևոր ծնողն է... սրբություն սրբոց», ապա անփոխ հարաբերության գաղափարը, որ գոյություն ուներ ուսուցչի և աշակերտի միջև: Ուսուցիչը եթե բարկանում է աշակերտի վրա, դա ոչ թե նրանից վրեժ լուծելու, աշակերտի կուպիտ պատասխանի, այլ միմիայն նրան դաստիարակելու համար է: Ուսուցիչը չի կարող իր բարձրությունից իջնել մինչև ոչ հասունացած աշակերտի աստիճանի, հավասարվել նրան ինչ-որ «հաշիվ մաքրելու» համար: Ոխակալ, քեն պահող ուսուցիչն իր աշակերտի հանդեպ, ինչքան էլ այդ աշակերտը լկտի ու ստահակ լինի, արդեն կորցնում է իր «հոգևոր ծնող» լինելու կոչումը: Այդպիսի ուսուցչի և աշակերտի փոխհարաբերությունը դառնում է թշնամական: Այդ ուսուցիչը կորցնում է ոչ միայն այդ աշակերտի սերն ու հավատը, այլև ամբողջ աշակերտության առաջ է կորցնում իր հեղինակությունը, իր ուսուցիչ լինելու բարձր կոչումը: Աշակերտն իր ուսուցչի մեջ պետք է տեսնի ամենից առաջ բարձր կուլտուրա, վսեմ հատկություններ, տեսնի իր բարեկամին՝ իր «հոգևոր ծնողին», ընդօրինակի այդ բարեմասնությունները:

Ես մի ուսուցիչ գիտեմ՝ Արշակ Տեր-Ավագյան: Նա հիսունից ավելի տարիներ եղել է ուսուցիչ սկզբում շրջաններում, ապա Թիֆլիսի հայկական դպրոցներում: Նա դասավանդում էր լեզու և գրականություն: Ես չեմ նկարագրի նրա դասավանդման մեթոդները, եղանակներն ու ձևերը: Նրա մասին այսքանը միայն կասեմ, որ այդ տարիների ընթացքում գեթ մի անգամ ոչ միայն չի բղավել, այլ բարձր ձայնով անգամ չի խոսել դասարանում: Նրան հանձնեցեք ամենաչար դասարանը, տվեք նրան մի դասարան, որտեղ նստած են քառասուն «չար ու կրակ» աշակերտներ, մի շաբաթից հետո այդ դասարանն արդեն դուք չեք ճանաչի: Նրա դասերին, ինչպես ասում են, ճանճի տզզոցն անգամ կլսվի: Ահա նրա ուսուցչական կյանքի շատ դեպքերից մեկը կպատմեմ, որպեսզի ավելի պարզ լինի:

Այդ այն ժամանակ էր, երբ ցարական կառավարության տապալման հետևանքով ժողովուրդները ստացել էին ինքնորոշման իրավունք: Թիֆլիսում գոյություն ունեցող բոլոր հինգ գիմնազիաները, որտեղ դասավանդումը տեղի էր ունենում ռուսերեն լեզվով, ազգայնացվում են: Թիֆլիսի 3-րդ արական գիմնազիան, որտեղ սովորողների ճնշող մեծամասնությունը հայ երեխաներ էին, վեր է ածվում հայկական միջնակարգ դպրոցի: Ահա այդ դպրոցում

հայոց լեզվի և գրականության դասատուների թիվը լրացնելու համար հրավիրվում է Արշակ Տեր-Ավագյանը:

Առաջին անգամ առաջին դասն է այս դպրոցում: Արշակ Տեր-Ավագյանը, դասարանական մատյանը թևի տակ, մտնում է 5-րդ հիմնական դասարան (ուսման 9-րդ տարին): Առաջին ծանոթությունից հետո Արշակ Տեր-Ավագյանը դասը սկսում է իր ներածականով: 40 հոգի՝ 16-17 տարեկան տղաներ, նստել և լուռ լուռ են նորեկ ուսուցչի մեղմ ու քաղցր ձայնով գրույցը: Արշակ Տեր-Ավագյանը նկատում է, որ վերջին մատարանին մատած երկու հոգի՝ Հարությունյանը և Պետրոսյանը, ուշադիր չեն, իրար են հրմշտում, հանգիստ չեն պահում իրենց: Ուզում են դասը խանգարել, ուսուցչի ուշադրությունը գրավել: Առանց իր գրույցն ընդհատելու նա ձեռքով կանչում է այդ երկուսից մեկին և կանգնեցնում իր կողքին: Նստարանին մենակ մնացած Պողոսյանը շարունակում է իր շարությունները, խանգարում ուրիշներին: Հիմա էլ Արշակ Տեր-Ավագյանը սրան է կանչում ու կանգնեցնում իր կողքին: Չանգից հետո այդ երկու պատժվածներից Հարությունյանը, որին աշակերտները «Պուգաչով» էին անվանում ատրճանակ կրելու և խռովարար լինելու համար, հարց է տալիս հանդիմանական տոնով. «Իսկ ինչու՞ դուք մեզ պատժեցիք» և ձեռքը տանում է դեպի կողքից կախված ատրճանակը: Երևի ուզում էր ասել «նորեկ ուսուցչին», թե «ես քո ասած աշակերտներից չեմ, տեսնո՞ւմ ես կողքիցս կախված ատրճանակը»: Այստեղ պետք է նշել, որ դարերով գոյություն ունեցող ցարական երկաթակուռ կառավարության տեղը գրավել էր նոր, անփորձ կառավարությունը, որ դեռ անգոր էր երկրում կարգ ու կանոն հաստատելու: Ամենուրեք կատարյալ անարխիա էր. ով ասես զենք էր կրում անարգել. մի տեղ թալան, մյուս տեղը՝ կողոպուտ, սպանություն: Չարմանալու չէ ուրեմն, որ այսպիսի իրավիճակի օրերին իրեն «քաջ» համարող աշակերտը ատրճանակ ունենար կողքից կախած:

–Գիտես ի՞նչ, տղա ջան,– ասում է Արշակ Տեր-Ավագյանը,– դու իզուր ես ձեռքդ տանում դեպի կողքդ, ինչո՞վ ես երաշխավորված, որ իմ գրպանում էլ չկա դրանից: Բայց ինչո՞ւ համար ատրճանակ, երբ մենք առանց ատրճանակի էլ կարող ենք խոսել, իրար հասկանալ: Դուք տեսա՞ք, թե ինչպես էր լսում իմ պատմածը դասարանը: Իսկ դուք ոչ միայն չէիք լսում, այլ ուրիշներին էլ էիք խանգարում: Ճի՞շտ է, ասե՛ք:

–Ճիշտ է,– լինում է պատասխանը:

–Իսկ դուք առաջ չեք գնա, լավ մարդ չեք լինի, ձեր ծնողները ձեզնով չեն ուրախանա, ձեզնով չեն հպարտանա, իսկ ուրիշի լավ որդիներին վշտաբեկ ու նախանձով կնայեն: Ես տեսնում եմ, որ դուք լավ տղաներ եք, իսկ լավ տղաներին վատ արարքներ չի սազում: Խորհուրդ եմ տալիս, որ դուք երկուսով իմ

ասածների մասին խորը մտածեք և եզրակացության գաք:

Այս գրույցից հետո, երբ Տեր-Ավագյանը մտնում է ուսուցչանոց, այդ դասարանում դաս ունեցող ուսուցիչները Տեր-Ավագյանի գլխին են թափվում:

–Հը՞, դեպք չպատահե՞ց:

–Ինչպե՞ս անցավ դասը:

–Աղմկոտ, չար դասարան է, չէ՞:

–Ի՞նչ եք ասում, եղբայր, դասն անցավ շատ խաղաղ և նորմալ,– ասում է Տեր-Ավագյանը:

–Չի կարող պատահել,– կրկնում են միաբերան այս դասարանում դաս ունեցողները, նրանց հետ էլ նախկին վարդապետներ Բենիկը և Տեր-Միքայելյանը, որոնք, հրաժարվելով իրենց վեղարներից և հոգևոր կոչումից, դասատուներ էին դարձել:

–Ա՛խ, դրա համար էիք դասաբաշխման ժամանակ բոլորդ այդ դասարանից հրաժարվում: Հիմա ես հասկանում եմ ձեր «մանկրանների» նպատակը դասաբաշխման ժամանակ,– ասում է Տեր-Ավագյանը:

Դասերից հետո Արշակ Տեր-Ավագյանի բնակարանի դուռը ծեծում են: Ո՛վ զարմանք, Հարությունյանը և Պողոսյանն են, մի պահ կասկած է համակում Տեր-Ավագյանին: Բայց, ինչպես ասում են, իրեն «մեծության է դնում» և ներս հրավիրում: Երբ մտնում են սեղանի շուրջը, տղաներից մեկը գլուխն է խոնարհում, իսկ մյուսն էլ լուռ է.

–Երևի որևէ նպատակով եք եկել, խնդրում եմ խոսե՛ք, ես ձեզ լսում եմ,– ասում է Տեր-Ավագյանը:

Վերջապես խոսում է Հարությունյանը.

–Ես և Պողոսյանը, Արշակ Բողոզանովի՛չ, խորհեցինք այսօրվա ձեր ասածների մասին: Եկել ենք ձեզ ասելու, որ երբեք, երբեք ձեր դասին մենք չարություն չենք անի և կլինենք այնպես ուշադիր, ինչպես մյուսները:

–Բայց ինչո՞ւ միայն իմ դասին,– հարցնում է Տեր-Ավագյանը:

–Որովհետև մեզ հետ դեռևս այդպես մտերմարար ոչ ոք չի խոսել, ինչպես դուք, այդ պատճառով էլ որոշեցինք և եկել ենք ձեզ հայտնելու, որ ձեր դասին միշտ կլինենք ուշադիր:

–Այդ չեղավ, տղաներ, եթե դուք ուզում եք դպրոցն ավարտել, մարդ դառնալ և պիտանի լինել հասարակությանը, ձեր ծնողներին, պետք է դուք բոլորի դասերին էլ լինեք ուշադիր և կարգապահ: Այս օրվանից ես ոչ միայն ձեր ուսուցիչն եմ, այլև ձեր մտերիմը, ձեր հոգևոր ծնողը: Խո՛սք տվեք, որ դուք էլ կլինեք իմ մտերիմը, իմ սևերես չեք թողնի դպրոցի դիրեկցիայի և ուսուցիչների առաջ:

–Խոսք ենք տալիս,– ասում են երկուսը միասին: Իսկ Հարությունյանը, հանելով ատրճանակը, դնում է սեղանին:

–Վերցրե՛ք, պահե՛ք, Արշակ Բողոզանովի՛չ, իբրև նշան մեր խոստման և անկեղծության:

Հետևյալ օրն Արշակ Տեր-Ավագյանը հերթապահում է բակում երեխաների հետ: Գալիս, հայտ-

նում են, որ դիրեկտոր Ալեքսանդր Գավիլոյիչ Սաֆարովը¹⁴ կանչում է:

–Ներեցեք ինձ, Արշակ Բոգդանովիչ, ես մոռացել եմ ձեզ նախագրուշացնել, որ հինգերորդ դասարանում կամ մի քանի սանձարձակ, ավազակաբարո տղաներ, նրանցից մեկը նույնիսկ ատրճանակ է կրում, պետք է նրանց հանդեպ զգույշ լինել:

Այս նախագրուշությունից հետո Սաֆարովը չի ուզում հավատալ Արշակ Տեր-Ավագյանի ասածներին, որ այդ տղաները բաշիբոզուկներ չեն, այլ օրինակելի աշակերտներ, և նրանց մոտ այլևս ատրճանակ չկա, այդ ատրճանակն արդեն իր սեղանի գորոցում է:

«Մեր սիրելի՛, մեր հարգելի՛ ուսուցիչ ընկեր Տեր-Ավագյան,– մի քանի տարի հետո գրում են Հարությունյանն ու Պողոսյանը,– կարող եք մեզ շնորհավորել, մենք ուսուցիչներ ենք Դիլիջանում: Ամուրի լինելու պատճառով սնվում ենք ճաշարանում և ամեն անգամ պահանջում ենք կես շիշ գինի: Առաջին բաժակը բարձրացնում ենք և ձեր կենացը հիշում: Շատ ենք խոսում ձեր մասին: Մենք մեզ երախտապարտ ենք զգում, մեր քաղցր, մեր անմահ ուսուցիչ»:

Արշակ Տեր-Ավագյանի այս դեպքը մեջբերինք ապացուցելու, որ, իրոք, ուսուցիչը աշակերտի նաև «հոգևոր ծնողն է»:

Ուսումնական տարին վերջանում է: Հոգաբարձությունը որոշում է հետևյալ՝ 1907-1908 ուսումնական տարվա համար հրավիրել երկրորդ ուսուցիչ ռուսաց լեզվի համար և իմ աշխատավարձը լրիվ վճարել՝ 400 ռուբլի: Ռուսաց լեզվի դասատու հրավիրելը հանձնարարում են ինձ: Ես արդեն Շուշի քաղաքում եմ: Առաջին հերթին ուզում եմ, որ ռուսաց լեզվի դասատուն լինի բանիմաց, զարգացած օրիորդ, պարկեշտ ու համեստ: Դիմում եմ իմ ծանոթ գիմնազիավարտ օրիորդներին: Բոլորը, կարծես խոսք մեկ արած, հրաժարվում են միևնույն պատճառաբանությամբ՝ «գյուղում հետաքրքիր չէ աշխատել, այնտեղ հետաքրքրություն չկա»: Ես նրանց ասում եմ, որ գյուղ աշխատանքի գնացողը ինքը պիտի ստեղծի հետաքրքրություն՝ իր հետ տանելով կուլտուրա և քաղաքակրթություն, որ գյուղը խոպան հող է, նրան մշակող է հարկավոր: Հիասթափվելով գիմնազիավարտ այդ տիպի օրիորդներից՝ ես դիմեցի լրագրային հայտարարության, որովհետև հոգևոր կառավարությունը, որի իրավասության տակ էին գտնվում ծխական դպրոցները, ապիկար գտնվեց այդ գործում: Հոգևոր կառավարությունը չունեի ոչ միայն ուսուցիչների, այլև ընդհանրապես դպրոցների վերաբերմամբ հաշվառում, որի հետևանքով չկար ընդուն-

ման և հանձնան կարգ: Այդ իսկ պատճառով էլ ծխական դպրոցի գույքը, դիտողական ու դիդակտիկ պարագաները, գրադարանի գրքերն անտեսության պատճառով չքանում էին, և մնում էին դպրոցի դատարկ չորս պատերը:

Ամառվա այս արձակուրդներին ես որոշել էի շրջագայել օտարության մեջ գտնվող տողեցիներին և կազմակերպել Հայրենակցական միություն: Ես պիտի բացակայեի Շուշուց, այդ պատճառով ուսուցչուհի հրավիրելու հայտարարության մեջ տվել էի ոչ թե իմ, այլ իմ լավ բարեկամների՝ Ռոնդադսազյանների հասցեն: Նիկիտա Ռոնդադսազյանը Շուշի քաղաքի գլխավոր ճարտարապետն էր, իսկ Նիկիտայի կինը՝ Սրբուհին, Թիֆլիսի Հովանյան օրիորդաց դպրոցի նախկին ուսուցչուհի: Նրանք ինձ շատ էին սիրում և մտածում իմ ապագա ուսման մասին: Սրբուհու՝ ինձ Տոդ գրած նամակներից յուրաքանչյուրը մի-մի ուղեցույց դասախոսություն էր:

Ամառվա ընթացքում ինձ հաջողվեց շրջագայել Բաքու և Անդրկասպյան երկրի համարյա բոլոր քաղաքներում: Ինձ հաջողվեց կազմակերպել Հայրենակցական միության հինգ մասնաճյուղ: Մրանց նպատակն էր գումար հայթայթել և ուղարկել հոգաբարձությանը դպրոցական շենք կառուցելու համար:

Երկրորդ տարին Տոդում

Օգոստոսի վերջին օրերն են: Առանց լուծելու ռուսաց լեզվի հարցը ես ճանապարհվում եմ պաշտոնատեղս՝ Տոդ գյուղ: Երկու օր անց Շուշուց հեռագիր եմ ստանում. «Հրավիրված է ուսուցչուհին, ուղարկեցե՛ք ճանապարհաձախս, Նիկիտա»: Հոգաբարձությունն ուղարկում է քառասուն ռուբլի:

–Գուշա վանքը տեսե՞՛ր, վարժապետ,– դիմում է ինձ գյուղի երիտասարդներից մեկը:

–Տեսել եմ: Աշակերտների հետ եմ եղել, ի՞նչ կա:

–Պատրաստվի՛ր, որ ժամը 3-ին ճանապարհվում ենք, երկու օրով ենք գնում, ոչխար ենք տանում:

–Չեմ կարող, ուսուցչուհու եմ սպասում:

–Մի՛ վախեցիր, վարժուհին չի փախչի, Չառի բաջին կընդունի, կտեղավորի (Չառի բաջին իմ տանտիրոջ կինն է):

Վաղ աշմանային անձրևը կարկտից փախչող հավերի պես մեզ քշեց պատասպարվելու վանքի օթևաններից մեկում: Առավոտյան դեռ նոր էինք խորովածի առաջին շամփուրները քաշել, երբ տանտիրոջ տղան՝ Իվանը, ներս մտավ և կռացավ ականջիս. «Վարժուհին եկել է»: Առանց ուշադրություն դարձնելու սեղանակիցների թախանձանքների՝ մնալ մինչև երեկո, երկարաճիտ կոշիկներով վազում եմ դեպի գյուղ: Վազում եմ ու մտածում. «Յարաք ո՞վ է, ի՞նչ է իրենից ներկայաց-

¹⁴ Սաֆարովը նախկին 3-րդ գիմնազիայի դիրեկտորն է, որ շարունակում է դիրեկտոր լինել և ազգայնացնելուց հետո (ծնթ. հեղ.):

նում»: Հետաքրքրությունն հանգիստ չի տալիս ինձ, բայց և անհարմար եմ զգում 12-13 տարեկան Իվանին հարցնել եկած վարժուհու մասին:

–Արի, է՛, վարժապետ, խեղճ աղջիկը ամբողջ գիշեր լաց էր լինում:

–Ի՞նչ է պատահել, Չառի՛ բաջի:

–Ես ինչ գիտամ, հոգաբարձու Արթունը եկավ, չայ տվեցի, խմեցին, Արթունը գնաց, ինքը սկսեց լաց լինել:

Ներս եմ մտնում սենյակ: Արթունը նստած է ակնոցն աչքերին ինտելիգենտ, կուլտուրական արտաքինով մի երիտասարդ աղջիկ: Մենք ծանոթացանք:

–Դանադյան Մարիամ,– ասաց նա,– առաջին անգամն եմ Թիֆլիսից դուրս եկել: Կյանքումս գյուղ չեմ տեսել, այն էլ այսպիսի գյուղ, որ պատից կախված նկարի պես կառչել է սարի լանջին:

–Իսկ ինչպե՞ս տեղ հասար:

–Շնորհակալ եմ, Ղոնդաղսագյան ընտանիքն ինձ ջերմ ընդունեց: Հետևյալ օրը պարոն Նիկիտան երկու ձի վարձեց: Մի ծերունի ուղեկցեց ինձ մինչև գյուղ:

–Բայց ինչու՞ եք լաց եղել գիշերը:

–Ո՞վ ասաց, լաց չեմ եղել,– գլուխը կախեց տամուկ աչքերով:

Երկու օրից մենք սկսեցինք պարապմունքները: Նոր ուսուցչուհին առաջին պարապմունքին նախապատրաստվեց իմ՝ իբրև «փորձառու» ուսուցչի օգնությամբ: Ես մի քանի անգամ լսել էի պետական դպրոցի առաջին բաժանմունքի ուսուցիչ Արմենակ Բեգլարյանի բանավոր գրույցի դասերը մինչ գրագիտության ուսուցման շրջանը: Չէ՞ որ պետական դպրոցում հաճախ հայ երեխան մի բառ անգամ ռուսերեն չգիտի: Մինչդեռ այնտեղ դասավանդումը տեղի է ունենում ռուսերենով: Ահա այդպես էլ ռուսաց լեզվի ուսուցչուհի Մարիամ Դանադյանի հետ կազմում եմ բանավոր գրույցի դասեր (Лекционные уроки) երկրորդ և երրորդ բաժանմունքների համար: Այս համատեղ աշխատանքը շատ նպաստեց ավելի մոտ ծանոթանալու նոր ուսուցչուհու հետ: Երկուսով նստում, մանկական շրջապատից վերցրած բառեր էինք ընտրում և այդ բառերի շուրջը կազմում համառոտ նախադասություններ՝ բաղկացած երկու, երեք, չորս բառերից... Այս աշխատանքների ժամանակ մեզանից մեկը դառնում էր ուսուցիչ, իսկ մյուսը՝ աշակերտ: Պարզ է, որ այսպիսի համատեղ աշխատանքը մեզ ավելի էր մոտեցնում, դարձնում մտերիմ: Շատ հաճախ էր պատահում, որ գյուղացիները, անկախ նրանից աշակերտի ծնող էր, թե ոչ, զանազան առիթներով մեզ հյուր էին կանչում, մենք միասին էինք գնում, եթե չէինք գնում, դարձյալ միասին չէինք գնում: Իսկ երբ հարսանիքի էինք հրավիրվում, անպայման ինձ էին ընտրում թամադա, թեև գինի, օղի չէի խմում: «Ոչինչ, դու կենացն ասա, ծաղկացրու, իսկ մենք

կխմենք»,– ասում էին հարսանքավորները: Նրանք գիտեին, որ իմ թամադայության ժամանակ սեղանն աշխույժ էր, իսկ կենացներն ուրախ էին անցնում:

Օրիորդ Մարիամ Դանադյանը ծնվել է Թիֆլիսում, արհեստավորի ընտանիքում, սովորել է Թիֆլիսի օրիորդաց 2-րդ գիմնազիայում: Նա 4-րդ արական գիմնազիայի ծնողական ժողովի անդամ էր և քարտուղարուհի, որտեղ սովորում էր նրա փոքր եղբայրը՝ Աշոտը: Իսկ 4-րդ գիմնազիայում սովորողների ծնողները կուլտուրական մարդիկ էին, գլխավորապես զինվորականներ: Ահա այդ միջավայրից էր նա հանկարծ ընկել գյուղ: Նրանց տունը Թիֆլիսում շատ մոտ էր Ներսիսյան դպրոցի շենքին, այս պատճառով օրիորդ Մարիամը շատ հաճախ էր տեսնում հոգաբարձուներին, որոնք բարձր կուլտուրայի տեր, ինտելիգենտ, ճաշակով հագնված մարդիկ էին: Իսկ այստեղ՝ գյուղում, երբ խանութպան Արթունը թեյը բաժակից ածում էր պնակի մեջ և այդպես խմում, երբ բարի գիշեր է ասել, սենյակից դուրս եկել, Մարիամ Դանադյանը տեսել է նրա ետևից կարկատած անդրավարտիքը և մտածել. «Մա որ հոգաբարձուն է, ապա ինչի՞նչ նման կլինի սրանց ուսուցիչը»: Արտասուքն ինքնաբերաբար թափվել է նրա աչքերից:

Երեխաներին շատ էր սիրում նոր ուսուցչուհին: Երեխաներն էլ նրան էին շատ սիրում: «Ինչպիսի պատիժ ուզում ես տուր երեխային, բայց մի՛ վիրավորիր նրա ինքնասիրությունը, նրա եսը»,– ասում էր Մարիամ Դանադյանը: Խիստ ու պահանջկոտ էր նախ դեպի ինքը, ապա դեպի աշակերտները: Նրա խստությունը զայրանալու կամ բղավելու մեջ չէր: Պահանջում էր, որ աշակերտները մաքուր պահեն իրենց գրքերը, տետրերը, մաքուր և գեղեցիկ գրեն, բառը ճիշտ արտասանեն: Օճառ ու սրբիչ էր տանում դասարան, կեղտոտ աշակերտին ստիպում էր լվանալ ձեռքերն ու երեսը: Այդ տարիներին պետական դպրոցներում ռուսաց լեզուն անցնում էին բնական մեթոդով (Естественный метод): Այն չէր ընդունում թարգմանական մեթոդը: Ռուսաց լեզվի դասատուն խոսում է ռուսերեն, դասը բացատրում է ռուսերեն: Թարգմանությունը՝ իբրև դասավանդման մեթոդ, վտարված էր պետական դպրոցներից: Այս մեթոդը կոչված էր ռուս դասատուին օգնելու օտարախոս դպրոցներում և ռուսաց լեզվի դասավանդումն այդ դպրոցներում բեղմնավոր դարձնելու համար: Պետական դպրոցի ուսուցիչը, եթե հայ է, հայկական գյուղում բնական մեթոդի հետ միասին կիրառում էր և թարգմանական մեթոդը երկու դեպքում, երբ բառը վերացական է, որի հանդեպ բնական մեթոդն անգոր է, և երբ ուսուցիչն ուզում է ստուգել, թե որքանով է ճիշտ հասկացել աշակերտը բառի միտքը, իմաստն ու նշանակությունը: Դանադյան Մարիամն ահա այդ մեթոդով էր անցնում ռուսաց լեզուն մեր դպրոցում: Մի անգամ էլ և պոչ բառերը սովորեցնելու համար աշակերտներին նա

դուրս բերեց բակ և ցույց տալով տանտիրոջ էշին՝ ասաց. «Вот это осел» և կրկնել տվեց աշակերտներին, ապա ցույց տալով պոչը՝ ասաց. «Вот это хвост»: Եվ որովհետև աշակերտներն արդեն գիտեին «имеет» բառը, կապելով իրար հետ, ասացին. «Осел имеет хвост»: Բացի նրանից, որ դասին նախապատրաստվելիս նա գրում էր ամբողջ դասի ընթացքը, ուներ և առանձին տետր, որտեղ գրանցում էր երեխաներին սովորեցրած բառերը, նախադասությունները և դրանց օգնությամբ սովորեցնում էր նոր բառեր, նախադասություններ: Բանավոր գրույցների դասերին ռուսաց լեզվի դասատուն սովորեցնում էր գրել տառերն առանց նրանց անունները սովորեցնելու:

Մեր մտերմությունը փոխվում է սիրո, և մենք վեց ամսից ամուսնանում ենք միանգամայն հակառակ իմ անման բարեկամների՝ Ղուկադասյան ամուսինների կամքին:

–Տես, Նիկիտա,– ասել է Սրբուհին, երբ տեսել էր իրենց մոտ ժամանած օրիորդ Մարիամ Գանադյանին,– ես վախենում եմ, որ այս աղջիկը խանգարի Սերգեյին բարձրագույն ուսում ստանալ:

Սրբուհու խորհրդատու նամակներին, չգիտեմ ինչու, չէի պատասխանում, ինչ-որ ներքին ձայն կաշկանդել էր ինձ: Դա անհանգստացնում է Ղուկադասյան ամուսիններին: Մի օր էլ ձեռագիր եմ ստանում, որ ինձ շտապ քաղաք են կանչում: Դարձյալ քար լռություն իմ կողմից: Այն, իմ սիրելի, իմ հարգարժան բարեկամներ, որքան մեղավոր եմ համարում ինձ ձեր առաջ:

Եկավ ամառվա արձակուրդը: Մենք Շուշիում ենք, որտեղից պիտի գնանք Թիֆլիս, ներկայանանք Մարոյի ծնողներին: Շուշիում մեր առաջին այցը կատարեցինք Ղուկադասյան ամուսիններին:

–Աորած էր, գտնվեցավ, մեռած էր, կենդանացավ,– ասաց Սրբուհին, և մենք համբուրվեցինք,– ամուսնացել ես, շատ ուրախ եմ:

Համբուրեց Մարոյին: Ոչ մի կշտամբանք, ոչ մի պարսավանք իր բազմաթիվ նամակներին չպատասխանելու համար:

–Նիկիտա,– կանչեց Սրբուհին ամուսնուն,– արի՛, հարսդ եկել է:

Նիկիտան ու Մարոն գրուցում էին այն մասին, թե ինչպես ինքը Տոդ գնալիս խեղճ ծերունու հոգին հանել է: Չիու վրա չի կարողացել նստել, ձիուց իջնելիս այլևս հրաժարվել է ձի նստել: Ապա պատմել է առաջին գիշերվա տպավորությունը, խանութպան-հոգաբարձու Արթուրի՝ պնակով թեյ խմելը, նրա անդրավարտիքի կարկատած լիները..., ապա իր լացն ու վանդակ ընկած թռչունի պես անելանելի վիճակը:

Մինչ Մարոն ու Նիկիտան քաղցր գրուցում էին ու ծիծաղում, Սրբուհին ինձ տարավ Նիկիտայի առանձնասենյակը:

–Դու գիտե՞ս, Սերգեյ ջան, ինչ ես արել,– գրասեղանից հանելով երկու նամակ՝ մեկը բժիշկ Բուդադյանից, որ իր աջակցությունն էր խոստանում, իսկ մյուսը՝ Պետերբուրգի հայոց եկեղեցու երգեցիկ խմբի ղեկավար Հովհաննիսյանից, որը խոստանում էր ինձ ընդունել խմբի մեջ և վճարել ամսական 25 ռուբլի,– Նիկիտան և ես մտածում էինք քեզ օգնել բարձրագույն կրթություն ստանալու համար: Իսկ դու ի՞նչ արիր. «Не хочу учиться, а хочу жениться»: Հիմա էլ երեխայի եք սպասում: Մի՞թե դու պիտի մնաս միջնակարգ կրթությամբ:

–Ի՞նչ արած, սխալս հազիվ թե կարելի լինի ուղղել:

–Ապագա ձեր ծրագիրը:

–Մենք Տոդ գյուղ այլևս չենք վերադառնա:

–Ինչո՞ւ,– զարմացավ Սրբուհին,– ի՞նչ է պատահել, բոլոր ժամանակ լրագրում այդ գյուղի մասին էիր գրում, հիմա ի՞նչ եղավ:

–Պատմությունը երկար է:

–Ոչինչ, պատմիր տեսնեմ:

–Ես «Հորիզոն» թերթի «տեղեկատու բյուրոյի» պարտականությունն էի կատարում գյուղում՝ պարբերաբար տալով գյուղի անցողաբժից, լավ ու վատից, իհարկե, առանց որևէ հոնորարի:

–Արժե՞ր այդ բաշխեցուկ թերթում գրել,– ասաց Սրբուհին:

–Պետք է ասել,– շարունակում եմ ես,– որ վաղուց էի նկատել գյուղի տանուտեր, դպրոցի հոգաբարձության անդամ Առաքել Շաբուրյանի կաշառակերությունը, անբարոյական կյանքը, ծեծն ու հայհոյանքը: Վայն եկել, տարել էր այն սիրունատես կնոջը, որ հակառակեց քոխվա Առաքելի լկտի ու զագիր առաջարկին: Այդպիսիների ամուսինների «գողություն» մեջ մեղադրելը, շաբաթներով բանտարկելը սովորական երևույթ էր: Ես այդ մասին գրեցի «Հորիզոն» թերթում: Փոխանակ որևէ կեղծ անուն ստորագրելու միամտաբար թղթակցությունն ուղարկեցի անստորագիր: Խմբագրությունը զետեղում է այդ թղթակցությունը և տակը դնում իմ ստորագրությունը՝ Ս. Իսրայելյան: Սկսվում է չտեսնված հալածանք իմ դեմ: Գյուղի՝ ինձ հարգող երիտասարդները, քաջածանոթ իրենց տանուտերի նենգ բնավորությանը, խորհուրդ էին տալիս որքան կարելի է շուտ հեռանալ գյուղից: Առաքելն այդ վիրավորանքը հեշտ մարտող պտուղ չէ: Նա կմատնի կառավարությանը կամ որևէ մեկի ձեռքով կվնասի:

Գյուղը թե մի ստրածնիկ, պրիստավ էր գալիս, ասում էի. «Ըհը, եկել է ինձ ձեռքակալելու»:

Մի անգամ մի տարիքավոր ռուս չինովնիկ էր եկել գյուղ: Եկան, թե քեզ կանցիլարից կանչում են: Չինովնիկն ինձ ընդունեց քաղաքավարի, բարևեց և առաջարկեց նստել: Մեր գրույցը երկար տևեց, ո՞վ եմ ես, որտե՞ղ եմ սովորել, ինչո՞ւ եմ ուսուցչություն անում, ինչո՞ւ եմ աշխատանքի վայրը գյուղն ընտրել, վաղո՞ւց եմ այս գյուղում և այլն: Մարոն, երբ

տեսնում է, որ ես ուշանում եմ, ինքն էլ իմ ետևից է գալիս: Մարոն ներս մտավ թե չէ, բացականս էր:

–Василий Александрович, господин Петров, мой дорогой учитель. Какими судьбами?

Հիմա այս «дорогой учитель»-ը ինձ թողած սկսել է Մարոյին հարցուփորձ անել: Բանից պարզվում է, որ այս «дорогой учитель»-ը ժամանակին գրականության դասատու է եղել Թիֆլիսի 2-րդ իգական գիմնազիայում, որտեղ սովորել է Մարոն, իսկ հիմա դարձել է чиновник особых поручений: Երբ հարցը հասավ մեր քաղաքական կուսակցության պատկանելությանը, երկուսս միասին ասացինք, որ մեր քաղաքական գաղափարը, աշխարհայացքն ու դավանանքը ժողովրդական լուսավորությունն է, այլ գաղափար չունենք, որ մեր քաղաքական ալֆան և օմեգան ժողովրդական կրթության ասպարեզն է: Մեր գրույցը ГОСПОДИН ПЕТРОВ-ի հետ վերջացրինք նրանով, որ մենք ճաշի հրավիրեցինք նրան: Գաշի ժամանակ գրուցում էինք քաղաքական խնդիրների շուրջ: Նա մեզ հարցրեց մեր և քոյսվա Շարույանի փոխհարաբերության մասին: Ես բացարձակորեն բացատրեցի նրան, որ նրա՝ կաշառակերության և այլ գազրելի գործերի մասին մինչև մամուլում թղթակցության լույս տեսնելը մեր փոխհարաբերությունը շատ լավ էր: Այն վատացավ այդ թղթակցությունը լույս տեսնելուց հետո: Վերջում նա մեզ խորհուրդ տվեց գգույշ լինել և, եթե հնարավոր է, աշխատանքի վայրը փոխել:

–Հիմա ի՞նչ եք մտածում,– հարցրեց Սրբուհին, երբ ես վերջացրի իմ պատմությունը:

–Ի՞նչ պիտի մտածենք, որ փող չունենք:

Կախ-Ավան

Հոգաբարձությունում լրիվ զոկեր են՝ գաղթած պատմական Գողթան գավառի Ազուլիս գյուղից: Առևտրականներ են, քիչ բացառությամբ արհեստավորների՝ դերձակների, ներկարարների, կոշկակարների, հացթուխների: Տեղացիները պարապում են այգեգործությամբ, շերամապահությամբ և անասնապահությամբ:

Հայերն ունեն սեփական տներ միջնաբերդում, բայց հող ու այգի չունեն: Կախ-Ավանում սննդամթերքը հեքիաթային էժան է, տասը հատ ձուն՝ հինգ կոպեկ, մի տարեկան ոչխարը՝ 1 ռուբլի, հավը՝ 10 կոպեկ և այլն: Խնձորը ոչ ոք քաշով չի առնում: Մի ռուբլի արժի մի ծառը, հինգ ջվալ լցնելուց հետո ասում են. «Էլ չեմ ուզում, մնացածը քեզ»: Էժան էին ընկույզը, տկոտիները: Ընկույզի փուքը 60 կոպեկ է, իսկ տկոտիները՝ 80-90 կոպեկ: Գաղութն ունի փոքրիկ եկեղեցի, իսկ եկեղեցուն կից բակում՝ շենքեր: Այդ շենքերի երկու սենյակում բնակվում է քահանան՝ Մելիքսեդեկ Սլոբյանը: Գորու ուսուցչական սեմինարիան էր ավարտել: Շենքի մնացած սենյակները

հատկացված էին դպրոցին: Լավ մարդ էր Սլոբյանը: Նա քահանա էր միայն եկեղեցական օրենքների ու ծիսակատարությունների ժամանակ, մնացած ժամանակ նա աշխարհական է բառիս լայն իմաստով: Ուտի է՝ Նուխվա գավառի Վարդաշեն գյուղից: Լավ գիտեր հայերեն, տիրապետում էր ռուսաց լեզվին և ուներ շատ գեղեցիկ գիր, ինչպես ուսուցչական բոլոր սեմինարավարները: Հոգեհացի ժամանակ կենացներ էր առաջարկում, ճառեր արտասանում:

Ահա այս քահանան ընդունեց ինձ Կախ-Ավանում, ծանոթացրեց դպրոցական շենքին և հոգաբարձական ժողով հրավիրեց: Միանգամայն այլ միջավայր, ոչ մի համեմատություն Տոդ գյուղի հետ: Այստեղ չկա գյուղացու չարքաշ աշխատանքը, համեմատական չափով բացակայում է աղքատությունը, ընչազրկությունը: Չքավորը, եթե միայն կարելի է չքավոր ասել, արհեստավոր դասակարգն էր, որն ապահովված էր աշխատանքով և եկամտի բավարար աղբյուրով:

Հայերի մեծամասնությունն ապրում էր միջնաբերդում, որի կենտրոնը զարդարում էր ջրի ավազանը: Մեզ հատկացված բնակարանը գտնվում էր միջնաբերդում՝ բաղկացած մի սենյակից և փոքրիկ պարտեզից: Տոդում գյուղացիների խոսակցության նյութն էր վարուցանքը, տարին «փառաշ»¹⁵ է, թե «սավու»¹⁶: Իսկ այստեղ՝ Կախ-Ավանում, խոսակցության նյութը մեկն էր՝ փողը: Փողը ֆետիշացած պաշտում էին, շատ փող ունենալ առանց միջոցների մեջ խտրություն դնելու:

Գպրոցը բաղկացած էր երեք պատրաստական դասարանից և ուներ 60-70 երկսեռ աշակերտներ: Սլոբյան քահանայի հետ մենք սկսեցինք պարապմունքները: Մինչև Մարոյի գալը դասերը բաժանեցինք, կրոնը և ռուսաց լեզուն՝ Սլոբյան քահանային, իսկ մնացած առարկաները՝ ինձ: Երբ Մարոն փոքրիկի հետ ժամանեց, սկսվեցին նորմալ պարապմունքները: Սլոբյանին մնաց միայն կրոնի դասերը: «Ի՞նչ հասարակական աշխատանք կարելի է տանել այստեղ»,– մտածում եմ ես:

1. Կազմել երգեցիկ խումբ և համերգներ տալ:

2. Տեղական ուժերով ներկայացումներ տալ:

3. Շարունակել թղթակցել պարբերական մամուլում, բայց ոչ «Վտակում» («Հորիզոն»-ի հետևորդը, որի պատճառով ստիպված եղա թողնել Տոդը և իրազործելու երազածս ծրագրերը): Այդ տարի երևան էր եկել նոր՝ «Խաթաբալա» երգիծաբանական շաբաթաթերթը: Խմբագիրն Աստվածատուր Երիցյանն էր: Կախ-Ավանից իմ բոլոր թղթակցություններն ուղարկում էի «Մուրհանդակ» թերթին:

Առաջին հերթին ինձ հաջողվեց կազմել երգեցիկ խումբ: Տեղացի երիտասարդ ուժերը ժամանցի տեղ

¹⁵ Փառաշ- վաղ գարուն (ծնք. հեղ.):

¹⁶ Սավա- ուշացած գարուն (ծնք. հեղ.):

չունենալու պատճառով սիրով էին հաճախում խմբական պարապմունքներին, իսկ Մարոյին կարճ ժամանակի ընթացքում հաջողվեց սիրողների թատերախումբ կազմել և դեկավարել: Այդ տարի մեզ հաջողվեց մեկ ներկայացում և երկու համերգ տալ:

Մեզ համար այստեղ մեկ այլ հանգամանք պարզվեց, որ մենք՝ ուսուցիչներս, պետք է հայթայթենք մեր աշխատավարձի միջոցները: Բավական չէր, որ մենք կազմակերպում էինք համերգ ու ներկայացում, պետք է խանութից խանութ շրջեինք տոմսերը ծախելու համար: Իսկ վաճառականները, խանութ չկար, որ մեզ հետ սակարկության մեջ չմտներ:

–Չեմ կարող տոմս վերցնել,– ասում էր մեկը:

–Մեր տանից թատրոն եկող չկա,– առարկում է մյուսը:

Մինչև մեզ հաջողվում էր համոզել վաճառականին գոնե մի տոմս վերցնել, արդեն մերը մեզ էր հասնում: Համոզել, խնդրել, ստորանալ այն էլ ո՞ւմ առաջ... Այս դեռ ոչինչ: Իսկ Քրիստոսի ծննդյան կամ գատկի տոների՞ն: Ահա դպրոցի ավագ ուսուցիչը կամ հոգաբարձության անդամներից որևէ մեկը եկեղեցու ժամերգությունից հետո, սպիտակ շապիկներ հագած, ընկնում էր տնետուն, շնորհավորում տանտիրոջ Քրիստոսի ծնունդը և հանգանակության թուղթը դնում առաջը, որ ստորագրի և սրտից բխած գունարը նշանակի: Ու սկսվում էր դարձյալ նույն սակարկությունը:

–Մեր երեխան դպրոց չի հաճախում,– ասում է մեկը:

–Ես երեխա չունեմ դպրոցում սովորող,– ասում է մյուսը:

–Անցյալ անգամ թատրոնի տոմս եմ վերցրել, բավական չէ,– ասում էր երրորդը՝ կարծելով, որ ողորմություն է արել մեզ՝ թատրոնի տոմս առնելով:

Եվ այսպես անվերջ, ամեն մեկն աշխատում է ոչինչ չտալ կամ էլ քիչ տալ: Իսկ մենք, մի տեղ խնդրելով, մի տեղ զայրանալով, լեզու թափելով, հանաքով, առակներ ասելով, ամեն կերպ աշխատում էինք որքան կարելի է շատ փող դուրս կորզել: Մենք շրջագայության դուրս գալուց առաջ մտածում էինք. «Առաջ ո՞ւմ տուն գնանք, որ չսակարկի և քիչ թե շատ առատաձեռն լինի, չէ՞ որ առաջինը պիտի օրինակ ծառայի մնացածներին»: Եվ հոգեպես տանջված, բեզարած, բարոյապես ճնշված՝ տուն էինք վերադառնում՝ հազար անգամ անիծելով հայ ուսուցչի օրը, նրա տնտեսապես ոչ կայուն վիճակը: Հանգանակության թերթը և ժողոված գումարը հանձնում էինք հոգաբարձության գանձապահին: Լավ է, եթե հոգաբարձության գանձապահ անդամը բարեխիղճ մարդ է, հանգանակած դրամը գործադրում է դպրոցի կարիքը հոգալու և ուսուցիչների աշխատավարձը վճարելու համար, իսկ այդպիսիները բացառություն էին: Դնշող մեծա-

մասնությունը հանգանակած գումարն օգտագործում էր շահ ստանալու համար: Ու սկսվում էր ուսուցչի աշխատավարձի ձգձգումը: «Փող չկա». ահա այն լակոնական պատասխանը, որ ստանում էր ուսուցիչը հոգաբարձու գանձապահից: Մեկ այլ գանձապահ ասում է. «Ա՛ն էս հինգ մանեթը, տա՛ր, յուր գնա, մինչև տեսնենք»: Իսկ այս հինգ մանեթը ուսուցիչը ստանում է որպես ողորմություն: Կա և մեկ այլ տեսակի հոգաբարձու, որը պահանջում է գնումները կատարել իր խանութից: Ժամանակի երգիծաբան Լեռ Կամսարը 1917 թ. օգոստոսի 13-ին «Հորիզոն» թերթի № 72-ում գետեղել էր մի ֆելիետոն՝ «Ճակատագրի խաղ» վերնագրով: Նա գրում է, որ խանութպան Մանուչարը տանջում էր, հոգեմաշ անում այն ուսուցչին, որն իր գնումները չէր անում իր խանութից: Վերջն էլ ճանապարհ էր դնում՝ ազատելով պաշտոնից:

Եվ հայ ուսուցիչը կրում էր իրեն բաժին ընկած խաչը: Փշոտ ու տատասկոտ էր հայ ուսուցչի ճանապարհը, որով նա ընթանում էր Պրոմեթևսի կրակը ձեռքին: Բայց բոլո՞րն էին կարողանում իրենց բաժի ընկած խաչն ուսին բարձրանալ դեպի Գողգոթա: Ոչ, շատ-շատերն էին կոտրված սրտով, մարդկային արժանապատվությունը ոտնահարած, թողնում իրենց սիրած ասպարեզը և բռնում մեկ այլ ուղի, պայքարի մտնում կապիտալիստական աշխարհում մի կտոր հաց վաստակելու համար:

Կախ-Ավանում ուսումնական տարին ավարտում ենք հաջող: Ջեկուցում ենք ուսումնական տարվա աշխատանքների մասին: Հոգաբարձությունը որոշում է. «Իսրայելյան ամուսիններին հրավիրել հետևյալ ուսումնական տարվա համար տարեկան 900 ռուբլի աշխատավարձով»: Ապա հանձնարարվում է հոգաբարձության գանձապահ Կարապետ Ղարիբջանյանին բավարարել մեր աշխատավարձը: Իսկ Ղարիբջանյանը շահագրգռված է, քանի որ նրա երեք երեխաները սովորում էին դպրոցում, որոնցից մեկը՝ 14 տարեկան Արտաշեսը, երկար ժամանակ նստած է առաջին բաժանմունքում և չի կարողանում փոխադրվել երկրորդ բաժանմունք: Մեր արտադասարանական աշխատանքի շնորհիվ մի կերպ փոխադրեցինք: Բայց այստեղ էլ բան դուրս չեկավ: Տասնվեց տարեկան հասակում նա դարձավ կառապան:

Մեր ամառվա արձակուրդը երեք ամիս էր՝ հունիս, հուլիս, օգոստոս: Փոխանակ մտածելու ամառվա ամիսներն օգտագործել մեր հանգստյան համար Մարոյի հետ մտածում ենք, թե ի՞նչ է անհրաժեշտ և ինչպե՞ս անել, որ ուսումնական տարին Կախ-Ավանում դիմավորենք կազմ ու պատրաստ: Չէ՞ որ մեզ հաջողվել էր հոգաբարձությանը համոզել դպրոցը դարձնել երկդասյա՝ ունենալ չորրորդ՝ 1-ին հիմնական դասարան, իսկ հետևյալ տարին և 5-րդ՝ 2-րդ հիմնական դասարան: Այդպիսով դպրոցը կդառնա լրիվ երկդասյա:

Ամառը Թիֆլիսում առաջին հերթին մենք ձեռք բերեցինք ուսումնական պլան՝ առարկաներն ըստ դասարանների և նրանց շաբաթական ժամերը, ապա ձեռք բերեցինք և առարկաների ծրագրերը: Դրանք մեզ համար նորություններ բերեցին, երկրորդ բաժանմունքում ավելացել էր իրազնություն, երրորդ բաժանմունքում՝ հայրենագիտություն, չորրորդ 1-ին հիմնական դասարանում թվաբանությունը սկսվում էր հասարակ կոտորակներով: Այս դասարանում ավելացել են բնագիտություն, աշխարհագրություն: Մեզ հաջողվեց ձեռք բերել դասագրքեր և օժանդակ ձեռնարկներ ուսուցիչների համար: Օժանդակ ձեռնարկներ ընտրելիս գրախանութում ես նկատեցի ֆրանսիացի հայտնի ֆիզիկոս Պոլ Բերիի «Мир божий» ձեռնարկը՝ թարգմանված ռուսերեն: Ձեռնարկը բաղկացած էր երեք պրակից. «Мир божий»՝ 3-րդ պատրաստ, 1-ին հիմնական և 2-րդ հիմնական դասարանների համար: Մեզ շատ դուր եկան այդ գրքերը: Ֆիզիկայից, բնագիտությունից վերցրած նյութերն այնքան մատչելի, պարզ ու հետաքրքիր էին շարադրված, նկարազարդված և զանազան փորձերի նկարներ գետեղված այդ երեք գրքերում, որ մարդ թերթելիս չի կարողանում պոկվել: Երկրորդ գիրքն առաջին գրքից նրանով է տարբերվում, որ այստեղ նույն նյութը շարադրված է ավելի ընդարձակ, նոր նյութեր ավելացրած: Հետագայում այդ գրքերն ինձ շատ օգնեցին բնության ֆիզիկական և բնագիտական երևույթներն աշակերտներին բացատրել պարզ ու հասարակ, շատ հետաքրքիր ձևերով կատարել փորձեր: Երեխաները պատրաստեցին Վոլտայան սյուն, որի միջոցով իրենց լեզվի վրա կամ ջրի մեջ զգացին և տեսան էլեկտրականության հոսանքը: Պոլ Բերիի գրքերի ցուցումների հիման վրա երեխաները պատրաստեցին օդի, ջրի ճնշման սարքավորումներ և այլն: Ինքնաշեն սարքերն ու գործիքները, սրանց կողքին «մոզական լապտերը», մագնիսը, խոշորացույցը, կողմնացույցը, կամերտոնն ու ջերմաչափերը ու սրանց շարքերը պահապանում «ֆիզիկական անկյունի» տեսք են տալիս:

Այդ ուսումնական տարում մեզ մոտ եկավ պետական դպրոցների տեսուչ Նիկոլայ Նիկոլաևիչ Պոգորեյովը: Գավառական միապաղաղ կյանքի համար պետական տեսչի ժամանումը բացառիկ երևույթ էր, որ հիշեցնում էր Գոգոլի «Ռևիզոր»-ը այն տարբերությամբ, որ մեր «ռևիզորի» ազգանունը Պոգորեյով էր: Ամբողջ գյուղի, հայկական գաղութի խոսակցության նյութը տեսուչն էր: Գյուղում, ինչպես և հայկական գաղութում հյուրանոց չլիներ, պատճառով Պոգորեյովն իջևանել էր պետական դպրոցում և ցանկություն էր հայտնել այցելել նաև հայկական դպրոց: Այս մասին իմացել էր և Սլոդյան քահանան: Նա ինչ-որ արտակարգ և ցնցող նորություն հայտնող մարդու հոգեբանությամբ հայտնեց.

–Տեսուչ Պոգորեյովն է եկել: Գիտե՞ք, նա ցանկություն է հայտնել այցելել և մեր դպրոց: Հարկավոր է նրան դիմավորել բակի մուտքի մոտ:

Ես, ի զարմանս Սլոդյան քահանայի, շատ հանգիստ ընդունեցի նրա «արտակարգ» նորությունը և ասացի.

–Նա, ով Կախբաշից (այդպես էր անվանվում Կախ-Ավանի այն մասը, որտեղ բնակվում էին էնգիլոյները), կարող է գալ մինչև մեր դպրոցի մուտքը, նա կարող է բակի մուտքից գալ նաև մեր դպրոց:

Ապա ես նրան պատմեցի մի անեկդոտ, որ լսել էի Տոլ գյուղի պետական դպրոցի ուսուցիչներից. «Գյուղ է գալիս ռուս ցարը: Նա ցանկություն է հայտնում այցելել դպրոց: Այդ մասին հայտնում են դպրոցում աշխատող միակ ուսուցիչն: Նա հաղորդումն ընդունում է ի գիտություն և շարունակում պարապմունքը: Թագավորը գալիս է դպրոց և սպասում այնքան, մինչև զանգը հնչի, և դասն ավարտվի: Ուսուցիչը երբ ներկայանում է թագավորին, վերջինս խիստ տոնով հարցնում է.

–Ինչո՞ւ ինձ չդիմավորեցիք:

–Ձերդ մեծություն,– ասում է ուսուցիչը,– եթե իմ աշակերտներն իմանան, որ ինձանից ավելի մեծ անձնավորություն գոյություն ունի, ինձ չեն լսի:

Թագավորը հավանում է ուսուցչի պատճառաբանությունը և պարզևատրում է նրան»:

Ճիշտ է, սա անեկդոտ է, բայց իր մեջ խոր իմաստ է պարունակում: Այս անեկդոտով հմուտ ու փորձված մանկավարժն ուզել է ասել, որ դասարանի միակ տերն ու տնօրենը այն ուսուցիչն է, որն այդ ժամին դասավանդում է դասարանում: Ոչ ոք՝ ոչ ցար, ոչ աստված, իրավունք չունի միջամտելու:

Տեսուչ Պոգորեյովը, իրոք, եկավ մեր դպրոց, որին ուղեկցում էր պետական դպրոցի սմտորիտել պարոն Ջազունովը: Նա ծանոթացավ մեզ հետ, դպրոցին: Մենք միասին մտանք դասարան դաս լսելու: Նա ներողություն խնդրեց Մարոյից և հարցրեց, թե ի՞նչ դասագրքով է անցնում, ո՞ր դասարանն է, ո՞րն է դասի նյութը: Այդ բոլորն իմանալուց հետո նա չնստեց դաս լսելու, այլ սկսեց դաս հարցնել, հարցեր տալ անցած դասերից: Ապա նա գրատախտակի մոտ կանչեց աշակերտներին, կատարել տվեց վարժություններ, հարցեր տվեց քերականությունից: Այդպես էլ վարվեց և մյուս դասարաններում: Նշումներ կատարեց իր ծոցատետրում, խոսեց մեր դպրոցում ռուսաց լեզվի դրվածքի մասին, մի երկու դիտողություն արեց, ասաց, թե ինչի վրա ավելի ուշադրություն դարձնի Մարոն և շնորհակալություն հայտնեց: Պոգորեյովն իմ սեղանի վրա նկատեց «Мир божий» գիրքը: Ինչպես երևում է, նա ծանոթ էր այդ գրքին, խորհուրդ տվեց Ջազունովին անպատճառ ձեռք բերել: Մենք այլևս չհանդիպեցինք այդ հասակն առած բարի մարդուն մինչև սովետական կարգերի հաստատումը Վրաստանում, որտեղ միասին լուսժողովրդատուն տեսչի պաշտոն էինք վարում:

Կախ-Ավանում կյանքն աշխուժացել էր շնորհիվ երգեցիկ խմբի և Մարոյի ստեղծած թատերախմբի: Մարոն իր պարզ անմիջականությամբ կարճ ժամանակում կարողացել էր գրավել գաղութի կանանց սերն ու հարգանքը: Չէր լինում կանանց մի հրավերք, որ Մարոն պատվավոր հյուր չլիներ: Կախ-Ավանում միակ հասարակական հիմնարկը դպրոցն էր: Տողի հասարակական ամբողջ կյանքը դպրոցի շուրջն էր պտտվում: Այդ պատճառով ոչ միայն ծնողների տեսադաշտում էր, այլև ամբողջ գաղութի: Իսկ դպրոցի շուրջ շատ բան կար խոսելու: Դասերից հետո դպրոցի դռները չէին փակվում: Մեկ երգեցիկ խմբի փորձն է, մեկ տիկին Մարոյի դասախոսությունը մոր դերը մանկական դաստիարակման գործում «Տվե՛ք ինձ մայր, և ես ձեզ կտամ գիտակից քաղաքացիներ» բնաբանով:

Տիկին Մարոն ներկայացման համար փորձի է հրավիրել, իսկ դերակատարների համար համապատասխան հանդերձանք գտնե՞լը: Աղամիրզանք ունեն, չեն տալիս, Տոմր Տոմրլունի ունեն, ասում են, վայ թե փչացնեք... Եվ այդ բոլորի մեջ համարյա ամբողջ գաղութն է մասնակցում: Իսկ Վարդանանց տոնի հանդեսին «Նորահրաշ» շարականը երգելով եկեղեցուց մեզ դպրոց էր ուղեկցում ամբողջ գաղութը:

Չտեսնված աշխուժություն էր տիրում «Քուրմախի օրը» (Կախ-Ավանի մոտ կա մի ուխտատեղի՝ «Քուրմուխ» անունով): Այդ օրը բազմաթիվ ուխտավորներ են գալիս թե՛ Նուխի քաղաքից, որ գտնվում է Կախ-Ավանից 35-40 կմ դեպի ձախ, թե՛ Ջաքաթալայից, որ նույնքան հեռավորության վրա է գտնվում դեպի աջ: Ուխտավորներն առանց բացառության գիշերը մնում են Կախ-Ավանի իրենց ծանոթների և բարեկամների մոտ կամ հենց ուխտատեղիում: Այս հանգամանքը մեզ հայտնի էր, ու մենք եռանդով պատրաստվում էինք օգտագործել առիթը և ներկայացում տալ: Դրա հաջողությամբ շահագրգռված է ամբողջ գաղութը: Նամուսի խնդիր է, դպրոցն իր ծիծաղելի ներկայացումով հանկարծ ծաղրի առարկա չդառնա՞նուխտեցիների ու զաքաթալացիների մոտ: Չէ՞ որ Նուխվա հայկական դպրոցի ավագ ուսուցիչն էր անվանի գրող Վրթանես Փափազյանը, իսկ Ջաքաթալայի դպրոցի ավագ ուսուցիչը՝ Արտաշես Վանցյանը: Ներկայացման փորձերին ներկա են հոգաբարձության գիտակից անդամները՝ Մանաս Մուրադյանը, Ստեփան Մինասյանը, գաղութի ինտելիգենցիայից Օհանջանյան Հայրիկը, Կարապետ Հովնաթանյանը և ուրիշները, որոնք հաճախ են լինում Թիֆլիսում և այլ քաղաքներում:

Ներկայացման օրը դահլիճում ասեղ գցելու տեղ չկա: Տոմսերը սպառված են լրիվ: Առաջին տեղերը հատկացված են Նուխուց և Ջաքաթալայից ժամանած հյուրերին: Ժողովուրդը սրտատրոփ սպասում է վարագույրի բացմանը: Հը՞, չլինի Եղիշը (տեղի

երիտասարդներից) չկարողանա կատարել դերը, և մենք օտարների առաջ խայտառակվենք: Բայց չէ, ամեն ինչ հաջող է, ամեն ինչ իր տեղը. ծափահարություններ, ծափահարություններ...

Ուսումնական տարին վերջանում է: Հոգաբարձությունը որոշում է հրավիրել մեզ պաշտոնավարելու և երրորդ տարին, իսկ մեր աշխատավարձը դարձել է տարեկան 1000 ռուբլի:

Հետևյալ ուսումնական տարին Կախ-Ավանի ծխական դպրոցը դառնում է լրիվ երկդասյա: Այդ տարին մենք պետք է տանք առաջին շրջանավարտները: Մեր ուշադրության կենտրոնն ավարտական դասարանն է: Պետք է տալ այնքան գիտելիքներ, որ նրանք կարողանան հաջողությամբ քննություն տալ և ընդունվել միջնակարգ դպրոցի երրորդ հիմնական դասարան:

Այդ ուսումնական տարվա վերջին մեր դպրոց այցելեց թեմական տեսուչ Ստեփան Տեր-Ավետիքյանը: Նա մեր գյուղագիրներից է, եղել է Պետական երկրորդ դումայի դեպուտատ և հայտնի էր իր արտասանած անհաջող ճառով: «Տավրիկյան պալատի առաստաղի թափվելը այդ հայ ժողովրդի արցունքների հետևանք է», – ասել է դաշնակցության դեպուտատը և ծիծաղ առաջ բերել դահլիճում: Թեմական տեսուչը մեր փոքրիկ դպրոցում մնաց տասը օր: Կախ-Ավանում հյուրանոց չլինելու պատճառով թեմական տեսուչն իջևանել էր հոգաբարձության նախագահ Մանաս Մուրադյանի տանը: Մուրադյանը գաղութի վաճառականներից էր և պարապում էր գինեգործությամբ: Թեմական տեսուչը շատ մանրազնին ստուգում կատարեց մեր դպրոցում: Աշակերտների գիտելիքները ստուգելու համար նա դասեր չսեց այսօրվա մեր դպրոցական տեսուչների պես: Դասարանում ուսուցչին նստեցնում, ինքն էր դաս հարցնում, ստուգում աշակերտի ընթերցանության տեխնիկան, կարդացածը հասկանալու ունակությունները, աշակերտի տրամաբանական ու հետևողական դատողությունները թվաբանական խնդիրները լուծելիս, ի՞նչ գիտելիքներ ունեն աշակերտները ռուսաց լեզվից և այլն, և այլն: Աշակերտների գիտելիքները մայրենի լեզվից ստուգելիս նա, իմ կարծիքով, մանկավարժական սխալ թույլ տվեց: Գրատախտակի վրա ինքը սխալներով նախադասություն գրեց և պատվիրեց աշակերտներին գտնել այդ սխալները: Ես առարկում էի, որ էքսպերիմենտալ մանկավարժությունը չի ընդունում ուղղագրության ուսուցումը կատարել սխալների վրա, քանի որ սխալը աշակերտն ավելի շուտ է ընկալում և ուժեղ է տպավորվում նրա ուղեղում: Նա համաձայն չէր ինձ հետ: Դասարանում կատարած թվադրության ուղղումը, ասում էր նա, կարելի է հանձնարարել աշակերտներին՝ փոխանակելով տետրերը: Թվադրության այդպիսի ուղղումը ես սխալ ու վնասակար էի գտնում, քանի որ շատ անգամ աշակերտի ուղիղ գրածն ընկերը կարող է համարել

սխալ կամ այլ տեսակի շատ թյուրիմացություններ առաջ բերել: Գրավորների ուղղման այդ ձևը Տող գյուղի պետական դպրոցի ուսուցիչներն էլ էին կիրառում: Այն ժամանակ անփորձ էի, անձանոթ դասավանդման մեթոդներին: Փորձված ուսուցիչների դասավանդման ամեն մի ձև, ամեն մի եղանակ ինձ համար օրինակ էր ծառայում, և անվերապահ ընդունում էի: Այժմ բոլորովին ուրիշ է, հինգ տարվա փորձառությունից հետո ունեմ իմ տեսակետը: Չեք կարող երևակայել, թե որքան հաճելի է լինում, երբ քո տեսակետը համընկնում է մանկավարժական կամ մեթոդական որևէ աշխատության հեղինակի կարծիքին, որ այդ գրքի հեղինակը նույնն է ասում, ինչպես դու ես մտածում ու կիրառում դասավանդման ընթացքում:

Թեմական տեսուչը Կախ-Ավանից մեկնելուց առաջ հրավիրեց ծնողական ընդհանուր ժողով և զեկուցեց իր ստուգումների արդյունքները: Ելույթ ունեցողները, նրանք թվում և հոգաբարձության անդամները հայտնում էին իրենց գոհունակությունը մեր թափած եռանդի ու աշխատանքի համար:

–Մեր երեխաների գիտելիքների և առաջադիմության չափանիշ կարող է ծառայել և այն, որ նրանցից շատերի նյութերը տպագրվում են մանկական «Հասկեր», «Աղբյուր» ամսագրերում,– իր ելույթը եզրափակեց հոգաբարձության նախագահ Մ. Մուրադյանը:

Մի քանի օր հետո լույս տեսավ իմ հոդվածը «Սուրհանդակ» թերթում՝ «Թեմական տեսուչը Կախ-Ավանում» խորագրով:

Ավարտական դասարանի աշակերտների հետ շարունակ խոսում էինք այն մասին, որ չպետք է սահմանափակվել ծխական դպրոցում ձեռք բերած գիտելիքներով, այլ պետք է համոզել ծնողներին թույլ տալ ուսումը շարունակելու միջնակարգ դպրոցում: Այդ աշակերտների ընտանիքներում ամենօրյա խոսակցության նյութն ուսումը շարունակելու մասին էր լինում: Ծնողները դեմ էին, նրանք չէին ուզում այդ մասին խոսք անգամ լսել: Սրա հետևանքը եղավ այն, որ ավարտական դասարանցիները հավաքական ուժով մի պիես դրեցին: Պիեսի սյուժեն աղջկան քաղաք ուղարկելու շուրջն էր, որի մասին «Սուրհանդակ» թերթում լույս տեսավ իմ հոդվածը՝ «Փոքրիկ դրամատուրգները» խորագրով (տե՛ս «Սուրհանդակ», 1910, 30 ապրիլի, № 98):

Նիժ գյուղ

Մայիսի վերջն է, ուսումնական տարվա վերջին օրերն են: Զբաղված ենք ուսումնական տարվա եզրափակման աշխատանքներով՝ քննություններ, ծնողական ժողովներ: Այս եռուգեռի ժամանակ էր, որ միանգամայն անսպասելի մի գրություն ստացանք Ղարաբաղի հոգևոր կառավարությունից, որով առաջարկվում էր ինձ անհապաղ մեկնել

Նուխվա գավառ Նիժ գյուղ և ընդունել տեղի Սր. Մեսրոպյան երկդասյա դպրոցը: Գրությունը կցված էր նաև հրամանը: Ես գրությունը ծալում և դնում եմ գրպանս. ինչո՞ւ գնալ, երբ մեզ համար Կախ-Ավանն էլ վատ չէ: Մենք այստեղ մեզ շատ լավ ենք զգում, էլ ի՞նչ գործ ունենք օտարախոս դպրոցում: Այս մասին կարիք էլ չկա հայտնելու հոգաբարձությանը: Բայց հետևյալ օրը ստացա թեմական տեսուչ Ստ. Տեր-Ավետիքյանից մի նամակ, որտեղ նա գրում է. «Նիժի դպրոցը մեծ է, աշակերտության թիվը 200-ից ավելի է, ուսուցչական կազմը՝ բազմանդամ: Դպրոցը քայքայվում է ուսուցիչների անհամերաշխության հետևանքով, որ անհրաժեշտ է դպրոցը փրկել քայքայումից»: Վերջում էլ ավելացնում է, որ ինքը խոսել է հոգաբարձության հետ, իմ աշխատավարձը կլինի տարեկան 700, տիկին Մարոյինը՝ 500 ռուբլի. «Շտապեցե՛ք գնալ Նիժ և ձեռնամուխ եղեք ուսուցչական կազմին հրավիրելու գործին»: Այս նամակը ստանալուց հետո ստիպված եղա հոգևոր կառավարության հրամանը և Ստեփան Տեր-Ավանեսյանի նամակը ցույց տալ հոգաբարձությանը: Նույն օրը հրավիրվեց հոգաբարձական ժողով և որոշվեց՝ խնդրել հոգևոր իշխանությանը Իսրայելյան ամուսիններին թողնել Կախ-Ավանում: Որոշումն ուղարկելուց մի քանի օր հետո ես ստացա մի հեռագիր. «Немедленно выехать Ниж и принять школу. Еписк. Ашот, Тер-Аветисян»: Սրանից հետո էլ մի բացիկ ենք ստանում տեսուչ Ստեփան Տեր-Ավետիքյանից, որ խորհուրդ է տալիս գնալ Նիժ և սպառնալիք կարդում:

Ուսումնական տարին եզրափակում են Կախ-Ավանում: Տխուր ենք մենք՝ ամուսիններս, տխուր են հոգաբարձությունը, աշակերտությունը: Ո՛չ մենք ենք ուզում տեղափոխվել, ո՛չ ժողովուրդն է ուզում մեզ թողնել:

Օտարախոս դպրոց... անընդհատ այդ մասին եմ մտածում: Գիշերն անգամ օտարախոս դպրոց եմ տեսնում, որտեղ ո՛չ ես եմ հասկանում երեխաներին, ո՛չ երեխաներն են ինձ հասկանում: Կատարյալ «պանտոմիմ» ենք խաղում:

Նիժ գյուղի Սր. Մեսրոպյան երկդասյա դպրոցում

Մեզ ճանապարհելու համար մեծ բազմություն է հավաքվել: Այստեղ են մեր սիրելի աշակերտները, նրանք ծնողները, հոգաբարձության բոլոր անդամները, երգեցիկ և սիրողների խմբի անդամները:

–Հակառակ մեր կամքին ենք թողնում ձեզ, մեր սիրելի՛ աշակերտներ, հարգելի՛ ծնողներ և հոգաբարձության անդամներ,– ասում եմ ես հրաժեշտի ժամին,– խնդրում եմ, որ վատ չմտածեք մեր մասին: Բարձր աշխատավարձը չէ, որ մեզ բաժանում է ձեզանից:

Մենք Նիժում ենք:

Նիժ գյուղը բաղկացած է 1200 ծխից: Գյուղի տրամագիծը 7 կմ է, իսկ շրջագիծը՝ 35: Տները խումբ-խումբ են և իրարից հեռու: Բնակիչներն ուտիացիներ են, բայց իրենց համարում են հայ լուսավորչական: Եկեղեցիներում քահանաները ժամերգությունը կատարում են հայերեն: Խիստ կրոնապաշտ են և սրբությամբ են կատարում եկեղեցական օրենքները, կրում են հայկական անուններ՝ Հայկ, Արամ, Սարգիս, Աշխեն, Սիրանուշ և այլն: Գյուղացիները պարապում են այգեգործությամբ՝ տկողենի (պնդուկ), խաղողի շերամապահությամբ, հողագործությամբ՝ բրինձ, հացահատիկ: Կլիման խոնավ է, մի մետր փոքելուց ջուր է դուրս գալիս, որից և օգտվում են բնակիչները: Նիժը նահապետական գյուղ է, ուրույն, խիստ պահպանողական սովորություններով: Կինը ոչ մի տեղ այնքան իրավագուրկ չէ, որքան Նիժում: Անուսիններն ահա հյուր են գնում իրենց երկու երեխաների հետ: Առաջից գնում է տղամարդը՝ ձեռքերը թափ տալով, նրա ետևից գնում է կինը՝ մի երեխան գրկած, մյուսի ձեռքից բռնած, խուրջինն ուսին: Անպատվաբեր է, երբ տղամարդը կնոջ հետ կողք կողքի գնա: Մրա հետ միասին միժեցիները, ինչպես և Անդրկովկասի բոլոր ժողովուրդները, հյուրասեր են:

Ուսումնական տարին սկսված է: Մեր ընտանիքը բաղկացած է չորս հոգուց՝ ես, Մարոն, մեր երկու փոքրիկները: Տղամա՝ Ռաֆիկը՝ երեք տարեկան է, աղջիկս՝ մեկ տարեկան, որ դեռ անուն չունի:

Ուսուցիչները վեց հոգի էին՝ մենք՝ անուսիններս, Հովհաննես Գյուլխանդարյանը, որ ավարտել է Գևորգյան ձեմարանի դասարանական բաժինը, նրա քույրը՝ Հեղինե Գյուլխանդարյանը, որն ունի հայոց լեզու դասավանդելու ցենզ, Ներսիսյան դպրոցի երկու սաները՝ Ավետիք Շաթիրյանը և Խաչիկ Դուլյանը:

Ուսուցիչները հրավիրված չէին որոշակի այս կամ այն առարկան ավանդելու, ինչպես այդ ընդունված էր միջնակարգ դպրոցներում: Այս հանգամանքը դժվարացնում էր դասաբաշխման գործը: Առաջին մանկավարժական ժողովում իմ առաջարկությամբ «ով ինչ առարկա է սիրում և որ դասարանում կարող է լավ դասավանդել» սկզբունքով կատարվեց դասաբաշխումը: Առաջին անգամ կատարեցի մանկավարժական «սխալ»: Այս սկզբունքով կատարված դասաբաշխման հետևանքով առարկաները մասնատվեցին: Այսպես, օրինակ, հայոց լեզուն մի դասարանում մի ուսուցիչ էր դասավանդում, մյուսում՝ մեկ այլ ուսուցիչ: Մրա հետևանքը լինում էր այն, որ առարկան դիմազրկվում էր, առարկայի դրվածքի պատասխանատվությունը՝ վերանում:

Դպրոցի պարապմունքներն իրենց հունի մեջ էին մտել: Մեզանից յուրաքանչյուրն աշխատում է որքան կարելի է շատ գիտելիքներ տալ աշակերտներին: Մեր աշխատանքից մենք դժգոհ ենք: Դժգոհ

ենք, որովհետև համեմատած մեր գործադրած աշխատանքին ու ջանքերին, ցանկալի արդյունքի չենք հասնում: «Որտեղ է թաղված շան գլուխը, մտածում ենք, ի՞նչ միջոցներով կարող ենք դպրոցը դարձնել լիարժեք»: Կուլեկաիվը լցված է այս ցանկությամբ: Դասամիջոցների մեր խոսակցության նյութն ամբողջ ժամանակ պատվում է այս հարցի շուրջ: Դասարանից դուրս եկողը պատմում է իր տպավորությունները, դասի ընթացքում տեղի ունեցած օտարոտի «կուրյուզների» մասին: Մանկավարժական խորհրդի օրակարգի հարցերից են անպայման «աշակերտության հետամնացությունն ու նրա պատճառները»:

Հրավիրվում է մանկավարժական արտակարգ ժողով, որն մասնակցում են նաև հոգաբարձության անդամներ: Դրանց թվում էր և ճոտանյան քահանան, որն ավարտել է Շուշիի թեմական դպրոցը: Միայն մեկ հարց կա՝ «Աշակերտության հետամնացությունը և նրա պատճառները»: Հարցի մասին զեկուցում են ես՝ իբր դպրոցի ավագ ուսուցիչ:

Ձեկուցման առաջին մասում խոսում են օտարախոս դպրոցում դասավանդվող հայոց լեզվի մասին, ապա այն մեթոդների մասին, որոնցով կարելի կլինի ավանդվելիք նյութը մատչելի դարձնել օտարախոս մանուկներին:

–Օտարախոս դպրոցներում դասավանդումն արդյունավետ, արգասավոր կլինի այն ժամանակ, –ասում են ես,– երբ ուսուցիչը կստուգի, թե իր ասածը որքանով է ընկալել օտարախոս մանուկը: Չպետք է ծրագրի կատարողականի ետևից ընկնել: Լավ է քիչ, բայց հաստատուն ու լավ: Ահա պատճառներից ամենագլխավորը:

Մեր աշակերտների հետամնացության պատճառն աշակերտի բացակայությունն է: Բանն այն է, որ նախկինում ամեն երեքշաբթի երկու դասից հետո ամբողջ դպրոցն արձակվել է՝ հնարավորություն տալով, որ աշակերտներն օգնեն իրենց ծնողներին Նիժի տոնավաճառում վաճառելու այգուց ստացած տկողինը կամ դաշտից ստացած բրինձը: Իսկ տոնավաճառը տեղի է ունենում երեքշաբթի օրերին: Անհարգելի պատճառով ուշացող աշակերտը մտածում է. «Եթե հորս օգնելու համար ամեն երեքշաբթի կարելի է չհաճախել դպրոց, ապա ինչո՞ւ չի կարելի հորս օգնելու համար չորեքշաբթի օրը չգնալ Կուտկաշենի տոնավաճառ, հինգշաբթի օրը՝ Բումի տոնավաճառ և այսպես շաբաթվա բոլոր օրերը»:

Բեղմնավոր դասավանդմանը խանգարում էր նաև ոչ համապատասխան տարիք ունեցողների ներկայությունը դասարանում: Առաջին դասարանում կողք կողքի նստած են 8-12 տարեկան երեխաները, մեկ այլ դասարանում՝ 10-14 տարեկանները: Այսպիսի տարիքային տարբերությունը պակաս չէր խանգարում նորմալ դասավանդմանը:

Ահա այն հիմնական պատճառները, որոնց առկայությունը դպրոցում հանդուրժել անկարելի էր:

Մանկավարժական խորհուրդը դպրոցի առաջադիմությանն արգելք հանդիսացող այս պատճառները վերացնելու համար միջոցներ մշակեց, հրավիրեց ծնողական ժողով, անհատական գրույցներ ունեցավ այն ծնողների հետ, որոնց երեխաներն առավել շատ են բացակայում և այլն: Բացի ծնողական ժողովից՝ ես ելույթներ էի ունենում գյուղի եկեղեցիներում, հորդոր կարգում, ապացուցում անհարգելի պատճառով ուշանալու կործանարար հետևանքները, իսկ փաստեր և ապացույցներ շատ կային: Կարճ ժամանակից հետո մենք բավական հաջողության հասանք: Նախ մեզ հաջողվեց երեքշաբթի օրերը պարապմունքները հասցնել մինչև վերջին ժամը և ապա իսպառ վերացնել անհարգելի բացակայությունները:

Այնուհետև մենք սկսեցինք զտել դասարանները, ազատվել «բակաստ» կազմող աշակերտներից: Այս միջոցառումների հետևանքով դասարանները դարձան միատարր, պարապմունքները՝ նորմալ և արգասավոր:

Մեր կողեկտիվը շատ համերաշխ էր, բոլորն էլ տոգորված էին մի ցանկությամբ՝ բեղմնավորել մեր աշխատանքը, դարձնել այն արդյունավետ: Իմ բնակարանը դպրոցական շենքում էր գտնվում: Ամբողջ կողեկտիվը շատ հաճախ էր հավաքվում ինձ մոտ՝ մի բաժակ թեյի: Այս հավաքությունների ընթացքում մենք մտքեր էինք փոխանակում: Ազատ խոսակցության ժամանակ մեզնից ամեն մեկը պատմում էր իր փորձը, թե ինչպիսի դժվարությունների է հանդիպում կամ ինչպես է հաղթահարում այդ դժվարությունները: Ապա պատմում էին այն «կուրյուվները», որ տեղի էին ունենում դասի ընթացքում:

Մի օր ինձ մոտ եկավ մի ծերունի՝ ձեռքին մի մեծ մահակ¹⁷:

–Քալա¹⁸ վարժապետ,– դիմեց նա ինձ,– ո՞ր է ձեր երգի ուսուցիչը:

–Դասի է, հայրիկ,– ասում եմ ես:

–Ես նրան դաս ցույց կտամ,– ասում է ծերունին զայրացած,– այ, տեսնո՞ւմ ես այս մահակը, նրա վրա պիտի փշրեն:

–Ինչո՞ւ, հայրիկ, նա լավ տղա է, աշակերտներին շատ է սիրում:

–Եթե լավ տղա է, հապա ինչո՞ւ է քյորփա երեխաներին վատ-վատ բաներ սովորեցնում:

–Ի՞նչ բաներ,– զարմացած հարցնում եմ ես:

Եվ ի՞նչ է պարզվում, որ երգեցողության ուսուցիչը երեխաներին սովորեցրել է «Մեր ձագուկը փոսում նստած ննջում է» երգը, որի մեջ կա կուտ բառը: Երեխան տանը երգել է, իսկ երգը վերջանում

է «Կուտն ուտում է, կուտն ուտում է, կուտն ուտում է» բառերով: Իսկ այդ չարաբաստիկ կուտ բառը ուտիերեն նշանակում է կնոջ սեռական անդամը: Ահա թե ինչու էր զայրացել ծերունին: Երբ իմացավ, որ կուտ հայերեն նշանակում է գարու, ցորենի հատիկ, որ հավերին են տալիս ամեն օր, ծիծաղեց և ասաց, որ խնդրում է այսուհետև այդ երգը այլևս չսովորեցնի:

Հայոց լեզվի ուսուցչուհի Հեղինե Գյուլխանդանյանը պատմում է, որ երեխաները դասը կարդալու ժամանակ հենց որ հասնում են շան հաչոց բառերին, կամ բաց են թողնում, կամ հաչոց բառը կարդում են առանց շան բառի: Վերջում պարզվում է, որ ուտիերեն մարդու հետույքին ասում են «շան»:

Դասավանդման որակը բարձրացնելու համար շատ հաճախ դաս էինք լսում, «բաց դասեր» կազմակերպում և քննարկում մանկավարժական ժողովներից դուրս: Մեզանից յուրաքանչյուրն աշխատում էր խղճի թելադրանքով: Ավագ ուսուցիչը ավագ ընկեր է, որ կարող է ընկերոջն օգնել իր խորհուրդներով, անձնական օրինակով, կրտսեր ընկերոջ սխալն ուղղել, մանկավարժական խորհրդի ժողովները դարձնել օգտավետ: Համերգների, ներկայացումների, տոնածառի հանդեսի համատեղ կազմակերպումը մեզ մի ընտանիք էր դարձրել: Չեմ մոռանում մի ներկայացում, որտեղ համեստության հոգու տեր Մարոն կատարում էր տիկին Կատաղյանի դերը: Նա հրաշալի էր կատարում այդ դերը, մանավանդ, երբ հովանոցը ձեռքին մտնում է բեմ և հատակին զարկելով՝ կատաղած բղավում. «Ո՞ր է իմ ամուսինը, տվե՛ք իմ ամուսնուն»:

Հանդիսականները հարցնելով իմացել են, որ այդ Կատաղյանն իմ կինն է: Նրանցից ոմանք ասել են. «Խե՛ղճ մեր քալա վարժապետ, ո՞նց է դիմանում այդ լաչառի ձեռքին»:

Նիժի դպրոցում առաջին անգամ զգացի, որ մեծ դպրոց ղեկավարելու համար ինձնից ավելի գիտելիքներ և հմտություն են պահանջվում: Չէ՛, պետք է աշխատել և հարստացնել մանկավարժական իմ գիտելիքները: Առաջին հերթին Նիժի դպրոցի գրադարանը քրքրեցի, որտեղ հնուց մնացած գրքեր կային: Անգլիացի ինչ-որ մանկավարժ Կոմբի հանդիպեցի այնտեղ: Կոմբն ասում էր, որ երեխայի դաստիարակությունը միևնույն ժամանակ հասակավորի դաստիարակությունն է: Երեխան լավ ու վատ հատկություններ ձեռք է բերում շրջապատից: Այն, ինչ որ չես ուզում, որ երեխան անի, մի՛ արա և դու: Անգլիացի երեխան անգլերեն է խոսում, որովհետև նա իր շրջապատում այդ լեզուն է լսում: Երեխան վայելուչ է, քաղաքավարի, որովհետև նրա շրջապատը վայելուչ է և քաղաքավարի: Երեխան կոպիտ է, սուտ խոսել գիտի, որովհետև նրա շրջապատում այդպիսին է և այլն: Գրադարանի մյուս գրքերը հետաքրքիր ոչինչ չսովորեցին ինձ: Բաժանորդագրվեցի “Свободное воспитание” և

17 Նա ինձ հետ խոսում էր աղբրեջաներեն: Ես այդ լեզուն լավ գիտեմ, ծնողական ժողովներում, եկեղեցիներում խոսում էի այդ լեզվով: Նիժ գյուղն ամբողջապես շրջապատված է աղբրեջանական գյուղերով, այդ պատճառով Նիժի հասակավորները լավ էին տիրապետում աղբրեջաներենին (ծնք. հեղ.):

18 Քալա-ուտիերեն նշանակում է մեծ, ավագ (ծնք. հեղ.):

Թիֆլիսում հրատարակվող «Նոր դպրոց» ամսագրերին: Բացի սրանցից՝ բերել սովեցի Վիշնևսկու թվաբանության ձեռնարկը, բաժանորդագրվեցի Բրեմի ութհատրանոց (բնագիտական) հրատարակությանը: Մարոյի համար բերել սովի Օդեսայում լույս տեսած Давис-ի «Лексические уроки» և Շուլցի, Լևիցկու ձեռնարկները:

Այդ օրերին էր, որ հոգևոր կառավարությունից դպրոցը ստացավ «Ծրագիր ծխական դպրոցների համար» և հրահանգ այն անշեղ կիրառելու մասին: Ծրագրում ոչ մի խոսք չէր ասված օտարախոս դպրոցների մասին: Մրանից պետք է եզրակացնել, որ այս միևնույն ծրագիրը պարտադիր է և օտարախոս դպրոցների համար: Թերթում եմ ծրագիրը և ծանոթանում նրա բովանդակությանը: Չեղավ, այս ծրագիրը միանգամայն անընդունելի է օտարախոս դպրոցների համար, որտեղ դասավանդումը տեղի է ունենում հայոց լեզվով: Անդրկովկասում քիչ չեն: Ի՞նչ անել, ընդունել ծրագիրը և անշեղորեն առաջնորդվել նրանով, ինչպես հրահանգում է ասված, կնշանակի ինքնախաբեությանը պարապել: Խնդիրը պետք է արժարժել մամուլում, որ հրահանգը արսուրդ է, անհեթեթություն օտարախոս դպրոցների համար: Եվ մեկը մյուսի ետևից լույս են տեսնում իմ հոդվածները «Սուրհանդակ» թերթում: Այդ ծավալուն հոդվածներում վերլուծելով «Նոր ծրագիրը»՝ ապացուցում եմ նրա անընդունելի լինելն օտարախոս դպրոցների համար¹⁹: Մրա հետ միասին ես այդ հոդվածներում առաջարկում եմ իմ մշակված ծրագիրն օտարախոս դպրոցների համար՝ սկսած Վարժոց կոչվող բաժանմունքից մինչև հիմնգերոդ բաժանմունք:

Իմ մշակված ծրագրի դեմ մամուլում առարկող չեղավ, եթե չհաշվենք հայ հոշակավոր մանկավարժ Սեդրակ Մանդինյանին, որը, իմ կազմած ծրագրի դեմ ոչինչ չունենալով հանդերձ, ժխտում էր իմ առաջարկած բնական մեթոդի կիրառումն ընդհանրապես, հայկական դպրոցներում մասնավորապես առաջարկում էր կիրառել թարգմանական մեթոդը: Սեդրակ Մանդինյանը գտնում էր, որ բնական մեթոդը հետապնդում է մի նպատակ՝ պատրաստել չինովնիկներ պետական հիմնարկների համար: Եվ իր ասածների արժեքը, տեսակարար կշիռը բարձրացնելու համար օրինակ էր բերում վրացական դպրոցները՝ ասելով, որ նրանք հրաժարվել են այդ բնական մեթոդից, և դա լավ է: Սեդրակ Մանդինյանի այդ առարկության դեմ ես գրում եմ, որ, այնուամենայնիվ, պետական կանցելարիաներում աշխատող վրացի չինովնիկների թիվը մեծ տոկոս է կազմում: Չկարողանալով իմ այս փաստը ժխտել՝ Սեդրակ Մանդինյանն առաջարկում է կազմել մի

հանձնաժողով և դրա մասնակցությամբ դասավանդել և՛ իմ առաջարկած բնական, և՛ իր առաջարկած թարգմանական մեթոդներով: Ես գտնում էի, որ Սեդրակ Մանդինյանի՝ հանձնաժողովի ներկայությամբ դասավանդելն ակտուալ նշանակություն չունի, որովհետև շատ դեպքում դասավանդման ընթացքում վճռական նշանակություն է ունենում ոչ թե մեթոդը, այլ դասավանդողը, նման ժողովրդի այն ասացվածքին թե «վճռողը զենքը չէ, այլ անձը, որի ձեռքին գտնվում է զենքը»:

Այդ տարվա արձակուրդին, երբ ես Թիֆլիսում էի, պարտք համարեցի այցելել մեծ մանկավարժ Սեդրակ Մանդինյանին: Նա բնակվում էր Թիֆլիսի ոչ նշանավոր փողոցներից մեկի երկհարկանի մի շենքում: Նստած էր սեղանի մոտ: Դեմքը կարմիր էր, լի վերքերով: Ասացի իմ ով լինելը: Մեր գրույցը պտտվում էր ռուսաց լեզվի դասավանդման շուրջ: Բացատրում էի, որ այն, ինչ ռուսաց լեզուն հայկական դպրոցներում է, նույնն էլ պետք է համարել հայոց լեզուն օտարախոս դպրոցներում, որ հայ ուսուցիչը չի կարող թարգմանական մեթոդը կիրառել, քանի որ նա չգիտի մանկան մայրենի լեզուն: Նա ճարահատյալ ասաց.

–Է՛, հիմա որտե՞ղ բաց դաս կազմակերպենք, երբ բոլոր դպրոցները փակ են: Իսկ դուք կարդացե՞լ եք իմ աշխատությունները,– ավելացրեց նա:

–Ո՛չ, պարո՞ն Մանդինյան,– ասացի ես:

–Ապա ինչպե՞ս եք վիճում ինձ հետ, երբ իմ աշխատությունը չեք կարդացել,– նա կողքից շարված գրքերից մեկը մեկնեց ինձ:

Ես թերթեցի այդ գիրքը, և, ով զարմանք, այդ մի ժողովածու էր, որտեղ ամփոփված էին պարբերական մամուլում լույս տեսած նրա հոդվածները:

–Այո՛, պարո՞ն Մանդինյան, ես այս նյութերը կարդացել եմ մամուլի էջերում, այնպես որ ծանոթ եմ ձեր այս աշխատությանը:

Մեր գրույցը գնալով ավելի բարեկամական բնույթ ստացավ, մասնավանդ երբ ես ասացի.

–Պարո՞ն Մանդինյան, ճիշտ է, ես ձեր սանը չեմ եղել, բայց դուք տեսուչ եղել եք Շուշվա թեմական դպրոցում, որտեղ ես սովորել եմ:

Ժպտաց Մանդինյանը, հիշեց Շուշի քաղաքում անցկացրած օրերը, ու մենք բաժանվեցինք որպես բարեկամներ:

Այդ ամառ Թիֆլիսում հրավիրված էր հայ ուսուցչական ժողով, որին մասնակցում էին հայկական դպրոցների և գավառից եկած ուսուցիչները: Այդ ժողովին ես մասնակցում էի իբրև պատգամավոր և «Սուրհանդակ» թերթի թղթակից: Ժողովը տեղի էր ունենում Հովնանյան օրիորդաց դպրոցի շենքում: Իմ ռեպորտաժները կրում էին «Հայ ուսուցչական ժողովը Թիֆլիսում» խորագիրը:

Առաջին օր: Իմ առաջին ռեպորտաժում խոսում եմ ժողովի մասնակիցների և հաստատված օրակարգ չունենալու մասին, որն ընդգծեց իր ելույթում

19 Տե՛ս «Սուրհանդակ», 1910, № 166, 198, 201, 221. «Նոր ծրագիրը և օտարախոս դպրոցները» խորագիրը կրող հոդվածաշարը (ծնթ. հեղ.):

Արամայիս Երզնկյանը: Ապա շարադրում են Հովհաննես Տեր-Միրաքյանի գեկուցումը «Երեխայի դաստիարակությունը» թեմայով, այդ գեկուցման շուրջ տեղի ունեցած մտքերի փոխանակությունը, որին մասնակցում են Իսահակ Հարությունյանը, Սարգիս Աբովյանը և ուրիշները:

Երկրորդ օր: Ժողովը հաստատում է օրակարգը: Ապա լսում են Գևորգ Ղազարյանի «Թվաբանությունը տարրական դասարաններում» թեմայով գեկուցումը: Մտքերի փոխանակությանը մասնակցում են Ա. Երզնկյանը և ուրիշները: Այս ռեպորտաժում շարադրում են մասնավորապես ծրագրի փոփոխման համար ընդունված որոշումը:

Երրորդ օր: Նախագահողը խոսքը տալիս է Թարվերդյանին, որը կարդում է «Հայրենագիտության առարկան և նրա կապը իրազնության հետ» թեմայով գեկուցումը: Այս նիստում լսվում է մասնավորապես Ալիսանյանի գեկուցումը: Ընտրվում է հանձնաժողով՝ եղած ծրագրերը վերանայելու համար:

Չորրորդ օր: Ժողովը լսում է Հովհ. Տեր-Միրաքյանի գեկուցումը՝ «Երկրաչափություն և ձևագիտություն» թեմայով: Այդ օրը ժողովը լսում է մասնավորապես Խուցյանի գեկուցումը կրոնի մասին:

Հինգերորդ օր: Օրվա հարցն էր «Ուսուցչի համընդհանուր վիճակը»:

Երկար վիճաբանությունից հետո որոշվեց կազմել մի անկետա, որի միջոցով կարելի լինի պարզել ուսուցչի տնտեսական, ընտանեկան, մանկավարժական վիճակները: Այս նիստում լսվում են հայոց և ռուսաց պատմությունների մասին Գր. Վարդանյանի գեկուցումներն առանձին առանձին: Մտքերի փոխանակությունից հետո որոշվում է ռուսաց պատմությունը սկսել 5-րդ դասարանից, ուսման հինգերորդ տարին:

Վեցերորդ օր: Ժողովը նախ լսում է աշխարհագրության մասին գեկուցում, ապա ընդունում առանձին սեկցիաների և ժողովների մասին որոշումներ:

Ուսուցչական ժողովի վերջին օրն է: Վերջին ռեպորտաժն են տանում «Մուրհանդակի» խմբագրություն: Իմ ծավալուն հոդվածները իրար ետևից լույս են տեսնում անփոփոխ: Այդ ժամանակ «Մուրհանդակի» խմբագրատանն էին աշխատում գրողներ Նար-Դոսը և Ստեփան Չորյանը: Նրանք իրար մոտ էին նստում: Վերջին ռեպորտաժը հանձնելուց հետո ես ուզում էի մնաք բարով ասել, երբ Նար-Դոսն ինձ ասաց.

–Մերգո՛ ջան, արի իմ կազմած շիլափլավ դասագրքի մասին մի գրախոսական գրի:

–Պարոն՝ Նար-Դոս,– ասացի ես,– արդեն դուք ձեր դասագրքի գնահատականը տվեցիք, էլ ես ի՞նչ գրեմ:

Եվ, իրոք, Նար-Դոսի կազմած հայոց լեզվի «Կյանք» դասագիրքն իսկապես որ մի շիլափլավ էր: Ճիշտ է, հետաքրքիր նյութեր շատ կային, բայց

նրանք իրար վրա թափված էին, լավ ու վատ իրար խառնված: Մի նյութը լավ է, բայց ցածր դասարանների համար, մի այլ նյութ անմատչելի է այդ նույն դասարանի համար: Դասագիրքը կազմված էր անսխառն և չգիտես ուսման ո՞ր տարվա համար: Այդ էր պատճառը, որ դասագիրքը լայն ընդունելություն չգտավ ուսուցիչների կողմից:

Հետո խոսք բացվեց «Մուրհանդակ»-ում արդեն լույս տեսած իմ թարգմանությունների մասին՝ կանգ առնելով Լև Տոլստոյի մի նամակի և Բրիլիանյի «Աստղային գիշեր» նովելի թարգմանության վրա: Ես շնորհակալությամբ ընդունեցի Նար-Դոսի արժեքավոր մի դիտողությունը:

–Լսիր, Մերգո՛,– ասաց Ստեփան Չորյանը,– նյութերիդ համար հոնորար ստանո՞ւմ ես:

–Ծիծաղո՞ւ չի գալի՞ս, պարոն Չորյան, հոնորարս ո՞րն է:

–Ոչինչ,– ասաց Նար-Դոսը,– ես կասեմ, Բոգդան Մերգեյիչը հոնորար կտա:

Չգիտեմ, ասել էր, թե ոչ, միայն այդ օրը «Մուրհանդակ» թերթի խմբագիր Աստվածատուր Երիցյանը հրավերք ուներ իր տանը, որին ինձ էլ հրավիրեց մասնակցելու: Մտածեցի. «Մա էլ հաշվենք իմ հոնորարը»: Հրավերքն անցավ շատ ուրախ: Բոգդան Մերգեյիչն իր սրախսություններով ու հանաքներով շարունակ զվարճացնում էր հյուրերին: Նա այդպիսին էր՝ կենսուրախ, սրախոս, հանաքչի:

Հրավերքը երբ վերջացավ, ես իմ շնորհակալությունն հայտնելով, մնաք բարով ասացի, Երիցյանը սեղմեց իմ ձեռքը և մի ոսկե դրամ խոթեց: Առաջին անգամ իմացա, որ գրածի համար կարելի է հոնորար ստանալ:

Նիժ գյուղում մի այլ հանգամանք նպաստում էր, որ մենք՝ ուսուցիչներս, ավելի շատ զբաղվեինք ինքնակրթությամբ: Նիժը նման չէր մեր լեռնային գյուղերին, երբ շատ հաճախ մեկի կտուրը մյուսի բակն էր կազմում: Նա փոված էր լայնանիստ դաշտում, տներն էլ՝ իրարից հեռու-հեռու: Այս հանգամանքը դժվարացնում էր մեր արտադասարանական հետժամյա աշխատանքները, քանի որ աշակերտների համար դժվար կլինեք երկրորդ անգամ գալ դպրոց: Այդ պատճառով արտադպրոցական աշխատանքներն սկսում էինք անմիջապես դասերից հետո: Ուսուցիչներն իրենց տրամադրության տակ ազատ ժամանակ շատ ունեին: Մեզինք խմել ոչ ոք չէր սիրում: Ուրիշ ինչո՞վ էր մնում զբաղվել, եթե ոչ խորանալ մեր մասնագիտության մեջ և պարապել ընթերցանությամբ:

Մեր ընկերներից Ավետիք Շաքիրյանը զբաղվում էր թղթակցություններ գրելով պարբերական մամուլում: Հովհաննես Գյուլիխանյանը հրատարակեց իր՝ «Գրչի մարդը» վերնագրով գրքուկը: Ես զբաղվում էի թարգմանություններով ռուսերենից հայերեն, թղթակցություններ էի գրում: Բացի սրանից՝ «Մանկավարժական համառոտ գրույց-

ներ» խորագրերով զեկուցումներ էի կարդում մեր՝ հերթից դուրս մանկավարժական ժողովներում: Ի՞նչ բովանդակություն ունեին այդ զեկուցումները:

1. Ուսուցիչ-մանկավարժը: Մանկավարժ, ուսուցիչ լինելը չի նշանակում լինել սովորական արհեստավոր: Նա արվեստագետ է, արտիստ իր գործի մեջ: Ուսուցիչը պիտի ուսումնասիրի աշակերտի հոգեբանությունը, զինվի ժամանակակից մեթոդիկայով, գիտելիքներով: Ես ասում էի, որ դպրոցը դասակարգային պայքարի վայր է: Իմ ասածը հիմնավորում էի՝ բերելով օրինակներ բուժուական դպրոցի համար կազմած դասագրքերից: «Գործատերը վաղ առավոտյան,– ասված է հողվածում,– հենց որ արթնալող կանչում էր, զարթնեցնում էր բանվորներին և աշխատանքի դնում: Որպեսզի գործատերը այդքան վաղ չարթնացնի, բանվորները մորթում են արթնալողին: Գործատերը վախենալով ուշանալ, ավելի վաղ էր զարթնեցնում բանվորներին, քան արթնալողի կանչը»:

Բորժուական դպրոցի ուսուցիչը, ավանդելով այս հողվածը, աշակերտներին բերում է այն համոզման, որ չի կարելի մեծավորին ընդդիմանալ: Հետևանքը կլինի այն, ինչ պատահեց արթնալող մորթող բանվորների հետ:

Մեկ այլ օրինակ. արծիվը սավառնում էր երկնքում: Կրիան, տեսնելով արծվի սավառնելը, դիմում է նրան.

–Արծի՛վ, ա՛յ արծիվ, ես էլ եմ ուզում քեզ պես թռչել:

–Ո՛չ, դու չես կարող, դու այդ բանի համար չես ստեղծված,– ասում է արծիվը:

–Արծի՛վ, ա՛յ արծիվ, ես շատ եմ ուզում թռչել, ա՛ն ինձ քեզիդ վրա, որ ես էլ սավառնեմ:

Եվ արծիվը կրիային առնում է քեռիին, բարձրացնում երկինք և այնտեղից վայր նետում: Կրիան ընկնում է գետնին ու ջախջախվում:

Եզրակացությունը պարզ է, իշխանը պիտի իշխի, իսկ հպատակը հնազանդվի: Իսկ թե՞ հպատակը երբևիցե ցանկանա իշխող լինել, կրիայի պես կջախջախվի: Այստեղից էլ՝ «Աստված ում ինչպես ստեղծել է, այդպես էլ պետք է մնա՝ իշխողը՝ իշխող, իսկ հպատակը՝ հպատակ»: Եվ այս դարձվածքն աշակերտները գրում են իրենց տետրերում: Ահա թե ինչու եմ ասում, որ դպրոցը դասակարգային պայքարի վայր է:

Պարզ է խնդիրը, ասում եմ ես, մեր դպրոցները պայքարի դպրոցներ են: Անգրագետը կարող է գիտուն դառնալ, իսկ բանվորը երկիր կառավարել իմանա: Ահա թե ինչու եմ ասում, որ մանկավարժ ուսուցիչը պետք է քաջ իմանա, որ գիտելիքների ուսուցումը խիստ զուգորդված է դաստիարակչական հարցերի հետ: Ուսուցիչ-մանկավարժը պետք է իմանա, որ ինքը գործ ունի ոչ թե մոմի հետ, ինչպես Ղազարոս Աղայանն է ասում, որ ինչ ձև ուզենաս, կարող ես տալ: Այս ճշմարտությունը

չժխտելով հանդերձ՝ պետք է այն էլ իմանալ, որ ուսուցիչը գործ ունի կենդանի էակի հետ, որոնք ունեն բնավորության առանձնահատկություններ, ընդունակություններ և այլն: Ահա ձեզ մի երեխա, որ աշխույժ է, շարժուն, եռանդի մարմնացում, կատարյալ մի սնդիկ, ահա և սրա հակառակը՝ ծանրաշարժ, մելամաղձոտ և այլն: Ասացեք խնդրեմ, ուսուցիչը կարո՞ղ է միատեսակ վերաբերմունք ու մոտեցում ունենալ դեպի բազմապիսի առանձնահատկություններ ունեցող երեխաները: Մեկին նկատողություն ես անում, նա կարմրում է, գլուխը կախում, աչքերը տամուկ են, մյուսին նկատողություն ես անում, նա ծիծաղում է և ուրախ ժպիտով քեզ նայում: Ուսուցիչը պետք է լավ ճանաչի իր աշակերտներին, իմանա նրանց յուրաքանչյուրին բնորոշ հատկությունը, օժտված լինի երեխաների հոգեբանությունը ճանաչելու և տրամաբանորեն մտածելու ունակություններով:

Երևի բոլորդ գիտեք Շեքսպիրի «Համլետը»: Հանճարեղ դրամատուրգի այդ ստեղծագործության մեջ մի հատված կա, որտեղ Համլետն իր դաստիարակին տալիս է մի հասարակ սրինգ և խնդրում է նվագել: Դայակը հրաժարվում է՝ ասելով, որ ինքը չի կարող այդ գործիքով նվագել: Համլետը, ցույց տալով սրինգը, ասում է. «Տեսեք, թե որքան պարզ ու հասարակ կառուցվածք ունի այս գործիքը, մի եղեգնյա փոքրիկ խողովակ և մի քանի ծակոտիներ: Եթե դուք ձեր մատները շարժեք այս ծակոտիների վրա, սրինգը հրաշալի եղանակներ կնվագի»: Երբ դայակը հրաժարվում է երկրորդ անգամ, Համլետն ասում է. «Եթե դուք ընդունակ չեք այս պարզ ու հասարակ գործիքով նվագել, հապա ինչպե՞ս կարող եք նվագել այն բարդ գործիքով, որպիսին մարդն է ու նրա հոգեկան աշխարհը»:

Ամեն մեկը չէ, որ կարող է ուսուցիչ լինել:

2. Դասի պլանը: Ուսուցիչներից ոմանք այն կարծիքին են, որ դասի պլանն ավելորդ է, ձևական կողմն է: Ահա այսպիսի դատողություններն էին, որ ես ընտրեցի իմ գրույցի թեման՝ «Դասի պլան»: Ես ասում եմ. «Ես էլ եմ դեմ դասի այնպիսի պլանի, որ շարունային բնույթ է կրում, տրաֆարետային է, 1. հարցում հին դասից, 2. նոր դաս, 3. տնային հանձնարարություն և այլն»:

Այսպիսի դասի պլանը, անշուշտ, ավելորդ է: Իմ գրույցի մեջ ես համոզում եմ ընկերներին, որ դասի պլանը կազմելիս ամենից առաջ պետք է ձեռքի տակ ունենալ այն թեման, այն նյութը, որը հերթական դասն է կազմում: Նախքան պլանի կազմելը դասատուն պետք է ուսումնասիրի նյութը: Առանց դրա, թող որ այդ նյութը լավ ծանոթ լինի ուսուցչին, չի կարելի պլան կազմել: Ծանոթ նյութն աչքի անցկացնելիս անգամ կարող է նոր միտք, նոր հղացում առաջ բերել ուսուցչի մեջ: Հերթական նյութն ուսումնասիրելիս ուսուցիչը պետք է առանձնացնի էականը, գլխավորը: Ինչպե՞ս, ի՞նչ ձևով պետք է

աշակերտների ուշադրությունը բևեռի այդ էականի, գլխավորի վրա: Նյութն ինչպե՞ս արդիականացնի, հնարավորին չափ կապի աշակերտի առօրյայի հետ (օրինակներ, փաստեր)... Այս բոլորը պետք է արտացոլվեն պլանում:

Բերված երկու համառոտ գրույցները գուցե այսօրվա համար պարզ ու հասարակ թվան, բայց չպետք է մոռանալ, որ այդ համառոտ գրույցները տեղի են ունեցել սրանից վաթսուն տարի առաջ, նրա հեղինակը մասնագիտական կրթություն չի ունեցել, այլ ընդամենը հինգ տարվա փորձառություն: Գուցե սրա մեջ էլ կարելի լինի գտնել նրա գնահատելի կողմը:

Իմ համառոտ մյուս գրույցները հետևյալ թեմաներով էին.

1) Լեզվի ուսուցումը տարրական դասարաններում:

2) Աշակերտի ուսման մեջ ետ մնալը և այն վերացնելու միջոցները:

3) Աշակերտների գիտելիքների ստուգման և հաշվառման եղանակները:

4) Տարրական դպրոցը միջնակարգ դպրոցի հիմքն է կազմում:

Ուսումնական տարին մոտենում է ավարտին: Պետք է հանրագումարի բերել մեր ամբողջ տարվա աշխատանքները: Ես անձամբ գոհ չեմ մեր հաջողություններով և նվաճումներով: Գոհ չեմ, որովհետև Նիժի դպրոցի աշակերտների գիտելիքները համեմատում եմ Կախ-Ավանի, Տոլ գյուղի դպրոցների աշակերտների գիտելիքների հետ:

Մանկավարժական վերջին ժողովն է, որին ներկա են և հոգաբարձության անդամները: Դաստիարակները զեկուցում են իրենց դասարանների առաջադիմության մասին: Նրանց զեկուցումից հետո ելույթ եմ ունենում ես, ամփոփում զեկուցումները, կանգ եմ առնում այն դժվարությունների վրա, որոնք հաղթահարել և որոշ հաջողությունների ենք հասել:

Հոգաբարձության կողմից ելույթ է ունենում Շոտանյան քահանան, համեմատում մեր կատարած աշխատանքները ուսուցչական նախորդ կազմի աշխատանքների հետ և ընդգծում, որ որքան բացասաբար է անդրադառնում ուսուցիչների անհամերաշխությունն ուսումնական գործի վրա, նույնքան դրականորեն է անդրադառնում ուսուցչական կազմի համերաշխությունը: Ապա հոգաբարձության անունից Խաչի յուզբաշին հայտնում է, որ առաջիկա ուսումնական տարվա համար հրավիրվում է ուսուցչական ամբողջ կազմը՝ համաձայն հոգաբարձության որոշման:

Երկրորդ տարին Նիժի Սբ. Մեսրոպյան դպրոցում

Մենք Թիֆլիսում ենք: Այստեղ մեզ համար մի անհաճո բան պարզվեց: Քույր և եղբայր Գյուլխան-

դանյանները չցանկացան օտարախոս դպրոցում աշխատել, հրաժարվեցին: Դույսան Խաչիկը թողեց ուսուցչական ասպարեզը և անցավ կոոպերատիվ առևտրական ցանցում աշխատելու, իսկ Շաֆիրյան Ավետիքը հրաժարվեց առանց պատճառաբանության: Նա թիֆլիսաբնակ էր, ուզում էր մնալ և ընդմիջտ աշխատել Թիֆլիսում: Մնացինք մենք ամուսիններով: Այս մասին ես հաղորդեցի Նիժի հոգաբարձությանը: Նրանք իրենց պատասխանի մեջ խնդրում են ինձ հանձն առնել նոր ուսուցչական կազմ հրավիրելու պարտականությունը:

Մեզ՝ ամուսիններիս, հատկապես ինձ համար ստեղծվեց աննախանձելի վիճակ. մի կողմից օտարախոս դպրոցի համար ուսուցիչներ հրավիրելու դժվարությունները, մյուս կողմից այդ դպրոցի աշակերտության ուսման առաջադիմության որակը բարձրացնելու խնդիրը: Այս դպրոցի աշակերտները երկու օտար լեզու են սովորում՝ հայերեն և ռուսերեն: Դժվարություններ շատ կան, պետք է հաղթահարել: Ես այն կարիքին եմ, որ պետք է հիմնովին վերակառուցել դպրոցը:

1) Օտարախոս այս դպրոցի աշակերտի համար հինգ տարի սովորելուց հետո հայոց լեզուն պիտի դառնա նրա «մայրենի լեզուն»: Նա պիտի կարողանա գրական հայերենով արտահայտել իր մտքերն առանց դժվարության, ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր, կարողանա հասկանալ ուրիշի հայտնած թե՛ բանավոր և թե՛ գրավոր մտքերը:

2) Ռուսաց լեզուն նա պիտի իմանա այնքան, որ այդ լեզվով ուրիշի պարզ ու անպատճույճ հայտնած մտքերը կարողանա հասկանալ, կազմել կարճ բովանդակություն ունեցող գործնական գրագրություններ՝ հասցե, դիմում:

3) Մնացած առարկաները՝ թվաբանություն, աշխարհագրություն, պատմություն և այլն, իմանա այնքան, որ կարողանա միջնակարգ դպրոցի երրորդ հիմնական (ուսման վեցերորդ տարի) դասարան ընդունվել:

Անցյալ ուսումնական տարում լրիվ չկարողացանք հասնել այս նպատակին: «Ի՞նչ անել,– մտածում եմ ես,– հրաժարվե՞լ մյուս ընկերների պես, թե՞ մտածել ուսման որակը բարձրացնելու մասին: Իսկ կարելի՞ է նոր մարդկանցով հաջողության հասնել»: Հոգաբարձությանը գրած նամակում հայտնել էի, որ նրանք սպասեն մեր պատասխանին մինչև հուլիսի 1-ը:

Թիֆլիսում ես և Մարոն մտածում ենք գնա՞լ, թե՞ չգնալ: Անկարելի է առանց խղճի խայթի գնալ և չարդարացնել դպրոցի առաջ դրված խնդիրները, լքել դպրոցը, թողնել իր բախտին, նույնպես անկարելի է: Մնացել ենք երկրնտրանքի մեջ:

–Լքե՞լ, երբեք: Ո՞ր է ապա մեր քաղաքացիական պարտականության զգացումը: Ո՞ր է ապա ժողովրդական ուսուցչի կոչումը, նրա պատասխանատվության զգացումն իր ժողովրդի հանդեպ: Չէ՛,

պետք է մտածել ուսման որակը բարձրացնելու մասին և ոչ թե անճարակություն ցուցաբերել և լքել դպրոցը, – ասում էր Մարոն ոգևորված:

Հունիսի վերջերին մենք հոգաբարձությանը հեռագրեցինք, որ օգոստոսի 20-ին կլինենք Նիժում նոր ուսուցչական կազմով:

Երկար մտորումներից և խորհելուց հետո Մարոյի հետ որոշեցինք Նիժում բացել երեք մանկապարտեզ, որոնց մենք Վարժոց անունը տվեցինք, քանի որ այդ մանկապարտեզների խնդիրն է օտարախոս մանուկներին սովորեցնել հայերեն խոսել: Վարժոցներից մեկը կլինի գյուղի մի ծայրում, մյուսը՝ մյուս ծայրում, իսկ երրորդը՝ գյուղի կենտրոնում: Կընդունվեն 7 տարեկան երեխաներ: Նրանք մի տարվա ընթացքում բանավոր գրույցի միջոցով կսովորեն հայերեն խոսել, երգել, համրել, այնպես որ 1-ին բաժանմունք ընդունվող երեխաները կունենան բավականին բառապաշար: Այլևս մենք այնպիսի դժվարությունների չենք հանդիպի, ինչպիսին հանդիպում էինք, երբ ութ տարեկան երեխային ընդունում էինք անմիջապես ընտանիքից:

Թիֆլիսում մենք ձեռնամուխ եղանք նոր ուսուցչական կազմ հրավիրելու գործին: Առաջին հերթին ցանկացանք ապահովել Վարժոցը: Ու՞մ կարելի էր հրավիրել այդ գործի համար: Այդ ժամանակ Թիֆլիսում գոյություն ուներ «Ֆրենեյան կուրսեր»՝ պատրաստելով աշխատողներ մանկապարտեզի համար: Տնօրենն էր մանկավարժ Սոֆյա Արդուբյանը: Ցավոք սրտի, նա Թիֆլիսում չէր: Այստեղ մենք ծանոթացանք այդ կուրսերն ավարտած Տիտոսյան ազգանունով մի տիկնոջ հետ: Ուրախացանք, որ Վարժոցի համար կարողացանք հրավիրել մեկին, որ կարող է դպրոցական հասակ չունեցող երեխաների հետ պարապել: Հետո մենք հրավիրեցինք Թիֆլիսի Հովնանյան միջնակարգ դպրոցն ավարտած օրիորդ Սաթենիկ Դովլաթյանին: Մի քանի օրից հանդիպեցինք Ներսիսյան դպրոցավարտ Քրիստաֆոր Մատինյանին, որը նույնպես համաձայն էր մեզ հետ աշխատել Նիժում: Նա Նուխվա շրջանից էր: Մյուս երկու վարժոցների համար ուսուցիչներ հրավիրելու հարցը թողեցինք հոգաբարձությանը: Այդ տարի ամռանը Թիֆլիսում հրավիրված էր հայկական դպրոցների ուսուցիչների ժողով-կոնֆերանս:

Այդ ժողովներին մասնակցելուց և աշխատանքները վերջանալուց հետո մենք ճանապարհվեցինք Շուշի:

Եվլախ երկաթուղային կայարանում հանդիպեցինք իմ դպրոցական ընկեր Դանիել Ղազարյանին, որը սովորում էր Թիֆլիսի երաժշտական դպրոցում և այժմ ամառային արձակուրդներին տուն էր վերադառնում: Դեռ դպրոցական հասակից մտերիմ ընկերներ էինք: Երկուսս էլ մի թաղի երեխաներ էինք, երկուսս էլ մասնակցում էինք դպրոցի քառաձայն երգեցիկ խմբին:

Միևնույն օմնիբուսում նստած՝ մենք գնում էինք Շուշի: Ես հարցրի, թե նա արդյոք համաձայն չի՞ լինի մեր Նիժի դպրոցում երգի դաս տալ: Նա ասաց, որ ինքը դեռևս չի ավարտել և չի կարող այժմ պաշտոնավարել, բայց խորհուրդ տվեց հրավիրել Թիֆլիսի երաժշտական դպրոցի սան Մանվել Մարութբեյանին, որը նույնպես Շուշի մեր թաղից էր: Նա շատ է ուզում պաշտոնավարել դպրոցում:

Ապա սկսեցինք քաղցր հիշողություններ պատմել մեր մանկությունից:

Շուշիում մենք առաջինը այցելեցինք Ղոնդաղ-սագյան ամուսիններին, որոնք պատրաստվում էին ընդմիջ տեղափոխվել Մոսկվա: Նրանց տնից նոր էինք դուրս եկել, որ հանդիպեցինք Դանիել Ղազարյանին և Մանվել Մարութբեյանին: Մենք համաձայնության եկանք Մարութբեյանի հետ: Նա խոստացավ օգոստոսի 20-ին լինել Նիժում: Այդ թեմական դպրոցի նոր շենքի մոտ էր: Ինչ-որ մեկը նվագում էր դպրոցում: Դանիելն առաջարկեց բարձրանալ և տեսնել, թե ով է նվագում: Մենք բարձրացանք: Նվագում էր մեր դպրոցական ընկերներից Ղահրամանյան Դավիթը: Այդտեղ էին նաև Ալեքսանդր Միրզոյանը (կոմպոզիտոր Գրիգոր Մյունիկի կրտսեր եղբայրը) և Շուշի հյուրախաղերի եկած դերասան Հովհաննես Աբելյանը:

–Եկեք «Արաքսի արտասուքը» երգեք իմ նվագակցությամբ, – ասաց Դավիթը:

Ու մենք երգեցինք: Այդ ժամանակ պատուհանի մոտ էր Մարոն:

–Ապա եկեք, տեսեք, թե որքան ժողովուրդ է հավաքվել, ձեզ են ունկնդրում:

Մենք մոտեցանք, իրոք, շատ մարդիկ էին հավաքվել փողոցում և դեպի պատուհանն էին նայում: Մանվել Մարութբեյանը լավ բարիտոն էր: Պակաս չէր և Հովհաննես Աբելյանը: Դավիթն առաջարկեց երգել մեկ այլ երգ՝ «Ոհ, ինչ անուշ բան լինել կոնծաբան»:

Այդ երգն էլ երգեցինք, բայց որովհետև ես ուշանում էի, ներողություն խնդրեցի ու Մարոյի հետ այցելեցի թեմական առաջնորդ Ջավեն վարդապետին: Նա մեզ սիրալիք ընդունեց: Մենք անձամբ ծանոթ չէինք, բայց ինքն ինձ գիտեր պարբերական մամուլից:

–Ես հետևում եմ Ձեր թղթակցություններին, հաճույքով կարդում եմ, – ասաց հայր սուրբը:

Մեր գրույցը պատվում էր այն հարցերի շուրջ, ինչ ես շոշափում էի մամուլում՝ հայ դպրոցների անմխիթար վիճակը, ուսուցչի իրավագուրկ և տնտեսական վատ դրությունը, ուսուցիչների որակավորման խնդիրը և հոգևոր կառավարության անճարակությունը դպրոցներ ղեկավարելու հարցում, որի հետևանքով էլ մեր դպրոցները գուրկ են գրադարաններից, ուսուցման դիտակտիկ պարագաներից: Իսկ ուսուցչական կադրերի հաշվարկի բացակայությունն արդեն խայտառակություն էր, երբ հոգևոր կառավարությունը ուսուցիչների բաշխման գործից ձեռքերը լվացել ու մի կողմ է քաշվել:

Թեմական առաջնորդն իմ ասածների դեմ առարկելու ոչ մի հիմք չունեմ՝ բացի «ճիշտ եք ասում»-ներից:

–Ի՞նչ կարող է անել թեմական առաջնորդը, երբ Էջմիածինը՝ մեր հոգևոր կառավարության կենտրոնը, ոչ մի միջոց չի ձեռնարկում:

Ես առարկում եմ:

–Չէ՞ որ դուք դպրոցական գործում կարող եք ինքնուրույն լինել: Ստեղծել այն ամենը, ինչի մասին մենք ձեզ հետ խոսում ենք:

Քիչ մտածելուց հետո, գլուխը ձեռքերի ավերի մեջ առած, թեմական առաջնորդ Ջավեն վարդապետն ասաց.

–Պարոն Իսրայելյան, դուք կարո՞ղ եք ամռանը մի ամիս ժամանակով շրջագայել Նուխվա հայկական գյուղերով և, որտեղ հնարավոր է, ընտրել հոգաբարձություն և օգնել դպրոցներ բացելու գործին:

–Ամենայն ուրախությամբ, հա՛յր սուրբ,– ասացի ես:

Մի քանի օր հետո, երբ ես ներկայանում եմ պաշտոնական գործուղման գրությունը ստանալու, Ջավեն վարդապետը ցույց տվեց մի հեռագիր, որտեղ Նուխվա վիճակի փոխանորդ Ահարոնյան վարդապետը հեռագրում է. «Командировка Исраеляна нахожу не целесообразно архимандрит Агаронян».

–Ես համաձայն չեմ,– ասում է Ջավեն վարդապետը,– չգիտեմ, թե ինչն է նկատի առել այսպես հեռագրելով: Նրան գրել եմ, որ ձեզ ապահովի դրամական միջոցներով: Գտնում եմ, որ անհրաժեշտ է Նուխվա հայկական գյուղերում դպրոցներ բաց անել: Ահա ձեր գործուղման գրությունը և իմ նամակը Ահարոնյան հայր սուրբին:

Հուլիսի 20-ին ես արդեն Նուխվա վիճակի հոգևոր առյանում եմ: Այստեղ եմ ատյանի անդամները՝ Մահակ քահանան, Արշակ քահանա Փալչյանը և ատյանի քարտուղար Մակարը:

–Օրհնեցեք, տիա՛րք,– ասում եմ և բարևում:

Նրանք ինձ լավ գիտեն, մանավանդ Արշակ քահանա Փալչյանը: Նիժեցի է, Նուխի եկած ժամանակ, ընտանիքով թե մենակ, միշտ նրա տանն էի իջևանում: Չարմանում եմ, բոլորովին չէին սպասում:

–Չէ՞ որ հայր սուրբը հեռագրել է, որ ինքը դեմ է: Նա շատ է լարված ձեր դեմ,– ասում է տեր Մահակը:

«Հինգ տարի է, որ իմ վիճակում պաշտոնավարում է, բայց մի անգամ գոնե չբարեհաճեց այցելել ինձ,– ասել է Եղիշ Ահարոնյան վարդապետը,– եթե Իսրայելյանը գա էլ, ես չեմ ընդունի»:

–Ոչինչ, թող ես մտնեմ, ինքը չընդունի,– ասում եմ ես:

Երբ մտա փոխանորդի առանձնասենյակը, նա ինձ ընդունեց սառը, բայց վայելչության սահմաններում: Իմ գրույցը վարդապետ Ահարոնյանի հետ

նույնն էր, ինչ Ջավեն վարդապետի հետ՝ եզրափակելով, որ հոգևոր կառավարությունն անընդունակ գտնվեց հայկական դպրոցները ղեկավարելու գործում: Մթնոլորտը միանգամայն փոխվեց: Նա գլուխը դուրս հանեց և ասաց ատյանում նստածներին.

–Մարդուն մի բաժակ թեյով էլ չհյուրասիրե՞մք:

Ատյանի անդամները զարմացած իրար են նայում: Ինչ էին սպասում, ինչ դուրս եկավ:

Իմ այցը փոխանորդ Ահարոնյանին վերջացավ նրանով, որ նախաճաշելուց հետո նա կարգադրեց տալ ինձ գործուղման ծախսերի համար անհրաժեշտ գումարը և հաջողություն մաղթելով՝ ճանապարհի դրեց:

Տասնութ օր տևեց իմ շրջագայությունը Նուխվա գավառի հայ գյուղերով: Այդ շրջագայության արդյունքը եղավ այն, որ հաջողվեց յոթ գյուղում կազմակերպել հոգաբարձության ընտրություններ և ուսուցիչներ հրավիրել Սաբաթու, Սուգութու, Չարդաթ, Սուլթան-Նուխի (թրքախոս) և այլ գյուղեր: Այդ մասին ես երկու զեկուցում պատրաստեցի մեկը թեմական առաջնորդ Ջավեն վարդապետի, իսկ մյուսը՝ նրա փոխանորդ Եղիշե վարդապետ Ահարոնյանի համար:

Օգոստոսի 20-ին մենք Նիժում ենք: Այստեղ եմ և նոր հրավիրված բոլոր դասատուները: Նախապատրաստական աշխատանքներ ենք տանում ուսումնական տարին կազմ ու պատրաստ դիմավորելու: Գյուղում երեք վարժոց ունենալու հարցը հոգաբարձությունը մերժեց միջոցներ չունենալու պատճառով: Ուսուցչական կազմը լրացնելու համար հրավիրվեց տեղացի երկարամյա փորձ ունեցող ուսուցիչ Բալաբեկ Տեր-Ղուկասյանը, որն ավարտել էր քաղաքային դպրոցը և անցնելով մանկավարժական վեցամսյա կուրսեր՝ ձեռք էր բերել ուսուցչական ցենզ:

Ուսումնական տարին սկսված է: Վարժոցում ընդունված են յոթ տարեկան 37 երեխաներ: Կենտրոնում տեղ չլինելու պատճառով մենք տեղավորեցինք գյուղի ներքևի մասում: Վարժոցի համար հրավիրված ուսուցչուհի Տիտոսյանն անճարակ ու ապիկար դուրս եկավ: Ես ու Մարոն շատ օգնեցինք, շատ աշխատեցինք, բայց բան դուրս չեկավ: Մինչև անգամ պլան կազմեցինք նրա մասնակցությամբ: Մի օր Մարոն պարապեց նրա ներկայությամբ, բայց Տիտոսյանը չկարողացավ որևէ բան, էլ չեմ ասում նախադասություն, ոտանավոր, երգ կամ պար սովորեցնել: Մանկավարժական խորհուրդը հոգաբարձության անդամների մասնակցությամբ որոշեց ազատել տիկին Տիտոսյանին և վարժոցը հանձնել Բալաբեկ Տեր-Ղուկասյանին:

Մեր ուսուցչական նոր կազմն ավելի քան համերաշխ էր ու սիրով: Շաբաթ չէր անցնի, որ մեր կուլեկտիվը չհավաքվեր ինձ մոտ մի բաժակ թեյի, ներառյալ և տեղացի Բալաբեկ Տեր-Ղուկասյանը: Մեր գրույցն այստեղ ավելի ազատ էր լինում, քան

պաշտոնական մանկավարժական ժողովների ժամանակ: Ով ինչ գիտեր, ասում էր, ով ինչ չգիտեր, սովորում էր: Այսպես սիրով, համերաշխ առաջ էինք տանում մեր աշխատանքը: Երբ լրացավ առաջին քառորդը, մենք հանրագումարի բերեցինք մեր աշխատանքի պտուղները, տեսանք, որ մի շարք թերությունների հետ կա և առաջընթաց: Անհարգելի պատճառով ուշացողները բացառություններ են: Անցյալ ուսումնական տարվա աշխատանքների պտուղները հիմա են երևում: Աշակերտներն առաջադիմում են, նրանք սիրում են դասերից դուրս գրքեր կարդալ, պարապել մաթ ընթերցանությամբ: Ամեն անգամ տեսնելով դպրոցի աղքատ գրադարանի առաջ խոնված աշակերտներին՝ մարդու սիրտը լցվում է բերկրանքով:

Երկրորդ քառորդը դեռ չէինք վերջացրել, երբ ես մի անակ ստացա Նուխվա հայկական դպրոցի հոգաբարձության նախագահ Արշակ քահանա Փալչյանից: Խնդրում էր մի քանի օրով ժամանել Նուխի, ծանոթանալ իրենց դպրոցի վիճակին: Փալչյան քահանան շատ կուլտուրական, բազմակողմանի զարգացած և էրուդիցիայի տեր անձնավորություն էր: Ես չեմ հապաղում պատասխանելու, որ դպրոցական գործերը դասավորելուց հետո 3-4 օրով կլինեմ Նուխիում: Ի՞նչն էր ստիպում հոգաբարձության նախագահ Փալչյան քահանային դիմել ինձ: Բանն այն է, որ իրենց դպրոցի ավագ ուսուցիչ, գրող Վրթ. Փափազյանն ինչ-ինչ պատճառներով, դեռ ուսումնական տարին չկիսած, հրաժարվել էր պաշտոնից և հեռացել: Հոգաբարձությունը որոշել էր, որ այդ պաշտոնը մինչև ուսումնական տարվա վերջը հասարակական կարգով հերթով իրենց վրա վերցնեն դպրոցի ավելի ձեռնհաս ուսուցիչները: Իմ ժամանած ժամանակաշրջանում ավագ ուսուցչի պաշտոնը վարում էր Արամ Տոնյանը, հետագայում՝ Հայաստանի լուս. մինիստրության տեսուչ: Ուսուցիչներից շատերի հետ ես ծանոթ էի: Ոչ միայն ծանոթ, այլ ընկերներ էինք՝ Արամ Տոնյանը, Միսակ Տեր-Ղազարյանը, Իշխան Հայրիյանը:

Նախ տիկին Սոֆյա Ալավերդյանի (ռուսաց լեզու), ապա Արամ Տոնյանի, Միսակ Տեր-Ղազարյանի լսած դասերից շատ լավ տպավորություն ստացա: Երկու օր դասեր լսելուց հետո հրավիրեցի մանկավարժական ժողով, որին մասնակցում էին և հոգաբարձության անդամները:

Անաչառ վերլուծելով բոլոր լսած դասերը՝ ես եզրափակեցի, որ, շնորհիվ Արամ Տոնյանի և մյուս ձեռնհաս ուսուցիչների թափած ջանքերի, դպրոցն աննշան թերություններով զանվում է իր բարձրության վրա: Հետևյալ օրը ես ճանապարհվեցի Նիժ:

Նիժի կլիման խոնավ է, իսկ ջուրը՝ ճահճային: Նրա աղբյուրները լեռնային գյուղերի աղբյուրների ման չեն, որ կուժը դնեն ջրի հոսանքի տակ և լցնեն: Նիժի աղբյուրները փոսեր են մի մետր խորությամբ, որտեղից դուրս է գալիս ջուրը: Ջուր տանողը

կժի հետ և մի ուրիշ փարչ է բերում, որ նրանով կուժը լցնի: Իսկ բրնձի դաշտերը շատ հաճախ լինում են տներից ոչ հեռու: Այս պատճառով էլ հիվանդացա ջերմախտով: Շրջանի միակ պետական ռուս բժիշկը խորհուրդ տվեց ճահճային կլիմա ունեցող վայրերում չպաշտոնավարել, քանի որ լեռնային կլիմայի սովոր մարդը չի կարող տանել խոնավ կլիման: Տարեվերջին նորից հիվանդացա, լավ էր, հիվանդությունս կարճ տևեց: Բժիշկն այս անգամ կատեգորիկ արգելեց ինձ պաշտոնավարել Նիժում: Ապաքինվելուց հետո մտածեցի դպրոցում տարած երկու տարվա աշխատանքների մասին գրավոր հաշվետվություն գրել:

Տարվա վերջին ծնողական ընդհանուր ժողովում, որտեղ ներկա էին և՛ հոգաբարձության անդամները, և՛ ուսուցչական կազմը, կարդացի այդ հաշվետվությունը, որը ուտիերեն թարգմանում էր Բալարեկ Տեր-Ղուկասյանը: Իբրև պատմական նշանակություն ունեցող փաստաթուղթ՝ ավելորդ չեմ համարում տալ նրա բովանդակությունը համառոտակի, մանավանդ, երբ 75 տարի գոյություն ունենալուց հետո Նիժի Մեսրոպյան երկդասյա դպրոցը, իբրև հայկական կրթական հաստատություն, այլևս գոյություն չունի:

Սովետական իշխանությունն Ադրբեջանում հաստատվելուց հետո, ճիշտ է, այդ դպրոցը շարունակում էր իր գոյությունը՝ իբրև հայկական դպրոց: Երբ մամուլում լույս տեսավ հակահայկական թունոտ մի հոդված, հայկական դպրոցը փակվեց, և նրան փոխարինեց ադրբեջանական դպրոցը, որտեղ դասավանդումը տեղի էր ունենում ադրբեջաներենով: Իհարկե, Նիժի ժողովուրդը չէր կարող հանդուրժել, որ իրենց երեխաների մայրենի լեզուն լինի ադրբեջաներենը: «Եթե ուտիացի երեխաների համար հայերենը մայրենի չէ, ապա առավել ևս ադրբեջանական լեզուն», – ասել են միժեցիները: Նրանց խիստ բողոքի հետևանքով ադրբեջանական դպրոցը ստիպված եղավ իր տեղը զիջել ռուսական դպրոցին: Այժմ 75 տարուց հետո Նիժի Մեսրոպյան դպրոցում հայոց լեզվի փոխարեն հնչում է ռուսաց լեզուն:

Հաշվետվության ուրվագիծը

Իմ գրավոր հաշվետվության մեջ խոսում եմ այն անմխիթար վիճակի, ուսման ցածր որակի, ուսուցչական կազմի անհամերաշխության, աշակերտների անհարգելի բացակայելու, ցածր դասարաններում մեծահասակների ներկայության մասին, որոնք գոյություն ունեին դպրոցում մինչև իմ ավագ ուսուցիչ նշանակվելը: Ապա խոսում եմ այն միջոցների մասին, որոնք կիրառելով մեզ հաջողվել է դպրոցը հանել այդ ծանր վիճակից: Որոնք են այդ միջոցները.

1) Ձեռք են բերվել ուսուցողական, դիտողական պարագաներ՝ նկարներ բնագիտությունից, կենդա-

նական աշխարհից և բանավոր գրույցների համար պատկերներ, ֆիզիկական երևույթները բացատրելու համար՝ պարագաներ, անօթներ, սարքեր:

2) Գրադարանը ձեռք է բերել մանկական գրքեր, «Հասկեր» և «Աղբյուր» ամսագրեր:

3) Դասարանները դարձրել ենք միատարր, ազատվել 40 հոգի դասարանում անհամապատասխան տարիք ունեցողներից:

Հաշվետվության մեջ խոսում են և հետդասյա տարած աշխատանքների՝ գրքերի կոլեկտիվ ընթերցանության, երգեցիկ խմբի պարապմունքների, աշակերտների ուժերով կազմակերպվող ներկայացումների փորձերի, հանդեսների (Վարդանանց տոն) նախապատրաստական աշխատանքների, ցերեկույթների մասին: Ապա գալիս են ուսուցիչների աշխատանքները՝ մանկավարժական ժողովներ, զեկուցումներ, բաց դասեր և քննարկումներ, ուսուցիչների ուժերով ներկայացումներ: Ի՞նչ միջոցներ պետք է կիրառել, որ դպրոցը դառնա լիարժեք և կանգնած լինի իր բարձրության վրա: Այս նպատակին հասնելու համար առաջարկում են.

1) Ուտիացի օտարախոս երեխային սովորեցնել հայոց լեզու մինչև դպրոց ընդունվելը: Այս պատճառով առաջարկում են ստեղծել 3 մանկապարտեզ, որտեղ երեխաները կընտելանան հայերենին և դպրոց ընդունվելու ժամանակ չեն դժվարանա:

2) Դպրոցին տալ գյուղատնտեսական թեքում: Հրավիրել մասնագետ ուսուցիչ, որը կդասավանդի դպրոցում և կղեկավարի գործնական աշխատանքներն ընդարձակ հողամասում: Գյուղատնտեսական առարկաները կլինեն այգեգործությունը և շերամապահությունը:

3) Գյուղատնտեսական առարկաների դասավանդումը սկսել առաջին հիմնական դասարանից (ուսման չորրորդ տարին): Ծրագրերը կազմել 2 տարվա համար:

4) Գյուղատնտեսական թեքումով վերջին երկու դասարանները դարձնել գիշերօթիկ²⁰:

Մայիսի 30-ին հոգաբարձության ամբողջ կազմը Խաչի յուզբաշու գլխավորությամբ և ուսուցիչների մասնակցությամբ ժողով հրավիրեց ուսուցչական կազմը հաստատելու հետևյալ ուսումնական տարվա համար: Խաչի յուզբաշին առաջինը կարդաց Բալաբեկ Տեր-Ղուկասյանի անունը.

–Պարո՞ն Բալաբեկ, դուք ազատված եք պաշտոնից: Դուք ընդունակ չեք մեր երեխաների կրթական գործն առաջ տանելու:

–Այդ ո՞ր «մեր» երեխաների մասին է խոսքը, Խաչի՞ յուզբաշի,– ասաց Բալաբեկը,– համենայն դեպս, ոչ ձեր երեխաների, որոնք սովորում են Թիֆլիսում: Ահա երեսուն տարի է, որ ուսուցչություն են անում և ոչ մի ջանք չեն խնայել մեր երեխաների կրթության գործում: Եվ այսօր, երբ դուք պետք է մտածեք իմ հոբելյանի մասին, ինձ ազատում եք: Շատ «շնորհակալ» եմ,– ասաց, գլխարկը վերցրեց և դուրս գնաց:

Խաչի յուզբաշին դեռ չէր հասցրել հետևյալ ուսուցչի անունը կարդալ, երբ Բալաբեկ Տեր-Ղուկասյանը վերադարձավ և կանգնեց Խաչի յուզբաշու առաջ:

–Բայց, չմոռանաք, Խաչի յուզբաշի,– ասաց նա,– եթե իմ արասին (20 կուպեկանոց արծաթ դրամ) կոտրենք, նրա միջից աշխատանք ու քրտինք կկաթի, իսկ եթե քո արասին կոտրենք, նրա միջից կթափվի որբերի և այրիների արյուն, աղի արտասուք,– ասաց ու դուրս գնաց:

–Այ հենց քո այդ լեզուն է,– ասաց Խաչի յուզբաշին,– որ քեզ այդ օրին հասցրեց:

Այդ, շատ ճիշտ էր Բալաբեկ Տեր-Ղուկասյանը, որ պայքարում էր Խաչի յուզբաշու դեմ: Նա երկար տարիներ տանուտեր էր, չափից դուրս հարուստ էր: Գյուղի այգիների, հողերի մեծ մասը պատկանում էր Խաչի յուզբաշուն, որոնք ձեռք էր բերել կաշառակերության և վաշխառության միջոցով: Փողը գյուղացիներին շահով էր տալիս, բայց ոչ պետական օրենքի համաձայն՝ 8-12, այլ ավելի բարձր՝ 20-25 տոկոսով: Հարյուր ռուբլի փողը, եթե գյուղացին չէր կարողանում չորս տարվա ընթացքում մարել, կրկնապատկվում էր: Իսկ գյուղացին, եթե չի կարողացել 100 ռ. վճարել ժամանակին, պարզ է, որ նա բոլորովին էլ չի կարող 200 ռուբլի վճարել: Եվ ստիպված է լինում վաճառել իր այգին կամ հողամասը: Ահա այստեղ է, որ Խաչի յուզբաշին հանդես է գալիս «լավություն» անողի դերում. մի 20-30 ռուբլի է տալիս այգու տիրոջը, պատռում մուրհակը և տեր դառնում 500-600 ռուբլի արժեցող այգուն կամ հողամասին: Եվ այսպես անվերջ: Ու ժամանակի ընթացքում Խաչի յուզբաշին դարձել էր «կալվածատեր»: Գյուղի խանութներից ամենամեծը Խաչի յուզբաշունն էր, որը ղեկավարում էր նրա որդին՝ Ալեքսանը: Նա ուրախությամբ էր ուսուցիչներին ապառիկ ապրանքներ բաց թողնում՝ քաջ գիտե՞նալով, որ փող սովորն իր հայրն էր:

Խաչի յուզբաշու հալածանքը Բալաբեկ Տեր-Ղուկասյանի՝ այդ երկարամյա, պատկառելի հասակ ունեցող ուսուցչի հանդեպ և դպրոցից ազատելու քստմունքի դեպքը ես վերիիշեցի մեկ էլ 1947 թվականին, երբ մեզ՝ երկարամյա անբասիր ծառայած մի շարք ուսուցիչներին, կանչել էին՝ կառավարա-

20 1945 թվին ես աշխատում էի Լուսժողկոմատում որպես դպրոցական տեսուչ: Ընկերս՝ դպրոցական տեսուչ Գերասիմ Աղասյանը, պատահմամբ ծանոթանում է իմ հաշվետվության պատճենի հետ: Նա շատ է հավանում և խորհուրդ է տալիս Լուսժողկոմի տեղակալ ընկ. Արգար Մովսիսյանին ծանոթանալ այդ հաշվետվությանը: Արգար Մովսիսյանը, թուղիկ աչքի անցկացնելով այն, նշանակում է ընկ. Շավարչյանից, Նազիկյանից և Ճուղուրյանից կազմված մի հանձնաժողով: Նրանք գտնում են, որ այն «մանկավարժական և պատմական նշանակություն ունեցող փաստաթուղթ» է և առաջարկում ձեռք բերել այն: Ներկայիս այդ հաշվետվությունը գտնվում է դպրոցների թանգարանում (ծնթ. հեղ.):

կան տանը մեզ հանձնելու Սովետական իշխանության ամենաբարձր պարգևը՝ Լենինի շքանշանը: Նստած Գերագույն խորհրդի դահլիճում՝ մտածում էի. «Կարո՞ղ էր երբևիցե մտածել ուսուցիչ Բալաբեկ Տեր-Ղուկասյանը, որ հայ ուսուցիչը, որի կյանքի ուղին միշտ ծածկված է եղել փշերով ու տատասկներով, կարժանանա կառավարության ամենաբարձր պարգևի»:

Ուսուցիչների մնացած կազմը հոգաբարձությունը հրավիրեց հետևյալ 1912-13 ուսումնական տարվա համար:

–Ինչ վերաբերում է ավագ ուսուցիչ պարոն Իսրայելյանին,– ասաց Խաչի յուզբաշին,– հոգաբարձությունը ցանկանում է, որ նա մինչև կյանքի վերջը լինի մեր դպրոցի ավագ ուսուցիչը:

–Համաձայն եմ, միայն Բալաբեկ Տեր-Ղուկասյանի հետ,– ասացի ես:

Խաչի յուզբաշին ժպտաց: Այսքանն էլ բավական էր, որ հետագայում ես նրան համոզեի և ստանալի հոգաբարձության համաձայնությունը Բալաբեկ Տեր-Ղուկասյանին թողնելու իր պաշտոնում:

Այդ ժողովում հոգաբարձությունը նորից քննության առավ իմ առաջարկությունները դպրոցի վերակառուցման համար: Կոպիտ հաշվումները ցույց էին տվել, որ բացի հանրակացարանից, որ հարկավոր էր դպրոցի միհարկանի շենքը դարձնել երկհարկանի, և կահավորությունից, անհրաժեշտ կլինի 2-5 հազար ռուբլի, որից գուրկ է դպրոցը: Հոգաբարձությունը որոշեց դպրոցի վերակառուցման խնդիրն արժարժել գյուղի եկեղեցիների ծխական ժողովներում և հնարավորինս ստեղծել միջոցներ գյուղում երեք մանկապարտեզ ունենալու համար, դպրոցին տալ գյուղատնտեսական թեքում և ունե-

նալ հանրակացարան 50-60 գիշերօթիկ աշակերտների համար: Բայց այս որոշումները մնացին թղթի վրա: Սրա պառճառները ոչ միայն հոգաբարձության շահագրգռվածության բացակայությունն էր, այլև իմ՝ ջերմախոտով հիվանդությունը, որ կազմալուծել էր իմ առողջությունը վերջնականապես:

Նիժ գյուղի Սուրբ Մեսրոպյան դպրոցում մենք պաշտոնավարեցինք մինչև 1914-15 ուսումնական տարին: Այդ տարի այլևս ուժ չունենալով շարունակել աշխատանքը դպրոցում՝ ստիպված եղա Մարոյին երեխաների հետ թողնել Նիժում, ինքս տեղափոխվել Թիֆլիս և մտածել իմ բուժման մասին: Երկար չտևեց բուժումս: 3-4 ամսից հետո ես այնքան էի կազդուրվել, որ կարող էի աշխատել, բայց որտե՞ղ: Նիժ գնալ նշանակում էր մահվան դուռը գնալ: Մնալ Թիֆլիսում, բայց ինչպես, իմ հիվանդությունը քայքայել էր ինձ ոչ միայն ֆիզիկապես, այլև տնտեսապես: Ուրեմն անհրաժեշտ էր որևէ տեղ աշխատանք գտնել:

Այս հարցով ես դիմեցի Ներսիսյան դպրոցի տեսուչ Հովսեփ Խունունցին: Նա մեծ կշիռ ուներ Թիֆլիսում և լավ գիտեր ինձ: Այդ տարի Նիժի իմ աշակերտներից երեք հոգի էին ընդունվել Ներսիսյան դպրոց (Արտ. Կարապետյան, Ավետ Դուկասյան և Հ. Կլտյան):

–Ուսման տարին վերջանում է, դպրոցներում դժվար թե ազատ տեղ լինի,– ասաց Հովսեփ Խունունցը և ինչ-որ տեղ զանգահարեց:

Նրա միջնորդությամբ ընդունվեցի քաղաքային լաբորատորիա գործավարի պաշտոնով:

Շարունակությունը հաջորդ համարում

Գրախոսություն և քննադատություն

Անուշ Տեր-Մինասյան, Հագար ու մի եկեղեցիների քաղաքը. «Ճարտարապետություն և շինարարություն», № 11-12 (69-70) Երևան 2011, նոյ.-դեկտ., էջ 22-29:

«Ճարտարապետություն և շինարարություն» ամսագրի հերթական համարում լույս է տեսել ճարտարապետության քննադատ Անուշ Տեր-Մինասյանի «Հագար ու մի եկեղեցիների քաղաքը» հոդվածը՝ նվիրված Անին մայրաքաղաք հռչակելու 1050-ամյա հոբելյանին:

Որպես ժառանգության իրավատեր՝ միանգամայն բնական է, որ Անիի 1050-ամյակին (և ոչ միայն) նվիրված զանազան հրապարակումներով հատկապես հանդես գան հայ մասնագետները, ուստի և այս առումով միանգամայն ողջունելի է խնդրո առարկա հոդվածի հեղինակի նախաձեռնությունը:

Հոդվածում անդրադարձ է կատարվել քաղաքի ճարտարապետությանը և մի շարք կարևորագույն հուշարձաններին, որոնց մեկնաբանություններում և վերլուծություններում, սակայն, ցավալիորեն տեղ են գտել աղաղակող մի շարք անճշտություններ, որոնք, ըստ մեզ, անվերապահորեն կարիք ունեն ճշգրտումների:

Մասնավորապես արքունի եկեղեցու մասին հեղինակը գրել է. «Հարավային պատին պահպանված շինարարական արձանագրության վրա նշված է 622 թիվը»¹: Ինչպես երևում է, հեղինակը տեղեկություն չունի, որ արքունի եկեղեցու հարավային ճակատը կանգուն է եղել մինչև Ի դարի երկրորդ կեսի սկզբները, որից հետո այն ամբողջությամբ փլուզվել է: Ինչ վերաբերում է 622 թվականին վերագրվող շինարարական արձանագրությանը, ապա արդեն 1914 թ. Հ. Օրբելին ներկայացրել է արձանագրության վերձանությունը² և գիտական հիմնավորմամբ սպառել խնդրո առթիվ մինչ այդ եղած բոլոր այն տարակարծությունները³, համաձայն որոնց՝ արձանագրության վերջին երկու տառերը ոչ թե տարեթիվ են, այլ մաս են կազմում անավարտ «հա(յոց)» բառի, ուստի տեղում ենթադրաբար գոյություն ունեցած վաղմիջնադարյան եկեղեցու կառուցման ստույգ թվականը ցարդ մնում է անհայտության մեջ:

«Վրացական» եկեղեցու մասին հոդվածում նշված է. «...նրա կիսաքանդ հարավային պատին պահպանվել են վրացերեն արձանագրություններ»⁴: Այս տեղեկությունը ևս շփոթություն է առաջացնում,

քանի որ շարադրանքից հետևում է, թե իբր եկեղեցու նշյալ որմը ցարդ կանգուն է: Մինչդեռ հայտնի է, որ 1920-60-ական թթ.-ի միջակայքում եկեղեցու՝ խնդրո առարկա հատվածը հիմնավորապես քանդվել է, ուստի անհեթեթ է վրացերեն արձանագրությունների գոյության մասին ներկա ժամանակով խոսելը:

Մայր տաճարի մասին հեղինակը կատարել է հետևյալ վերլուծությունը. «Խորշերի խորությունը և դրանից առաջացած լույսն ու սովերը մաս պատրանք են ստեղծում հզոր, զանգվածային պատերի, որոնք իրականում բավական բարակ են՝ դա էս հայտնի ճարտարապետական տիպի նորովի լուծում է: Նույն պատրանքի գաղափարով են ստեղծված մաս ճակատների դեկորատիվ կամարաշարերը՝ ստեղծելով գոյություն չունեցող արտաքին սրահի տպավորություն»⁵: Այստեղ հարկ է նշել, որ միայն արևելյան ճակատի խորշերն են լայն ու խորը, որոնք նպատակ ունեն թեթևացնել ավագ խորանի և երկհարկ ավանդատների փոքր խորանների միջև գտնվող զանգվածեղ պատը, իսկ հարավային և հյուսիսային պատերի խորշերն իրենց չափերով զիջում են արևելյան ճակատի խորշերին, որն էլ պայմանավորված է խորշերի հետևում առկա որմնամույթերի ծավալներով: Ուստի խորշերի առկայությունն ու առաքելությունը ոչ թե հաստ պատերի «պատրանք» ստեղծելն է, այլ, գետեղված լինելով որմնամույթերին հարող պատերի արտաքին մակերեսին և ավագ խորանի ու ավանդատների խորանների միջև, որմերը միջուկի լիցքային անհարկի ծավալներից զերծ պահելու և միաժամանակ երկրաշարժակայուն գործառույթն է:

Հեղինակի հաջորդ դիտարկումը, որը նույնպես տարակուսանք է հարուցում, վերաբերում է Մայր տաճարի «...գոյություն չունեցող արտաքին սրահի տպավորություն» ստեղծող որմնակամարաշարերին: Այստեղ հարկ է նշել, որ եթե նկատի է առնվել Ջ-Է դարերի գմբեթավոր բազիլիկներում հանդիպող արտաքին սյունասարահները, ապա ինչպե՞ս պետք է բացատրել Անիի բազմահորինվածք և սյունասարահներով գմբեթավոր բազիլիկների հետ բնավ չառնչվող մյուս եկեղեցիների ճակատներում առկա համանման հարդարանքի գոյությունը: Մնում է հավելել, որ որմնակամարաշարերը հարդարանքի գտնված այն լուծումներն են, որոնք հոծ ճակատներին հաղորդում են ուղղաձիգ վերալացություն և միաժամանակ հագեցնում ողորկ ճակատները:

Ներկայացված հերթական հուշարձանը Տիգրան Հոնենց վանքի եկեղեցին է, որը, իր բուն անվանը զուգահեռ, նշվել է «Նախշլու» ձևով: Նախ և առաջ հարկ է հիշեցնել, որ ներկայումս թե՛ քաղաքի մուտքին և թե՛ եկեղեցուն կից գետեղված երկլեզու ցուցանակներում արդեն իրենք՝ թուրքերը, նախապատվությունը տալիս են եկեղեցու Տիգրան Հոնենց անվան տարբերակին, ուստի ի՞նչ հարկ կար շրջանառել Ի դարասկզբին ժողովրդական զանգվածներում տարածում գտած օտարոտի «Նախշլու» անվանումը: Ինչ վերաբերում է Հոնենցի եկեղե-

1 Տեր-Մինասյան Ա., նշվ. հոդվ., էջ 22:

2 Орвелл И., Шесть армянских надписей, Петроград, 1914, ст. 81-82: Ի դեպ, նույն արձանագրության վերձանությունը հրատարակված է նաև՝ Դիվան հայ վիճագրության, պրակ 1, Անի քաղաք, Երևան, 1966, էջ 8:

3 Марр Н., Раскопки в Ани в 1904 году, С.-Пб., 1904 (Отд. отт. изв. Имп. Арх. Комм., XVIII), ст. 19: Стѣна вѣст. мѣстѣи` Новыя археологическія данныя о постройкахъ типа Еревуной базилики (ЗВО, XIX), ст. 065; նաև՝ Архум. Гарегинъ Овсепянь, Атласъ, ст. 7, табл. У:

4 Տեր-Մինասյան Ա., նշվ. հոդվ., էջ 23:

5 Նշվ. հոդվ., էջ 24:

ցու վեղարին, որի նկարագրության մեջ կարողում ենք. «...գմբեթի հովհարաձև ծածկն իր որոշակի ռիթմով ամբողջ համակարգի օրգանական մասն է կազմում»⁶, ապա հարկ է ճշգրտել, որ այս եկեղեցու գմբեթն ունի ոչ թե հովհարաձև ծածկ, այլ 16-նիստանի բրգաձև վեղար:

Հեղինակը բազմաբսիդ եկեղեցիների մասին նշում է. «Անիում հատկապես տարածում է ստանում կենտրոնագմբեթ եկեղեցիների բազմաբսիդ տարբերակը: Այդ տիպին են պատկանում Փրկչի, Աբուղամբենց, Հովվի եւ Կուսանաց եկեղեցիները: Մրանց մեջ հատուկ տեղ է գրավում Հովվի եկեղեցին՝ իր հատակագծի յուրահատուկ՝ աստղաձև լուծմամբ եւ արտաքին ծավալների զվարթնցատիպ եռահարկ հորինվածքով: Արտաքուստ բազմածայր աստղը ներքուստ իրենից ներկայացնում է գմբեթատակ տարածությունը շրջապատող ճառագայթ-խորշերից բաղկացած մի բարդ համակարգ, որտեղ խորշերի մեջտեղում տեղադրված որմնասյուների վրայի կամարները միանում են կենտրոնում՝ փականքի քարի վրա»⁷:

Փաստորեն Հովվի եկեղեցին հեղինակը դասել է բազմաբսիդ կենտրոնագմբեթ եկեղեցիների շարքին: Մինչդեռ այն իր հորինվածքով արտաքուստ եղել է Չվարթնոցի մնան եռամակարդակ, ներքուստ՝ Նորավանքի Բուրթելաշեն եկեղեցու մնան երկհարկ, բոլորակ կառույց: Հովվի եկեղեցու առաջին հարկն ունեցել է 18-նիստանի բազմանկյան մեջ ներգծված վեցխորան հորինվածք: Խորաններն ունեցել են ոչ թե կիսաշրջան հատակագիծ, այլ եղել են սեղանաձև՝ դեպի ներս լայնացող պատերով: Խորաններից յուրաքանչյուրը խորքում ավարտվել է արտաքին պատի մեջ բացված դեպի ներս լայնացող լուսամուտով, բացառությամբ արևելյան (ավարտվել է խորանաձև խորշով) և հարավարևմտյան խորանների (ավարտվել է դռան բացվածքով): Խորանների միջև արտաքին 2-ական նիստերը բաղկացած են եղել նիստի ամբողջ լայնությամբ եռանկյունաձև խորշերից: Ընդ որում, առաջին հարկը չէր կարող ունենալ գմբեթատակ տարածություն, քանի որ գմբեթով պսակված էր ոչ թե առաջին, այլ երկրորդ հարկը: Առաջին հարկի ներքին ծածկն իրենից ներկայացրել է վեց կամարներից բաղկացած մի համակարգ, որտեղ կամարները սկսվել են ոչ թե խորանների մեջտեղից, այլ խորանների միջև գտնվող որմնամույթերից և կենտրոնում հենվել են առաստաղից կախված փականաքարին:

Երկրորդ հարկի մասին «...իսկ դրա վերևի ութանիստ հատվածը, միայն նիստերի հատման տեղում խորշերով մշակված լինելով, արդեն ավելի միաձույլ է նկատվում: Վերևի հարկը՝ բուն գմբեթը, իր հարթ կլոր թմբուկով, պսակում է այս հետաքրքիր յուրօրինակ հորինվածքը»⁸ տրված նկարագրության մեջ նույնպես սխալներ կան: Խնդիրն այն է, որ երկրորդ հարկն արտաքուստ եղել է ոչ թե ութանիստ, այլ վեցանիստ: Ինչ վերաբերում է ներքուստ

շրջանաձև պատերին հանգչող չորս կամարներին հենված գմբեթին, ապա այն իրենից ներկայացրել է ոչ թե երրորդ առանձին հարկ, այլ երկրորդ հարկի վերնամաս, իսկ առաջին հարկը ծածկված է եղել կոնաձև հարթ վեղարով, որի կենտրոնում երկրորդ հարկն էր: Վերջինս ծածկված է եղել նիստերի կենտրոնական մեծ և անկյունային փոքր ճակտոնների վրա վեր խոյացած հովհարաձև ծածկով, իսկ գմբեթն ունեցել է կոնաձև վեղար:

Աբուղամբենց Սբ. Գրիգոր եկեղեցու նկարագրության մեջ էլ կարողում ենք. «...բազմաբսիդ հուշարձաններից այն առանձնանում է ներքին հորինվածքի հարուստ դեկորատիվ հարդարանքով՝ լուսամուտների զարդաքանդակված երեսակալներ, խորշեր, կամարաշարեր եւ այլն»⁹: Հեղինակը սխալվում է նրանով, քանի որ հարդարանքի թվարկած տարրերը ոչ թե ներքին հորինվածքի մաս են կազմում, այլ արտաքին, իսկ եկեղեցին ներքուստ ավելի գուսպ է մշակված: Ներքին հարդարանքի աչքի ընկնող տարրերն են խորանների միջև զետեղված որմնասյուների զարդաքանդակված խոյակները, իսկ պատերն ամբողջովին պատված են սվաղով:

Սբ. Փրկչի եկեղեցու մասին ավաճը թերևս խոցելի է իր ընդգծված հուզականության պատճառով. «...առաջինն է երևում, երբ Անիին մոտենում ես Ախուրյանի մեր՝ ձախ ափից. փոթորկից կիսված, սակայն, միևնույն է, հզոր իր տեսքով այն կարծես հուշարձան լինի երբեմնի պերճաշուք Անիի»¹⁰: Նկարագրությունից հասկանալի է, թե որ կողմից է մոտեցել հեղինակն Անի այցելելիս, քանի որ եթե քաղաքատեղիին մոտենանք, օրինակ, դեպի կամուրջը ձգվով պատմական ճանապարհով, ապա այդ դեպքում մեր առջև առաջինը կհանրի Մայր տաճարը, և այդպես շարունակ, կախված մոտեցման ուղղությունից՝ կերևան տարբեր կառույցներ:

Ինչ վերաբերում է Սբ. Փրկչի կործանած «փոթորկին», ապա եկեղեցու արևելյան կեսը փլուզվել է պատերի ստորին շարքերի սրբատաշ քարերը շարունակաբար հափշտակելու պատճառով: Ճիշտ այս պատճառով 2005 թ. փլուզվեց Մրենի տաճարի հարավային պատի կենտրոնական մասը, որտեղ նույնպես թե՛ ներքուստ և թե՛ արտաքուստ հափշտակվել էին երեսապատի սրբատաշ քարերը:

Հայկական հուշարձանների ոչնչացումը բնական աղետներին վերագրելը բնորոշ է թուրքերին և աղբրեջանցիներին (օրինակ՝ Ջուղայի գերեզմանոցի ոչնչացման մեղադրանքին Աղբրեջանի հոգևոր առաջնորդը պատասխանել էր, թե իբր երկրաշարժից են խաչքարերը գետնին տապալվել): Ուստի չի կարելի թուրքական բարբարոսությունների գոհ դարձած եկեղեցու ավերումը վերագրել «փոթորիկներին», ինչպիսիք Հայաստանում չունեն այնքան զորություն, որ կարողանան դարեր շարունակ երկրաշարժերին դիմակայած եկեղեցին կիսատել...

Աշոտ Հակոբյան

6 Նշվ. հոդվ., էջ 25:
7 Նշվ. հոդվ., էջ 27-28:
8 Նշվ. հոդվ., էջ 28:

9 Նույն տեղում:
10 Նույն տեղում: